Դատական Գործ N: ԵԿԴ/0319/01/10

Երբ է գործը ստացվել:	25-11-2010
Քրեական գործի համարը:	0319/01/10
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	14125709
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	Մեղադրվում են այն բանի համար, որ կատարել են խարդախություններ, կեղծել են փաստաթղթեր և մի շարք բանկերից հափշտակել խոշոր չափերի հասնող գումարներ
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Աշոտ
Ազգանուն	Հակոբյան
Հայրանուն	Ալեքսանի
Հասցե	Նոր-Արեշ 20 փող. փակուղի, տուն 30
Հոդված_1	
Հոդված	190
Հոդված_1	
Հոդված	178 Մաս 3 Կետ 1
Հոդված_1	
Հոդված	325 Մաս 2
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Իգոր
Ազգանուն	Մանդել
Հայրանուն	Արոնի
Հասցե	Կոմիտասյան պող. 27շ. բն. 3
Հոդված_1	
Հոդված	178 Մաս 3 Կետ 1
Հոդված_1	
Հոդված	325 Մաս 2
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	

Հասցե	
Վիճակագրական տողի համարը:	6.4
Իրեղեն ապացույց	
Իրեղեն ապացույցի անվանումը:	
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	
Խափանման միջոց:	Կալանավորում
Խափանման միջոց:	Ստորագրություն չհեռանալու մասին
Չափահաս:	Այո
Չափահաս:	Այո

Երբ:	25-11-2010
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Մնացական Վոլոդյայի Մարտիրոսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	

Երբ:	26-11-2010
Որոշումը ուղարկվել է կողմերին:	26-11-2010
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	26-11-2010
Այլ նշումներ:	

Երբ:	17-12-2010
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր	
Անուն	Աշոտ
Ազգանուն	Հակոբյան
Հայրանուն	Ալեքսանի
Հասցե	ՀՀ Գեղարքունիքի մարզ,Կարմիր գյուղ
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Իգոր
Ազգանուն	Մանդել
Հայրանուն	Արոնի
Հասցե	ք.Երևան,Կոմիտասի պողոտա,27շենք,բն.3
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Հարություն
Ազգանուն	Բաղդասարյան

Հասցե	ք.Երևան
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Կարինե
Ազգանուն	Ղազարյան
Հասցե	ք.Երևան,Ծխախոտագործների փող.,տուն 99
Սեռ	Իգական
Դատավարության կողմեր	
Անուն	Շենգավիթ-Ա
Ազգանուն	ՍՊԸ
Հասցե	ք. Երևան,
Սեռ	Արական
Ներկայացուցիչ	
Անուն	Կարինե
Ազգանուն	Ղազարյան
Հասցե	ք.Երևան Ծխախոտագործների փող., 99 տուն
Սեռ	Իգական
Այլ նշումներ:	
ժամ:	12:00
Դատավարության կողմեր	
Անուն:	
Հասցե:	
Նիստերի դահլիճի համարը:	4

Երբ:	19-01-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	25-01-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	10-02-2011
ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	21-02-2011
ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	10-03-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	30-03-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	14-04-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	04-05-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	19-05-2011
ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	01-06-2011
ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	15-06-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	01-07-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	11-07-2011
ժամ:	12:30
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	05-08-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	19-08-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	30-08-2011
ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	07-09-2011
ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	13-09-2011
ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	19-09-2011
ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	04-10-2011
ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	13-10-2011
ժամ:	14:00

Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	17-10-2011
ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	28-10-2011
ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	11-11-2011
ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	25-11-2011
ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	

Երբ:	14-12-2011
ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	
Նիստը:	
Պատճառը:	

Երբ:	29-12-2011
ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համարը:	4
Այլ նշումներ:	
Նիստը:	
Պատճառը:	

Ամսաթիվ:	29-12-2011
Այլ նշումներ:	

Մեղադրյալ	
Անուն	Աշոտ

Ազգանուն	Հակոբյան
Հայրանուն	Ալեքսանի
Հասցե	ք.Երևան,Նոր-Արեշ 20-րդ փող.,տուն 30
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	15-05-1957
Ամսաթիվ:	29-12-2011
Առավել ծանր հանցագործության հոդված	
Հոդված	
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	190 Մաս 3 Կետ 1
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	178 Մաս 3 Կետ 1
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	325 Մաս 2
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ պատիժ:	Գույքի բռնագրավումը
Այլ պատժաչափեր:	
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):	
Բռնագանձնված գույքի չափը:	

Մեղադրյալ	
Անուն	Իգոր
Ազգանուն	Մանդել
Հայրանուն	Արոնի
Հասցե	ք.Երևան,Կոմիտասի պող.,27շ.,բն.3
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	28-08-1941
Ամսաթիվ:	29-12-2011
Առավել ծանր հանցագործության հոդված	
Հոդված	
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	178 Մաս 3 Կետ 1
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	325 Մաս 2
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Պատիժը պայմանականորեն չի նկարառվել (ՀՀ քր. օր. 70 հոդ.)
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	

Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):	
Բռնագանձնված գույքի չափը:	

Դատական ակտի բովանդակությունը:

Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

29 դեկտեմբերի 2011թ. ք. Երևան

ԵԿԴ-0319/01/10

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հետևյալ կազմով.

նախագահող դատավոր՝ Մ. Մարտիրոսյան,
քարտուղարներ՝ Տ. Գրիգորյան,
է. Մկրտչյան,
մասնակցությամբ՝
մեղադրողներ,
ՀՀ գլխավոր դատախազության
ՀՀ ազգային անվտանգության
մարմիններում քննվող գործերով
վարչության պետի տեղակալ Հ. Սարգսյանի,

նույն վարչության դատախազ Գ. Տիգրանյանի,

պաշտպաններ Հ. Բաղդասարյանի,
Հ. Մաղաքյանի

տուժող՝ «Շենգավիթ-Ա»
սահմանափակ
պատասխանատվությամբ
ընկերություն /այսուհետ
ՍՊԸ/,

տուժողներ և քաղաքացիական հայցվորներ՝ Կ. Ղազարյանի,
Ա. Ավետիսյանի,
Ա. Նազարյանի,
Ա. Ստեփանյանի,
Մ. Նազարյանի,
Ն. Պողոսյանի,
Ա. Արզումանյանի,
Ն. Թադևոսյանի,
Ռ. Աղաջանովայի,

տուժողների և քաղաքացիական
հայցվորների ներկայացուցիչ՝ Ա. Մնացականյանի

դատարանում, դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ մեղադրանքի
1.Աշոտ Ալեքսանի Հակոբյանի՝
ծնված 1957թ. մայիսի 15-ին Գեղարքունիքի մարզի Կարմիր գյուղում, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին ոչ ոք, նախկինում չդատված, աշխատել է որպես «Խաչվառ» ՍՊԸ տնօրեն, հաշվառված է և բնակվել է Երևանի Նոր-Արեշ 20-րդ փողոցի թիվ 30 տանը, կալանքի տակ է 10.04.2010թ.-ից,

մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. Իգոր Արոնի Մանդելի՝
ծնված 1941թ. օգոստոսի 28-ին Կիրովական /այժմ Վանաձոր/ քաղաքում, հրեա, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին ոչ ոք, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ բաժնետեր և տնօրեն, նախկինում չդատված, վատառողջ է՝ 3-րդ խմբի հաշմանդամ, հաշվառված է և բնակվում է Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 27 շենքի թիվ 3 բնակարանում, կալանքի տակ չէ, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

Գործի դատավարական նախապատմությունը

Թիվ 14114408 քրեական գործը ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում հարուցվել է 2008թ. մայիսի 22-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Վոլոդյա Թորգոմի Վարդանյանի կողմից առանձնապես խոշոր չափերի յուրացում կատարելու փաստի առթիվ:
Քննիչի 2008թ. հունիսի 02-ի որոշմամբ հայտարարվել է Վոլոդյա Թորգոմի Վարդանյանի հետախուզումը:
14.08.2009թ. թիվ 14114408 քրեական գործի նյութերով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, հարուցվել է նոր քրեական գործ, ընդունվել է քննիչի վարույթ և քրեական գործին շնորհվել է 14125709 համարը:
Քննիչի 2009թ. օգոստոսի 24-ի որոշմամբ, թիվ 14114409 քրեական գործը միացվել է թիվ 14125709 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է թիվ 14125709 համարի տակ:
21.04.2010թ. թիվ 14125709 քրեական գործն ուղարկվել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու համար և 23.04.2010թ. ընդունվել է ՀԿԳ ավագ քննիչի վարույթ:
Քննիչի 2010թ. հոկտեմբերի 21-ի որոշմամբ, Իգոր Արոնի Մանդելի և Ինգա Իգորի Մանդելի կողմից, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված 176.000.000 ՀՀ դրամ գումարն օրինականացնելու և Ինգա Իգոր Մանդելի կողմից, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ մասնակիցներին պատկանող, առանձնապես խոշոր չափերի գույքը՝ 176.000.000 ՀՀ դրամ գումարը, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, խաբեությամբ հափշտակելու վերաբերյալ վարույթի մասը կարճվել է՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:
Քննիչի 2010թ. նոյեմբերի 03-ի որոշմամբ, թիվ 14125709 քրեական գործից անջատվել է Վոլոդյա Թորգոմի Վարդանյանի կողմից, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված 176.000.000 ՀՀ դրամ գումարն Աշոտ Հակոբյանի հետ հանցավոր համաձայնությամբ օրինականացնելու, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ մասնակիցներին պատկանող, առանձնապես խոշոր չափերի գույքը՝ 176.000.000 ՀՀ դրամ գումարն Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ նախնական համաձայնությամբ, խաբեությամբ հափշտակելու և նրանց հետ նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող փաստաթուղթ՝ 25.07.2007թ. ամսաթվով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ մասնակիցների ժողովի արձանագրությունը կեղծելու, Արման և Արամ Վարդանյանների կողմից Արման Հակոբյանին ծեծի ենթարկելու և վիրավորանք հասցնելու, Իգոր Մանդելին և Աշոտ Հակոբյանին

սպանության սպառնալիքներ հասցնելու դեպքերի վերաբերյալ մասը և նախաքննությունը շարունակվել է նույն համարի տակ: Ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով հետևյալ արարքների համար. <<որ նա՝ 2007 թվականի մայիս ամսին համաձայնության է եկել ծանոթի՝ թվով 20 անձանց կողմից հիմնադրված «Շենգավիթ-Ա» ՍՊԸ հիմանդիրներից մեկի, ընկերության բաժնեմասի 50,4 տոկոսի մասնակցի և տնօրենի՝ Իգոր Արոնի Մանդելի հետ՝ հափշտակելու «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող գումարները, որոնք պետք է գոյանային «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Շենգավիթի մասնաճյուղին Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու միջոցներից: Հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, Իգոր Մանդելի հետ որոշել են այդ գործին մասնակից դարձնել տնտեսագիտության բնագավառում համապատասխան գիտելիքներ ունեցող, «Եվրոֆինանս» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների հիմնադիր-տնօրեն Վոլոդյա Թորգոմի Վարդանյանին, որի հետ այդ առումով եկել են հանցավոր համաձայնության ու նպատակադրվել ընկերության բաժնետերերին ներկայացնել, որ բանկին տրվելիք տարածքի վարձակալության ամսեկան չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ, իրական 2.450.000 ՀՀ դրամի փոխարեն: Կազմակերպվող հանցագործության կատարումը դյուրին դարձնելու, ստացված գումարներին միանգամից տիրանալու համար վերջինս խորհուրդ է տվել բանկից միանվագ ստանալ տարածքի վարձակալության 10 տարվա վճարը: Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին բանկի ներկայացուցիչների հետ չկարողանալով այդ առումով գալ համաձայնության, որոշել են բանկից վերցնել որոշված վարձավճարի չափի մարման 10 տարվա հաշվարկով վարկ: 2007 թվականի մայիսի վերջին, Վոլոդյա Վարդանյանի հետ մասնակից է դարձել Իգոր Մանդելի կողմից հրավիրված «Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին և Վոլոդյա Վարդանյանի ու Իգոր Մանդելի հետ միասին բաժնետերերին խաբեությամբ ներկայացրել է, որ բանկին տրվելիք տարածքի վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ: Իգոր Մանդելի հետ նաև ներկայացրել է, որ Վոլոդյա Վարդանյանն ունի տնտեսագիտական պատշաճ գիտելիքներ և առաջարկել է բանկի հետ կատարվելիք գործարքի իրականացման համար ընկերության անունից, որպես լիազոր անձ, հանդես գա նա: Իգոր Մանդելն ընկերության բաժնետերերի հետ ստորագրությամբ վավերացրել է ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով որոշվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ հանձնելու հարցը: Իգոր Մանդելը բաժնետերերի հետ միասին Վոլոդյա Վարդանյանին է տվել լիազորագիր՝ գործարքի իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթավորման գործողությունները նրա կողմից կատարելու համար: 21.05.2007 թ. ամսաթվով նշված արձանագրության և 11.06.2007 թ. ամսաթվով նշված լիազորագրի հիման վրա Վոլոդյա Վարդանյանի անունից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցչի հետ 2007 թվականի հունիսի 19-ին կնքվել է պայմանագիր՝ նշված տարածքը բանկին 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 ՀՀ դրամ վճարի չափով վարձակալությամբ հանձնելու մասին, սակայն Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ընկերության բաժնետերերին է ներկայացրել վարձակալության կեղծված տվյալով պայմանագիր, որտեղ տարածքի համար նախատեսված ամսեկան վարձավճարի չափը նշված է եղել 700.000 ՀՀ դրամ: Ընկերության ունեցած տարբեր պարտքերը մարելու, այդ թվում նաև բաժնետեր-աշխատակիցների

	աշխատավարձերը վճարելու, հարկային պարտավորությունների վճարումներ կատարելու պատրվակով, Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին համոզել է մյուս բաժնետերերին՝ ընկերության սեփականություն հանդիսացող, վերոհիշյալ հասցեում տեղակայված ողջ տարածքը գրավադրելով, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից վերցնել վարկ, ներկայացնելով, որ դրա չափն իբր կազմելու է 16.000.000 ՀՀ դրամ, 23 ամսում այն մարելու պայմանով: Սակայն Վոլոդյա Վարդանյանի և Իգոր Մանդելի հետ կազմել է վերջինիս ստորագրությամբ և ընկերության մասնակից՝ Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ 25.07.2007 թ. ամսաթվով ընկերության մասնակիցների ժողովի արձանագրություն՝ իրավունք վերապահող պաշտոնական կեղծ փաստաթուղթ, թե ընկերության մասնակիցներն իբր անցկացնելով ընդհանուր ժողով, որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Բագրատունյաց 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող 508,1 քմ մակերեսով դեղատունը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով, ստանալ 193.407.000 ՀՀ դրամի վարկ: Հիշյալ կեղծված փաստաթուղթն օգտագործելով, Իգոր Մանդելը «Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության անունից «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ 25.07.2007 թ. և 26.07.2007 թ. կնքել է բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրեր՝ իբր սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով բանկի կողմից ընկերությանը 10 տարի մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով, դեղատան տարածքը գրավադրելով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, 193.407.000 ՀՀ դրամ գումարի նպատակային վարկ տրամադրելու մասին: Այդպիսով, խախտելով «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, այդ թվում նաև 48-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ կանոնադրությամբ հաստատված մի շարք դրույթները, առանց «Շենգավիթ-Ա» ՍՊԸ ընդհանուր ժողովի որոշման, Վոլոդյա Վարդանյանի հետ մասնակից է դարձել Իգոր Մանդելի միջոցով ընկերության անունից կատարելու անհիմն խոշոր գործարք: Կնքված պայմանագրերի հիման վրա, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 ՀՀ դրամ նպատակային վարկը 30.07.2007 թ. փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության անվամբ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերությունում բացված ընթացիկ հաշվին, որից հետո Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ավարտին է հասցրել իրենց հանցավոր ծրագիրը՝ «Շենգավիթ-Ա» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ների միջև կազմված՝ փոխառությամբ գումարներ տրամադրելու մասին անհիմն պայմանագրով քողարկելով հանցագործության կատարումը, ստացված վարկի գումարներից 176.000.000 ՀՀ դրամը 31.07.2007 թ. փոխանցել են Վոլոդյա Վարդանյանի տնօրինած «Եվրոֆինանս» ՍՊԸ անվամբ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գործող հաշվեհամարին, այդպիսով խաբեությամբ հափշտակելով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին արդեն իսկ պատկանող առանձնապես խոշոր չափ հանդիսացող այդ գումարը, իսկ 16.020.700 ՀՀ դրամը հաջորդ օրը՝ 01.08.2007 թ. փոխանցել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի «Արարատ բանկ» ԲԲԸ-ում գործող հաշվեհամարին: Նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հափշտակված գումարների իրական բնույթը և պատկանելիությունը, համաձայնության է եկել Վոլոդյա Վարդանյանի հետ՝ «Եվրոֆինանս» ՍՊԸ հաշվեհամարին առկա այդ հափշտակված գումարները կոնվերտացնելու և այլ հաշվեհամարներին փոխանցելու գործում, որից հետո, 2007 թվականի օգոստոսի 6-ից մինչև 2008 թվականի հունվարի 23-ն ընկած ժամանակահատվածում, Վոլոդյա Վարդանյանը հափշտակված գումարներից 69.500.000 ՀՀ դրամը 5 դեպքով, փոխառության գումարների անվան տակ, փոխանցել է վերջինիս անվամբ բացված անձնական հաշվին, 37.385.000 ՀՀ դրամը 3

դեպքով, փոխառության գումարների անվան տակ, փոխանցել է Իգոր Մանդելի դստեր՝ Ինգա Մանդելի անձնական հաշվին, 505.000 ՀՀ դրամը 2 դեպքով, փոխառության գումարների անվան տակ փոխանցել է բարեկամի՝ Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, 34.425.000 ՀՀ դրամը, նորից փոխառության գումարների անվան տակ, 2 դեպքով փոխանցել է իր անձնական հաշվին, իսկ 33.000.000 ՀՀ դրամը՝ իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ հաշվին: Այնուհետև, «Խաչվառ» ՍՊԸ հաշվեհամարին առկա հիշյալ գումարը, ևս 3.000.000 ՀՀ դրամի հետ Վոլոդյա Վարդանյանի մասնակցությամբ փոխանցել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ հաշվին՝ խողովակների ձեռք բերման պատրվակով: Նշված ժամանակահատվածում, Վոլոդյա Վարդանյանը, հափշտակված և անձնական հաշվին փոխանցված գումարների մի մասը փոխարկել է տարադրամով, դրանք տեղաշարժելով տարադրամային հաշվին, գումարներից մի մասը բանկային փոխանցումով ուղարկել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղում բնակվող բարեկամուհու՝ Անժելա Ավագյանի հաշվին, իսկ մյուս մասն էլ կանխիկ ստացել է հաշվեհամարներից: Այդ ընթացքում, ստացել է Վոլոդյա Վարդանյանի անձնական հաշվից իր հաշվեհամարին փոխանցված 7.860.000 ՀՀ դրամը, կանխիկացրել է իր հաշվեհամարում առկա ամբողջ 42.285.000 ՀՀ դրամը և Ինգա Մանդելի անձնական հաշվեհամարին փոխանցված գումարներից 37.074.000 ՀՀ դրամը և 2007 թվականի նոյեմբերի 22-ին կնքված առուվաճառքի պայմանագրով, այդ ամբողջ գումարով ձեռք է բերել և որպես անձնական սեփականություն գրանցել Երևանի Այվազովսկու փողոցի 46/1 հասցեով գտնվող անշարժ գույքը, գործարքի շուրջ կնքված պայմանագրում նշելով, որ այն ձեռք է բերվել ընդամենը 48.000.000 ՀՀ դրամով:»:

Ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով հետևյալ արարքների համար. <<որ նա՝ հանդիսանալով թվով 20 անձանց կողմից հիմնադրված «Շենգավիթ-Ա» ՍՊԸ հիմանդիրներից մեկը, ընկերության բաժնեմասի 50,4 տոկոսի մասնակիցը և տնօրենը, 2007 թվականի մայիս ամսին համաձայնության է եկել ծանոթի՝ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի հետ՝ հափշտակելու «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող գումարները, որոնք պետք է գոյանային «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Շենգավիթի մասնաճյուղին Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու միջոցներից: Հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, Աշոտ Հակոբյանի հետ որոշել են այդ գործին մասնակից դարձնել տնտեսագիտության բնագավառում համապատասխան գիտելիքներ ունեցող, «Եվրոֆինանս» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների հիմնադիր-տնօրեն Վոլոդյա Թորգոմի Վարդանյանին, որի հետ այդ առումով եկել են հանցավոր համաձայնության ու նպատակադրվել ընկերության բաժնետերերին ներկայացնել, որ բանկին տրվելիք տարածքի վարձակալության ամսեկան չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ, իրական 2.450.000 ՀՀ դրամի փոխարեն: Կազմակերպվող հանցագործության կատարումը դյուրին դարձնելու, ստացված գումարներին միանգամից տիրանալու համար վերջինս խորհուրդ է տվել բանկից միանվագ ստանալ տարածքի վարձակալության 10 տարվա վճարը: Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին բանկի ներկայացուցիչների հետ չկարողանալով այդ առումով գալ համաձայնության, որոշել են բանկից վերցնել որոշված վարձավճարի չափի մարման 10 տարվա հաշվարկով վարկ: 2007 թվականի մայիսի վերջին, հրավիրելով ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով, դրան մասնակից է դարձրել Աշոտ Հակոբյանին և Վոլոդյա Վարդանյանին ու նրանց հետ միասին բաժնետերերին խաբեությամբ ներկայացրել է, որ բանկին տրվելիք տարածքի վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ: Աշոտ

Հակոբյանի հետ նաև ներկայացրել է, որ Վոլոդյա Վարդանյանն ունի տնտեսագիտական պատշաճ գիտելիքներ և առաջարկել է բանկի հետ կատարվելիք գործարքի իրականացման համար ընկերության անունից, որպես լիազոր անձ, հանդես գա նա: Ընկերության բաժնետերերի հետ ստորագրությամբ վավերացնելով ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով որոշվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ հանձնելու հարցը, բաժնետերերի հետ միասին Վոլոդյա Վարդանյանին է տվել լիազորագիր՝ գործարքի իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթավորման գործողությունները նրա կողմից կատարելու համար: 21.05.2007 թ. ամսաթվով նշված արձանագրության և 11.06.2007 թ. ամսաթվով նշված լիազորագրի հիման վրա Վոլոդյա Վարդանյանի անունից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցչի հետ 2007 թվականի հունիսի 19-ին կնքվել է պայմանագիր՝ նշված տարածքը բանկին 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 ՀՀ դրամ վճարի չափով վարձակալությամբ հանձնելու մասին, սակայն Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի հետ միասին ընկերության բաժնետերերին է ներկայացրել վարձակալության կեղծված տվյալով պայմանագիր, որտեղ տարածքի համար նախատեսված ամսեկան վարձավճարի չափը նշված է եղել 700.000 ՀՀ դրամ: Ընկերության ունեցած տարբեր պարտքերը մարելու, այդ թվում նաև բաժնետեր-աշխատակիցների աշխատավարձերը վճարելու, հարկային պարտավորությունների վճարումներ կատարելու պատրվակով, Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին համոզել է մյուս բաժնետերերին՝ ընկերության սեփականություն հանդիսացող, վերոհիշյալ հասցեում տեղակայված ողջ տարածքը գրավադրելով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից վերցնել վարկ, ներկայացնելով, որ դրա չափն իբր կազմելու է 16.000.000 ՀՀ դրամ, 23 ամսում այն մարելու պայմանով: Սակայն Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի հետ կազմել է իր ստորագրությամբ և ընկերության մասնակից՝ Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ 25.07.2007 թ. ամսաթվով ընկերության մասնակիցների ժողովի արձանագրություն՝ իրավունք վերապահող պաշտոնական կեղծ փաստաթուղթ, թե ընկերության մասնակիցներն իբր անցկացնելով ընդհանուր ժողով, որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Բագրատունյաց 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող 508,1 քմ մակերեսով դեղատունը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով, ստանալ 193.407.000 ՀՀ դրամի վարկ: Հիշյալ կեղծված փաստաթուղթն օգտագործելով, «Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության անունից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ 25.07.2007 թ. և 26.07.2007 թ. կնքել է բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրեր՝ իբր սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով բանկի կողմից ընկերությանը 10 տարի մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով, դեղատան տարածքը գրավադրելով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, 193.407.000 ՀՀ դրամ գումարի նպատակային վարկ տրամադրելու մասին: Այդպիսով, խախտելով «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, այդ թվում նաև 48-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ կանոնադրությամբ հաստատված մի շարք դրույթները, առանց «Շենգավիթ-Ա» ՍՊԸ ընդհանուր ժողովի որոշման, ընկերության անունից կատարել է անհիմն խոշոր գործարք: Կնքված պայմանագրերի հիման վրա, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 ՀՀ դրամ նպատակային վարկը 30.07.2007 թ. փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության անվամբ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերությունում բացված ընթացիկ հաշվին, որից հետո Աշոտ

Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ավարտին է հասցրել իրենց հանցավոր ծրագիրը՝ «Շենգավիթ-Ա» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ների միջև կազմված՝ փոխառությամբ գումարներ տրամադրելու մասին անհիմն պայմանագրով քողարկելով հանցագործության կատարումը, ստացված վարկի գումարներից 176.000.000 ՀՀ դրամը 31.07.2007 թ. փոխանցել են Վոլոդյա Վարդանյանի տնօրինած «Եվրոֆինանս» ՍՊԸ անվամբ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գործող հաշվեհամարին, այդպիսով խաբեությամբ հափշտակելով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին արդեն իսկ պատկանող առանձնապես խոշոր չափ հանդիսացող այդ գումարը, իսկ 16.020.700 ՀՀ դրամը հաջորդ օրը՝ 01.08.2007 թ. փոխանցել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի «Արարատ բանկ» ԲԲԸ-ում գործող հաշվեհամարին:»:
2010թ. նոյեմբերի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները

Դատաքննությամբ, գործի տվյալներով, դատարանը հիմնավորված է համարում հետևյալը.
Ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանը, նախնական համաձայնության գալով իր ծանոթ, «Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության 50,4 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն, ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի, ինչպես նաև տնտեսագիտության բնագավառում համապատասխան գիտելիքներ ունեցող, «Եվրոֆինանս» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների հիմնադիր և տնօրեն, այժմ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Վոլոդյա Թորգոմի Վարդանյանի հետ, 2007 թվականի մայիսին որոշել են հափշտակել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող գումարները, որոնք պետք է գոյանային «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Շենգավիթի մասնաճյուղին Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու միջոցներից: Նրանք նպատակադրվել են ընկերության բաժնետերերին ներկայացնել, որ բանկին վարձակալությամբ տրվելիք տարածքի վարձավճարի ամսեկան գումարը կազմելու է 700.000 ՀՀ դրամ՝ իրական 2.450.000 ՀՀ դրամ գումարի փոխարեն: Կազմակերպվող հանցագործության կատարումը դյուրին դարձնելու, ստացված գումարներին միանգամից տիրանալու համար Վոլոդյա Վարդանյանը խորհուրդ է տվել բանկից միանվագ ստանալ տարածքի վարձակալության 10 տարվա վճարը: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը բանկի ներկայացուցիչների հետ չկարողանալով այդ առումով գալ համաձայնության՝ որոշել են բանկից վերցնել վարձավճարի տաս տարվա ընդհանուր գումարի չափով վարկ և հափշտակել այդ գումարը:
2007թ. մայիսի վերջին, հրավիրելով ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով, Իգոր Մանդելը դրան մասնակից է դարձրել Աշոտ Հակոբյանին և Վոլոդյա Վարդանյանին: Նրանք մյուս բաժնետերերին խաբեությամբ ներկայացրել են, որ բանկին տրվելիք տարածքի վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ գումար: Իգոր Մանդելն Աշոտ Հակոբյանի հետ նաև ներկայացրել է, որ Վոլոդյա Վարդանյանն ունի տնտեսագիտական պատշաճ գիտելիքներ և առաջարկել է, որ բանկի հետ կատարվելիք գործարքի իրականացման համար, իրենց ընկերության անունից որպես լիազորված անձ հանդես գա Վ. Վարդանյանը: Ընկերության բաժնետերերի հետ ստորագրությամբ վավերացնելով ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով որոշվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող, Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող

դեղատան տարածքի՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով մի մասը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ հանձնելու հարցը, Իգոր Մանդելը բաժնետերերի հետ միասին Վոլոդյա Վարդանյանին է տվել լիազորագիր՝ գործարքի իրականացման հետ կապված անհրաժեշտ գործողությունները նրա կողմից, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի անունից կատարելու համար: 21.05.2007թ. ամսաթվով նշված արձանագրության և 11.06.2007թ. ամսաթվով նշված լիազորագրի հիման վրա, Վոլոդյա Վարդանյանի կողմից, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցչի հետ, 2007 թվականի հունիսի 19-ին կնքվել է պայմանագիր՝ նշված տարածքը բանկին 10 տարի ժամկետով, ամսեկան 2.450.000 ՀՀ դրամ գումարի չափով, վարձակալությամբ հանձնելու մասին, սակայն Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի հետ միասին Իգոր Մանդելն ընկերության բաժնետերերին է ներկայացրել վարձակալության՝ կեղծված տվյալով պայմանագիր, որտեղ տարածքի համար նախատեսված ամսեկան վարձավճարի չափը նշված է եղել 700.000 ՀՀ դրամ գումար: Ընկերության ունեցած տարբեր պարտքերը մարելու, այդ թվում նաև բաժնետեր-աշխատակիցների աշխատավարձերը վճարելու, հարկային պարտավորությունների վճարումներ կատարելու պատրվակով, Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը համոզել են մյուս բաժնետերերին՝ ընկերության սեփականությունը հանդիսացող, վերոհիշյալ հասցեում տեղակայված ողջ տարածքը գրավադրելով՝ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից վերցնել վարկ, ներկայացնելով, որ դրա չափն իբրև թե կազմելու է 16.000.000 ՀՀ դրամ գումար, 23 ամսում այն մարելու պայմանով: Իրականում, Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի հետ Իգոր Մանդելը կազմել է իր ստորագրությամբ և ընկերության մասնակից Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ, 25.07.2007թ. ամսաթվով ընկերության մասնակիցների ժողովի արձանագրություն, այսինքն իրավունք վերապահող պաշտոնական կեղծ փաստաթուղթ, որով ընկերության մասնակիցներն իբրև թե անցկացնելով ընդհանուր ժողով՝ որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող, Երևանի Բագրատունյաց փողոցի թիվ 14 շենքի թիվ 110 հասցեում գտնվող, 508,1 քմ մակերեսով դեղատունը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով՝ ստանալ 193.407.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ: Հիշյալ կեղծված փաստաթուղթն օգտագործելով՝ «Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության անունից «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ 25.07.2007թ. և 26.07.2007թ. Իգոր Մանդելը կնքել է բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրեր՝ իբրև թե սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով բանկի կողմից ընկերությանը 10 տարի մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով, դեղատան տարածքը գրավադնելով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, 193.407.000 ՀՀ դրամ գումարի չափով նպատակային վարկ տրամադրելու մասին: Կնքված պայմանագրերի հիման վրա, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 ՀՀ դրամ նպատակային վարկը 30.07.2007թ. փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության անվամբ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերությունում բացված ընթացիկ հաշվին: Այնուհետև, ստացված վարկի գումարներից 176.000.000 ՀՀ դրամ գումարը 31.07.2007թ. փոխանցել են Վոլոդյա Վարդանյանի տնօրինած, «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի անվամբ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գործող հաշվեհամարին՝ այդպիսով խաբեությամբ հափշտակելով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին արդեն իսկ պատկանող, առանձնապես խոշոր չափերի գումարը, իսկ 16.020.700 ՀՀ դրամ գումարը հաջորդ օրը՝ 01.08.2007թ. փոխանցել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի «Արարատ բանկ» ԲԲԸ-ում գործող հաշվեհամարին: Նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հափշտակված գումարների իրական բնույթը և պատկանելիությունը, Աշոտ

Հակոբյանը համաձայնության է եկել Վոլոդյա Վարդանյանի հետ՝ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվեհամարին առկա այդ հափշտակված գումարները կոնվերտացնելու և այլ հաշվեհամարներին փոխանցելու գործում, որից հետո, 2007 թվականի օգոստոսի 6-ից մինչև 2008 թվականի հունվարի 23-ն ընկած ժամանակահատվածում, Վոլոդյա Վարդանյանը հափշտակված գումարներից 69.500.000 ՀՀ դրամը 5 դեպքով, փոխառության գումարների անվան տակ փոխանցել է իր անվամբ բացված անձնական հաշվին, 37.385.000 ՀՀ դրամը 3 դեպքով, փոխառության գումարների անվան տակ փոխանցել է Իգոր Մանդելի դուստր Ինգա Մանդելի անձնական հաշվին, 505.000 ՀՀ դրամը 2 դեպքով, փոխառության գումարների անվան տակ փոխանցել է Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, 34.425.000 ՀՀ դրամը, կրկին փոխառության գումարների անվան տակ, 2 դեպքով փոխանցել է Աշոտ Հակոբյանի անձնական հաշվին, իսկ 33.000.000 ՀՀ դրամը՝ վերջինիս տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ի հաշվին: Այնուհետև, «Խաչվառ» ՍՊԸ-ի հաշվեհամարին առկա հիշյալ գումարը, ևս 3.000.000 ՀՀ դրամ գումարի հետ միասին Աշոտ Հակոբյանը, Վոլոդյա Վարդանյանի մասնակցությամբ, փոխանցել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի հաշվին՝ խողովակների ձեռք բերման պատրվակով: Նշված ժամանակահատվածում, Վոլոդյա Վարդանյանը, հափշտակված և անձնական հաշվին փոխանցված գումարների մի մասը փոխարկել է տարադրամով, դրանք տեղաշարժելով տարադրամային հաշվին՝ գումարներից մի մասը բանկային փոխանցումով ուղարկել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղում բնակվող բարեկամուհի Անժելա Ավագյանի հաշվին, ինչպես նաև Գագիկ Բատիկյանի հաշվին, իսկ մյուս մասն էլ կանխիկ ստացել է հաշվեհամարներից: Այդ ընթացքում, Աշոտ Հակոբյանը ստացել է Վոլոդյա Վարդանյանի անձնական հաշվից իր հաշվեհամարին փոխանցված 7.860.000 ՀՀ դրամ գումարը, կանխիկացրել է իր հաշվեհամարում առկա ամբողջ 42.285.000 ՀՀ դրամ գումարը, ստացել է նաև Ինգա Մանդելի անձնական հաշվեհամարին փոխանցված գումարներից 37.074.000 ՀՀ դրամը և 2007 թվականի նոյեմբերի 22-ին կնքված առուվաճառքի պայմանագրով, այդ ամբողջ գումարով ձեռք է բերել և որպես անձնական սեփականություն գրանցել է Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ գործարքի շուրջ կնքված պայմանագրում նշելով, որ այն ձեռք է բերվել ընդամենը 48.000.000 ՀՀ դրամ գումարով:
Տուժողներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի կողմից քաղաքացիական հայցեր են ներկայացվել ամբաստանյալների դեմ, որոնց համաձայն՝ վերջիններս պահանջել են ամբաստանյալներ Աշոտ Ալեքսանի Հակոբյանից և Իգոր Արոնի Մանդելից, համապարտությամբ հօգուտ իրենցից յուրաքանչյուրի բռնագանձել 4.563.780 (չորս մլիլիոն հինգ հարյուր վաթսուերեք հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում:
Ամբաստանյալների անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը նախկինում դատված չի եղել, ամբաստանյալ Իգոր Մանդելը յոթանասուն տարեկան է, վատառողջ՝ 3-րդ խմբի հաշմանդամ է, տառապում է ՍԻՀ, աթերոսկլերոզիկ և հետինֆարկտային կարցիուսկլերոզ, լարվածության աթենոկարցիա, ՖԿ 2-րդ-3-րդ աստիճանի Միտրալ փականի անբավարարություն (հերոհմատիկ բնույթի) շողացող առիթմիա, խրոնիկական երկկողմանի պիէլոեֆրիտ, երիկամների բազմաթիվ կիստաներ երկու կողմից, արտերիալ հիպերտենզիա 3-րդ աստիճանի՝ հաճախակի հիպերտոնիկ կրիզներով, ՇԱ 2-րդ աստիճանի աթերոսկլերոտիկ, հիպերտոնիկ հետինսուլտային

էնցեֆալոպատիա 2-րդ աստիճանի, աջակողմյան պիրամիդային անբավարարությամբ, շագանակագեղձի ադենոմա, ողնաշարի կրծքային հատվածի դեֆորմացնող օստեոխոնդրոզ հիվանդություններով, նախկինում դատված չի եղել, իր գործողությունների հետևանքով վնաս է հասցրել այն ընկերությանը, որի կեսից ավելի բաժնեմասի սեփականատերն է, որևէ շահ՝ իր արարքների արդյունքում փաստացի չի ստացել:

Ապացույցների հետազոտում և գնահատում

Դատարանի կողմից հաստատված հանգամանքներն հիմնավորվում են հետևյալ ապացույցներով.
Տուժող Կարինե Օնիկի Ղազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1981թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 1996թ.-ին դեղատունը սեփականաշնորհվել է ընկերության 24 աշխատակիցների կողմից: 40 տոկոս բաժնեմասն անցել է ընկերության տնօրեն Ի. Մանդելին, իսկ 60 տոկոսը՝ մյուս աշխատակիցներին, յուրաքանչյուրին 2,6 տոկոս: Հետագայում, տնօրենի 40 տոկոս բաժնեմասը դարձել է 50,4 տոկոս: Ավելի ուշ, ՍՊԸ-ում, բացի տնօրեն Իգոր Մանդելից, որպես աշխատողներ մնացել են 9 անձինք:
2007թ. ամռանը, Իգոր Մանդելն իրեն, ինչպես նաև ընկերության մյուս աշխատակիցներին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ ներկայացնելով որպես բանիմաց և գործարար մարդու, ասել է, որ նա, ինչպես նաև վերջինիս բարեկամ Վոլոդյա Վարդանյանը կարող են իրենց ընկերությունը դուրս բերել տնտեսական ծանր վիճակից: Միտքն այն է եղել, որ իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրվի «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերությանը: Խոսակցության ժամանակ նրանք երկուսով ասել են, որ Վոլոդյա Վարդանյանը, որի հետ իրենց հետո կծանոթացնեն, զբաղվելու է այդ հարցերով: Այդ ժամանակ որևէ գումարի չափի մասին խոսք չի գնացել: Նրանք ասել են, որ կճշտեն վարձակալության գումարի չափը և կհայտնեն իրենց: Որոշվել է, որ մեկ շաբաթվա ընթացքում ընկերության բաժնետերերը հավաքվեն և ժողով անցկացնեն, որի ընթացքում Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց կծանոթացնեն Վոլոդյա Վարդանյանի հետ ու այդ ընթացքում էլ կմանրամասնեն վարձակալության պայմանագրի հետ կապված հարցերը: Պայմանավորված օրը, Իգոր Մանդելի հետ միասին դեղատանը հավաքվել են նաև մյուս 9 բաժնետերերը՝ ինքը, Նազիկ Թադևոսյանը, Արուսյակ Ավետիսյանը, Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Ռիմա Աղաջանովան, Մելանյա Նազարյանը, Ալվարդ Արզումանյանը և Նինա Պողոսյանը: Աշոտ Հակոբյանը և Իգոր Մանդելն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ: Վոլոդյայի մոտ եղել է վարձակալության պայմանագիր և նա կարդացել է պայմանագրի դրույթները: Դրանում նշված է եղել, որ իրենց ընկերությունը նշված բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրում է ամսեկան 700.000 ՀՀ դրամ գումարով, 10 տարի ժամկետով: Երբ հարցրել են, թե արդյոք քիչ չէ նշած վարձավճարի չափը, ինչպես Իգոր Մանդելը, այնպես էլ Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանն իրենց հավաստիացրել են, որ գումարի չափը նորմալ է, քանի որ բանկի կողմից կատարվելու են տարածքի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, իսկ երկու տարի անց վերանայվելու է վարձավճարի չափը և այն զգալի չափով աճելու է: Աշոտ Հակոբյանը նույնպես իրենց բոլորին համոզել է, որ վարձավճարի չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ գումար: Նույն օրը, ինչպես Աշոտ Հակոբյանը, այնպես էլ Իգոր Մանդելն ու Վոլոդյա Վարդանյանն ասել են, որ բանկի հետ ձեռք են բերելու պայմանավորվածություն, որպեսզի բանկից վերցնեն 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ՝ տարածքը բանկին գրավադրելու պայմանով, 23 ամիս ժամկետով: Նրանք երեքով համոզել են իրենց,

որ դա լավ տարբերակ է, ընկերությունը ստացած գումարով կարող է փակել բոլոր պարտքերը և կատարել համապատասխան ծախսեր:
Վարձակալության պայմանագիրը, չի կարող ասել, թե դա բնօրինակն է եղել, թե լուսապատճենը, մեկ օրով թողել են իրենց մոտ, որպեսզի բաժնետերերը ծանոթանան դրա հետ և տան կամ չտան համաձայնություն: Նրանց գնալուց հետո, 9 բաժնետերերով ծանոթացել են պայմանագրի հետ, պատճենահանել են այն և ստացված օրինակը հաջորդ օրը տվել են Իգոր Մանդելին: Քանի որ Իգոր Մանդելի հետ միասին 30 տարի աշխատել են, հավատացել, վստահել են նրան և համաձայնվել են առաջարկված պայմանների հետ:
Հաջորդ օրը, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն, իրենց են տվել ընկերության բաժնետերերի ժողովի արդեն իսկ կազմված արձանագրությունը, որում նշված է եղել, որ իրենք դեղատան տարածքը տալիս են վարձակալությամբ:
Արձանագրությունում վարձակալության գումարի չափը նշված չի եղել: Նրանք նաև տվել են արդեն իսկ կազմված լիազորագիր, որով բաժնետերերով լիազորել են Վոլոդյա Վարդանյանին՝ նշված բանկի հետ, իրենց անունից գործարք կատարելու համար: Իրենք ստորագրել են արձանագրությունը և լիազորագիրը:
Շուրջ մեկ շաբաթ անց դեղատուն են եկել Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը, որոնք բերել են վարկային պայմանագիրը: Նրանք առաջարկել են ստորագրել պայմանագիրը՝ նշելով, որ ուշացնելու դեպքում գործարքը չի կատարվի:
Պայմանագրում նշված է եղել, որ վարկի գումարի չափը կազմում է 16.000.000 ՀՀ դրամ: Իրենք բոլոր բաժնետերերով ստորագրել են պայմանագրի վերջին էջում նշված իրենց տվյալների դիմաց, իսկ Ա. Հակոբյանը, Ի. Մանդելը և Վ. Վարդանյանը շտապ հեռացել են:
Հետագայում, իրենց անունից բանկից վերցվել է 193 միլիոն ՀՀ դրամ գումարի չափով վարկ, որից միայն 16.000.000 ՀՀ դրամ գումարն է հասել իրենց, իսկ մնացած գումարը հափշտակվել է: Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին իրենց խաբել են, ներկայացրել են, որ տարածքը վարձակալությամբ բանկին տրվում է ամսեկան 700.000 ՀՀ դրամ գումարով և բանկից որպես վարկ վերցվելու է 16.000.000 ՀՀ դրամի չափով գումար՝ տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 1, գ.թ. 132-133, հատոր 2, գ. թ. 255-258, հատոր 8, գ. թ. 215/
Տուժող Կարինե Ղազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 3, գ. թ. 93-96, հատոր 10, գ.թ. 78-79/
Տուժող Արուսյակ Բորիսի Ավետիսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1980թ.-ից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատանը, որը 1996թ. սեփականաշնորհվել է, 40 տոկոս բաժնեմաս ստացել է տնօրեն Իգոր Մանդելը, իսկ 60 տոկոս բաժնեմասը հավասարապես, յուրաքանչյուրին 2,6 տոկոսի չափով, բաժանվել է ընկերության մյուս աշխատողների միջև:
2007թ. մարտ կամ ապրիլ ամիսներին, երբ Աշոտ Հակոբյանը հերթական անգամ եկել է իրենց դեղատուն, հերթափոխի փոփոխման ժամանակ, Աշոտ Հակոբյանը և Իգոր Մանդելն ասել են, որ «էյչ-էս-Բի-Սի» բանկն առաջարկել է վարձակալությամբ վերցնել իրենց դեղատան տարածքի մի մասը: Այդ ժամանակ նրանք չեն նշել, թե որքան է կազմելու վարձակալության գումարի չափը և ասել են, որ առաջիկայում անհրաժեշտ է հրավիրել բաժնետերերի ժողով՝ այդ հարցը քննարկելու համար: Աշոտը և Իգորը ներկայացրել են Վոլոդյա Վարդանյանին՝ շեշտելով, որ նա ունի աուդիտորական կազմակերպություն և զբաղվելու է վարձակալության գործերի կարգավորմամբ: Դրանից հետո Աշոտ Հակոբյանը պարբերաբար հաճախել է դեղատուն: Ինքն ու մյուս բաժնետերերը պարբերաբար հետաքրքրվել են վարձակալության հարցերով, այդ թվում նաև վարձավճարի չափով: Սկզբում Իգոր Մանդելն իրենց ասել է, որ

վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 ԱՄՆ դոլար, իսկ մեկ անգամ էլ, բաժնետերերից մի քանիսը՝ Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Կարինե Ղազարյանը և Մելանյա Նազարյանն իրեն պատմել են, որ երբ Իգոր Մանդելը նրանց ներկայությամբ ասել է այդ գումարի չափը, Աշոտը զայրացել է Իգոր Մանդելի վրա՝ ասելով, որ նա երկու թիվ չի կարողանում հիշել և 7.000 դոլարը տարբերել 700.000 ՀՀ դրամից: Իգորն էլ ուղղում է կատարել և հաստատել է, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ գումար:
2007թ. մայիսի 21-ին, դեղատանը տեղի է ունեցել ընկերության բաժնետերերի ժողով, որին, բացի 10 բաժնետերերից ներկա են գտնվել Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Ժողովի քարտուղար է ընտրվել Կարինե Ղազարյանը, իսկ նախագահ՝ Իգոր Մանդելը: Վոլոդյան միանգամից ներկայացրել է մի պայմանագիր, ըստ որի՝ իրենց ընկերությունը 10 տարի ժամկետով, ամսեկան 700.000 ՀՀ դրամ վարձավճարով, իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրում է նշված բանկին: Այդ պայմանագիրը կնքված և ստորագրված է եղել ինչպես բանկի, այնպես էլ իրենց ընկերության կնիքով: Ինքը ցանկացել է կարդալ պայմանագրի կետերը, սակայն Վոլոդյան ասել է, որ ժամանակ չունի: Հասկացել է, որ պայմանագիրն արդեն բանկի հետ կնքվել է: Անձամբ տեսել է, որ պայմանագրում, որպես ամսեկան վարձավճարի չափ, նշված է եղել 700.000 ՀՀ դրամ գումար: Արտահայտվել է, որ չի հավատում, որ վարձավճարի չափն իրականում այդքան է կազմում և նշել է, որ այն մի քանի անգամ բարձր պետք է լինի: Ինչպես Վոլոդյան, այնպես էլ Աշոտ Հակոբյանն ու Իգոր Մանդելը բացատրել են, որ այդ վարձակալական գործարքը ձեռնտու տարբերակ է, ընկերության ֆինանսական գործերը զգալի չափով կվերականգնվեն, բանկը կկատարի կապիտալ վերանորոգում դեղատանը, իսկ 2 տարի անց վարձավճարի չափը կվերանայվի և զգալի չափով կավելանա: Ինքը պահանջել է, որ այդ պայմանագիրը պատճենահանվի և դրա օրինակը մնա իրենց մոտ: Վոլոդյան սկզբում չի համաձայնվել, սակայն ինքը նորից պնդել է իր պահանջը, որից հետո ի վերջո պայմանագիրը պատճենահանել են: Պատճենը պահել են իրենց մոտ, իսկ պայմանագիրը Վոլոդյան վերցրել է:
Մի քանի օր անց, Վոլոդյան և Աշոտը եկել են դեղատուն ու բոլոր 10 բաժնետերերին ներկայացրել են համակարգչով տպագրված լիազորագրեր: Առաջինը, որ բաժնետերերով լիազորում են Վոլոդյային իրենց անունից իրականացնել տարածքը բանկին վարձակալությամբ տալու գործողությունները, իսկ երկրորդը՝ որ իրենք Իգոր Մանդելին լիազորում են 5 տարի ժամկետով իրականացնել ընկերության տնօրենի պարտականությունները: Իրենք ստորագրել են լիազորագրերը, ինչպես նաև արդեն իսկ կազմված բաժնետերերի ժողովի արձանագրությունը, որում նշված է եղել, որ բաժնետերերով համաձայն են իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ բանկին հանձնելու հետ: Արձանագրության մեջ վարձակալության գումարի չափի վերաբերյալ նշում չի եղել: Իրենք էլ իրավաբանական գիտելիքներ չունենալով՝ չեն մտածել, որ դա կարող է ինչ-որ վատ բանի հանգեցնել: Դրանից մի քանի օր անց, Իգոր Մանդելը դեղատուն է եկել Աշոտ Հակոբյանի և Վոլոդյայի հետ: Նրանք ասել են, որ առաջարկում են նույն բանկից որպես վարկ վերցնել գումարներ, որոնցով կփակվեն ընկերության պարտքերը: Շեշտել են, որ վարկը պետք է վերցվի դեղատան տարածքը բանկում գրավադրելու դիմաց: Ինքն առաջարկել է, որպեսզի իրենք խոսեն բանկի ղեկավարության հետ՝ բանկից մի քանի ամսվա վարձավճարը վերցնելու համար: Նրանք ասել են, որ դա հնարավոր չէ: Նման խոսակցություններ են կայացել մի քանի անգամ, որոնց ներկա է գտնվել նաև Աշոտ Հակոբյանը: Վերջինս, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը պնդել են, որ վարկի գումարի չափը կազմելու է 16.000.000 ՀՀ դրամ, որով ընկերությունը կփակի ունեցած պարտքերը: Ինքը դեմ է եղել գրավի

դիմաց վարկ վերցնելուն և արտահայտել է իր այդ կարծիքը: Ի վերջո նրանք կարողացել են համոզել բոլոր բաժնետերերին, այդ թվում և իրեն, որ վարկը վերցվի 23 ամիս մարման ժամկետով: Այդ ընթացքում ինքն աշխատանքի չի գնացել: Իրեն զանգահարել է Իգոր Մանդելը և ասել, որ պատրաստել են վարկային պայմանագիրը, բոլոր բաժնետերերը, բացի իրենից ստորագրել են այն և եթե ինքը մոտակա օրերին չստորագրի այն, ապա վարկի գործարքը կձախողվի: Հաջորդ օրը գնացել է դեղատուն, որտեղ գտնվել են նաև Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Վոլոդյա Վարդանյանն իրեն է տվել պայմանագիրը՝ ասելով, որ այն պետք է շտապ ստորագրվի: Ինքը կարդացել է պայմանագիրը: Դրանում նշված է եղել, որ բանկի կողմից իրենց տրվող վարկի չափը կազմում է 16.000.000 ՀՀ դրամ գումար, դրա մարման ժամկետն է 23 ամիս: Վերջում, իրենց ընկերության բաժնետերերի տվյալների դիմաց դրված են եղել ստորագրություններ և ինքն էլ իր տվյալների դիմաց ստորագրել է: Պայմանագրում դրված է եղել իրենց ընկերության կնիքի դրոշմը, սակայն չի հիշում, թե բանկի կնիքի դրոշմը եղել է, թե ոչ: Պայմանագիրը ստորագրելուց հետո փորձել է վերցնել և պատճենահանել այն, սակայն Վոլոդյան իր ձեռքից խլել է պայմանագիրն ու դուրս եկել դեղատնից՝ ասելով, որ ժամանակ չունի:

Մի քանի օր անց, բաժնետերերից մեկը զանգահարել է իրեն և ասել, որ իրենց հաշվեհամարին 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկը փոխանցվել է: Այդ գումարից 6.000.000 ՀՀ դրամը հատկացվել է իրենց աշխատավարձերի վճարումներին, իսկ մնացած գումարներով փակվել են ընկերության ունեցած պարտքերը: Հետագայում, երբ արդեն հարուցվել է քրեական գործ, իրենք բաժնետերերով տեղեկացել են, որ վարձավճարի չափը ոչ թե 700.000 ՀՀ դրամ է կազմել, այլ այն եղել է 2.450.000 ՀՀ դրամ, իսկ վարկ վերցված գումարի չափը եղել է ոչ թե 16.000.000 ՀՀ դրամ, այլ՝ 193.000.000 ՀՀ դրամ: Դրանում էլ կայացել է Իգոր Մանդելի, Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի խաբեությունը:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 1, գ. թ. 169-171, հատոր 2, գ. թ. 259-262/

Տուժող Արուսյակ Ավետիսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 10, գ.թ. 92-94, 114-115/

Տուժող Անուշ Շմավոնի Նազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1982թ. մայիսից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատանը, որը 1996թ. սեփականաշնորհվել է: Հանդիսանում է ընկերության 2,6 տոկոսի բաժնետեր: 2007թ. մայիսի սկզբին կամ հունիսին, իրենց տնօրեն Իգոր Մանդելն ընկերության բոլոր բաժնետերերին հայտնել է, որ ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալու է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին՝ չնշելով, թե վարձավճարի չափը որքան պետք է կազմի: Մի քանի օր անց նա իրենց ասել է, որ պետք է հրավիրվի բաժնետերերի ժողով, որպեսզի քննարկվի տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցը: Հրավիրվել է ժողով, որին ներկա են գտնվել ընկերության 10 բաժնետերերը: Ժողովին մասնակցել են նաև Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Իգոր Մանդելը ներկայացրել է, որ Աշոտ Հակոբյանը նրա ընտանիքի ընկերն է, իսկ Վոլոդյան էլ Աշոտի բարեկամն է: Ժողովի նախագահ է ընտրվել Իգոր Մանդելը, իսկ քարտուղար՝ Կարինե Ղազարյանը: Սկզբում Իգոր Մանդելը հարց է բարձրացրել դեղատան տարածքի մասը բանկին վարձակալությամբ տալու շուրջ: Բաժնետերերով հարց են ուղղել վարձակալության գումարի չափի վերաբերյալ, որին Իգոր Մանդելը պատասխանել է, որ ամսեկան այն կազմելու է շուրջ 7.000 ԱՄՆ դոլար գումար: Աշոտ Հակոբյանն ուղղել է նրան՝ ասելով, որ դա այդպես չէ, վարձավճարը կազմելու է ոչ թե 7.000 դոլար, այլ ամսեկան 700.000 ՀՀ դրամ: Իգոր Մանդելն էլ ուղղել է իր ասածը և

համաձայնվել Աշոտի կողմից հայտնած գումարի չափի հետ: Իրենք դեմ են եղել վարձավճարի այդ չափին, սակայն Աշոտ Հակոբյանը բացատրել է, որ դեղատան տարածքը ենթարկվելու է վերանորոգման, որը կատարվելու է բանկի միջոցների հաշվին և եթե չլինի համաձայնություն, ապա բանկը կվարձակալի մեկ այլ տարածք: Քանի որ ընկերությունն ունեցել է պարտքեր և անհրաժեշտ են եղել գումարներ, իրենք համաձայնվել են կատարված առաջարկի հետ: Այդ օրը մասնակիցների ժողովի արձանագրություն չի կազմվել:
Հաջորդ օրը, Իգոր Մանդելի պահանջով, իրենք կրկին 10 բաժնետերերով հավաքվել են դեղատանը: Այնտեղ են եկել նաև Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Վերջինս իր հետ բերել է նախորդ օրվա ժողովի արձանագրության համակարգչով տպագրված ձևը, որտեղ նշված է եղել, որ բաժնետերերով որոշել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրել բանկին: Արձանագրության մեջ վարձավճարի գումարի չափը նշված չի եղել և բաժնետերերից ոչ մեկն էլ չի պահանջել, որ այն նշվի՝ չմտածելով, որ դրա հետ կապված հետագայում կծագեն խնդիրներ: Բաժնետերերով ստորագրել են այդ արձանագրությունը, որը Վոլոդյան վերցրել և հեռացել է:
Շուրջ 10 օր անց, 2007թ. հունիսին, Վոլոդյան և Աշոտը եկել են դեղատուն: Վոլոդյային ներկայացրել են որպես բանիմաց մարդ և որոշվել է, որ նա պետք է կատարի տարածքը բանկին վարձակալությամբ տալու գործարքները: Տվել են իրենց բանավոր համաձայնությունը՝ լիազորելով նրան զբաղվել այդ գործարքի հետ կապված հարցերով: Գրավոր այդպիսի փաստաթուղթ տրվել է, թե ոչ՝ չի հիշում: Նշված ժողովից 20-ից 25 օր անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Դեղատուն են եկել նաև Աշոտը և Վոլոդյան: Նրանցից մեկը կամ Իգոր Մանդելն իրենց առաջարկել են դեղատան տարածքը գրավադրել նույն բանկում և ստանալ 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ, 23 ամիս մարման ժամկետով: Վոլոդյայի մոտ եղել է մի փաստաթուղթ, որում իրենք պետք է ստորագրեին և տային իրենց համաձայնությունը՝ բանկից վարկ վերցնելու համար: Այդ փաստաթուղթը տպագիր է եղել, սակայն դրանում նշված չի եղել վարկի գումարի չափը: Բաժնետերերով ստիպել են այդ փաստաթղթում գրել կոնկրետ գումարի չափը և հենց իրենց ներկայությամբ, Վոլոդյա Վարդանյանը գրիչով նշել է վարկի գումարի չափը՝ 16.000.000 ՀՀ դրամ գումար: Բացի Արուսյակից, բոլոր բաժնետերերով համաձայնվել և ստորագրել են այդ փաստաթուղթը: Քանի որ բոլորը ստորագրել են, ապա Արուսյակը նույնպես ճարահատյալ ստորագրել է այն: Վերջինս ցանկացել է այդ փաստաթուղթը պատճենահանել, սակայն Վոլոդյան փաստաթուղթը խլել է նրանից և շտապ դուրս եկել դեղատնից: Տեղյակ է, որ որոշ ժամանակ անց, իրենց ընկերության հաշվին փոխանցվել է 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ: Հետագայում տեղեկացել է, որ տարածքը բանկին վարձակալությամբ տրվել է ոչ թե ամսեկան 700.000 ՀՀ դրամով, այլ՝ 2.450.000 ՀՀ դրամով, իսկ վերցված վարկի գումարի չափը կազմել է ոչ թե 16.000.000 ՀՀ դրամ, այլ՝ 193.000.000 ՀՀ դրամ: Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը խաբել են իրենց:
25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով իբրև թե որոշվել է բանկից վերցնել 193.407.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ, ինքը չի ստորագրել և այդ կեղծված արձանագրությունում իր տվյալների մոտ դրված ստորագրությունն իրենը չէ:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 3, գ. թ. 185-186/
Տուժող Անուշ Նազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 10, գ.թ. 89-91, 123-124/
Տուժող Ազիզ Վլադիմիրի Ստեփանյանի ցուցմունքներով այն մասին, որ 1987թ.-ից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14

հասցեում գտնվող դեղատանը: 1996թ. դեղատունը սեփականաշնորհվել է: Տնօրեն Իգոր Մանդելը ստացել է 40 տոկոս բաժնեմասը, իսկ մնացած 60 տոկոս բաժնեմասը ստացել են կոլեկտիվի անդամները, յուրաքանչյուրը՝ 2,6 տոկոսի չափով: 2007թ. հունիսին, Իգոր Մանդելը հրավիրել է ընկերության բաժնետերերի ժողով: Քանի որ ինքը հանդիսացել է ընկերության բաժնետեր, նույնպես ներկա է եղել այդ ժողովին: Ըստ ընկերության կանոնադրության՝ հանդիսանում է ընկերության 2,6 տոկոսի բաժնետերը, սակայն շուրջ 7-8 տարի առաջ, բաժնետերերից Բավականը, որի ազգանունը չգիտի, գտնվելով ԱՄՆ-ում, սեփական բաժնեմասից, որը կազմել է 2,6 տոկոս, հրաժարվել է հօգուտ իրեն, որի համար ինքը նրա ամուսին Գագիկին, Երևանում տվել է 604.000 ՀՀ դրամ գումար: Նա կնոջ լիազորմամբ փաստաթուղթ է ստորագրել և տվել իրեն՝ կնոջ բաժնեմասը իրեն փոխանցելու վերաբերյալ: Ժողովի ժամանակ Իգոր Մանդելը իրենց ներկայացրել է Աշոտ Հակոբյանին և Վոլոդյա Վարդանյանին: Ընդ որում Իգորն ասել է, որ Աշոտը նրա ընտանիքի բարեկամն է, իսկ Վոլոդյան Աշոտի բարեկամն է, որն ունի աուդիտորական գրասենյակ և ընկերության հաշվապահական գործերն այսուհետև նա է կատարելու: Ժողովի ժամանակ Աշոտը, Իգորը և Վոլոդյան առաջարկել են իրենց դեղատան մի մասը վարձակալությամբ տալ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին, որպեսզի դրանով հնարավոր լինի կարգավորել ընկերության տնտեսական գործունեությունը: Այդ ժամանակ վարձավճարի չափի մասին որևէ խոսակցություն տեղի չի ունեցել: Բաժնետերերով, որին ներկա են եղել 10 բաժնետերեր՝ ինքը, Իգոր Մանդելը, Նազիկ Թադևոսյանը, Արուսյակ Ավետիսյանը, Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Ռիմա Աղաջանովան, Մելանյա Նազարյանը, Ալվարդ Արզումանյանը և Նինա Պողոսյանը, համաձայնվել են նորմալ պայմանների դեպքում հավանություն տալ առաջարկին: Կազմվել է ժողովի մասնակիցների արձանագրություն: Չի հիշում, թե կոնկրետ ով է այն կազմել և որտեղ, որից հետո բոլոր 10 բաժնետերերով ստորագրել են այն՝ տալով համաձայնություն՝ նշված բանկին դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու վերաբերյալ:

Շուրջ մեկ շաբաթ անց, երբ Աշոտ Հակոբյանն Իգոր Մանդելի հետ գտնվել է դեղատանը, իրենք դեղատան աշխատակիցներով հարց են ուղղել Իգոր Մանդելին, թե որքան է կազմելու տարածքի վարձակալության վճարի չափը: Իգոր Մանդելը պատասխանել է, որ տարածքը վարձակալությամբ է տրվելու 7.000 ԱՄՆ դոլար գումարով: Այդ պատասխանից հետո միջամտել է Աշոտ Հակոբյանը և խոսքն ուղղելով Իգոր Մանդելին՝ ասել. «700.000 դրամը 7.000 դոլարից չե՞ս տարբերում, եթե հայերեն խոսել չգիտես, մի խոսի»: Իրենք հասկացել են, որ վարձավճարի չափը լինելու է 700.000 ՀՀ դրամ գումար:

Դրանից շուրջ մեկ շաբաթ անց, Իգոր Մանդելը բաժնետերերին ներկայացրել է նշված բանկին տարածքի մի մասը վարձակալությամբ տալու վերաբերյալ պայմանագիր, որում դրված է եղել ինչ-որ կնիք, սակայն թե որ կազմակերպության՝ ուշադրություն չի դարձրել: Պայմանագրում վարձավճարի չափը նշված է եղել ամսեկան 700.000 ՀՀ դրամ գումար: Փաստորեն վարձակալության պայմանագիրն արդեն կնքված է եղել և իրենք Իգոր Մանդելին առարկություններ չեն ներկայացրել: Մի քանի օր անց, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը դեղատանը, հերթափոխում գտնվող աշխատակիցներին, այդ թվում նաև իրեն, ներկայացրել են նշված բանկի և իրենց ընկերության միջև կազմված պայմանագիր, ըստ որի՝ բանկը իրենց ընկերությանը տրամադրում է վարկ՝ 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով, տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով, 23 ամսում մարելու պայմանով: Նրանք երկուսով բացատրել են, որ ստացված 16.000.000 ՀՀ դրամ գումարով կփակվեն ընկերության ունեցած պարտքերը, ձեռք կբերվեն անհրաժեշտ դեղամիջոցներ և դրանով կկարգավորվի ընկերության ֆինանսական վիճակը, իսկ 23 ամիս անց կսկսվեն տնօրինվել

վարձավճարի գումարները: Այդ պայմանագիրը մի քանի օր մնացել է Իգոր Մանդելի աշխատասեղանին և այդ ընթացքում բոլոր բաժնետերերը, իրենց հերթափոխների ժամանակ, ստորագրել են դրա տակ: Աշոտ Հակոբյանը նշված գումարի չափով վարկ վերցնելու վերաբերյալ իր հետ խոսակցություններ չի վարել և դրանց ներկա չի գտնվել, բացառությամբ այն մի արտահայտության, որի մասին արդեն նշել է:
Վոլոդյա Վարդանյանի անհետացումից հետո, 2008թ. ապրիլի վերջին-մայիսի սկզբին, բաժնետերերին, այդ թվում իրեն, հայտնի է դարձել, որ բանկին տարածքը վարձակալությամբ հանձնելու գումարի չափը կազմել է ոչ թե 700.000 ՀՀ դրամ, այլ՝ 2.450.000 ՀՀ դրամ, իսկ բանկից որպես վարկ վերցվել է ոչ թե 16.000.000, այլ՝ 193.000.000 ՀՀ դրամ գումար:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 1, գ.թ. 164-166/
Տուժող Ազիզ Ստեփանյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 10 գ.թ. 80-81, 128-129/
Տուժող Մելանյա Մանթաշի Նազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1979թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ: Հանդիսանում է ընկերության բաժնետերը: Աշոտ Հակոբյանը, որին ճանաչում է որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկեր, դեղատուն սկսել է ավելի հաճախակի գալ այն ժամանակ, երբ խոսակցություններ են գնացել իրենց ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին հանձնելու վերաբերյալ: Քանի որ ընկերությունն ունեցել է ֆինանսական դժվարություններ, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը, 2007թ. գարնան վերջերին, երբ բոլոր 10 բաժնետերերով ներկա են եղել դեղատանը, առաջարկել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ նշված բանկին՝ նշելով, որ վարձակալության գումարն ամսեկան կազմելու է 700.000 ՀՀ դրամ: Դրանից առաջ, երբ Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը գտնվել են դեղատանը, Իգոր Մանդելն ասել է, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 ԱՄՆ դոլար գումար, սակայն Աշոտ Հակոբյանն ուղղել է նրան՝ նշելով, որ նա 7.000 դոլարը չի կարողանում տարբերել 700.000 դրամից և որ վարձակալության գումարի չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ գումար:
2007թ. մայիսի վերջին, կոնկրետ օրը չի հիշում, Իգոր Մանդելը հրավիրել է ընկերության բաժնետերերի ժողով: Այդ ժամանակ Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ, ներկայացրել են նրան որպես լավ հաշվապահ՝ ասելով, որ նա կարող է գրագետ կազմակերպել տարածքը բանկին վարձակալությամբ հանձնելու գործընթացը: Վոլոդյան իրենց է ներկայացրել մի պայմանագիր կամ պայմանագրի օրինակ, որտեղ նշված է եղել, որ դեղատան տարածքի մի մասը, 10 տարի ժամանակով, ամսեկան 700.000 ՀՀ դրամ վարձավճարով տրվելու է կամ տրվել է վարձակալությամբ նշված բանկին: Չի կարող ասել, թե պայմանագիրն արդեն կնքված և ստորագրված է եղել, թե ոչ: Բաժնետերերից Արուսյակը պահանջել է, որպեսզի պատճենահանվի պայմանագիրը, որից հետո ինքն այն տարել և պատճենահանման կետում պատճենահանել է, որն իրենք պահել են իրենց մոտ: Իգոր Մանդելը պատճառաբանելով, որ յուրաքանչյուր փաստաթուղթ չբերվի և բոլոր բաժնետերերը դրանք ստորագրելու համար յուրաքանչյուր անգամ չհավաքվեն, առաջարկել է լիազորագիր տալ Վոլոդյա Վարդանյանին՝ նշված բանկի հետ կապված գործերով ընկերության անունից որպես ներկայացուցիչ հանդես գալու համար: Ժողովի ժամանակ շոշափվել է նաև ընկերության տարածքը գրավադնելու դիմաց բանկից վարկ վերցնելու հարցը, որպեսզի վերցված գումարով հնարավոր լինի կարգավորել ընկերության ֆինանսական վիճակը: Վարկի չափի մասին խոսակցություն այդ ժամանակ չի գնացել: 1-2 օր անց, Վոլոդյան և Աշոտ Հակոբյանը

նորից եկել են դեղատուն: Վոլոդյան բերել է արդեն իսկ համակարգչով տպված ընկերության ժողովի արձանագրություն, ինչպես նաև նշված լիազորագիրը: Բաժնետերերով ծանոթացել են տպագրված երկու տեքստերին և ստորագրել այդ փաստաթղթերը՝ դրանով Վոլոդյային իրավունք տալով իրականացնել ընկերության անունից բանկի հետ գործարքը: Արձանագրության մեջ վարկի գումարի չափը նշված չի եղել:
2007թ. հունիսի կեսերին, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն և Իգոր Մանդելի հետ սկսել են ընկերության բաժնետերերին համոզել, որպեսզի դեղատան տարածքը գրավադրելով՝ բանկից վերցվի 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը շեշտել են, որ պետք է վերցվի 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ, 23 ամսվա մարման ժամկետով, տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով: Նրանք վստահեցրել են, որ դա ձեռնտու տարբերակ է և այդպիսով կկարգավորվեն ընկերության գործերը: Բաժնետերերը, բացի Արուսյակ Ավետիսյանից, համաձայնվել են նրանց առաջարկի հետ:
Դրանից մի քանի օր անց, Վոլոդյա Վարդանյանն ու Աշոտ Հակոբյանը կրկին եկել են դեղատուն: Վոլոդյա Վարդանյանն իրենց ներկայացրել է արդեն իսկ համակարգչով տպված մի պայմանագիր, որով ընկերությունը 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ է վերցնում նշված բանկից: Մինչև վերջին պահը, Արուսյակը հրաժարվել է ստորագրել պայմանագիրը, սակայն քանի որ բոլոր բաժնետերերը համաձայնվել և ստորագրել են այն, Արուսյակը նույնպես ստորագրել է: Արուսյակը պահանջել է, որպեսզի այդ փաստաթուղթն էլ պատճենահանվի, սակայն Վոլոդյան պայմանագիրը չի տվել՝ պատճառաբանելով, որ շտապում է:
Հուլիսին իրենց ընկերությունը ստացել է 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ և դրանով փակել է ունեցած պարտքերը, բանկն էլ զբաղեցրել է վարձակալած տարածքը: Բաժնետերերով Իգոր Մանդելից պահանջել են տրամադրել վարկի մարման գրաֆիկը, սակայն նա այն չի տվել և պատճառաբանել է, որ այդ փաստաթուղթը, մյուս բոլոր փաստաթղթերի հետ միասին գտնվում են Վոլոդյա Վարդանյանի մոտ և նա է կատարում հաշվապահական անհրաժեշտ գործողությունները: Երբ հարուցվել է քրեական գործ՝ իրենք տեղեկացել են, որ տարածքի վարձակալության ամսեկան վճարի չափը կազմում է ոչ թե 700.000 ՀՀ դրամ, այլ՝ 2.450.000 ՀՀ դրամ գումար, իսկ ընկերության անունից վերցված վարկի չափը ոչ թե 16.000.000 ՀՀ դրամ է, այլ՝ շուրջ 190.000.000 ՀՀ դրամ: Իրենց պարզ է դարձել, որ խաբվել են Իգոր Մանդելի, Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի կողմից:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 9, գ.թ. 57-60/
Տուժող Մելանյա Նազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 10, գ.թ. 97-99, 139-140/
Տուժող Նինա Արշավիրի Պողոսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1980թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007 թվականից ճանաչում է Աշոտ Հակոբյանին որպես ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ծանոթի: 2007թ. մայիսին տեղի է ունեցել իրենց ընկերության բաժնետերերի ժողով, որին մասնակցել են նաև Աշոտ Հակոբյանը և վերջինիս բարեկամ Վոլոդյա Վարդանյանը: Այդ օրը քննարկվել է ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ տրամադրելու հարցը: Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն ասել են, որ Վոլոդյա Վարդանյանը պետք է իրականացնի ընկերության հաշվապահական գործողությունները և պետք է զբաղվի բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով: Ժողովի ընթացքում Իգոր Մանդելը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը բաժնետերերին ներկայացրել են, որ տարածքի

վարձակալության ամսեկան վճարի չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ գումար և համոզել են իրենց, որ դա զգալի չափով կկարգավորի ընկերության ֆինանսական գործերը: Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել պայմանագիր, որքանով հիշում է, այն կնքված է եղել ինչ-որ կնիքով, որում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը կազմում է 700.000 ՀՀ դրամ գումար: Իրենք համաձայնվել են այդ պայմանի հետ: Հաջորդ օրը բաժնետերերով կրկին հավաքվել են և Վոլոդյա Վարդանյանն ու Աշոտ Հակոբյանը կրկին եկել են դեղատուն: Վոլոդյան տվել է տպագրված լիազորագիր, որը բաժնետերերով ստորագրել են: Դրանով լիազորել են Վոլոդյա Վարդանյանին, որպեսզի նա ընկերության անունից իրականացնի վարձակալության գործարքի հետ կապված հարցերը: Ստորագրել են նաև մեկ այլ լիազորագիր, որով լիազորել են Իգոր Մանդելին կատարել ընկերության տնօրենի պարտականությունները: Այդ օրը ստորագրել են նաև ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ տարածքը բանկին վարձակալությամբ տալու համար: Որոշակի ժամանակ անց, բաժնետերերով կրկին են հավաքվել: Իգոր Մանդելը, Աշոտը Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը կրկին եկել են դեղատուն: Նրանք հարց են բարձրացրել դեղատունը գրավադրելու դիմաց նշված բանկից վարկ վերցնելու վերաբերյալ՝ շեշտելով, որ պետք է վերցվի 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ, 23 ամսվա մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով: Բաժնետերերին տվել են ստորագրել վարկի վերաբերյալ մի փաստաթուղթ, որն իրենք ստորագրել են: Փաստաթղթում նշված է եղել, որ վարկի գումարի չափը կազմում է 16.000.000 ՀՀ դրամ գումար:
2008 թվականին, երբ հարուցված է եղել քրեական գործը, տեղեկացել է, որ իրենց դեղատան տարածքի վարձակալության ամսեկան վճարը կազմել է ոչ թե 700.000 ՀՀ դրամ, այլ՝ 2.450.000 ՀՀ դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 ՀՀ դրամ գումար, այլ՝ 193.000.000 ՀՀ դրամ:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 9, գ.թ. 61-64/
Տուժող Նինա Պողոսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 10, գ.թ. 105-106, 130/
Տուժող Ալվարդ Հակոբի Արզումանյանի ցուցմունքներով այն մասին, որ 1982թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007 թվականից ճանաչում է Աշոտ Հակոբյանին՝ որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկերոջ և ծանոթի: 2007թ. մայիսին Իգոր Մանդելն ընկերության մյուս 9 բաժնետերերին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ կապված «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին իրենց ընկերությանը պատկանող դեղատան մի մասը վարձակալությամբ տրամադրելու հարցի հետ: Այդ ժամանակահատվածից սկսած Աշոտ Հակոբյանը պարբերաբար եկել է դեղատուն և մասնակցել բազմաթիվ խոսակցությունների ու քննարկումների: Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ՝ ասելով, որ նա իրականացնելու է ընկերության հաշվապահական գործողությունները և զբաղվելու է բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով:
2007թ. մայիսի վերջին կայացել է ընկերության բաժնետերերի ժողով, որի ընթացքում Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը ներկայացրել են, որ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տալու վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ գումար: Դրանից մի քանի օր առաջ, իր ներկայությամբ, երբ Իգոր Մանդելն ասել է, որ տարածքի ամսեկան վարձավճարի չափը կազմելու է 7.000 դոլար, Աշոտ Հակոբյանը շտկել է Իգոր Մանդելի ասածը՝ նշելով, որ վարձավճարի չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ գումար: Ընկերության բաժնետերերի ժողովի ժամանակ Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել

պայմանագիր: Չգիտի, թե այն կնքված և ստորագրված է եղել, թե ոչ, որում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը 700.000 ՀՀ դրամ է: Հաջորդ օրը, բաժնետերերով կրկին հավաքվել են: Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն և Վոլոդյա Վարդանյանին իրենց է տվել տպագրված լիազորագիր, որն իրենք ստորագրել են՝ լիազորելով Վոլոդյա Վարդանյանին ընկերության անունից կատարել տարածքը վարձակալությամբ տալու հետ կապված գործը: Իրենք ստորագրել են նաև ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տրամադրելու համար: Մի քանի օր անց, Վոլոդյա Վարդանյանն իրենց տվել է ստորագրել մի լիազորագիր, որով բաժնետետերով լիազորել են Իգոր Մանդելին իրականացնել ընկերության տնօրենի պարտականությունները:
Որոշ ժամանակ անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը կոնկրետ հարց են բարձրացրել՝ դեղատան գրավադրմամբ բանկից 16.000.000 ՀՀ դրամի չափով վարկ վերցնելու վերաբերյալ: Վոլոդյան բաժնետերերին տվել է ստորագրել պայմանագիր, որում նշված է եղել, որ վերցվող վարկի գումարի չափը 16.000.000 ՀՀ դրամ է: Աշոտը Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը պնդել են, որ այդ գումարի չափով վարկը ձեռնտու է ընկերությանը, դրանով կկարգավորվեն շատ հարցեր: Իրենք փորձել են պատճենահանել այդ փաստաթուղթը, բայց Վոլոդյան թույլ չի տվել՝ պատճառաբանելով, որ շտապում է: Հետագայում, երբ քրեական գործ է հարուցվել, ինքը տեղեկացել է քննիչից, որ դեղատան տարածքի վարձակալության ամսեկան վճարը կազմում է ոչ թե 700.000 ՀՀ դրամ, այլ՝ 2.450.000 ՀՀ դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 ՀՀ դրամ, այլ՝ 190.000.000 ՀՀ դրամ գումար:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 9, գ.թ. 66-69/
Տուժող Ալվարդ Արզումանյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 10 գ.թ. 95-96, 116/
Տուժող Նազիկ Վահագի Թադևոսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1981թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ. սկզբներից Աշոտ Հակոբյանը սկսել է պարբերաբար հաճախել իրենց դեղատուն, ընկերության տնօրեն Իգոր Մանդելի մոտ: Իր մոտ տպավորություն է ստեղծվել, որ նա Իգոր Մանդելի մտերիմն է: 2007թ. մայիսի վերջերին, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը Վոլոդյային ներկայացրել են որպես աուդիտորական գրասենյակի ներկայացուցիչ և Աշոտ Հակոբյանի բարեկամ: Նրանք երեքով ընկերության բաժնետերերին առաջարկել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին: Այդ օրը վարձավճարի չափի վերաբերյալ խոսակցություն տեղի չի ունեցել: Հանդիպմանը ներկա են գտնվել իրենց ընկերության բոլոր 10 բաժնետերերը, քանի որ Իգոր Մանդելն իրենց նախապես տեղյակ է պահել հավաքվելու մասին: Աշոտի և Վոլոդիայի գնալուց հետո, իրենց հարցին Իգոր Մանդելը պատասխանել է, որ տարածքի վաձակալության վարձավճարի չափը մոտավորապես կազմելու է 7.000 ԱՄՆ դոլար:
2007թ. հունիսի սկզբին, Իգոր Մանդելն ընկերության բաժնետերերին հրավիրել է ժողովի, որին ներկա են գտնվել նաև Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Ժողովը նախագահել է Իգոր Մանդելը, իսկ քարտուղարն է եղել Կարինե Ղազարյանը: Ժողովի ընթացքում Վոլոդյա Վարդանյանն ասել է, որ տարածքը վարձակալությամբ վերցնելու համար նշված բանկը պատրաստ է ամսեկան վճարել 700.000 ՀՀ դրամ գումար: Բաժնետերերով արտահայտել են իրենց դժգոհությունը՝ կապված վարձավճարի չափը քիչ լինելու հետ: Մինչ այդ Աշոտ Հակոբյանն ընդհատել է Իգոր Մանդելի և մյուս բաժնետերերի միջև ծագած վիճաբանությունը և ասել, որ Իգոր

Մանդելը նախկինում շփոթել է՝ ասելով, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 ԱՄՆ դոլար, այն 700.000 ՀՀ դրամ է լինելու: Քանի որ ընկերությունը գտնվել է ֆինանսական ծանր վիճակում, համաձայնվել են ամսեկան 700.000 ՀՀ դրամ գումարով դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ նշված բանկին: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը վստահեցրել և խոստացել են, որ վարձավճարի չափը 2 տարի անց վերանայվելու և զգալի չափով բարձրանալու է: Այդ օրը բաժնետերերով ոչ մի փաստաթուղթ, այդ թվում նաև ժողովի արձանագրություն չեն ստորագրել: Հաջորդ օրը դեղատուն են եկել Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Նրանք ներկայացրել են պայմանագիր, որում նշված է եղել, որ իրենց ընկերությունը նշված բանկին 10 տարի ժամկետով տարածքը տալիս է վարձակալությամբ, ամսեկան 700.000 ՀՀ դրամ գումարով: Պայմանագիրը կնիքված է եղել, թե ոչ՝ չի հիշում: Բաժնետեր Արուսյակ Ավետիսյանը վերցրել է այդ պայմանագիրը, տարել ու պատճենահանել է այն: Բոլոր 10 բաժնետերերով իրենց տվյալների դիմաց ստորագրել են: Նրանք 3-ով վերցրել են պայմանագիրը և հեռացել: Բաժնետերերով տվել են լիազորագիր՝ Վոլոդյա Վարդանյանի կողմից վարձակալության հարցերով ընկերության անունից հանդես գալու համար: Երկու թե երեք օր անց, նորից դեղատուն են եկել Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը, առաջարկել են դեղատան տարածքի գրավադրմամբ բանկից վարկ վերցնել: Նրանք ներկայացրել են, որ վարկի մարման ժամանակահատվածը լինելու է 5 տարով, սակայն ի վերջո, բաժնետերերով համաձայնվել են վարկ վերցնել 23 ամիս մարման ժամկետով, իսկ վարկի գումարի չափ է որոշվել 16.000.000 ՀՀ դրամ գումար: Հաջորդ օրը, նույն 3 անձինք կրկին եկել են դեղատուն՝ իրենց հետ բերելով վարկային պայմանագիր: Չի հիշում, թե պայմանագիրը կնիքված է եղել, թե ոչ: Իրենք ծանոթացել են պայմանագրի հետ, բոլոր բաժնետերերով ստորագրել են դրա վերջում, սակայն Վոլոդյա Վարդանյանը թույլ չի տվել պատճենահանել այն:
2008թ. ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին, Իգոր Մանդելը դեղատանը բաժնետերերին ասել է, որ Վոլոդյա Վարդանյանն ընկերության հաշվեհամարից հանել է 60.000.000 ՀՀ դրամ գումար և փախել է: Հարցին, թե որտեղից իրենց հաշվեհամարին այդքան գումար, Իգոր Մանդելը պատասխանել է, որ չգիտի: Ավելի ուշ, երբ արդեն հարուցվել է քրեական գործ, քննիչից իմացել է, որ դեղատան տարածքը նշված բանկին հանձնվել է ոչ թե 700.000 ՀՀ դրամ ամսեկան վարձավճարով, այլ՝ 2.450.000 ՀՀ դրամ գումարով, իսկ բանկից վարկ վերցված գումարի չափն իրականում կազմում է ոչ թե 16.000.000 ՀՀ դրամ, այլ՝ 193.000.000 ՀՀ դրամ:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 8, գ.թ. 88-89/
Տուժող Նազիկ Թադևոսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 10, գ.թ. 86-88, 121-122/
Տուժող Ռիմա Ռուբենի Աղաջանովայի ցուցմունքներով այն մասին, որ 1965թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007 թվականից ճանաչում է Աշոտ Հակոբյանին՝ որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկերոջ: 2007թ. մայիսին, Իգոր Մանդելն ընկերության մյուս 9 բաժնետերերին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ կապված իրենց ընկերությանը պատկանող դեղատան մի մասը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ տրամադրելու հարցի հետ: 2007թ. մայիսին Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են նաև Վոլոդյա Վարդանյանի հետ՝ ասելով, որ նա իրականացնելու է ընկերության հաշվապահական գործողությունները և զբաղվելու է բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով:
2007թ. մայիսի վերջին, կոնկրետ օրը չի հիշում, կայացել է

ընկերության բաժնետերերի ժողով, որի ընթացքում Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանն իրենց ներկայացրել են, որ բանկին տրվելիք տարածքի ամսեկան վարձակալության գումարի չափը կազմելու է 700.000 ՀՀ դրամ և համոզել են համաձայնվել այդ տարբերակի հետ: Ժողովի ժամանակ Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել պայմանագիր, որքանով հիշում է այն կնիքված է եղել ինչ-որ կնիքով, Պայմանագրում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը 700.000 ՀՀ դրամ գումար է: Իրենք համաձայնվել են այդ պայմանի հետ: Հաջորդ օրը, բաժնետերերով կրկին հավաքվել են: Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը նույնպես ներկա են գտնվել: Վերջինս տվել է տպագրված լիազորագիր, որն իրենք ստորագրել են՝ լիազորելով Վոլոդյային, որպեսզի նա ընկերության անունից կատարի դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալու հետ կապված գործը: Այդ օրը ստորագրել են նաև ընկերության բաժնետերերի ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տալու համար: Որոշ ժամանակ անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Իգոր Մանդելը, Աշոտը Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը հարց են բարձրացրել՝ դեղատունը գրավադնելով՝ բանկից 16.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ վերցնելու վերաբերյալ: Նրանք բաժնետերերին տվել են ստորագրել վարկային պայմանագիրը, որն իրենք կատարել են: Դրանում նշված է եղել, որ վարկի գումարի չափը 16.000.000 ՀՀ դրամ է: Ինչպես Աշոտ Հակոբյանը, այնպես էլ Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը համոզել են իրենց, որ այդ չափով վարկ վերցնելը ծեռնտու է լինելու ընկերության համար: Վոլոդյան թույլ չի տվել պատճենահանել այդ փաստաթուղթը: 2008 թվականին, երբ քրեական գործ է հարուցվել, բաժնետերերով տեղեկացել են, որ վարձակալության ամսեկան վճարը եղել է ոչ թե 700.000 ՀՀ դրամ, այլ՝ 2.450.000 ՀՀ դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 ՀՀ դրամի, այլ՝ 193.000.000 ՀՀ դրամի չափով:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 9, գ.թ. 70-73/
Տուժող Ռիմա Աղաջանովան իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:
/հատոր 10, գ.թ. 103-104, 141/
Վկա Ինգա Իգորի Մանդելի ցուցմունքներով այն մասին, որ մասնագիտությամբ բժիշկ-ռադիոլոգ է, աշխատում է պրոֆեսոր Ավդալբեկյանի անվան բժիշկների կատարելագործման ազգային ինստիտուտի ճառագայթային դիագնոստիկայի ախտորոշման ռենտգեն ամբիոնում որպես ասիստենտ և Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոնի ռենտգեն բաժանմունքի վարիչ: Իգոր Մանդելը իր հայրն է, վերջինս 1971թ.-ից աշխատում է Բագրատունյաց թիվ 14ա հասցեում գտնվող թիվ 8 դեղատանը որպես վարիչ: 1996թ.-ից դեղատունը սեփականաշնորհվել է և կազմավորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն, որի տնօրեն է նշանակվել հայրը: 2003-2004թթ.-ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին, ընտանիքներով մտերիմ են: Վոլոդյա Վարդանյանին մի քանի անգամ տեսել է Աշոտի տանը, միջոցառումների ժամանակ: Տեղեկացել է, որ դեղատան տարածքը 2007թ. հուլիսից տրվել է վարձակալությամբ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին և Վոլոդյան հորը համոզել է միանվագ վերցնել 10 տարվա վարձավճարի գումարը, որպեսզի «Ֆորեքս»-ի միջոցով այդ գումարը դրվի շրջանառության մեջ և եկամուտ ստացվի: Վարկի ընդհանուր գումարը եղել է 193.000.000 ՀՀ դրամ, որից 16.000.000 ՀՀ դրամը փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվեհամարին, իսկ մնացած 176.000.000 ՀՀ դրամը փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ին: 2007թ. նոյեմբերին Աշոտի հետ հանդիպել են Վոլոդյային, սակայն վերջինս հրաժարվել է վճարել եկամտի տոկոսները՝ պատճառաբանելով, որ այն կատարելու է 6 ամիս անց: Կասկած է առաջացել, որ Վոլոդյան կարող է խաբել և որոշել են գումարը մաս-մաս վերցնել: Իր հաշվին 3 անգամով փոխանցվել են գումարներ՝

5.000.000, 15.000.000 և 16.000.000 ՀՀ դրամ գումարների չափով, իսկ Աշոտի անվամբ, երեք դեպքով, 41.000.000 ՀՀ դրամ գումար: Ինքը նշված գործարքի հետ ոչ մի առնչություն չի ունեցել: Այն, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն դեղատան տարածքի մի մասը 2007թ. ամռանը վարձակալությամբ տվել է «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին և վերցրել է վարկով գումարներ, ինքը լսել է հորից և Աշոտ Հակոբյանից: Լսել է, որ հայրը վստահել է Վոլոդյային՝ իրականացնել ընկերության ֆինանսական և հաշվապահական գործողություններին վերաբերվող հարցերը, սակայն Վոլոդյան, որին Աշոտն իր հորը ներկայացրել է որպես լավ մասնագետ և վստահելի մարդ, խաբել է և հափշտակել որպես վարկ վերցված գումարների մեծ մասը: Ինքը չի իմացել, թե տարածքը վարձակալությամբ կոնկրետ ինչ գումարով է տրվել բանկին: Չի իմացել նաև, թե որքան է կազմել վերցված վարկի գումարի չափը: Այդ խոսակցություններին, նաև ընկերության բաժնետերերի հետ անցկացված քննարկումներին չի մասնակցել և դրանցից ոչ մի տեղեկություններ չի ունեցել: Աշոտն ու հայրն իրեն այդ ժամանակահատվածում նշված գործերի վերաբերյալ որևէ մանրամասներ չեն ներկայացրել: Այդ մասին ինքն իմացել է ավելի ուշ, երբ 2008թ. ապրիլի վերջին, Վոլոդյայի որդիները սկսել են ահաբեկել և սպառնալ ինչպես իրեն, այնպես էլ հորն ու Աշոտին: Այդ ժամանակ էլ Աշոտն իրեն պատմել է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի դեղատան մի մասը ամսեկան 2.450.000 ՀՀ դրամ գումարով վարձակալությամբ տրվել է նշված բանկին, բանկից վերցվել է շուրջ 193.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ և այդ գումարների մեծ մասը Վոլոդյան յուրացրել և անհետացել է: Երբ իր հաշվին փոխանցված վերը նշված գումարները կանխիկացրել է, չի իմացել, թե դրանք որ կազմակերպությունից են ուղարկվել իր հաշվին: Նշված բանկում իր անձնական հաշիվը բացված է եղել դեռևս 2006 թվականին: Աշոտն իրեն այդ 3 դեպքերում խնդրել է, որպեսզի ինքը գնա բանկ և անձնական հաշվից հանի գումարներ՝ չասելով, թե դրանք կոնկրետ որ կազմակերպությունից են ուղարկվել և ինչի համար: Ինքն էլ չի խառնվել նրա գործերին՝ մտածելով, որ նա գործունյա մարդ է և այդ գումարներն ուղարկվել են նրա բիզնեսի հետ կապված: Կանխիկացված բոլոր գումարներն ինքը տվել է Աշոտին: Միայն 2008թ. ապրիլի վերջին է Աշոտն իրեն ասել, որ իր հաշվեհամարին փոխանցված այդ գումարները եղել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի վարկի գումարները: Նա հայտնել է նաև, որ մեծ դժվարությամբ է կարողացել դրանք ստանալ Վոլոդյայից և դրանցով գնել է շինություն էրեբունի թաղամասում, որպեսզի այդ գումարները փրկի, դրանք տանը չպահի, որպեսզի Վոլոդյայից վերցնի մնացած գումարները ևս և դրանք տրամադրի «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին: Այդ ժամանակ Աշոտն ասել է նաև, որ Վոլոդյայի մոտ մնացել է 90.000.000 ՀՀ դրամի չափով գումար:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 1, գ.թ. 167-168, հատոր 3, գ. թ. 3-5, հատոր 10, գ.թ. 142/
Վկա Գագիկ Պարգևի Բատիկյանի ցուցմունքներով այն մասին, որ Վոլոդյա Վարդանյանն իր համագյուղացին է: Բացի այդ, նա հանդիսանում է իր քրոջ խնամին: Տարիների ընթացքում կարողացել է տնտեսել 15.000 ԱՄՆ դոլարի չափով գումար, որը պահել է «նեղ օրվա», աղջկա նշանադրության ու հարսանիքի ծախսերը հոգալու նպատակով: 2007թ. կեսերին, իրենց գյուղում հանդիպել է Վոլոդյա Վարդանյանին, որն առաջարկել է շրջանառության մեջ դնել գումար և ստանալ եկամուտ՝ բացատրելով, որ գումարը շրջանառության մեջ է դրվելու բանկի միջոցով: Ինքը Վոլոդյա Վարդանյանին է տվել 15.000 ԱՄՆ դոլար գումար, որը 2007թ. վերջին, Վոլոդյան ամբողջությամբ վերադարձրել է իրեն: Ինքը Վոլոդյա Վարդանյանից ոչ մի շահույթ այդ գումարի հետ կապված չի ստացել, քանի որ վերջինս բացատրել է, որ գումարն ինքը շուտ է պահանջել: Վոլոդյա Վարդանյանի առաջարկությամբ ինքը «Պրոմեթեյ» բանկում բացել է անձնական հաշվեհամար, որին էլ Վոլոդյա Վարդանյանը փոխանցել է իր կողմից տրամադրված գումարները: Իրեն հայտնի չէ, թե այդ գումարները Վոլոդյա Վարդանյանի կողմից ում կամ ինչ միջոցների

հաշվին են վերադարձվել իրեն և թե ինչ հանցանքներ է կատարել նա: Նաև չգիտի, թե որն է եղել նրա անհետանալու պատճառը: /դատական նիստի արձանագրություն, հատոր 4 գ. թ. 100-102/
Վկա Ալմաստ Վաչիկի Արևշատյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ Աշոտ Հակոբյանն իր ամուսինն է: Մոտավորապես 2005թ.-ից ճանաչում է Իգոր Մանդելին և մտերիմ հարաբերությունների մեջ են գտնվում նրա ընտանիքի անդամների հետ: Ամուսնու միջոցով Իգորը ծանոթացել է Վոլոդյա Վարդանյանի հետ, որը հանդիսանում է իր մորաքրոջ որդին: Նա զբաղվել է հաշվապահությամբ: Գիտի, որ 2007թ. ամռանն Իգորը դեղատունը հանձնել է վարձակալությամբ և վերցրել վարկ, որից 176.000.000 ՀՀ դրամ գումարը փոխանցել է Վոլոդյայի հաշվեհամարին: Վոլոդյան հաճախակի է այցելել իրենց տուն և միշտ խոսել է ինչ-որ «Ֆորեքս»-ի մասին՝ նշելով, որ դա շահութաբեր, եկամտաբեր գործ է և եթե գումարներ լինեն, կարելի է դրանով մեծ եկամուտներ վաստակել: Վոլոդյային հաջողվել է համոզել Աշոտին, որ Իգորի ստացած 176.000.000 ՀՀ դրամ գումարը փոխանցվի «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ «Ֆորեքս»-ի միջոցով շրջանառության մեջ դնելու համար: Իրենց տանը խոսակցության ժամանակ Վոլոդյան ասել է, որ այդ գումարից շրջանառության մեջ է դրել 38.000.000 և 17.000.000 ՀՀ դրամ գումար, իսկ հետագայում ասել է, որ միայն 110.000 ԱՄՆ դոլարն է կարողացել դնել շրջանառության մեջ՝ ամսեկան 4 տոկոս եկամտով: Վոլոդյան խախտել է ամուսնու հետ ձեռք բերված պայմանավորվածությունը, 3 ամսում չի վճարել տոկոսները և խոստացել է դա կատարել 6 ամիս անց: Աշոտը համաձայնվել է, սակայն 2008թ. փետրվարի 4-ին Վոլոդյան և նրա որդին գիշերով եկել են իրենց տան բակ, դուրս են կանչել Աշոտին և ասել են, որ նրանց աշխատակից Խաչիկին գողացել են, այդ իսկ պատճառով չեն կարող տալ տոկոսները:
2008թ. փետրվարի 15-ին, ինքն իր փեսայի հետ գնացել է Վոլոդյայի տուն՝ պարզաբանումներ ստանալու համար: Վոլոդյան խնդրել է տալ ևս երեք ամիս ժամանակ, որպեսզի նա կարողանա վճարել գումարները: Այդ ժամանակ Վոլոդյան ասել է, որ Խաչիկին ոչ թե գողացել են, այլ Խաչիկը վախից թաքնվել է, քանի որ չի կարողացել կազմակերպել գումարի շրջանառությունը: Ինքն ամուսնու փոխարեն համաձայնություն է տվել սպասել մինչև մայիսի 6-ը, իսկ Վոլոդյան, գողացած 7.000.000 ՀՀ դրամի համար արդարացել է՝ նշելով, որ այն վերցրել է քավորին օգնելու նպատակով: Այս մասին ինքն ամուսնուն ոչինչ չի ասել՝ մտածելով, որ Վոլոդյան հետագայում այդ գումարն աննկատ կվերադարձնի բանկ, սակայն պարզվել է, որ ամուսինը Վոլոդյայի արարքների մասին իրենից շուտ է իրազեկված եղել:
2008թ. ապրիլի 26-ի կեսօրին, իրենց տուն է զանգահարել Վոլոդյայի որդի Արմանը և սպառնացել սպանել իր ընտանիքի բոլոր անդամներին, եթե հորը չվերադարձնեն: Իսկ ապրիլի 27-ին Վոլոդյայի որդիները իր որդուն տարել են ինչ-որ տեղ, որտեղ Արամ Վարդանյանը հարվածել և հայհոյել է որդուն:
Դատարանում վկա Ալմաստ Արևշատյանը հրաժարվեց իր ամուսնու վերաբերյալ ցուցմունքներ տալուց:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 2, գ. թ. 148-150/
Վկա Արման Վոլոդյայի Վարդանյանի ցուցմունքներով այն մասին, որ հայրը՝ Վոլոդյա Վարդանյանը, հանդիսացել է «Իրավագարանտ» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ների տնօրենը: Տեղյակ չէ, թե «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն ինչ գործառույթներ է իրականացրել, իսկ «Իրավագարանտ» ՍՊԸ-ն զբաղվել է հաշվապահական գործունեությամբ: Պատանի հասակից ճանաչում է Աշոտ Հակոբյանին, որը հանդիսանում է հոր մորաքրոջ աղջկա ամուսինը: Իգոր Մանդելին ճանաչում է շուրջ մեկ տարի, նրան այդ ընթացքում մի քանի անգամ տեսել է իրենց գրասենյակում, որը տեղակայված է Երևանի Բաղրամյան թիվ 3ա հասցեում: Իգոր Մանդելը գրասենյակ է եկել Աշոտի և իր հոր հետ: Գիտի, որ Իգորն ունի «Շենգավիթ» անունով ՍՊԸ, որի գործունեությամբ զբաղվել է հայրը: Աշոտ Հակոբյանը ունի «Խաչվառ» անվանումով ՍՊԸ, որի հաշվապահությամբ նույնպես

զբաղվել է հայրը: Ինքը տեղյակ է, որ Իգորն ունեցել է տարածք և այն տվել է բանկին վարձով, որի դիմաց ստացված գումարի որոշ մասը փոխանցել է «Իրավագարանտ» ՍՊԸ-ի հաշվին, սակայն թե կոնկրետ ինչ գումար և ինչ նպատակով է փոխանցվել, ինքը տեղյակ չէ: Գիտի, որ հետագայում ընկերության հաշվեհամարին գումար չի մնացել:
2008թ. ապրիլի 24-ին հայրը տանից դուրս է եկել, որից հետո այլևս տուն չի վերադարձել: Հոր անհետացումից հետո «Իրավագարանտ» ՍՊԸ-ի տնօրեն է դարձել եղբայրը՝ Թորգոմ Վարդանյանը, իսկ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի տնօրեն՝ իր մյուս եղբայր Արամ Վարդանյանը: Տեղյակ լինելով, որ հայրն Աշոտ Հակոբյանի հետ ունեցել է գումարային խնդիրներ՝ 2008թ. ապրիլի 27-ին, ինքն իր հարսանիքի քավոր Վարդանի հետ գնացել է Աշոտ Հակոբյանի տուն՝ նրանից ճշտելու հոր գտնվելու վայրը: Աշոտը տանը չի եղել, հանդիպել են Աշոտի որդի Արմանին և երեքով քայլել են բակում: Այդ ընթացքում Արմանից հետաքրքրվել է իր հոր գտնվելու վայրի մասին: Քանի որ իրենց բարեկամ Արմեն Ումրշատյանից մինչ այդ լսել է, որ Աշոտը հայտարարել է, որ սպանելու է իր հորը ու տեղյակ լինելով, որ Աշոտն իր հորից ինչ-որ գումարներ է վերցրել ու չի վերադարձրել, սկսել է կասկածել, որ հոր անհետանալու հետ Աշոտը կարող է կապ ունենալ: Արման Հակոբյանի հետ զրույցի ընթացքում իրենց միջև վիճաբանություն և քաշքշուկ չի եղել, հայհոյանքներ չեն հնչել: Այդ զրույցին ներկա են եղել միայն իրենք երեքով:
2008թ. ապրիլի 26-ին ինքն ու Վարդանը գնացել են Իգոր Մանդելի տան բակ և խնդրել են, որպեսզի Իգորը դուրս գա տնից: Ինքը նրանից հետաքրքրվել է իր հոր գտնվելու վայրի մասին, սակայն Իգոր Մանդելը պատասխանել է, որ դրա վերաբերյալ տեղեկություններ չունի: Այդ խոսակցության ընթացքում, որին ներկա են եղել նորից երեքով, ոչ մի վիճաբանություն, քաշքշուկ տեղի չի ունեցել և հայհոյանքներ չեն հնչել: Հետո իրենք դիմել են ոստիկանություն՝ հաղորդում տալով հոր անհետացման վերաբերյալ: Այդ ընթացքում շարունակել են հոր որոնումները, սակայն նրան չեն գտել:
Հետագայում Արման Վարդանյանը ցուցմունք է տվել, որ տեղյակ է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ին է փոխանցվել 176.000.000 ՀՀ դրամ գումար, սակայն այդ գումարը հոր տնօրինած ընկերությանն է փոխանցվել ոչ թե մեկ տարի ժամանակով փոխառությամբ՝ ամսեկան 4 տոկոս տոկոսադրույքի վճարման պայմանով, այլ գումարը փոխառությամբ, անտոկոս, 10 տարի ժամկետով փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ին: Հոր անհետանալուց հետո ինքը գտել է այդ պայմանագիրը՝ կնքված նշված երկու ՍՊԸ-ների միջև:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 1, գ.թ. 96-99, հատոր 3, գ.թ. 51-52, 206-207, հատոր 8, գ.թ. 189-190, հատոր 9, գ.թ. 5, 19-20/
Վկա Արման Վոլոդյայի Վարդանյանը, Աշոտ Հակոբյանի հետ 05.08.2009թ. առերես հարցաքննության ժամանակ նշել է, որ ականատես է եղել, թե ինչպես Կարապետ Սաղոյանը, իր հորը պատկանող գրասենյակում, առձեռն Աշոտ Հակոբյանին է տվել ԱՄՆ դոլարների թղթադրամներ՝ նշելով, որ դրա չափը 70.000 ԱՄՆ դոլար է: Ինքը պատահական է մտել իր հոր գրասենյակ և տեսել դա, սակայն չի հիշում, թե դա կոնկրետ երբ է տեղի ունեցել: Չի կարող ասել նաև, թե այդ գումարն Աշոտ Հակոբյանը հետո դուրս հանել է հոր աշխատասենյակից, թե ոչ:
/հատոր 4, գ.թ. 127-131/
Վկա Կարապետ Սարիբեկի Սաղոյանի ցուցմունքներով այն մասին, որ 2006թ. դեկտեմբերի 22-ից հանդիսանում է իր ընկեր Սիմոն էլբակյանի կողմից հիմնադրված «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի տնօրենը: 2007թ. հոկտեմբերի սկզբին, իր ընկեր էդիկ Սահակյանն ասելով, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն Դիլիջան քաղաքում ունի չօգտագործված կոյուղու ջրագծի 1.000մմ տրամագծով խողովակներ, առաջարկել է մասնակցել խողովակների

ապամոնտաժման և հետագայում վաճառքի գործընթացին: Ինքը համաձայնվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ով իրականացնել ապամոնտաժման և վաճառքի գործողությունները: Իրենք դիմել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ առաջարկելով մասնակցել նշված գործընթացին: 2007թ. հոկտեմբերի 26-ին կնքել են պայմանագիր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ՝ Դիլիջան քաղաքում գտնվող խողովակաշարի 5.700 գծամետր խողովակները ապամոնտաժելու և պահեստավորելու մասին: Նախքան պայմանագիր կնքելը, իրենց անհրաժեշտ է եղել գտնել խողովակների գնորդի, որը նախապատրաստական աշխատանքների կատարման համար պատրաստ կլիներ վճարել կանխավճար: Այդպիսի առաջարկով դիմել են իր ծանոթ Աշոտին, որը պատրաստակամություն է հայտնել խողովակների գնորդ գտնել: Աշոտի հետ գնացել են Երևանի Բաղրամյան փողոցի սկզբնամասում գտնվող գրասենյակ, որը պատկանել է Վոլոդյա Վարդանյանին: Այնտեղ ծանոթացել են ինչպես վերջինիս, այնպես էլ Աշոտ Հակոբյանի հետ ու դիմել նշված առաջարկով: Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը ցանկություն են հայտնել տեղում տեսնել խողովակները, որից հետո գալ համաձայնության: Չի հիշում, թե ով է նրանց տարել և Դիլիջանում ցույց է տվել խողովակները, որից հետո նորից հանդիպել են նշված գրասենյակում: Հանդիպմանը ներկա են գտնվել ինքը, էդիկը, ընկեր Աշոտը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը: Քննարկել են խողովակների ձեռքբերման հետ կապված հարցերը և որոշել են կազմել պայմանագիր: Հաջորդ օրն ինքը, էդիկը, ընկեր Աշոտը և Վոլոդյան ծանոթացել են պայմանագրին և համոզվել, որ դրանում նշված են այն պայմանները, որոնք արդեն քննարկել են: Որպես խողովակներն իրացնող և «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, պայմանագիրը կնքել է և ստորագրել է ինքը, իսկ որպես խողովակների ձեռք բերող, «Խաչվառ» ՍՊԸ-ի անունից պայմանագիրը կնքել է Վոլոդյա Վարդանյանը: Հաջորդ օրը Վոլոդյա Վարդանյանը «Կոնվերս» բանկում գտնվող հաշվեհամարից փոխանցել է 35.000.000 ՀՀ դրամ՝ իր ընկերության հաշվեհամարին: Գումարն ինքը կանխիկացրել է և ամբողջությամբ հանձնել էդիկին: Ապամոնտաժման աշխատանքները տևել են 5 օր, որից հետո դադարեցվել են, որի մասին տեղյակ են պահել Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին: Այդ ժամանակ նրանք երկուսով առաջարկել են տրված 35.000.000 ՀՀ դրամը ետ վերադարձնել: Հենց հաջորդ օրը, ինքը, էդիկը, Ժորա Գևորգյանը գնացել են Երևանի Բաղրամյան թիվ 3 հասցեի գրասենյակ և էդիկը Վոլոդյային ու Աշոտ Հակոբյանին կանխիկ վերադարձրել են ստացված գումարից 70.000 ԱՄՆ դոլար գումարը: Գումարն ամբողջությամբ չի վերադարձվել, քանի որ դրա մի մասը ծախսվել է որոշակի չափով խողովակների ապամոնտաժման վրա: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ խողովակների ապամոնտաժման թույլտվությունը ստանալուց հետո էդիկը նորից գումարը հետ կվերցնի՝ աշխատանքները շարունակելու համար, սակայն թույլտվությունը չի ստացվել և գործարքը չի կատարվել: Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո, նրա որդիները, մասնավորապես Թորգոմը, հանդիպելով իրեն՝ առաջարկել են իրեն տալ ևս 20.000 ԱՄՆ դոլար գումար և փաստաթղթեր ձևակերպել, որ խողովակների համար տրամադրված գումարներն ամբողջությամբ վերադարձվել են, սակայն ինքը չի համաձայնվել:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 2, գ.թ. 155-157, հատոր 3, գ. թ. 276-278, հատոր 8, գ. թ. 160-163, հատոր 9, գ.թ. 124-126/
Վկա Կարապետ Սաղոյանը խողովակների դիմաց ստացված գումարների մի մասը Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին հետ վերադարձնելու մասին իր ցուցմունքը պնդել է նաև վերջինիս հետ առերես հարցաքննության ժամանակ:
/հատոր 3, գ. թ. 281-285/
Վկա էդուարդ Գարուշի Սահակյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ Ժորա Գևորգյանի միջոցով ծանոթացել է

«Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի տնօրեն Կարապետ Սաղոյանի հետ: Իր ապրուստը հոգացել է խողովակների ապամոնտաժում կատարելու գործընթացը կազմակերպելու միջոցով: 2007թ. հուլիս-օգոստոս ամիսներին, տեղեկանալով, որ Դիլիջանի ոռոգման ցանցի կոլեկտորի խողովակները ենթակա են ապամոնտաժման, պայմանավորվածություն է ձեռք բերել Կարապետ Սաղոյանի հետ՝ խողովակների ապամոնտաժման և վաճառքի հարցերն իրականացնել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի միջոցով: Աշոտ Պետրոսյանի միջոցով ծանոթացել է Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ, որոնք համաձայնվել են գնել ապամոնտաժված խողովակների մեծ խմբաքանակ՝ պատրաստակամություն հայտնելով վճարել կանխավճար: Նրանք նախապես գնացել են Դիլիջան և անձամբ տեսել են ջրագիծը: «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի և «Խաչվառ» ՍՊԸ-ի միջև կնքվել է խողովակների առուվաճառքի պայմանագիր, ըստ որի՝ «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն «Խաչվառ» ՍՊԸ-ին պետք է իրացներ խողովակների մեծ խմբաքանակ: Դրանից հետո, «Խաչվառ» ՍՊԸ-ի հաշվից «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի հաշվին է փոխանցվել 35.000.000 ՀՀ դրամ գումար, որը Կարապետ Սաղոյանը կանխիկացրել և ամբողջությամբ տվել է իրեն: Խողովակների ապամոնտաժման թույլտվությունը ստանալուց հետո, ինքը տեխնիկական միջոցներ է տեղափոխել Դիլիջան և սկսել է ապամոնտաժման աշխատանքները: Մի քանի օր այդ աշխատանքները կատարելուց հետո, ոստիկանության աշխատակիցները չեն թույլատրել շարունակել աշխատանքները, որից հետո ինքը, իր մոտ մնացած 70.000 ԱՄՆ դոլար գումարը Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում տվել է վերջինիս և Աշոտ Հակոբյանին: Մյուս գումարը, շուրջ 11-12 միլիոն ՀՀ դրամը ծախսվել է խողովակների մի մասի ապամոնտաժման հետ կապված: Գումարի վերադարձմանը ներկա են գտնվել նաև Ժորա Գևորգյանը և Աշոտ Պետրոսյանը: 70.000 ԱՄՆ դոլար գումարը բոլոր ներկաների մոտ հաշվելուց և վերահաշվելուց հետո, Աշոտ Հակոբյանն այն տվել է Վոլոդյա Վարդանյանին, որը վերցնելով ամբողջ գումարը՝ տեղավորել է գրասենյակում գտնվող չհրկիզվող պահարանում: Այնուհետև իրեն չի հաջողվել ստանալ թույլտվություն՝ խողովակների հետագա ապամոնտաժումը և վաճառքն իրականացնելու համար և գործարքը չի իրականացվել: /հատոր 9, գ.թ. 118-121/

Վկաներ Ժորա Հարությունի Գևորգյանի և Աշոտ Ֆրունզեի Պետրոսյանի նույնաբովանդակ ցուցմունքներով այն մասին, որ 2007թ., դեպքերի բերումով իրենք մասնակցել են էդիկ Սահակյանի կողմից վաճառվող խողովակների իրացման հետ կապված մի շարք բանակցություններին և խոսակցություններին, որոնք վերաբերվել են Կարապետ Սաղոյանի տնօրինած «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի միջոցով, էդիկ Սահակյանի անմիջական մասնակցությամբ, «Խաչվառ» ՍՊԸ-ին խողովակներ վաճառելու հարցերին: Խողովակները ձեռք բերող անձանցից բանակցություններին մասնակցել են Վոլոդյա Վարդանյանը, Աշոտ Հակոբյանը, Կարապետ Սաղոյանը և իրենք: Այդ գործընթացից տեղյակ են, որ էդիկը նպատակադրվել է Դիլիջանում գտնվող ջրմուղ-կոյուղու կոլեկտորից ապամոնտաժել խողովակներ և դրանք վաճառել Վոլոդյայենց: Այդ առումով Վոլոդյայենք գումարներ են փոխանցել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ին, որի վերաբերյալ կնքվել են պայմանագրեր: «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ին փոխանցվել են գումարներ, սակայն խողովակների որոշակի քանակության ապամոնտաժումը կատարելուց հետո աշխատանքները դադարեցվել են, որից հետո իրենք, Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում ականատես են եղել, որ Կարո Սաղոյանի և Աշոտ Հակոբյանի ներկայությամբ, էդիկը Վոլոդյային է հանձնել 70.000 ԱՄՆ դոլար գումար: Աշոտ Հակոբյանը պահանջել է հետ վերադարձնել մյուս գումարները, սակայն էդիկը նշել է, որ խողովակների ապամոնտաժման հետ կապված կատարվել են ծախսեր: Աշոտ Հակոբյանը հորդորել է, որ մոտակա ժամանակներում մնացած գումարը չվերադարձնելու դեպքում էդիկը կարող է լուրջ խնդիրների առաջ կանգնել: Գումարը վերադարձնելու

	հետ կապված որևէ փաստաթուղթ չի ձևակերպվել: /դատական նիստի արձանագրություն, հատոր 8, գ. թ. 166-169, 207-210/ Վկա Աշոտ Պետրոսյանը խողովակների դիմաց ստացված գումարների մի մասը Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին հետ վերադարձնելու մասին իր ցուցմունքը պնդել է նաև վերջինիս հետ առերես հարցաքննության ժամանակ: /հատոր 9, գ. թ. 8-14/ Վկա Արմեն Սոսի Ումրշատյանի ցուցմունքներով այն մասին, որ Վոլոդյա Վարդանյանը հանդիսանում է իր քրոջ որդին: Նրա հետ գտնվում է ջերմ բարեկամական հարաբերությունների մեջ: Նույնատիպ հարաբերությունների մեջ է գտնվում իր մյուս հորաքրոջ փեսա Աշոտ Հակոբյանի հետ: Ինչպես Աշոտը, այնպես էլ Վոլոդյան գտնվել են լավ հարաբերությունների մեջ և համատեղ իրականացրել են տնտեսական գործունեություն: Ինքը չի խառնվել նրանց ֆինանսական հարցերին, սակայն գիտի, որ Աշոտը մեծ գումարներ, շուրջ 160.000.000 ՀՀ դրամ փոխառությամբ տվել է Վոլոդյային և այդ գումարները պատկանել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի փայատիրոջը: 2007թ. աշնանը Վ. Վարդանյանի և Ա. Հակոբյանի հարաբերությունները ֆինանսական խնդիրների հետ կապված սկսել են լարվել: Ինքը փորձել է հարթել դրանք: 2008թ. իրեն հաջողվել է հարթել վեճը և Վոլոդյան խոստացել է խողովակների հետ կապված մեծ գործարք կատարելով՝ ամբողջությամբ հատուցել գումարները: 2008թ. ապրիլի 25-ին, Վոլոդյայի որդիներ Արմանը, Արամը և Թորգոմը իրեն տեղեկացրել են, որ նախորդ օրը Վոլոդյան անհետացել է: Քանի որ Վոլոդյան միայն խնդիր է ունեցել Աշոտի հետ, ինքը նրանց ներկայությամբ զանգահարել է Աշոտին ու հետաքրքրվել Վոլոդյայի գտնվելու վայրի վերաբերյալ: Աշոտն իրեն հավաստիացրել է, որ այդ մասին որևէ տեղեկություն չունի: Իրենք սկսել են որոնումներ իրականացնել, որոնք եղել են անարդյունք: /դատական նիստի արձանագրություն, հատոր 1, գ.թ. 111-113/ Վկա Աննա Օնիկի Գրիգորյանի ցուցմունքներով այն մասին, որ 2003թ. անցել է հաշվապահական դասընթացներ Երևանի Բաղրամյան թիվ 3ա հասցեում գտնվող գրասենյակում, Վոլոդյա Վարդանյանի մոտ, որից հետո սկսել է աշխատել «Իրավագարանտ» ՍՊԸ-ում՝ որպես հաշվապահ: Այդ ընկերությունում աշխատել է մինչև 2007 թվականի օգոստոսի 01-ը, որից հետո աշխատել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես հաշվապահ: Իգոր Մանդելին ճանաչում է 2007թ. ամռանից, երբ նա սկսել է հաճախել «Իրավագարանտ» ՍՊԸ-ի գրասենյակ: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես հաշվապահ սկսել է աշխատել Վոլոդյա Վարդանյանի միջնորդությամբ: Վերջինս և Իգոր Մանդելը կատարել են բոլոր թղթաբանությունը՝ մուտք-ելք-փոխանցումներ, իսկ ինքը նայելով թղթերին և քաղվածքներին՝ կազմել է հաշվետվությունները: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի վարձակալական պայմանագրի մասին տեղեկացված է եղել բանավոր, սակայն ոչ մի առնչություն չի ունեցել պայմանագրի կնքման և գործարքի հետագա զարգացման հետ: Այդ առումով կատարել է միայն հարկային դաշտի հետ կապված անհրաժեշտ հաշվապահական ձևակերպումներ: Այդ գործարքով զբաղվել է Վոլոդյա Վարդանյանը և չգիտի, թե վերջինս երբ է սկսել զբաղվել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի ֆինանսական գործունեության հետ կապված հարցերով: Վերջին անգամ Վոլոդյա Վարդանյանի հետ զրուցել է 2008թ. ապրիլի 23-ին: Այդ ժամանակ Վոլոդյան իրեն տեղեկացրել է, որ 2008թ. ապրիլի 25-ին իրենց գրասենյակ է գալու Իգոր Մանդելը, որպեսզի կնքի վճարման հանձնարարականներ և խնդրել է, որպեսզի ինքը լինի գրասենյակում և այդ հանձնարարականները տրամադրի Իգոր Մանդելին: Նշված օրն Իգոր Մանդելն առավոտյան եկել և կնքել է Վոլոդյայի կողմից թողնված հանձնարարականները, սակայն այդ օրը Վոլոդյան չի եկել գրասենյակ, իսկ Իգոր Մանդելն էլ, նրան երկար սպասելուց հետո, թողել և գնացել է: Հաջորդ օրն ինքը Վոլոդյա Վարդանյանի որդիներից տեղեկացել է, որ Վոլոդյան անհետացել է:

/դատական նիստի արձանագրություն, հատոր 2, գ.թ. 6-7/
Դատահաշվապահական փորձաքննության 29.10.2009թ. թիվ 10040909/31010909 եզրակացությամբ, որի համաձայն՝
«էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերության կողմից «Շենգավիթ Ա» ՍՊ ընկերության 193407000 դրամ վարկը տրամադրվել է վարկային պայմանագրով նախատեսված՝ սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով, սակայն բանկի կողմից չի հսկվել վարկային միջոցների նպատակային ծախսը, իսկ «Շենգավիթ Ա» ՍՊ ընկերության տնօրենի կողմից նշված 193407000 դրամ վարկային միջոցները օգտագործվել են սույն եզրակացության հետազոտական մասում նշված և վարկի նպատակայնության հետ կապ չունեցող այլ տարբեր նպատակներով:
«Շենգավիթ Ա» ՍՊԸ-ի և «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ի կողմից վարձակալության պայմանագրով՝ «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ի կողմից վարձակալությամբ տարածքի տրամադրման վերաբերյալ, բխում է «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ի կանոնադրության և ՍՊԸ-ի հիմնադիրների շահերից, քանի որ այն կատարվել է շահույթ ստանալու նպատակով և «Շենգավիթ Ա» ՍՊ ընկերության հիմնադիր-մասնակիցների ընդհանուր ժողովի հիման վրա: Իսկ «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ի տնօրենի կողմից մյուս հիմնադիրներին, ըստ նախաքննության ձեռք բերված տվյալների ստացվող եկամտի չափը պակաս ցույց տալու նպատակով ներկայացվել է կեղծ վարձակալության պայմանագիր, որտեղ վարձավճարի չափը 2450000 դրամի փոխարեն ցույց է տրվել 700000 դրամ:
«էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերության կողմից «Շենգավիթ Ա» ՍՊ ընկերությանը տրամադրված 193407000 ՀՀ դրամ վարկը, վերջինիս կողմից չի օգտագործվել վարկային պայմանագրով նախատեսված՝ սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով, այլ վարկառուի կողմից օգտագործվել են հետևյալ նպատակներով.
Նպատակային վարկի գումարներից 176.000.000 ՀՀ դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ անվամբ «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերությունում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գտնվող «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին:
01.08.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերության կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 ՀՀ դրամ նպատակային վարկի գումարներից 16.000.000 ՀՀ դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի անվամբ նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Արարատ Բանկ» ԲԲԸ-ում գտնվող «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվին:
06.08.2007թ. թիվ 7576, 04.09.2007թ. թիվ 7, 08.11.2007թ. թիվ 16, 21.11.2007թ. թիվ 6 և 06.12.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 69.500.000 ՀՀ դրամ գումարներ են փոխանցվել նրա թիվ 1660000506240100 անձնական հաշվին:
09.08.2007թ. թիվ 9, 01.10.2007թ. թիվ 10 և 23.01.2008թ. թիվ 15 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 37.385.000 ՀՀ դրամ գումարներ են փոխանցվել Ինգա Մանդելի թիվ 1660000487500100 անձնական հաշվին:
01.10.2007թ. թիվ 11, 24.12.2007թ. թիվ 14 և 23.01.2008թ. թիվ 16 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 34.425.000 ՀՀ դրամ գումարներ են

	փոխանցվել Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին: 01.10.2007թ. թիվ 09 և 12.10.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 505.000 ՀՀ դրամ գումարներ են փոխանցվել Գագիկ Բատիկյանի թիվ 00503500100 անձնական հաշվին: 30.10.2007թ. թիվ 13 և 31.10.2007թ. թիվ վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից 33.000.000 ՀՀ դրամը Վոլոդյա Վարդանյանի կողմից փոխանցվել է Աշոտ Հակոբյանի տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ հաշվին, որից հետո էլ խողովակներ ձեռք բերելու պատրվակով «Խաչվառ» ՍՊԸ-ի հաշվից 35.000.000 ՀՀ դրամը փոխանցվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի հաշվին: 23.01.2008թ. թիվ 01 վճարման հանձնարարագրով Վոլոդյա Վարդանյանի թիվ 00506240100 անձնական հաշվից Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին է փոխանցվել 7.860.000 ՀՀ դրամ: 26.09.2007թ. թիվ 35 և 25.10.2007թ. թիվ 1276 արժույթի վաճառքի անդորրագրերով, 08.11.2007թ. թիվ 15 վճարման հանձնարարագրով, 25.10.2007թ. թիվ 1271 դրամարկղի մուտքի կտրոնով, ինչպես նաև 30.10.2007 թ. թիվ 7, 26.11.2007 թ. թիվ 327, 10.12.2007թ. թիվ 25, 19.12.2007թ. թիվ 623, 19.12.2007թ. թիվ 415 և 23.01.2007թ. թիվ 8003 դրամարկղի մուտքի օրդերներով Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից 5.616.500 դրամի, ԱՄՆ դոլարի փոխարժեքով ընդհանուր գումարով 17.000 ԱՄՆ դոլարը փոխանցել է իր իսկ թիվ 00506240101 տարադրամային հաշվին, դրան մուտքագրելով նաև 40.000 ԱՄՆ դոլար, որից հետո 24.000 ԱՄՆ դոլարը փոխանցել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղ՝ Անժելա Ավագյանի հաշվին, 5.000.000 ՀՀ դրամը փոխանցել է Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, իսկ այնուհետև 37.000 ԱՄՆ դոլարն ետ է ստացել իր այդ հաշվից: 06.08.2007թ. թիվ 7578, 06.08.2007թ. թիվ 25, 04.09.2007թ. թիվ 8, 04.09.2007թ. թիվ 13, 25.09.2007թ. թիվ 6, 26.09.2007թ. թիվ 37, 01.10.2007թ. թիվ 12, 08.10.2007թ. թիվ 9, 08.10.2007թ. թիվ 16, 03.12.2007թ. թիվ 392 և 06.12.2007թ. թիվ 13 դրամարկղի ելքի կտրոններով Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից կանխիկ ստացել է ընդհանուր 58.782.500 ՀՀ դրամ: /հատոր 9, գ.թ. 74-96/ Դատաձեռագրաբանական փորձաքննության 07.05.2009թ. թիվ 11830901 եզրակացությամբ, որի համաձայն՝ «Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի ձախ անկյունում «Քարտուղար» բառի տակ «ստորագրություն» տողագծի վրա տեղավորված «ԾՈՎՊպսՖ ԼչՏՐՖ» ձեռագիր գրառումը կատարվել է Իգոր Մանդելի կողմից: Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի ձախ անկյունում «Քարտուղար» բառի դիմաց տողագծի վրա տեղավորված ստորագրությունը կատարվել է Իգոր Մանդելի կողմից: Պարզել, Անուշ Նազարյանի, թե մեկ այլ անձի կողմից է կատարվել փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007 թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի աջ անկյունում «Նախագահ» բառի տակ տողագծի վրա տեղավորված «Նազարյան Անուշ» ձեռագիր գրառումը, հնարավոր չէ՝ հետազոտելի ձեռագիր գրառման

ինֆորմատիվ գրաֆիկական նյութի սակավության պատճառով:
Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի աջ անկյունում «Նախագահ» բառի դիմաց տողագծի վրա տեղավորված ստորագրության և Անուշ Նազարյանի ստորագրության նմուշների միջև համեմատական հետազոտություն չի անցկացվել՝ հետազոտելի ստորագրության տառ չկազմող տառադարձության պատճառով»:
/հատոր 3 գ.թ. 291-295/
Դատաապրանքագիտական փորձաքննության 11.02.2010թ. թիվ 41160907 եզրակացությամբ, որի համաձայն՝ «Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող և հետազոտման առարկա հանդիսացող գրասենյակային շինության և հողատարածքի ընդհանուր շուկայական արժեքը, փորձաքննությամբ գնահատման առաջադրված՝ 2007թ. նոյեմբերի 22-ի դրությամբ և տեղազննության կատարման պահին առկա ապրանքային վիճակով, գնահատվում է 112.650.000 (մեկ հարյուր տասներկու միլիոն վեց հարյուր հիսուն հազար) դրամ:
/հատոր 9, գ.թ. 127-135/
Իրեղեն ապացույցներով՝
Իգոր Մանդելի ստորագրությամբ և ընկերության մասնակից Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ, 25.07.2007թ. ամսաթվով, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությամբ, որի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իբրև թե անցկացնելով ընդհանուր ժողով՝ որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող, Բագրատունյաց թիվ 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող, 508,1 քմ մակերեսով դեղատունը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով՝ ստանալ 193.407.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ:
/հատոր 3, գ.թ. 162, հատոր 10, գ.թ. 206/
19.06.2007թ. ամսաթվով, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի տարածքը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ կեղծված տվյալներով՝ ամսական վարձավճարի չափը 700.000 ՀՀ դրամ նշված, պայմանագրի պատճենով:
/հատոր 1, գ.թ. 202-206, հատոր 10, գ.թ. 206/
«Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված գումարներով Աշոտ Հակոբյանի կողմից ձեռք բերված՝ ք. Երևան, Այվազովսկու թիվ 46/1 հասցեում գտնվող անշարժ գույքով:
/հատոր 9, գ.թ. 140/
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցչի և Վոլոդյա Վարդանյանի միջև 19.06.2007թ. կնքված պայմանագրով, որի համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող, ք. Երևան, Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 ՀՀ դրամ վարձավճարով, վարձակալությամբ հանձնվել է նշված բանկին:
/հատոր 8, գ.թ. 11-20, հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/
«Շենգավիթ-Ա» ՍՊ ընկերության անունից, Իգոր Մանդելի կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ 25.07.2007թ. և 26.07.2007թ. կնքված բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն գրավադրելով իրեն պատկանող, ք. Երևան, Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող տարածքը, 10 տարի մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից ստացել է 193.407.000 ՀՀ դրամի չափով վարկ:
/հատոր 4, գ.թ. 201-218, հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/
31.07.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով, որի համաձայն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից «Շենգավիթ-Ա»

	ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 ՀՀ դրամ նպատակային վարկի գումարներից 176.000.000 ՀՀ դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի անվամբ, նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գտնվող «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 01.08.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով, որի համաձայն՝ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 ՀՀ դրամ նպատակային վարկի գումարներից 16.000.000 ՀՀ դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի անվամբ, նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Արարատ Բանկ» ԲԲԸ-ում գտնվող «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 06.08.2007թ. թիվ 7576, 04.09.2007թ. թիվ 7, 08.11.2007թ. թիվ 16, 21.11.2007թ. թիվ 6 և 06.12.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 69.500.000 ՀՀ դրամ գումարներ են փոխանցվել նրա թիվ 1660000506240100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 09.08.2007թ. թիվ 9, 01.10.2007թ. թիվ 10 և 23.01.2008թ. թիվ 15 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 37.385.000 ՀՀ դրամ գումարներ են փոխանցվել Ինգա Մանդելի թիվ 1660000487500100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 01.10.2007թ. թիվ 11, 24.12.2007թ. թիվ 14 և 23.01.2008թ. թիվ 16 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից, նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 34.425.000 ՀՀ դրամ գումարներ են փոխանցվել Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10 գ.թ. 207-211/ 01.10.2007թ. թիվ 09 և 12.10.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից, նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 505.000 ՀՀ դրամ գումարներ են փոխանցվել վերջինիս բարեկամ Գագիկ Բատիկյանի թիվ 00503500100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 30.10.2007թ. թիվ 13 և 31.10.2007թ. թիվ վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված 176.000.000 ՀՀ դրամ գումարից 33.000.000 ՀՀ դրամը Վոլոդյա Վարդանյանի կողմից փոխանցվել է Աշոտ Հակոբյանի տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ի հաշվին, որից հետո էլ խողովակներ ձեռք բերելու պատրվակով «Խաչվառ» ՍՊԸ-ի հաշվից 35.000.000 ՀՀ դրամ գումարը փոխանցվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 23.01.2008թ. թիվ 01 վճարման հանձնարարագրով, որի համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանի թիվ 00506240100 անձնական հաշվից Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին է փոխանցվել 7.860.000 ՀՀ դրամ գումար: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 26.09.2007թ. թիվ 35 և 25.10.2007թ. թիվ 1276 արժույթի վաճառքի անդորրագրերով, 08.11.2007թ. թիվ 15 վճարման հանձնարարագրով, 25.10.2007թ. թիվ 1271 դրամարկղի մուտքի կտրոնով, ինչպես նաև 30.10.2007թ. թիվ 7, 26.11.2007թ. թիվ 327,

10.12.2007թ. թիվ 25, 19.12.2007թ. թիվ 623, 19.12.2007թ. թիվ 415 և 23.01.2007թ. թիվ 8003 դրամարկղի մուտքի օրդերներով, որոնց համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից 5.616.500 դրամի, ԱՄՆ դոլարի փոխարժեքով 17.000 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարը փոխանցել է իր իսկ թիվ 00506240101 տարադրամային հաշվին՝ դրան մուտքագրելով նաև 40.000 ԱՄՆ դոլար գումար, որից հետո 24.000 ԱՄՆ դոլար գումարը փոխանցել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղ՝ իր բարեկամ Անժելա Ավագյանի հաշվին, 5.000.000 ՀՀ դրամ գումարը փոխանցել է բարեկամ Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, իսկ 37.000 ԱՄՆ դոլարն այնուհետև հետ է ստացել իր այդ հաշվից:
/հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/
06.08.2007թ. թիվ 7578, 06.08.2007թ. թիվ 25, 04.09.2007թ. թիվ 8, 04.09.2007թ. թիվ 13, 25.09.2007թ. թիվ 6, 26.09.2007թ. թիվ 37, 01.10.2007թ. թիվ 12, 08.10.2007թ. թիվ 9, 08.10.2007թ. թիվ 16, 03.12.2007թ. թիվ 392 և 06.12.2007թ. թիվ 13 դրամարկղի ելքի կտրոններով, որոնց համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից կանխիկ ստացել է 58.782.500 ՀՀ դրամ ընդհանուր գումար:
/հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/
Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանն իրեն մեղավոր չի ճանաչել, նախաքննության ընթացքում հրաժարվել է առաջադրված մեղադրանքի շուրջ ցուցմունքներ տալուց և պնդել է իր նախկին ցուցմունքներն այն մասին, որ հանդիսանում է «Խաչվառ» ՍՊԸ-ի տնօրենը, որի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենցի 1: Վոլոդյա Վարդանյանը հանդիսանում է կնոջ մորաքրոջ որդին, որին ճանաչում է մանկությունից և որի հետ ունեցել են լավ հարաբերություններ: Իր ՍՊԸ-ի բացման օրվանից Վոլոդյան աշխատել է որպես հաշվապահության գծով փոխտնօրեն: Նա հանդիսանում է նաև «Եվրոֆինանս», «Իրավագարանտ» և «Ռուսաֆիլ» ՍՊԸ-ների տնօրենը: Որքանով տեղյակ է, Վոլոդյան 2008 թվականի ապրիլի 23-ից մինչև մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, «Իրավագարանտ» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ներն անվանափոխել է իր որդիներ Արման, Արամ և Թորգոմ Վարդանյանների անուններով: Վոլոդյան, նշված ընկերությունների միջոցով իրականացրել է իրավական-խորհրդատվական, հաշվապահական հաշվառման, հաշվապահական դասընթացների կազմակերպման, աուդիտի գործառույթներ: Իգոր Մանդելին և նրա ընտանիքի անդամներին ճանաչում է 2005 թվականից և նրանց հետ գտնվում է մտերիմ հարաբերությունների մեջ: Իգորը և Վոլոդյան ծանոթացել են իր միջոցով: Իգորը հանդիսանում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի տնօրենը: Իգորին պատկանող, Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատան մի մասը վերջինս 2007 թվականի ամառվանից 10 տարի ժամկետով վարձով տվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին: Այդ մասին տեղյակ է եղել Վոլոդյան: Հաշվի առնելով, որ Վոլոդյան հաշվապահության մասնագետ է եղել, իր խնդրանքով նա մասնակցել է նշված գործարքը կնքելուն: Վերջինիս ինքը Իգորին ներկայացրել է որպես վստահելի անձի: Իգորը Վոլոդյային է տվել լիազորագիր՝ վերը նշված պայմանագիրը կնքելու համար, սակայն պայմանագիրը կնքել է Իգորը՝ Վոլոդյայի ներկայությամբ և օգնությամբ: Նախքան պայմանագրի կնքելը, նախնական բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել բանկի ներկայացուցիչների հետ, որ վերջիններս Իգորին ամսեկան վճարեն 7.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, սակայն Վոլոդյան իրեն և Իգորին համոզել է, որ ավելի լավ կլինի գումարը վերցվի միանգամից 10 տարվա համար, որից Վոլոդյան պարտավորվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ով, «Ֆորեքս»-ի միջոցով 100.000 ԱՄՆ դոլարը շրջանառության մեջ դնելով՝ ստանալ եկամուտներ և դրանցից ամիսը 4%-ը տրամադրել կազմակերպությանը: Քանի որ Իգորն ունեցել է պարտքեր և Վոլոդյայի առաջարկած տարբերակը

շահավետ է եղել, Իգորը համաձայնվել է և Վոլոդյայի հետ կնքել է պայմանագիր: Վարձակալության 10 տարվա գումարը կազմել է 193.000.000 ՀՀ դրամ, որը բանկի կողմից փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվեհամարին: Դրանից 16.000.000 ՀՀ դրամով Իգորը մարել է պարտքերը, իսկ մնացած 176.000.000 ՀՀ դրամից 38.000.000 ՀՀ դրամը 06.08.2007 թվականին փոխանցվել է «Ֆորեքս» կազմակերպությանը: Ընդ որում Վոլոդյան այնքան վստահություն է իրենց ներշնչել և իրենց «խելքը կերել», որ 02.08.2007 թվականին իրենք 176.000.000 ՀՀ դրամը փոխանցել են «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվեհամարին: 2-րդ փոխանցումը «Ֆորեքսին», 17.000.000 ՀՀ դրամի չափով, կատարվել է 04.09.2007 թվականին: Այսպիսով, 176.000.000 ՀՀ դրամից 52.000.000 ՀՀ դրամը, ըստ իր և Իգորի հաշվարկի, Վոլոդյան հաշվեհամարից հանել է և օգտագործել, իսկ մնացած գումարները գտնվել են իր և Իգորի հսկողության տակ: Հաշվեհամարին պետք է մնացած լիներ 6.985.000 ՀՀ դրամ գումար, 780.390 ՀՀ դրամի փոխարեն: Երբ ինքը 2008 թվականի հունվարին հանդիպել է Վոլոդյային և պահանջել է ներկայացնել գումարի մնացորդի վերաբերյալ փաստաթուղթ, նա ներկայացրել է բանկային փաստաթուղթ, որի համաձայն՝ հաշվեհամարին եղել է 6.985.000 ՀՀ դրամ գումար, սակայն երբ ստուգելու նպատակով բանկից վերցրել է հաշվեհամարի մնացորդի փաստաթուղթը, պարզել է, որ Վոլոդյան իրեն խաբել է, իրականում հաշվեհամարին եղել է 780.390 ՀՀ դրամ գումար: Նախքան այդ, 2007 թվականի նոյեմբերի 6-ին, հանդիպել է Վոլոդյային, որպեսզի ըստ պայմանավորվածության՝ գումարը տալուց 3 ամիս անց, Վոլոդյան տա 12.000 ԱՄՆ դոլար, սակայն նա, խախտելով պայմանավորվածությունը՝ պնդել է, որ գումարը տալու է 6 ամիս հետո:

2007 թվականի նոյեմբերի վերջին «Ֆորեքս»-ի գործունեության վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար ինքը, ընկերը՝ Աշոտ Պետրոսյանը և վերջինիս ծանոթ Արթուրը գնացել են Վոլոդյա Վարդանյանի գրասենյակ, որտեղ հանդիպել են վերջինիս, նրա աշխատող Խաչիկին և Վոլոդյայի որդի Արմանին: Միասին քննարկել են նշված հարցն ու պարզել, որ 110.000 ԱՄՆ դոլար գումարը շրջանառության մեջ դնելուց 6 ամսվա ժամանակահատվածում ստացվել է 10.000 ԱՄՆ դոլար եկամուտ: Զգալով, որ խաբվել է, Վոլոդյային ասել է, որ փետրվարի 6-ին լրանալու է 6 ամիսը, և հնարավոր է, որ ամբողջ գումարը վերցնի, իսկ Վոլոդյան համաձայնվել է:

2008 թվականի փետրվարի 4-ին, երեկոյան, իրենց բակ է եկել Վոլոդյան, որդու՝ Արմանի հետ: Դրսում իրենց միջև տեղի է ունեցել խոսակցություն, որի ընթացքում Վոլոդյան ասել է, որ աշխատող Խաչիկին, որը զբաղվել է «Ֆորեքս»-ով գումարները շրջանառության մեջ դնելով, գողացել են գումարի համար: Ինքը պնդել է, որ դա իր հետ կապ չունի և պայմանավորված օրը նրանից վերցնելու է ամբողջ գումարը: 2008 թվականի փետրվարի 6-ին հանդիպելով՝ Վոլոդյան ասել է, որ Խաչիկից դեռ լուր չունի, պետք է գտնի նրան և միասին լուծեն գումարի վերադարձման հարցը: Փետրվարի 14-ին, իր փեսա Սամվելը և կինը գնացել են Վոլոդյայի տուն՝ գումարի հետ կապված հարցի շուրջ պարզաբանումներ ստանալու համար: Խոսակցությունը վարել են իր կինը, փեսան, Վոլոդյան և վերջինիս կինը՝ Ծովինկը: Վոլոդյան իր կնոջն ասել է, որ պետք չէ անհանգստանալ և պարտավորվել է մինչև մայիսի 6-ը գումարի որոշ մասը վերադարձնել: Գումարը չվերադարձնելը և այն ուշացնելը Վոլոդյան պատճառաբանել է նաև նրանով, որ գումարներն ուղարկել է Հունաստան՝ ինչ-որ Վարդանի:

2008 թվականի ապրիլի վերջին իրեն է զանգահարել Վոլոդյայի բարեկամ Արմեն Ումրշատյանը և տեղեկացրել, որ Վոլոդյան արդեն մի քանի օր է տուն չի գալիս: Նույնը հաստատել է նաև Վոլոդյայի որդի Արմանը, որը հեռախոսազրույցի ընթացքում իրեն մեղադրել է հոր անհետացման հարցում: Ապրիլի 26-ին իրեն է զանգահարել Իգորը և ասել, որ Վոլոդյայի որդի Արմանը ընկերներով գնացել ու

նրան տանից դուրս հանելով՝ վիրավորել է ամենալկտի խոսքերով, պահանջել է ասել հոր տեղը և սպառնացել է հաշվեհարդար տեսնել: Ինքը մինչ այդ Իգորին չի ասել Վոլոդյայի կատարած խարդախությունների մասին, որպեսզի նա չանհանգստանա, քանի որ գիտակցել է, որ գործարքի պատճառը ինքն է հանդիսացել և մտածել է ամեն գնով գումարը տեղը դնել, անկախ Վոլոդյայի կողմից այն վերադարձնելուց: Ապրիլի 27-ի երեկոյան, Վոլոդյայի մյուս որդին, իր որդուն խաբելով, ինչ-որ անձանց հետ տարել է Թոխմախի գերեզմանների մոտ, որտեղ հարվածել են որդուն՝ իրեն մեղադրելով Վոլոդյայի անհետացման մեջ:
«Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին փոխանցված գումարներից Վոլոդյան 30.10.2007թ. 33.000.000 ՀՀ դրամ գումար է փոխանցել իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ի հաշվին, որի փոխտնօրեն է հանդիսացել Վոլոդյան, այնուհետև վերջինս «Խաչվառ» ՍՊԸ-ից 35.000.000 ՀՀ դրամ գումար է փոխանցել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ին՝ խողովակների ձեռքբերման շուրջ կնքված պայմանագրի համաձայն: Խողովակների ձեռքբերման հետ կապված բանակցություններին, որը վարվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի տնօրեն Կարապետ Սաղոյանի և նրա աշխատակից էդիկի միջև, մասնակցել է նաև ինքը, իր ընկեր Աշոտ Պետրոսյանը և վերջինիս ծանոթ Ժորան: Իր ընկեր Աշոտ Պետրոսյանի միջոցով, Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում, Կարապետ Սաղոյանն ու էդիկն առաջարկել են ձեռք բերել 1.020 մմ տրամագծով, շուրջ 5.000 գծամետր խողովակներ, որոնց 1 գծամետրի վաճառքի գինը կազմել է 22.000 ՀՀ դրամ գումար: Մի քանի օր անց ինքը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Պետրոսյանը գնացել են Դիլիջան և համոզվել խողովակների առկայության մեջ: Մի քանի օր հետո Վոլոդյան զանգահարել է իրեն և հայտնել, որ արդեն գտել է խողովակների գնորդ, որից հետո «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի տնօրեն Կարապետ Սաղոյանի հետ կնքել են պայմանագիր և Կարապետ Սաղոյանի տնօրինած ընկերությանն է փոխանցվել 35.000.000 ՀՀ դրամ գումար՝ որպես կանխավճար: Հետագայում պարզվել է, որ խողովակների ապամոնտաժման ժամանակ բողոքներ են եղել և աշխատանքները դադարեցվել են, հետագա ապամոնտաժման թույլտվությունը ձգձգվել է:
2008 թվականի ապրիլի վերջին, Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո խնդրել է Աշոտ Պետրոսյանին և Կարապետ Սաղոյանին հանդիպել՝ պայմանագրի շուրջ պարզաբանումներ կատարելու համար և այդ ժամանակ է տեղեկացել, որ պայմանագիրը կնքվել է ոչ թե «Եվրոֆինանս» և «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ների միջև, այլ «Ռոլֆերմեր» և իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ների միջև: Այդ պայմանագիրն ինքը չի կնքել և չի էլ իմացել, որ Վոլոդյան է այն կնքել: Չի բացառում, որ պայմանագրում լինի իր ստորագրությունը, քանի որ շատ են եղել դեպքեր, որ Վոլոդյա Վարդանյանն իրեն ստորագրել է տվել դատարկ թղթերի տակ: Չի եղել դեպք, որ «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ի կամ որևէ անձի, այդ թվում նաև էդիկի կողմից իրենց հետ վերադարձված լինի կամ կանխիկ, կամ էլ փոխանցումով խողովակների համար տրամադրված գումարների որևէ մասը:
Նախաքննության ընթացքում, Աշոտ Հակոբյանն Աշոտ Պետրոսյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նշել է, որ տեղյակ է, որ էդիկ Սահակյանի կողմից գումարի որոշ մասը վերադարձվել է Վոլոդյա Վարդանյանին, սակայն ինքը գումարը վերադարձնելիս ներկա չի գտնվել, քանի որ հանդիպման կեսից հեռացել է, սակայն երբ դրանից անցել է մոտավորապես 15 օր, իրեն է զանգահարել Վոլոդյա Վարդանյանը և հայտնել, որ նրանց կողմից բերված գումարը եկել են հետ տանելու: Ինքն էլ պատասխանել է, որ կամքը նրանն է և պատասխանատվությունն էլ նրա վրա է: Առաջարկել է ոչ թե տալ այդ գումարը, այլ ստանալ նաև մնացած մասը: Ինքը չի կարող նշել, թե փաստացի որքան գումար է վերադարձվել Վոլոդյային և ինչպես է նրա կողմից տնօրինվել, քանի որ գումարներով զբաղվել է Վոլոդյա Վարդանյանը:
Այնուհետև, մյուս ցուցմունքներում Աշոտ Հակոբյանը նշել է, որ

176.000.000 ՀՀ դրամ գումարը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին 2007 թվականի հուլիսի 25-ին կնքված պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագիրը կնքելու ժամանակ ներկա են եղել ինքը, Իգոր Մանդելը, ընկերը, Վոլոդյա Վարդանյանը և վերջինիս ընկերը: Համաձայն փոխառության այդ պայմանագրի, «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն պարտավորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին ամսեկան վճարել փոխանցված գումարի 4 տոկոսի չափով գումար: Փաստորեն պայմանագիրը չի կատարվել և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն դիմել է քաղաքացիական դատարան՝ պահանջելով գումարները: Ինչ վերաբերվում է իր և Ինգա Մանդելի հաշվեհամարներին «Եվրոֆինանս» ՍՊԸ-ից փոխանցված և կանխիկացված գումարներին, ապա դրանցով, շուրջ 78.000.000 ՀՀ դրամով, որն ինքը փրկել է Վոլոդյայից, գնվել են Երևանի Այվազովսկու թիվ 46/1 հասցեում գտնվող տարածքն ու շինությունները, որպեսզի դրանց և Վոլոդյայից ստանալիք գումարների հաշվին հետագայում «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին կատարվի փոխհատուցում:
Ինքը որևէ մեկի հետ համաձայնության չի եկել, գումարներ չի հափշտակել, եկամուտներ չի օրինականացրել, փաստաթղթեր չի կեղծել, այլ իր գործողություններն ուղղված են եղել Վոլոդյա Վարդանյանի և նրա խմբի կողմից կատարված բազմաթիվ գործողությունների բացահայտմանը, իսկ այնուհետև նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից և իրենից գողացված գումարների հետ վերադարձմանը: Ըստ իրեն՝ բացակայում է փողերի լվացման գործողությունը, որովհետև գույքի անօրինական շրջանառության արդյունքում չէ, որ ինքը ձեռք է բերել գումար, այլ դրանք եղել են «Եվրոֆինանս» ՍՊ ընկերության կողմից փոխառությամբ տրված գումարները: Ինչ վերաբերվում է իր կողմից փաստաթղթերի կեղծմանը, ապա քրեական գործում որևէ ապացույց այդ մասին առկա չէ:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 1, գ. թ. 65-70, 152-153, 172-173, հատոր 2, գ.թ. 158-159, 236-237, հատոր 3, գ. թ. 1-2, 48-50, 269-271, 279-280, 281-285, հատոր 8, գ. թ. 197-199, հատոր 9, գ. թ. 11-14, 15-16, 248-249, 258, 265-266, 269, հատոր 10, գ.թ. 18, 168/
Առաջադրված մեղադրանքում Իգոր Արոնի Մանդելը իրեն մեղավոր չի ճանաչել, նախաքննության ընթացքում հրաժարվել է մեղադրանքի շուրջ ցուցմունքներ տալուց, դատարանում նույնպես հրաժարվեց ցուցմունքներ տալուց, սակայն դատավարության մասնակիցների հարցերին պատասխանելով՝ նշեց, որ տեղի ունեցածի մասին ընկերության բաժնետերերը տեղյակ են եղել և նրանք են խնդրել, որ իր բաժնեմասը ևս գրավ դրվի, որպեսզի կարողանան վարկ վերցնել և ստանալ տարիների ընթացքում կուտակված ու չվճարված աշխատավարձերը: Իրականում Վոլոդյա Վարդանյանն է իրեն խաբել և տարել է 176 միլիոն ՀՀ դրամ գումարը: Բոլոր բաժնետերերն ի սկզբանե տեղյակ են եղել, որ վարձակալության գումարի չափը 2.450.000 ՀՀ դրամ է: Վոլոդյա Վարդանյանը հրավիրվել է իրականացնելու ընկերության հաշվապահական գործերը, քանի որ այդպես են ցանկացել դեղատան աշխատողները, սակայն նա չի վարձատրվել: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին դեղատան տարածքը վարձակալությամբ տալու բանակցություններին մասնակցել են ինքը և Վոլոդյա Վարդանյանը: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից իրենց տրվել է 193 միլիոն ՀՀ դրամ գումարի չափով վարկ, որից 16 միլիոնն են ստացել, իսկ մնացածը Վ. Վարդանյանի հետ անհետացել է: Ինքն այլևս Վ. Վարդանյանին չի տեսել, որպեսզի նրանից պահանջի գումարը, այլ զանգահարել է Աշոտին, որպեսզի վերջինս ապահովի գումարի փոխանցումը: Այդ գումարը «Ֆորեքս» ծրագրի միջոցով շրջանառության մեջ դնելու և դրանից եկամուտներ ստանալու մասին խոսակցություն Վ. Վարդանյանը կոլեկտիվի ժողովի ժամանակ վարել է, սակայն չի հիշում, թե կոնկրետ ինչ է ասել: Որպես տուժող ներգրավված իր աշխատակիցներից որևէ

մեկի նկատմամբ թշնամություն չունի, սակայն նրանց կողմից նմանատիպ ցուցմունքներ տալը բացատրում է նրանով, որ նրանք հայտնել են, որ իրենց ցուցմունքները հետ կվերցնեն, եթե ինքը հրաժարվի իր բաժնեմասից: Որևէ այլ ձևով իր դեմ տուժողների կողմից ցուցմունքներ տալը չի կարող բացատրել: Վոլոդյա Վարդանյանին Աշոտ Հակոբյանն է ներկայացրել որպես վստահելի հաշվապահ, իսկ թե ինչով էր ինքը վարձահատույց լինելու նրան՝ անվճար աշխատանքի դիմաց, չի կարող ասել: Իր և իր դուստր Ինգա Մանդելի միջև փոխհարաբերությունները լավ են եղել, սակայն ինքը ուշ է իմացել, որ հափշտակված գումարները փոխանցվել են իր դստեր հաշվեհամարին և այնտեղից կանխիկացվել են: Վ. Վարդանյանի անհետացման ժամանակ նույնպես այդ մասին ինքը չի իմացել: Իր ունեցած հիվանդությունների պատճառով այժմ դեպքի մանրամասները չի հիշում:
/դատական նիստի արձանագրություն, հատոր 10, գ.թ. 155/
Պաշտպանության կողմի միջնորդությամբ դատարանում որպես վկա հարցաքննված ներքոհիշյալ անձինք հայտնեցին հետևյալը.
Վկա Տիգրան Սահակյանը ցուցմունք տվեց այն մասին, որ հանդիսանում է «Իրավագարանտ» ՍՊԸ-ի հիմնադիրը: 2000թ.-ից ճանաչում է Վոլոդյա Վարդանյանին: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի մասին երբևէ չի լսել, տեղյակ չէ նաև, որ վերջինս «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ պայմանագրեր է կնքել: Տեղեկություն չունի նաև այն մասին, որ «Շենգավիթ-Ա» և «Իրավագարանտ» ՍՊ ընկերությունների միջև պայմանագիր է կնքվել և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվեհամարից գումար է փոխանցվել «Իրավագարանտ» ՍՊԸ-ի հաշվեհամարին, քանի որ ընթացիկ գործողությունները կատարվել են Վ. Վարդանյանի կողմից, որոնց մասին վերջինս իրեն տեղյակ չի պահել: «Իրավագարանտ» ՍՊԸ-ի հետ կնքված մյուս պայմանագրերից ևս տեղյակ չէ: Վ. Վարդանյանի անհետացման մասին տեղեկացել է նրա որդիներից և անձամբ որևէ միջոց չի ձեռնարկել նրան հայտնաբերելու ուղղությամբ: Իր կողմից է Թորգոմ Վարդանյանը նշանակվել «Իրավագարանտ» ՍՊԸ-ի տնօրեն, սակայն նրա գործունեությունն ինքը չի վերահսկել:
/դատական նիստի արձանագրություն/
Վկա Գագիկ Լենիկի Մարգարյանը ցուցմունք տվեց այն մասին, որ հանդիսանում է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի տնօրենը, որը գործունեություն է ծավալել արտարժույթային շուկայում: Կազմավորման օրվանից ընկերության բաժնետերերը եղել են ինքը, Վոլոդյա Վարդանյանը, Եղիշեն և Խաչիկը: Կազմակերպությունը գրանցվել է 2006թ.-ին, իսկ 2008թ. նրա գործունեությունը դադարեցվել է: Տեղյակ է, որ Վոլոդյա Վարդանյանը 2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հետ կնքել է փոխառության պայմանագիր: 2008թ., Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո տեղեկացել է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվեհամարից շուրջ 176 միլիոն ՀՀ դրամի չափով գումար է փոխանցվել «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվին, իսկ թե Վոլոդյա Վարդանյանն ինչ հաշվեհամարներին է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվեհամարից գումարներ փոխանցել՝ տեղյակ չէ: Վ. Վարդանյանի բաժնեմասն անցել է նրա որդիներին, որի մասին կազմվել է արձանագրություն: Որևէ խոսակցություն չի լսել այն մասին, որ Վ. Վարդանյանը և Ա. Հակոբյանը ցանկացել են յուրացնել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից փոխանցված գումարները:
/դատական նիստի արձանագրություն/
Վկա Արթուր Ռաֆիկի Դանիելյանը ցուցմունք տվեց այն մասին, որ ճանաչում է Աշոտ Հակոբյանին, Վոլոդյա Վարդանյանին և նրա որդիներին որպես համագյուղացիների, իսկ 2008թ.-ից Վոլոդյա Վարդանյանի հետ գտնվում է խնամիական հարաբերությունների մեջ: Վոլոդյա Վարդանյանի ՍՊ ընկերությունների հետ առնչվել է այն ժամանակ, երբ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Վարդանյանը գտնվել է արտերկրում և այդ ընկերության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես ստանձնել է ինքը: Որպես տնօրենի պաշտոնակատար ինքը չի ծանոթացել մյուս բաժնետերերի և նրանց կատարած գործունեության հետ:

Ընկերության որոշ գործարքների հետ ծանոթ է, մասնավորապես թիվ 17 պայմանագրի և ցեսիայի պայմանագրի հետ: Որևէ տեղեկություն չունի «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերից: Իր՝ որպես տնօրենի պաշտոնակատար աշխատելու ժամանակահատվածում ընկերությունը որևէ ֆինանսական գործարք չի կնքել: Տեղյակ է, որ Վոլոդյա Վարդանյանը անհետացել է 2008թ. ապրիլին, սակայն նրա անհետացման մասին որևէ տեղեկություն չունի: Ինքը Աշոտ Հակոբյանին երբևէ սպառնալիքներ չի տվել: Նկատել է, որ Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը գտնվել են ջերմ հարաբերությունների մեջ: Պարզապես մեկ անգամ, ինքը և Թորգոմ Վարդանյանը ականատես են եղել, որ Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը բուռն քննարկումների մեջ են և Աշոտ Հակոբյանն ինչ-որ հաշվետվություն է պահանջել Վոլոդյա Վարդանյանից, իսկ վերջինս նախատել է Աշոտ Հակոբյանին՝ ինչ-որ անձանց սպառնալու համար:
/դատական նիստի արձանագրություն/
Վկա Թորգոմ Վոլոդյայի Վարդանյանը ցուցմունք տվեց այն մասին, որ հանդիսանում է Վոլոդյա Վարդանյանի որդին: Իր հայրն անհետացել է 2008թ. ապրիլի 24-ին: «Իրավագարանտ» ՍՊԸ-ի տնօրենը եղել է հայրը՝ Վոլոդյա Վարդանյանը, իսկ բաժնետերերը՝ Վոլոդյա Վարդանյանը և Տիգրան Սահակյանը: Երբ ստանձնել է տնօրենի պարտականությունները՝ ծանոթացել է «Իրավագարանտ» ՍՊԸ-ի գործունեության հետ, սակայն տեղյակ չէ, թե Տիգրան Սահակյանն ընկերության գործառույթներին անմիջական մասնակցություն ունեցել է, թե ոչ: Տեղյակ չէ, թե կոնկրետ որքան գումար է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հաշվեհամարից փոխանցվել «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի հաշվեհամարին, որը հավանաբար պետք է վերադարձվեր է 9-10 տարի հետո: Տեղյակ չէ, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ վարձակալության պայմանագիր է կնքել, ինչպես նաև չգիտի, որ այդ հարցերով զբաղվելու համար իր հայրը լիազորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի բաժնետերերի կողմից: Տեղյակ չէ նաև, թե իր հայրն ինչ պայմանագրեր է կնքել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի, «Եվրոֆինանս» ՍՊԸ-ի և «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ: Ինքն Աշոտ Հակոբյանին ուղարկված նամակով պահանջել է վաղաժամկետ վերադարձնել փոխատվության միջոցները և այժմ էլ պնդում է, որ Աշոտ Հակոբյանը «Իրավագարանտ» ՍՊԸ-ին պարտք է 42.435.000 ՀՀ դրամ գումար: Այդ մասին առկա է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշում: Ինքը երբևէ Իգոր Մանդելի բնակարան չի գնացել և նրան չի սպառնացել:
/դատական նիստի արձանագրություն/

Դատարանի իրավական վերլուծությունները.

Վերլուծելով ամբաստանյալներ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի, Իգոր Արոնի Մանդելի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, համադրելով դրանք քրեական գործի դատական քննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցների հետ, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրենց համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի ցուցմունքները՝ խարդախություն չկատարելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտները չօրինականացնելու և փաստաթղթեր չկեղծելու մասին, ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի ցուցմունքները՝ խարդախություն չկատարելու և փաստաթղթեր չկեղծելու մասին,

	իրականությանը չեն համապատասխանում, քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու նպատակ են հետապնդում և հերքվում են վերոհիշյալ ապացույցներով: Քննարկելով պաշտպանության կողմի միջնորդությունը՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի մասնակիցների ընդհանուր ժողովի 25.07.2007թ. արձանագրությունը և. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի տարածքը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին ամսեկան 700.000 ՀՀ դրամ գումարով 19.06.2007թ. կնքված վարձակալության պայմանագիրը լուսապատճեններ հանդիսանալու պատճառով ապացույցների ցանկից հանելու և անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին, դատարանը գտնում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: (…)»: Նույն օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ 1. Իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել: (…)»: Նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ 1. Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները: 2. Սույն օրենսգրքի 115 հոդվածի առաջին մասում նշված հատկանիշներ պարունակող փաստաթղթերը կարող են ծառայել նաև որպես իրեղեն ապացույցներ: (…)»: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի մասնակիցների ընդհանուր ժողովի 25.07.2007թ. արձանագրությունը և. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի տարածքը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին ամսեկան 700.000 ՀՀ դրամ գումարով 19.06.2007թ. կնքված վարձակալության պայմանագիրը որպես իրեղեն ապացույցներ են ճանաչվել վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, քրեադատավարական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ, դրանց բովանդակությունը վերաբերում է քրեական գործով ապացուցման ենթակա առարկային, դրանք թույլատրելի են և վերաբերելի: Այդ ապացույցները հետազոտվել են դատաքննության ընթացքում պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, որի պատճառով պաշտպանության կողմի վերոհիշյալ միջնորդությունը ենթակա է մերժման: Վերլուծելով ամբաստանյալներ Աշոտ Ալեքսանի Հակոբյանին և Իգոր Արոնի Մանդելին առաջադրված մեղադրանքները, նրանց ցուցմունքները և գործով ձեռք բերված ապացույցները, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է

	որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Ապացուցված է նաև ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, նախապես հայտնի հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով գույքի փոխարկումն ու փոխանցումը, որը նպատակ է ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը, այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Ապացուցված է նաև ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր կեղծելը, այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Ապացուցված է նաև ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի կողմից, նրա մեղավորությամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր կեղծելը, այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Ուսումնասիրելով ամբաստանյալների անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի նկատմամբ, նրա կատարած հանցագործություններից յուրաքանչյուրի համար պատիժ նշանակելիս՝ դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, այն որ նախկինում դատված չի եղել: Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում: Ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանն իր կատարած՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության համար ենթակա է պատժի ազատազրկման ձևով, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից», քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2011թ. հուլիսի 12-ի որոշմամբ այդ դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորվում տուժողի (օրինական տիրապետողի) գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր հանցագործության համար ամբաստանյալ Ա. Հակոբյանը ենթակա է պատժի ազատազրկման ձևով, որը նա պետք է կրի:

Ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի նկատմամբ, նրա կատարած հանցագործություններից յուրաքանչյուրի համար պատիժ նշանակելիս՝ դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այն, որ նրա կողմից կատարված հանցագործությունների հետևանքով վնաս է հասցրել այն ընկերությանը, որի կեսից ավելի բաժնեմասի սեփականատերն է, որևէ գումար կամ հատուցում իր արարքների արդյունքում չի ստացել: Դատարանը հաշվի է առնում նաև հանցավորի անձը, այն, որ նախկինում դատված չի եղել, յոթանասուն տարեկան, վատառողջ՝ 3-րդ խմբի հաշմանդամ է, տառապում է ՍԻՀ, աթերոսկլերոզիկ և հետինֆարկտային կարցիոսկլերոզ, լարվածության աթենոկարցիա, ՖԿ 2-րդ-3-րդ աստիճանի միտրալ փականի անբավարարություն (հերոհմատիկ բնույթի) շողացող առիթմիա, խրոնիկական երկկողմանի պիէլոնեֆրիտ, երիկամների բազմաթիվ կիստաներ երկու կողմից, արտերիալ հիպերտենզիա 3-րդ աստիճանի՝ հաճախակի հիպերտոնիկ կրիզներով, ՇԱ 2-րդ աստիճանի աթերոսկլերոտիկ, հիպերտոնիկ հետինսուլտային էնցեֆալոպատիա 2-րդ աստիճանի, աջակողմյան պիրամիդային անբավարարությամբ, շագանակագեղձի ադենոմա, ողնաշարի կրծքային հատվածի դեֆորմացնող օստեոխոնդրոզ հիվանդություններով:
Վերոհիշյալ հանգամանքների համակցությունը դատարանը հաշվի է առնում որպես ամբաստանյալ Իգոր Մանդելի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, իսկ ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում:
Ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելն իր կատարած՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր հանցագործության համար ենթակա է պատժի ազատազրկման ձևով:
Քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար նշանակված պատիժն ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի կողմից կրելու հարցը՝ դատարանը գտնում է, որ այդ հոդվածով, սույն դատավճռով նրա նկատմամբ ենթակա է կիրառման Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011թ. մայիսի 26-ի որոշումը:
Քննարկելով այն հարցը, թե արդյոք ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելը պետք է կրի իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը՝ դատարանը գտնում է հետևյալը.
ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:
ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 2007թ. հունիսի 12-ի թիվ ՎԲ-124/07 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վկայակոչված հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում և դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել: ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է

	հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու»: ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ 2008թ. փետրվարի 1-ի թիվ ՎԲ-01/08 որոշմամբ նշել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը: Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքները, որ Իգոր Մանդելն իր կողմից կատարված հանցագործությունների հետևանքով վնաս է հասցրել այն ընկերությանը, որի կեսից ավելի բաժնեմասի սեփականատերն է, որևէ գումար կամ հատուցում իր արարքների արդյունքում չի ստացել, վատառողջ է՝ 3-րդ խմբի հաշմանդամ է, տառապում է վերոհիշյալ մի շարք հիվանդություններով, նախկինում դատված չի եղել, յոթանասուն տարեկան է, հաշվի առնելով նաև ամբաստանյալ Ի. Մանդելի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ դատարանը գտնում է, որ Իգոր Մանդելի կողմից կատարված հանցագործության հանրորեն վտանգավորության աստիճանը նվազել է և հնարավոր է հանգել հետևության, որ Իգոր Մանդելի ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ նշանակվող ազատազրկման ձևով պատիժը կրելու, ուստի մեղադրողի միջնորդությունն այն մասին, որ նպատակահարմար չէ ազատազրկման ձևով պատիժը Իգոր Մանդելի կողմից կրելը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ, ազատազրկման ձևով պատիժը պետք է նրա նկատմամբ պայմանականորեն չկիրառվի՝ հիմնավոր է: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011թ. մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց պատժաչափի չկրած մասը պետք է կրճատել մեկ քառորդով: Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011թ. մայիսի 26-ի որոշման կիրառմամբ Իգոր Մանդելի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժաչափի չկրած մասը պետք է կրճատել մեկ քառորդով: Քննարկելով տուժողներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի քաղաքացիական հայցերը՝ ամբաստանյալներ Աշոտ Ալեքսանի Հակոբյանից և Իգոր Արոնի Մանդելից համապարտությամբ, հօգուտ իրենցից յուրաքանչյուրի 4.563.780 (չորս մլիլիոն հինգ հարյուր վաթսուերեք հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում բռնագանձելու մասին, դատարանը գտնում է, որ քաղաքացիական հայցերը պետք է թողնել առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր

պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով արգելված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս:»:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար:»:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:»:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով:»:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:»:
Սույն քրեական գործով տուժողներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի կողմից ներկայացված վերոհիշյալ հայցադիմումներով քաղաքացիական հայցվորները խնդրել են ամբաստանյալներից համապարտությամբ, հօգուտ իրենցից յուրաքանչյուրի բռնագանձել 4.563.780 (չորս մլիլիոն հինգ հարյուր վաթսուերեք հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում, մինչդեռ քրեական գործի դատական քննությամբ հաստատվել է, որ կնքված պայմանագրերի հիման վրա, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարից 176.000.000 ՀՀ դրամը Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը բանկային փոխանցումներով փոխանցել են մի շարք իրավաբանական և ֆիզիկական անձանց հաշվեհամարներին: Վերջիններս նույնպես ենթակա են ներգրավման վարույթին՝ քաղաքացիական հայցերը քննելիս:
Դատարանը գտնում է, որ վերոհիշյալ հիմնավորումներով և ողջամիտ ժամկետում քրեական գործի քննությունն ապահովելու նպատակով, ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանից և Իգոր Մանդելից հօգուտ քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի գումար

բռնագանձելու վերաբերյալ քաղաքացիական հայցերը պետք է թողնել առանց քննության, ինչն արգելք չի հանդիսանում հայցերը հետագայում քաղաքացիական դատավարության կարգով հարուցելու համար:
Քննարկելով ամբաստանյալների գույքի վրա դրված կալանքի հարցը՝ դատարանը գտնում է, որ նախաքննության մարմնի 26.03.2008թ. և 10.11.2009թ. որոշումներով ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի գույքի վրա դրված կալանքը պետք է թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի կատարումը, իսկ ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի գույքի վրա 26.03.2008թ. որոշմամբ դրված կալանքը պետք է վերացնել:
Քննարկելով իրեղեն ապացույցների հարցը՝ դատարանը գտնում է, որ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, 01.11.2010թ. որոշմամբ իրեղեն ապացույցներ ճանաչված փաստաթղթերը պետք է պահել քրեական գործի հետ միասին:
Քննարկելով խափանման միջոցների հարցը՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրված է ճիշտ և այն վերացվելու կամ փոփոխվելու ենթակա չէ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի նկատմամբ որպես խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունն ընտրված է ճիշտ և այն վերացվելու կամ փոփոխվելու ենթակա չէ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 119-րդ, 357-360-րդ, 364-367-րդ, 369-373-րդ հոդվածներով, դատարանը՝

Վ Ճ Ռ Ե Տ

1. Ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանին մեղավոր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներում և դատապարտել. ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»: 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 6 /վեց/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված՝ պատիժների մասնակի գումարման սկզբունքի կիրառմամբ, ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում 11 /տասնմեկ/ տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»: Պատիժը պետք է կրի ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկում, պատժի սկիզբը հաշվելով 2010թ. ապրիլի 10-ից:
Խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
2. Ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելին մեղավոր ճանաչել

	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներում և դատապարտել. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011թ. մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելին ազատել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման համար նշանակված պատիժը կրելուց: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011թ. մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառմամբ, Իգոր Արոնի Մանդելի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը՝ 5 /հինգ/ տարի ժամկետով ազատազրկումը կրճատել մեկ քառորդով և վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 3 /երեք/ տարի 9 /ինը/ ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ, ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի նկատմամբ պատիժը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար նշանակված՝ 3 /երեք/ տարի 9 /ինը/ ամիս ժամկետով ազատազրկումը, պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 5 /հինգ/ տարի ժամկետով: Իգոր Մանդելին պարտավորեցնել չփոխել մշտական բնակության վայրը՝ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնելով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա: Խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Քաղաքացիական հայցվորներ Կ. Ղազարյանի, Ա. Ավետիսյանի, Ա. Նազարյանի, Ա. Ստեփանյանի, Մ. Նազարյանի, Ն. Պողոսյանի, Ա. Արզումանյանի, Ն. Թադևոսյանի և Ռ. Աղաջանովայի քաղաքացիական հայցերը թողնել առանց քննության: Ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի գույքի վրա նախաքննության մարմնի 26.03.2008թ. և 10.11.2009թ. որոշումներով դրված կալանքը թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի կատարումը, իսկ ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի գույքի վրա 26.03.2008թ. որոշմամբ դրված կալանքը՝ վերացնել: Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, 01.11.2010թ. որոշմամբ իրեղեն ապացույցներ ճանաչված փաստաթղթերը պահել քրեական գործի հետ միասին: Դատավճիռը հրապարակվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: ԴԱՏԱՎՈՐ՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	29-12-2011
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	14-02-2012
էջերի քանակ:	269, 262, 298, 250, 269, 262, 298, 256, 288, 294, 384, 242

Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Գործը ուղարկվել է:	14-02-2012
էջերի քանակը:	269, 262, 298, 250, 269, 262, 298, 256, 288, 294, 384, 242
Գործին կից նյութերը:	
Ուր(դատարան):	Քրեական և զինվորական վերաք.
Ուր:	
Ելքի գրության համարը:	Ե-3878
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	16-02-2012

Ամսաթիվ:	04-07-2012
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	10-07-2012
Այլ նշումներ:	

Դատական Գործ N: ԵԿԴ/0319/01/10

Ամսաթիվ:	30-01-2012
Ամբաստանյալ	
Անձ	
Անուն	Աշոտ
Ազգանուն	Հակոբյան ,
Հասցե	չկա
Հոդված_1	
Հոդված	190 Մաս 3 Կետ 1
Հոդված_1	
Հոդված	178 Մաս 3 Կետ 1
Դատվածություն:	
Պատիժ:	
Հոդված_2	
Հոդված	325 Մաս 2
Խափանման միջոց:	Կալանավորում
Ում կողմից է բերվել բողոքը:	Տուժող
Բողոքը բերող անձը	
Անուն	Կարինե
Ազգանուն	Ղազարյան

Հասցե	ք.Երևան , Ծխախոտագործների 99
Բողոքի բովանդակությունը:	Աշոտ Հակոբյան , Իգոր Մանդել 1. Վերացնել դատավճռի վճռեց 1-ին կետում սահմանված բացառությունը՝ ՀՀ քր.օր. 55 հոդ. 4-րդ մասով նախատեսված <<Այդ գույքը ենթակա է բռնագանձման՝ անկած դատապարտյալի կմ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից>> դրույթի կիրառման մասով : 2.Մասնակիորեն բեկանել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի /ՀՀ քր.օր-ի 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , 178 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդ. 2-րդ մասով - ազատազրկում 11 տարի ժամկետով՝ ՀՀ քր.օր. 65 հոդ. 4-րդ մասով նախատեսված , հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ / և Իգոր Արոնի Մանդելի /ՀՀ քր.օր-ի 178 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով - ազատազրկում 5 տարի ժամկետով և 325 հոդ. 2-րդ մասով - ազատազրկում 1 տարի ժամկետով , <<ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին >> ՀՀ ԱԺ. 26.05.2011թ. որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ ազատվել է ՀՀ քր.օր. 325 հոդ. 2-րդ մասով նշանակված պատժից, <<ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին >> ՀՀ ԱԺ. 26.05.2011թ. որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառմամբ ՀՀ քր.օր-ի 178 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը կրճատվել է մեկ քառորդով և վերջնական պատիժ նշանակվել ազատազրկում 3 տարի 9 ամիս ժամկետով , ՀՀ քր.օր. 70 հոդ. կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 5 տարի ժամկետով/ վերաբերյալ 29.12.2011թ. դատավճիռը հետևյալ մասերով. ա/ քաղաքացիական հայն առանց քննության թողնելու մասով՝ կայացնելով տուժողներին պատճառված գույքային վնասի վերականգնման վերաբերյալ դատական ակտ : բ/ ամբաստանյալ Իգոր Արոնի Մանդելի նկատմամբ սահմանված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով՝ կիրառելով նշանակված պատիժը :
Բողոքի ստացման կարգը:	Առձեռն հանձնվել է գրասենյակ
Ամսաթիվ:	30-01-2012
Չափահաս:	Այո
Ամսաթիվ:	30-01-2012
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	Կարինե Սուրենի Ղազարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	16-02-2012
Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց:	չկան
Ամսաթիվ:	20-02-2012

Երբ:	29-02-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
ժամ:	14:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1
Նիստը:	
Պատճառը:	

Երբ:	15-03-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
ժամ:	12:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1
Նիստը:	
Պատճառը:	

Երբ:	28-03-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
ժամ:	14:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1
Նիստը:	
Պատճառը:	

Երբ:	11-04-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
ժամ:	14:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1
Նիստը:	
Պատճառը:	

Երբ:	19-04-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
ժամ:	14:30
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1
Նիստը:	
Պատճառը:	

Անփոփոխ թողնված դատական ակտը:	Պատճառաբանվել է
Ամսաթիվ:	19-04-2012

Ամբաստանյալ	
Անուն	Աշոտ
Ազգանուն	Հակոբյան
Հասցե	ՀՀ ԱՆ <<Երևան-Կենտրոն>> ՔԿՀ
Ամբաստանյալ	
Անուն	Իգոր
Ազգանուն	Մանդելի
Հասցե	ք.երևան, Կոմիտասի պող. 27 շենք, բն.3
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	393, 394,
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	393, 394,
Այլ նշումներ:	
Քր.օր. հոդված	
Հոդված	190,178,325,178,325 Մաս 3,3,2,3,2 Կետ 1,1,1

Դատական ակտ:

Գործ ԵԿԴ/0319/01/10

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2012թ. ապրիլի 19-ին Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Գ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ
Հ. ՏԵՐ-ԱԴԱՄՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Լ. ՓՈԼԱԴՅԱՆԻ

Մասնակցությամբ՝

ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐ՝ Գ. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ
Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆՆԵՐ՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ
Հ. ՄԱՂԱՔՅԱՆԻ
ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ի. ՄԱՆԴԵԼԻ
ՏՈՒԺՈՂՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑՎՈՐՆԵՐ՝ Կ. ՂԱԶԱՐՅԱՆԻ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա. ՆԱԶԱՐՅԱՆԻ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
Մ. ՆԱԶԱՐՅԱՆԻ
Ն. ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ
Ն. ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ
Ռ. ԱՂԱՋԱՆՈՎԱՅԻ

ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ

Դռնբաց դատական նիստում քննելով ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190

հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով ու Իգոր Արոնի Մանդելի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ Դատարան/ 2011թ. դեկտեմբերի 29-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի, նրա պաշտպան Հենրիկ Մաղաքյանի, տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Ազիզ Ստեփանյանի, Մելանյա Նազարյանի, Նինա Պողոսյանի, Ալվարդ Արզումանյանի, Նազիկ Թադևոսյանի, Ռիմա Աղաջանովայի վերաքննիչ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.
22.05.2008թ. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 14114408 քրեական գործը:
02.06.2008թ. որոշմամբ Վոլոդյա Վարդանյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:
14.08.2009թ. թիվ 14114408 քրեական գործի նյութերով, ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է նոր քրեական գործ, ընդունվել է քննիչի վարույթ և քրեական գործին շնորհվել 14125709 համարը:
24.08.2009թ. որոշմամբ թիվ 14114409 քրեական գործը միացվել է թիվ 14125709 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է թիվ 14125709 համարի տակ:
12.04.2010թ. որոշմամբ Աշոտ Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով:
12.04.2010թ. որոշմամբ Աշոտ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, որի ժամկետը երկարացվել է մինչև 10.12.2010թ.:
21.04.2010թ. թիվ 14125709 քրեական գործն ուղարկվել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու համար և 23.04.2010թ. ընդունվել է ՀԿԳ ավագ քննիչի վարույթ:
21.10.2010թ. որոշմամբ Իգոր Մանդելը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով:
21.10.2010թ. որոշմամբ Իգոր Մանդելի և Ինգա Մանդելի կողմից, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված 176.000.000 դրամ գումարն օրինականացնելու և Ինգա Մանդելի կողմից, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցներին պատկանող, առանձնապես խոշոր չափերի գույքը՝ 176.000.000 դրամ գումարը, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, խաբեությամբ հափշտակելու վերաբերյալ վարույթի մասը կարճվել է՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:
25.10.2010թ. որոշմամբ Աշոտ Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով՝ նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել վերջինիս

	առաջադրված մեղադրանքի նկարագրական մասում կատարել փոփոխություններ: 03.11.2010թ. որոշմամբ թիվ 14125709 քրեական գործից անջատվել է Վոլոդյա Վարդանյանի կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված 176.000.000 դրամ գումարն Աշոտ Հակոբյանի հետ հանցավոր համաձայնությամբ օրինականացնելու, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցներին պատկանող, առանձնապես խոշոր չափերի գույքը՝ 176.000.000 դրամ գումարն Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ նախնական համաձայնությամբ, խաբեությամբ հափշտակելու ու նրանց հետ նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող փաստաթուղթ՝ 25.07.2007թ. ամսաթվով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ժողովի արձանագրությունը կեղծելու, Արման և Արամ Վարդանյանների կողմից Արման Հակոբյանին ծեծի ենթարկելու և վիրավորանք հասցնելու, Իգոր Մանդելին ու Աշոտ Հակոբյանին սպանության սպառնալիքներ հասցնելու դեպքերի վերաբերյալ մասը և նախաքննությունը շարունակվել է նույն համարի տակ: 22.11.2010թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Դատարանի 29.12.2011թ. դատավճռով ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 8 տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի չորրորդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից», 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 6 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 325 հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 2 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածով սահմանված պատիժների մասնակի գումարման սկզբունքի կիրառմամբ, ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 11 տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի չորրորդ մասով նախատեսված, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»՝ պատժի սկիզբը հաշվելով 10.04.2010թ.-ից: Խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Ամբաստանյալ Իգոր Մանդելը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 325 հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 1 տարի ժամկետով: «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011թ. որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ, ամբաստանյալ Իգոր Մանդելը ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման համար նշանակված պատիժը կրելուց: «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011թ. որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառմամբ, Իգոր

Մանդելի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը՝ 5 տարի ժամկետով ազատազրկումը, կրճատվել է մեկ քառորդով և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 3 տարի 9 ամիս ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ, ամբաստանյալ Իգոր Մանդելի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված նշանակված պատիժը՝ 3 տարի 9 ամիս ժամկետով ազատազրկումը, պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 5 տարի ժամկետով՝ պարտավորեցնելով վերջինիս չփոխել մշտական բնակության վայրը՝ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնելով ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա:
Խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Քաղաքացիական հայցվորներ Կ. Ղազարյանի, Ա. Ավետիսյանի, Ա. Նազարյանի, Ա. Ստեփանյանի, Մ. Նազարյանի, Ն. Պողոսյանի, Ա. Արզումանյանի, Ն. Թադևոսյանի և Ռ. Աղաջանովայի քաղաքացիական հայցերը թողնվել են առանց քննության:
Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի գույքի վրա նախաքննական մարմնի 26.03.2008թ. և 10.11.2009թ. որոշումներով դրված կալանքը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի կատարումը, իսկ ամբաստանյալ Իգոր Մանդելի գույքի վրա 26.03.2008թ. որոշմամբ դրված կալանքը վճռվել է վերացնել:
Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, 01.11.2010թ. որոշմամբ իրեղեն ապացույցներ ճանաչված փաստաթղթերը վճռվել է պահել քրեական գործի հետ միասին:
Դատարանի 29.12.2011թ. դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը, նրա պաշտպան Հենրիկ Մաղաքյանը, տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանը, Արուսյակ Ավետիսյանը, Անուշ Նազարյանը, Ազիզ Ստեփանյանը, Մելանյա Նազարյանը, Նինա Պողոսյանը, Ալվարդ Արզումանյանը, Նազիկ Թադևոսյանն ու Ռիմա Աղաջանովան:

2.Գործի փաստական հանգամանքները
Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանին նախաքննական մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել այն բանի համար. <<որ նա՝ 2007թ. մայիս ամսին, համաձայնության է եկել ծանոթի՝ թվով 20 անձանց կողմից հիմնադրված «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հիմանդիրներից մեկի, ընկերության բաժնեմասի 50,4 տոկոսի մասնակցի և տնօրենի՝ Իգոր Մանդելի հետ՝ հափշտակելու «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ը պատկանող գումարները, որոնք պետք է գոյանային «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն Շենգավիթի մասնաճյուղին Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու միջոցներից: Հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, Իգոր Մանդելի հետ որոշել են այդ գործին մասնակից դարձնել տնտեսագիտության բնագավառում համապատասխան գիտելիքներ ունեցող, «Եվրոֆինանս» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների հիմնադիր-տնօրեն Վոլոդյա Վարդանյանին, որի հետ այդ առումով եկել են հանցավոր համաձայնության ու նպատակադրվել ընկերության բաժնետերերին ներկայացնել, որ բանկին տրվելիք տարածքի վարձակալության ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ՝ իրական 2.450.000 դրամի փոխարեն: Կազմակերպվող հանցագործության կատարումը դյուրին դարձնելու, ստացված գումարներին միանգամից տիրանալու համար, վերջինս խորհուրդ է տվել բանկից միանվագ ստանալ տարածքի վարձակալության 10 տարվա վճարը: Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին բանկի ներկայացուցիչների հետ չկարողանալով այդ առումով գալ համաձայնության՝ որոշել են բանկից վերցնել որոշված

վարձավճարի չափի մարման 10 տարվա հաշվարկով վարկ: 2007թ. մայիսի վերջին, Վոլոդյա Վարդանյանի հետ մասնակից է դարձել Իգոր Մանդելի կողմից հրավիրված «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն բաժնետերերի ընդհանուր ժողովին և Վոլոդյա Վարդանյանի ու Իգոր Մանդելի հետ միասին բաժնետերերին խաբեությամբ ներկայացրել է, որ բանկին տրվելիք տարածքի վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ: Իգոր Մանդելի հետ նաև ներկայացրել է, որ Վոլոդյա Վարդանյանն ունի տնտեսագիտական պատշաճ գիտելիքներ և առաջարկել է բանկի հետ կատարվելիք գործարքի իրականացման համար ընկերության անունից, որպես լիազոր անձ, հանդես գա նա: Իգոր Մանդելն ընկերության բաժնետերերի հետ ստորագրությամբ վավերացրել է ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով որոշվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը պատկանող Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը վարձակալությամբ հանձնելու հարցը: Իգոր Մանդելը բաժնետերերի հետ միասին Վոլոդյա Վարդանյանին է տվել լիազորագիր՝ գործարքի իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթավորման գործողությունները նրա կողմից կատարելու համար: 21.05.2007թ. ամսաթվով նշված արձանագրության և 11.06.2007թ. ամսաթվով նշված լիազորագրի հիման վրա, Վոլոդյա Վարդանյանի անունից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ներկայացուցչի հետ 19.06.2007թ. կնքվել է պայմանագիր՝ նշված տարածքը բանկին 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 դրամ վճարի չափով վարձակալությամբ հանձնելու մասին, սակայն Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ընկերության բաժնետերերին է ներկայացրել վարձակալության կեղծված տվյալով պայմանագիր, որտեղ տարածքի համար նախատեսված ամսեկան վարձավճարի չափը նշված է եղել 700.000 դրամ: Ընկերության ունեցած տարբեր պարտքերը մարելու, այդ թվում նաև բաժնետեր-աշխատակիցների աշխատավարձերը վճարելու, հարկային պարտավորությունների վճարումներ կատարելու պատրվակով, Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին համոզել է մյուս բաժնետերերին՝ ընկերության սեփականություն հանդիսացող, վերոհիշյալ հասցեում տեղակայված ողջ տարածքը գրավադրելով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից վերցնել վարկ՝ ներկայացնելով, որ դրա չափն իբր կազմելու է 16.000.000 դրամ՝ 23 ամսում այն մարելու պայմանով: Սակայն Վոլոդյա Վարդանյանի և Իգոր Մանդելի հետ կազմել է վերջինիս ստորագրությամբ և ընկերության մասնակից՝ Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ 25.07.2007թ. ամսաթվով ընկերության մասնակիցների ժողովի արձանագրություն՝ իրավունք վերապահող պաշտոնական կեղծ փաստաթուղթ, թե ընկերության մասնակիցներն իբր անցկացնելով ընդհանուր ժողով, որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Բագրատունյաց 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող 508,1 քմ մակերեսով դեղատունը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով, ստանալ 193.407.000 դրամի վարկ: Հիշյալ կեղծված փաստաթուղթն օգտագործելով՝ Իգոր Մանդելը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անունից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ 25.07.2007թ. և 26.07.2007թ. կնքել է բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրեր՝ իբր սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով բանկի կողմից ընկերությանը 10 տարի մարման ժամկետով, 9 տոկոս տոկոսադրույքով, դեղատան տարածքը գրավադրելով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, 193.407.000 դրամ գումարի նպատակային վարկ տրամադրելու մասին: Այդպիսով, խախտելով «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, այդ թվում նաև 48-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն կանոնադրությամբ հաստատված մի

շարք դրույթները, առանց «Շենգավիթ-Ա» ՍՊԸ ընդհանուր ժողովի որոշման՝ Վոլոդյա Վարդանյանի հետ մասնակից է դարձել Իգոր Մանդելի միջոցով ընկերության անունից կատարելու անհիմն խոշոր գործարք: Կնքված պայմանագրերի հիման վրա, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկը 30.07.2007թ. փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված ընթացիկ հաշվին, որից հետո Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ավարտին է հասցրել իրենց հանցավոր ծրագիրը՝ «Շենգավիթ-Ա» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ների միջև կազմված՝ փոխառությամբ գումարներ տրամադրելու մասին անհիմն պայմանագրով քողարկելով հանցագործության կատարումը, ստացված վարկի գումարներից 176.000.000 դրամը 31.07.2007թ. փոխանցել են Վոլոդյա Վարդանյանի տնօրինած «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն անվամբ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գործող հաշվեհամարին՝ այդպիսով խաբեությամբ հափշտակելով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նն արդեն իսկ պատկանող առանձնապես խոշոր չափ հանդիսացող այդ գումարը, իսկ 16.020.700 դրամը հաջորդ օրը՝ 01.08.2007թ. փոխանցել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն «Արարատ բանկ» ԲԲԸ-ում գործող հաշվեհամարին: Նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հափշտակված գումարների իրական բնույթը և պատկանելիությունը՝ համաձայնության է եկել Վոլոդյա Վարդանյանի հետ՝ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարին առկա այդ հափշտակված գումարները կոնվերտացնելու և այլ հաշվեհամարներին փոխանցելու գործում, որից հետո, 06.08.2007թ.-ից մինչև 23.01.2008թ.-ն ընկած ժամանակահատվածում, Վոլոդյա Վարդանյանը հափշտակված գումարներից 69.500.000 դրամը 5 դեպքով, փոխառության գումարների անվան տակ, փոխանցել է վերջինիս անվամբ բացված անձնական հաշվին, 37.385.000 դրամը 3 դեպքով, փոխառության գումարների անվան տակ, փոխանցել է Իգոր Մանդելի դստեր՝ Ինգա Մանդելի անձնական հաշվին, 505.000 դրամը 2 դեպքով, փոխառության գումարների անվան տակ փոխանցել է բարեկամի՝ Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, 34.425.000 դրամը, նորից փոխառության գումարների անվան տակ, 2 դեպքով փոխանցել է իր անձնական հաշվին, իսկ 33.000.000 դրամը՝ իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվին: Այնուհետև, «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվեհամարին առկա հիշյալ գումարը, ևս 3.000.000 դրամի հետ Վոլոդյա Վարդանյանի մասնակցությամբ փոխանցել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն հաշվին՝ խողովակների ձեռք բերման պատրվակով: Նշված ժամանակահատվածում, Վոլոդյա Վարդանյանը հափշտակված և անձնական հաշվին փոխանցված գումարների մի մասը փոխարկել է տարադրամով՝ դրանք տեղաշարժելով տարադրամային հաշվին, գումարներից մի մասը բանկային փոխանցումով ուղարկել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղում բնակվող բարեկամուհու՝ Անժելա Ավագյանի հաշվին, իսկ մյուս մասն էլ կանխիկ ստացել է հաշվեհամարներից: Այդ ընթացքում, ստացել է Վոլոդյա Վարդանյանի անձնական հաշվից իր հաշվեհամարին փոխանցված 7.860.000 դրամը, կանխիկացրել է իր հաշվեհամարում առկա ամբողջ 42.285.000 դրամը և Ինգա Մանդելի անձնական հաշվեհամարին փոխանցված գումարներից 37.074.000 դրամը և 22.11.2007թ. կնքված առուվաճառքի պայմանագրով, այդ ամբողջ գումարով ձեռք է բերել և որպես անձնական սեփականություն գրանցել Երևանի Այվազովսկու փողոցի 46/1 հասցեով գտնվող անշարժ գույքը՝ գործարքի շուրջ կնքված պայմանագրում նշելով, որ այն ձեռք է բերվել ընդամենը 48.000.000 դրամով:»:
Ամբաստանյալ Իգոր Մանդելին նախաքննական մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել այն բանի համար. <<որ նա, հանդիսանալով թվով 20 անձանց կողմից հիմնադրված «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հիմանդիրներից մեկը, ընկերության բաժնեմասի 50,4 տոկոսի մասնակիցը և տնօրենը, 2007թ. մայիս ամսին, համաձայնության է եկել ծանոթի՝ Աշոտ Հակոբյանի հետ՝

հափշտակելու «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը պատկանող գումարները, որոնք պետք է գոյանային «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն Շենգավիթի մասնաճյուղին Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու միջոցներից: Հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, Աշոտ Հակոբյանի հետ որոշել են այդ գործին մասնակից դարձնել տնտեսագիտության բնագավառում համապատասխան գիտելիքներ ունեցող, «Եվրոֆինանս» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների հիմնադիր-տնօրեն Վոլոդյա Վարդանյանին, որի հետ այդ առումով եկել են հանցավոր համաձայնության ու նպատակադրվել ընկերության բաժնետերերին ներկայացնել, որ բանկին տրվելիք տարածքի վարձակալության ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ՝ իրական 2.450.000 դրամի փոխարեն: Կազմակերպվող հանցագործության կատարումը դյուրին դարձնելու, ստացված գումարներին միանգամից տիրանալու համար, վերջինս խորհուրդ է տվել բանկից միանվագ ստանալ տարածքի վարձակալության 10 տարվա վճարը: Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին բանկի ներկայացուցիչների հետ չկարողանալով այդ առումով գալ համաձայնության՝ որոշել են բանկից վերցնել որոշված վարձավճարի չափի մարման 10 տարվա հաշվարկով վարկ: 2007թ. մայիսի վերջին, հրավիրելով ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով՝ դրան մասնակից է դարձրել Աշոտ Հակոբյանին և Վոլոդյա Վարդանյանին ու նրանց հետ միասին բաժնետերերին խաբեությամբ ներկայացրել է, որ բանկին տրվելիք տարածքի վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ: Աշոտ Հակոբյանի հետ նաև ներկայացրել է, որ Վոլոդյա Վարդանյանն ունի տնտեսագիտական պատշաճ գիտելիքներ և առաջարկել է բանկի հետ կատարվելիք գործարքի իրականացման համար ընկերության անունից, որպես լիազոր անձ, հանդես գա նա: Ընկերության բաժնետերերի հետ ստորագրությամբ վավերացնելով ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով որոշվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը պատկանող, Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը վարձակալությամբ հանձնելու հարցը, բաժնետերերի հետ միասին Վոլոդյա Վարդանյանին է տվել լիազորագիր՝ գործարքի իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթավորման գործողությունները նրա կողմից կատարելու համար: 21.05.2007թ. ամսաթվով նշված արձանագրության և 11.06.2007թ. ամսաթվով նշված լիազորագրի հիման վրա, Վոլոդյա Վարդանյանի անունից «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ներկայացուցչի հետ 19.06.2007թ. կնքվել է պայմանագիր՝ նշված տարածքը բանկին 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 դրամ վճարի չափով վարձակալությամբ հանձնելու մասին, սակայն Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի հետ միասին ընկերության բաժնետերերին է ներկայացրել վարձակալության կեղծված տվյալով պայմանագիր, որտեղ տարածքի համար նախատեսված ամսեկան վարձավճարի չափը նշված է եղել 700.000 դրամ: Ընկերության ունեցած տարբեր պարտքերը մարելու, այդ թվում նաև բաժնետեր-աշխատակիցների աշխատավարձերը վճարելու, հարկային պարտավորությունների վճարումներ կատարելու պատրվակով, Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին համոզել է մյուս բաժնետերերին՝ ընկերության սեփականություն հանդիսացող, վերոհիշյալ հասցեում տեղակայված ողջ տարածքը գրավադրելով, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից վերցնել վարկ՝ ներկայացնելով, որ դրա չափն իբր կազմելու է 16.000.000 դրամ՝ 23 ամսում այն մարելու պայմանով: Սակայն Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի հետ կազմել է իր ստորագրությամբ ու ընկերության մասնակից Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ 25.07.2007թ. ամսաթվով ընկերության մասնակիցների ժողովի արձանագրություն՝ իրավունք վերապահող

պաշտոնական կեղծ փաստաթուղթ, թե ընկերության մասնակիցներն իբր անցկացնելով ընդհանուր ժողով՝ որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող, Բագրատունյաց 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող 508,1 քմ մակերեսով դեղատունը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով, ստանալ 193.407.000 դրամի վարկ: Հիշյալ կեղծված փաստաթուղթն օգտագործելով, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անունից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ 25.07.2007թ. և 26.07.2007թ. կնքել է բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրեր՝ իբր սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով բանկի կողմից ընկերությանը 10 տարի մարման ժամկետով, 9 տոկոս տոկոսադրույքով, դեղատան տարածքը գրավադրելով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, 193.407.000 դրամ գումարի նպատակային վարկ տրամադրելու մասին: Այդպիսով, խախտելով «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, այդ թվում նաև 48-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն կանոնադրությամբ հաստատված մի շարք դրույթները, առանց «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն ընդհանուր ժողովի որոշման, ընկերության անունից կատարել է անհիմն խոշոր գործարք: Կնքված պայմանագրերի հիման վրա, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկը 30.07.2007թ. փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված ընթացիկ հաշվին, որից հետո Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ավարտին է հասցրել իրենց հանցավոր ծրագիրը՝ «Շենգավիթ-Ա» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ների միջև կազմված՝ փոխառությամբ գումարներ տրամադրելու մասին անհիմն պայմանագրով քողարկելով հանցագործության կատարումը, ստացված վարկի գումարներից 176.000.000 դրամը 31.07.2007թ. փոխանցել են Վոլոդյա Վարդանյանի տնօրինած «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն անվամբ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գործող հաշվեհամարին՝ այդպիսով խաբեությամբ հափշտակելով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նն արդեն իսկ պատկանող առանձնապես խոշոր չափ հանդիսացող այդ գումարը, իսկ 16.020.700 դրամը հաջորդ օրը՝ 01.08.2007թ., փոխանցել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն «Արարատ բանկ» ԲԲԸ-ում գործող հաշվեհամարին:»:

2/. Վերաքննիչ բողոքների հիմքերը, փաստարկները և պահանջը. Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով:

1. Տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանը, Արուսյակ Ավետիսյանը, Անուշ Նազարյանը, Ազիզ Ստեփանյանը, Մելանյա Նազարյանը, Նինա Պողոսյանը, Ալվարդ Արզումանյանը, Նազիկ Թադևոսյանն ու Ռիմա Աղաջանովան իրենց վերաքննիչ բողոքում նշել են, որ 29.12.2011թ. դատավճռի դեմ բողոք են բերում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով և խնդրում են այն բեկանել ու փոփոխել հետևյալ պատճառաբանությամբ՝

Դատարանը խախտելով տուժողների և քաղաքացիական հայցվորների նյութական իրավունքը՝ անհիմն պատճառաբանություններով շրջանցել է նրանց հանցագործության հետևանքով պատճառված գույքային վնասը վերականգնելու հարցի լուծումը, դրանով իսկ խաթարելով արդարադատության բուն էությունը և սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 58 հոդվածի 1-ին մասի, 60 հոդվածի 1-ին մասի, 74 հոդվածի պահանջների համաձայն, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի (Ալեքսանդր Գասպարյանի վերաբերյալ քրեական գործով կայացրած

26.10.2007թ. թիվ ՎԲ–180/07 որոշման 4-րդ մասում նշվում է, որ «Քրեական դատավարությունում քաղ. հայցի քննության հիմքում ընկած միասնական իրավաբանական փաստը՝հանցագործությունը, որի կատարման համար անձը ենթարկվում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիաիրավական պատասխանատվության այն դեպքերում, երբ առկա է հանցագործությամբ պատճառված գույքային վնաս: Դատարանը, ապացուցված համարելով մեղադրյալի մեղքը կատարված հանցագործության մեջ, ինչպես նաև պատճառական կապը հանցավոր արարքի և հասցված վնասի միջև, քաղ. հայցի հարցը լուծում է՝ գնահատելով պատշաճ կերպով ներկայացրած հայցադիմումի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքը»:
Ըստ բողոքաբերների, տվյալ քրեական գործով Դատարանն ամբաստանյալներին մեղավոր ճանաչելով իրենց մեղսագրվող բոլոր արարքներում, որոնց հետևանքով տուժողներին պատճառվել է գույքային վնաս՝ այդուհանդերձ առանց քննության է թողել քաղ. հայցը, այն պարագայում, երբ հանցագործության հետևանքով տուժողներին պատճառված վնասի չափը հստակ պարզված էր դատահաշվապահական փորձաքննության եզրակացությամբ և տուժողները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158 հոդվածի 3-րդ մասի պահանջների պահպանմամբ՝ սահմանված կարգով պատճառված վնասն ամբաստանյալներից համապարտության կարգով բռնագանձելու իրավաչափ պահանջ էին ներկայացրել:
Դատարանը, որպես ապացույց հետազոտելով դատահաշվապահական փորձաքննության 29.10.2009թ. թիվ 10040909/31010909 եզրակացությունը, այդուհանդերձ այն գնահատել է ոչ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ՝ չանդրադառնալով դրա հետևություն բաժնի թիվ 5-րդ հարցի քննարկմանն ու լուծմանը՝ դրանով իսկ թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտում:
Ինչ վերաբերում է Դատարանի կողմից մատնանշած այն հանգամանքին, որ այդ հափշտակված գումարները փոխանցվել են այլ անձանց հաշվեհամարներին, որոնք նույնպես ենթակա են ներգրավման վարույթին, որևէ իրավական նշանակություն չի կարող ունենալ տվյալ գործի շրջանակում քաղ. հայցը լուծելիս, քանի որ տվյալ դեպքում քաղ. հայց չի կարող հարուցվել և այլ անձինք չեն կարող քաղ. պատասխանող ներգրավվել ու գույքային պատասխանատվություն կրել ամբաստանյալների գործողությունների համար (Տես նաև, ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.09.2008թ. թիվ ՎԲ-43/08 որոշում):
Հանցավոր ճանապարհով ստացված գույքը՝ 176.000.000 դրամը, հափշտակվել է սեփականատիրոջից, հետևաբար, հափշտակված 176.000.000 դրամի մասերը կազմող գումարները ստացած կամ ձեռք բերող անձանցից ևս այդ գումարները ենթակա են բռնագանձման հօգուտ սեփականատիրոջ, և այդ երրորդ անձինք, որոնց փոխանցվել է հանցավոր ճանապարհով ստացված գումարի մի մասը, չեն օգտվում բարեխիղճ ձեռք բերողի իրավունքներից, ուստի և չեն կարող ներգրավվել ըստ ՀՀ քրեական օրենսգրքի, պարտադիր բռնագրավման ենթակա հանցավոր ճանապարհով ստացված, հափշտակված գույքի հանձնման կապակցությամբ իրականացվող քաղաքացիական որևէ դատավարության:Ավելին, դատարանը վերացրել է նույնիսկ ամբաստանյալ Իգոր Մանդելի գույքի վրա 26.03.2008թ որոշմամբ դրված կալանքը՝ ստեղծելով բոլոր նախադրյալները՝ օրենքով սահմանված կարգով հանցագործությունից պատճառված տուժողների վնասի փաստացի չվերականգնման համար:
Դատավճռով սահմանվել է ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավում, սակայն չի նշել, թե հօգուտ ում պետք է բռնագրավի կամ այն առաջնային կարգով ում շահերի բավարարմանն է ուղղվելու:

ՀՀ Սահմանադրական դատարանը 12.07.2011թ. ՍԴՈ-983 որոշմամբ եզրահանգել է՝ որ «Հաշվի առնելով, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը, այդ գույքի բռնագրավման պարագայում, բռնագրավման հասկացության ընկալումը ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 1-ին մասի իմաստով, այն է՝ որպես բռնագրավվող գույքի անհատույց անցում ի սեփականություն պետության անթույլատրելի է, քանի որ նման ընկալման դեպքում բռնագրավման միջոցառումն անմիջականորեն ուղղվում է տուժողի սեփականության իրավունքի դեմ՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով նրա սեփականության իրավունքը:
Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ գույքն անհատույց պետության սեփականությանը հանձնելն արգելափակում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի հաշվին տուժողների գույքային շահերի բավարարման և խախտված սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը» (տես որոշման 9-րդ կետ):
Դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10, 48, 61 և 70 հոդվածների պահանջները՝ ամբաստանյալ Իգոր Մանդելի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով՝ հետևալ պատճառաբանությամբ, մասնավորապես՝ վերջինս առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, գործուն չի զղջացել, նախաքննության ընթացքում, ինչպես նաև դատարանում հրաժարվել է ցուցմունքներ տալուց, որևէ կերպ չի աջակցել իրավապահ մարմիններին՝ հանցագործության բացահայտելու գործում, որևէ ձևով չի փորձել հատուցել տուժողներին հանցագործության արդյունքում պատճառված վնասները,
ՀՀ Վճռաբեկ դատարանը (Ալեքսան Սարգսյանի վերաբերյալ քրեական գործով) կայացրած 02.06.2009թ. թիվ ՀՅՔՐԴ 3/0109/01/08 որոշման 31-րդ կետում նշում է, որ «ՀՀ Վճռաբեկ դատարանը սեփականաթյան դեմ ուղղված հանցագործությունների շարքում, հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման համար էական՝ նշանակություն է համարում պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնած լինելու հանգամանքը»:
Բողոքաբերները գտնում են Իգոր Մանդելի 70 տարեկան լինելը, նախկինում դատվածություն չունենալն ամենևին էլ չի նվազեցնում անձի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Ինչ վերաբերում է նրա 3-րդ կարգի հաշմանդամության և մի շարք հիվանդություններով տառապելու փաստը հաստատող փաստաթղթերին, ապա այդ հանգամանքը բավական կասկածելի է, քանի որ նման հիվանդություններով տառապող անձն ուղղակի ի վիճակի չէր լինի ոչ միայն ներկայանալ դատական նիստերին, այլև շարունակել աշխատել, որպես ընկերության տնօրեն և հաշվապահ՝ հաճախելով աշխատանքի:
Ելնելով ՀՀ Սահմանադրության 3, 18, 19, 20 և 31 հոդվածների պահանջներից, ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման պարզաբանումներից, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված քրեական օրենսգրքի խնդիրների ապահովման անհրաժեշտությունից՝ բողոքաբերները գտնում են, որ ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը, այն է ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածը, թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ սկզբունքային հանդիսացող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394 հոդվածի 2-ին մասի երկրորդ կետով և 398 հոդվածով՝ բողոքաբերները խնդրում են՝
1. Վերացնել դատավճռի վճռեց մասի 1-ին կետում սահմանված բացառությանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասով նախատեսված «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ

դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթի կիրառման մասով:
2. Մասնակիորեն բեկանել 29.12.2011թ. դատավճիռը հետևյալ մասերով. ա/քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու մասով՝ կայացնելով տուժողներին պատճառված գույքային վնասի վերականգնման վեբաբերյալ դատական ակտ: բ/ ամբաստանյալ Իգոր Մանդելի նկատմամբ սահմանված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով՝ կիրառելով նշանակված պատիժը:
2. Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ Դատարանի դատավճիռն անհիմն է, չի բխում գործի փաստական հանգամանքներից և այն ամբողջությամբ պետք է բեկանվի հետևյալ պատճառաբանությամբ՝
Ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում ինքն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունքներ է տվել, որ ոչ միայն որևէ գումար հափշտակելու համար որևէ մեկի հետ նախապես համաձայնության չի եկել, այլև ակտիվ գործողություններով միջոցներ է ձեռնարկել <<Շենգավիթ Ա>> ՍՊԸ-ն գումարներն այլ անձանց հափշտակությունից փրկելու և ընկերությանը վերադարձնելու ուղղությամբ:
Բողոքաբերը գտնում է, որ եթե դատավճռում նշվածը ճիշտ է և ժողովի արձանագրությունը կեղծված է, ապա <<էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան>> ՓԲԸ-ից ստացված վարկը անօրինական է և այդ գործարքն ըստ օրենքի անվավեր է: Այդ դեպքում որպես տուժող պետք է հանդես գային ոչ թե ընկերության մասնակիցները, այլ բանկը, տվյալ դեպքում գործի քննությունը պետք է այլ ընթացք ստանար և արարքին այլ որակում կտրվեր:
Ըստ բողոքաբերի ոչ օբյեկտիվ և միակողմանի քննությամբ որևէ ապացույց ձեռք չի բերվել այդ արարքներին իր մասնակցության վերաբերյալ: Սակայն գործում առկա են անվիճելի փաստեր, որոնք վկայում են, որ ոչ միայն ընկերության մասնակիցների ժողովի արձանագրությունը համապատասխանում է իրականությանը, այլև վերջիններս շահագրգռված են եղել այդ վարկը ստանալու հարցում, ինչի ապացույցն է այն փաստը, որ ընկերության մասնակիցները քաղաքացիական հայցեր են ներկայացրել ոչ թե ընկերության օգտին, այլ հօգուտ իրենց բռնագանձելու պահանջով:
Բողոքաբերը նշում է, որ եթե ինքը մտադրություն ունենար որևէ մեկի հետ համաձայնությամբ կամ միայնակ գումարներ հափշտակելու, ապա չէր համաձայնվի փոխառության պայմանագրերով այդ գումարները վերցնել, քանի որ գիտակցել է, որ այդ գումարները ցանկացած պահի կարող են հետ պահանջել, ինչն իրականում տեղի է ունեցել: Եթե ինքը մտադրություն ունենար գումարներ հափշտակել, ապա կթաքցներ դրանք, այլ ոչ թե կդներ իցույց բոլորի:
Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածին, ապա ըստ բողոքաբերի այն աբսուրդ է, քանի որ ինքն որևէ գումարի հափշտակությանը, դրանց պատկանելիությունը խեղաթյուրելու և թաքցնելու գործողություններին չի մասնակցել, այլ բացահայտել է:
Բողոքաբերը գտնում է, որ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18, 21, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17, 18, 25, 104, 105, 107, 115, 122, 124, 126, 127, 358, 360 հոդվածների, <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի բազմաթիվ որոշումների պահանջները՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Դատարանի դատավճիռը, իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով կայացնել արդարացման վճիռ, գործի վարույթը կարճել կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:
3. Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի պաշտպան Հ. Մաղաքյանն իր

վերաքննիչ բողոքում նշել է, որ եթե Աշոտ Հակոբյանին առաջադրված մեղադրանքները հիմնավորված են և իրականում Անուշ Նազարյանի ստորագրությունը կեղծված է, ապա այդ դեպքում, արդյոք քրեական հետապնդում իրականացնող մարմինները կատարել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 3-րդ մասի պահանջները և ձեռնարկել են սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել են ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող հանգամանքները:
Ըստ բողոքաբերի, ելնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154 հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 հոդվածի, 306 հոդվածի 2-րդ մասի, 313 հոդվածի 1-ին մասի պահանջներից, եթե ընդունենք, որ 193.407.000 դրամ վարկ ստանալու համար հիմք հանդիսացած 25.07.2007թ. ընկերության մասնակիցների ժողովի արձանագրությունը կեղծվել է, ապա այդ պայմանագիրը վերը նշված հոդվածների ուժով անօրինական է, շահագրգիռ անձանց հայցով այն կարող է ճանաչվել անվավեր, հետևապես այն ընկերության մասնակիցների համար որևէ իրավական հետևանք ունենալ չի կարող: Ավելին, եթե ինչ-որ մեկն արձանագրությունը կեղծելով, հետևաբար նաև անօրինական վարկային պայմանագիր կնքելով, բանկից գումար է ստացել և հափշտակել, ապա այդ գումարների համար, բնականաբար ընկերությունը, ի դեմս բաժնետերերի, որևէ պատասխանատվություն կրել, ինչպես նաև այդ գումարների նկատմամբ պահանջներ ներկայացնել չեր կարող, այլ որպես տուժող պետք է հանդես գար միայն բանկը:
Բողոքաբերը նշել է, որ ընկերության մասնակիցները հիմնական քարկոծման թիրախը դարձրել են Աշոտ Հակոբյանին, երբ գործում որևէ ապացույց չկա նրա կողմից փաստաթուղթ կեղծելու և պայմանագրերի կնքմանը մասնակցելու վերաբերյալ, այն դեպքում, երբ վերջինս ոչ միայն հնարավորություն է ստեղծել հափշտակված գումարները վերադարձնելու համար, այլև իր կողմից կատարած կտրուկ քայլերով խոչընդոտել է այլ անձանց կողմից ավելի ծանր հանցագործություններ կատարելուն:
Ըստ բողոքաբերի, դատարանի այն պատճառաբանությունը, որ իբր «...նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հափշտակված գումարների իրական բնույթն ու պատկանելիությունը, Աշոտ Հակոբյանը համաձայնության է եկել Վոլոդյա Վարդանյանի հետ «Եվրոֆինանս» ԱՊԸ-ն հաշվեհամարին առկա այդ հափշտակված գումարները կոնվերտացնելու և այլ հաշվեհամարներին փոխանցելու գործում...» ոչ միայն անհիմն է, քանի որ 25.07.2007թ. ընկերության մասնակիցների ժողովի արձանագրության կեղծ լինելու հանգամանքը ապացուցված չլինելու պայմաններում, չի կարելի խոսել «հափշտակված գումարների» պատկանելիությունը և իրական բնույթը խեղաթյուրելու նպատակով կոնվերտացնելու մասին, դատարանի հետևությունները հիմնված են լոկ ենթադրությունների և չփարատված կասկածների վրա: Աշոտ Հակոբյանի ջանքերով է, որ մինչ օրս իր կողմից, իր անվամբ գնված անշարժ գույքը չի օտարվել, չի բռնագրավվել, հնարավոր է դարձել այն վերադարձնել օրինական տիրոջը:
Բողոքաբերը գտնում է, որ Աշոտ Հակոբյանի կողմից իր անվամբ, փոխառության պայմանագրերով ստացված գումարներով կարող էր անշարժ գույք գնվել միայն երկու պարագայում, առաջինը, երբ նա այդ գումարների հանցավոր ծագման վերաբերյալ կասկած չի ունեցել և դրա հնարավոր կորստի համար մտավախություն չի ունեցել, և երկրորդ՝ երբ նա իմացել է այդ գումարների հանցավոր ծագման մասին, սակայն այն հափշտակելու նպատակ չունենալու համար չի թաքցրել, այլ վերադարձնելու նպատակ է ունեցել, բոլորին ի ցույց է դրել:
Ըստ բողոքաբերի դատավճիռն կայացվել է ՀՀ քրեական օրենսգրքի

29 հոդվածի 2-րդ մասի, 44 հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17, 18, 35 հոդվածի 1-ի մասի, 104, 105, 107, 115, 122, 124, 126, 127, 358 հոդվածների, ՀՀ Սահմանադրության 18, 21 հոդվածների, ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին կետի, 2.02.2010թ. Մակար Հովհաննիսյանի վերաբերյալ քրեական գործով, 04.05.2010թ. Մակիչ Առաքելյանի վերաբերյալ քրեական գործով, Ֆրունզիկ Գալստյանի ներկայացուցիչ Լ. Սիմոնյանի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 16.11.2009թ. որոշման դեմ բերված քրեական գործով 26.03.2010թ. թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման մեջ ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումների, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների /տես Սալովն ընդդեմ Ուկրաինայի 06.09.2005թ. որոշումը, գանգատ թիվ 65518/07, Բոլդեան ընդդեմ Ռումինիայի 15.02.2007թ. որոշումը, գանգատ թիվ 19997/02, Գրադինարն ընդդեմ Մոլդովայի 08.04.2008 թ. որոշումր, գանգատ թիվ 7170/02, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվեցիափ 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:
Բողոքաբերը գտնում է, որ Դատարանի դատավճիռը, հետևությունները և որոշումները պատճառաբանված չեն, քանի որ դրանք կրում են զուտ հռետորական բնույթ: Դատարանը չի պարզաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս: Իրեղեն ապացույցներն ըստ բողոքաբերի անորակ լուսապատճեններ են, որոնք նույնիսկ պիտանի չեն եղել փորձաքննության ժամանակ հետազոտության համար, դրանք ոչ միայն որևէ հանգամանք չեն հիմնավորում, այլ էլ ավելի են խորացնում ենթադրություններն ու չփարատված կասկածները, որ դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122 հոդվածի պահանջներին չեն համապատասխանում և վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշմամբ այլ փաստաթուղթ չեն ճանաչվել:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-381 հոդվածներով՝ բողոքաբերը խնդրել է Աշոտ Հակոբյանի մասով բեկանել Դատարանի 29.12.2011թ. դատավճիռը և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով կայացնել արդարացման դատավճիռ, գործի վարույթը կարճել կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, գործը քննել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47 գլխի կանոններով:
3.Վերաքննիչ բողոքի դեմ բերված պատասխանները.
1. Ի պատասխան տուժողների բողոքի՝ ամբաստանյալ Իգոր Մանդելի պաշտպան Հ. Բաղդասարյանը նշել է, որ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.
Ըստ Հ. Բաղդասարյանի Դատարանը տուժողների ու քաղաքացիական հայցվորների նյութական իրավունքը չի խախտել մի պարզ պատճառով, որ նյութական իրավունքի նորմերը կիրառվում են մեղադրյալի կամ կասկածյալի նկատմամբ, քանի որ քրեական օրենքի այս կամ այն նորմը դատարանը կարող է կիրառել ամբաստանյալների նկատմամբ և ոչ թե տուժողների, առավել ևս, որ գործը հարուցվել է ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183 հոդվածի սահմանված կարգով, ոչ տուժողի բողոքի հիման վրա: 29.10.2009թ. թիվ 10040909/31010909 դատահաշվապահական փորձաքննության արձանագրությունը ընդհամենը ապացույցներից մեկն է և ոչ թե անվերապահորեն ընդունված ճշմաչտություն: Պաշտպանության կողմն այն ընդունել է այնքանով, որքանով այնտեղ արձանագրված է գումարի տեղաշարժը: Իրենք դեռևս դատաքննության ժամանակ հայտարարել են, որ փորձաքննության եզրակացությունը չի համապատասխանում «Սահմանափակ պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց ներկայացնողը քաղաքացիական դատավարության նորմերին համապատասխան, պետք է ապացուցի իր հայցի հիմնավորությունը: Տվյալ դեպքում, փորձագետի եզրակացությամբ ներկայացված գումարը չի կարող քաղ. հայցի առարկա լինել, քանի որ կազմակերպության գումարներն ուղղակի մասնակիցների սեփականությունը չեն:
«Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն կանոնադրության 1.5. կետի համաձայն, ընկերության մասնակիցների և ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են կանոնադրությամբ, որի մեջ չկա մի նորմ, որը պարտավորեցնի տնօրենին կամ կազմակերպությանը փոխառու միջոցները հանձնել մասնակիցների տնօրինությանը, 4.2. կետը մասնակցին հնարավորություն է տալիս ստանալ շահույթի մասը, բայց ոչ վարկային գումարի մասը:
Հ. Բաղդասարյանը գտնում է, որ բողոքաբերները կարծես թե չեն ընդունում, որ ընկերության բաժնեմասի կեսից ավելիի սեփականատերը Իգոր Մանդելն է և եթե գույքով փոխհատուցելու հարց լինի, նախ նա ինքն իրեն պետք է փոխհատուցի: Բացի այդ հստակ է, որ վերջինս անգամ մի լումա չի ստացել այդ հաշվտակված գումարներից, եթե չասենք, որ ամեն ինչ արել է դրանք ետ բերելու ուղղությամբ: Քրեական գործով էլ հենց «Շենգավիթ Ա» ՍՊԸ-նն է առաջնահերթ տուժող և բռնագրավվող գույքը կամ բռնագանձվող գումարն էլ պետք է ուղղվի ընկերության շահերը բավարարելուն: Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրական դատարանի 12.07.2011թ, ՍԴՈ-983 որոշման դրույթներին, ապա դրա վերաբերյալ պարզաբանում է տվել դատավճիռ կայացրած դատարանը: Դատարանը քաղաքացիական հայցվորներին, օրենքով նախատեսված կարգով պարզաբանել է իրենց քաղհայցի իրավունքը և նրանք կարող են դիմել քաղաքացիական դատարան:
Վերոգրյալի հիման վրա Հենրիկ Բաղդասարյանը գտնում է, որ Կարինե Ղազարյանի և մյուսների բերած բողոքն անհիմն է, այն պետք է մերժել, քանի որ դատավճռով տուժողների իրավունքները և շահերը չեն ոտնահարվել:
2. Ի պատասխան տուժողների բողոքի՝ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի պաշտպան Հ. Մաղաքյանը նշել է, որ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.
Եթե վարկը ստացվել է ընկերությանն մասնակիցների կամքով և ընկերությանն է վերապահված այդ գումարների պահանջը, ապա Աշոտ Հակոբյանին առաջադրված մեղադրանքը ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածով է անհիմն, այլև դրա հիման վրա կառուցված մյուս մեղադրանքները: Այս դեպքում էլ ոչ թե ընկերության մասնակիցները պետք է հանդես գային որպես տուժող, այլև ընկերությունը:
Մեղադրողը Վերաքննիչ դատարանում հայտնեց, որ Իգոր Մանդելին մեղադրանք է առաջադրվել ոչ թե ստացված գումարների չափով, այլ 49, 6 տոկոսի չափով, քանի որ նա չէր կարող հաշվտակել իրեն պատկանող 50,4 տոկոս բաժնեմասը: Մեղադրողի պատճառաբանությունն ակնհայտորեն չի համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, քանի որ Իգոր Մանդելի մեղադրանքի ծավալի մեջ մտնում է ամբողջ 176 միլիոն դրամ գումարը:
Մեղադրողը բազմիցս պատճառաբանել է, որ եթե Աշոտ Հակոբյանը ցանկանար կամովին իր կողմից ձեռք բերած անշարժ գույքը ետ վերադարձներ, ապա դա կդիտվեր որպես հանցագործությունից կամովին հրաժարում: Այնինչ վերջինս բազմիցս նշել է, որ մինչ իր նկատմամբ որևէ մեղադրանք ներկայացնելն ինքը բանավոր և գրավոր դիմել է վարույթն իրականացնող մարմնին և վարչական շրջանի դատախազին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել իր անվամբ գրված Այվազովսկի փողոցի 46/1 հասցեում գնված անշարժ գույքը Վոլոդյա Վարդանյանի և մյուսների ոտնձգությունից պաշտպանելու ու ընկերությանը վերադարձնելու համար:
Քրեական գործի 9-րդ հատորի 140 էջում առկա է Աշոտ Հակոբյանի

կողմից Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Գ. Միքայելյանին 19.02.2010թ. ուղղված դիմումը, որով ևս, նա ոչ միայն հայտնում է Վոլոդյա Վարդանյանի ու նրա որդիների կողմից ընկերության անունով ստացված գումարների նկատմամբ կատարված ոտնձգությունների, այդ ոտնձգություններից ապահովագրելու համար անշարժ գույքի վրա արգելանք դնելու անհրաժեշտության մասին, այլև նշում է իր կողմից նախկինում կատարած այն միջնորդությունների և գործողությունների մասին, որոնք անուշադրության են մատնվել:
Ավելին, Աշոտ Հակոբյանի դիմումները և հայտարարությունները վարկային գումարների հափշտակության փորձ կատարելու համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մինչ օրս անհետևանք թողնելու պատճառով, ներկայումս հերթական անգամ Վոլոդյա Վարդանյանի որդիները նոր հայց են հարուցել Աշոտ Հակոբյանի դեմ՝ պահանջելով այն գումարները /32մլն դրամ/, որոնք վերջինս դատական կարգով կարողացել է ետ պահանջել մեկ այլ անձից:
Եթե նույնիսկ մինչ այդ Աշոտ Հակոբյանի գործողություններում հանցակազմ է պարունակել, ապա այս դիմումը բավական է, որպեսզի այն դիտվի որպես հանցագործություններից կամովին հրաժարում:
Վերոգրյալի հիման վրա պաշտպան Հ. Մաղաքյանը խնդրում է իր վերաքննիչ բողոքը բավարարել, իսկ տուժողների բողոքն ամբողջությամբ մերժել:
3. Ի պատասխան տուժողների բողոքի՝ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը նշել է, որ բողոքը ոչ միայն անհիմն է, այլև դրանում վկայակոչված հանգամանքները հերթական անգամ հիմնավորում են իր և իր պաշտպանի բողոքներում նշված փաստերը:
Ինքը բազմիցս նշել է, որ ոչ թե ինքն է Վոլոդյա Վարդանայնի հետ նախապես համաձայնության եկել ու գումարներ հափշտակել, այլև ընկերության մասնակիցներն են ցանկացել որքան հնարավոր է շատ գումարներ ստանալ և լիազորել են վերջինիս իրենց շահերը ներկայացնել:
Տուժողներն իրենց վերաքննիչ բողոքում չեն թաքցնում իրենց շահադիտական մտադրությունները և հանդես են գալիս ոչ թե ընկերության, այլ իրենց անձնական շահերի տեսանկյունից: Ավելին, որպես տուժող պետք է հանդես գար բանկը, այլ ոչ թե ընկերության մասնակիցները: Վերջիններիս վարքագիծը չի տարբերվում Վոլոդյա Վարդանյանի ու նրա որդիների վարքագծից այն դեպքում, երբ ինքը ջանք ու եռանդ չի խնայել այդ գումարների տեղը հայտնաբերելու, այլ անձանց հափշտակություններից փրկելու և ընկերությանը վերադարձնելու համար:
Վերոգրյալի հիման վրա ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը խնդրում է ամբողջությամբ մերժել տուժողների վերաքննիչ բողոքը:
4/.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.
Վերաքննիչ բողոքներում նշված հիմքերի ու հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, լսելով վերաքննիչ բողոքների հիմնավորումներն, ամբաստանյալների բացատրությունները, բողոքների պատասխանները, ստուգելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, ապացույցների ձեռքբերման աղբյուրները, քրեական գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց ստուգելով թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտավ, որ վերաքննիչ բողոքները պետք է մերժել, Դատարանի 29.12.2011թ. դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Աշոտ Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով ու Իգոր Մանդելի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով, թողնելով օրինական ուժի մեջ՝ հետևյալ

	պատճառաբանությամբ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացուցումը գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածի համաձայն՝ գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ: Քրեադատավարական ապացուցման տարրեր հանդիսացող ապացույցների ստուգման, գնահատման, ապացուցման ենթակա հանգամանքների վերաբերյալ՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերը նշված հիմնարար իրավադրույթների պահանջների համատեքստում, քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի պատճառաբանություններն անհիմն են, վերջինս նպատակ է հետապնդում խուսափել քրեական պատասխանատվությունից, նրա կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքները կատարելը և նրա մեղքը հաստատված, իսկ պատճառաբանությունները հերքված են քրեական գործով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված և ընդհանուր իրավասության դատարանում հետազոտված հետևյալ ապացույցներով. Տուժող Կարինե Ղազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1981թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 1996թ.-ին, դեղատունը սեփականաշնորհվել է ընկերության 24 աշխատակիցների կողմից: 40 տոկոս բաժնեմասն անցել է ընկերության տնօրեն Իգոր Մանդելին, իսկ 60 տոկոսը՝ մյուս աշխատակիցներին, յուրաքանչյուրին 2,6 տոկոս: Հետագայում, տնօրենի 40 տոկոս բաժնեմասը դարձել է 50,4 տոկոս: Ավելի ուշ, ՍՊԸ-ում, բացի տնօրեն Իգոր Մանդելից, որպես աշխատողներ մնացել են 9 անձինք:

2007թ. ամռանը, Իգոր Մանդելն իրեն, ինչպես նաև ընկերության մյուս աշխատակիցներին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ ներկայացնելով որպես բանիմաց և գործարար մարդու, ասել է, որ նա, ինչպես նաև վերջինիս բարեկամ Վոլոդյա Վարդանյանը կարող են իրենց ընկերությունը դուրս բերել տնտեսական ծանր վիճակից: Միտքն այն է եղել, որ իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրվի «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին: Խոսակցության ժամանակ նրանք երկուսով ասել են, որ Վոլոդյա Վարդանյանը, որի հետ իրենց հետո կծանոթացնեն, զբաղվելու է այդ հարցերով: Այդ ժամանակ որևէ գումարի չափի մասին խոսք չի գնացել: Նրանք ասել են, որ կճշտեն վարձակալության գումարի չափը և կհայտնեն իրենց: Որոշվել է, որ մեկ շաբաթվա ընթացքում ընկերության բաժնետերերը հավաքվեն և ժողով անցկացնեն, որի ընթացքում Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց կծանոթացնեն Վոլոդյա Վարդանյանի հետ ու այդ ընթացքում էլ կմանրամասնեն վարձակալության պայմանագրի հետ կապված հարցերը: Պայմանավորված օրը, Իգոր Մանդելի հետ միասին դեղատանը հավաքվել են նաև մյուս 9 բաժնետերերը՝ ինքը, Նազիկ Թադևոսյանը, Արուսյակ Ավետիսյանը, Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Ռիմա Աղաջանովան, Մելանյա Նազարյանը, Ալվարդ Արզումանյանը և Նինա Պողոսյանը: Աշոտ Հակոբյանը և Իգոր Մանդելն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ: Վոլոդյայի մոտ եղել է վարձակալության պայմանագիր ու նա կարդացել է պայմանագրի դրույթները: Դրանում նշված է եղել, որ իրենց ընկերությունը նշված բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրում է ամսեկան 700.000 դրամ գումարով, 10 տարի ժամկետով: Երբ հարցրել են, թե արդյոք քիչ չէ նշած վարձավճարի չափը, ինչպես Իգոր Մանդելը, այնպես էլ Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանն իրենց հավաստիացրել են, որ գումարի չափը նորմալ է, քանի որ բանկի կողմից կատարվելու են տարածքի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, իսկ երկու տարի անց վերանայվելու է վարձավճարի չափն ու այն զգալի չափով աճելու է: Աշոտ Հակոբյանը նույնպես իրենց բոլորին համոզել է, որ վարձավճարի չափը կազմելու է 700.000 դրամ գումար: Նույն օրը, ինչպես Աշոտ Հակոբյանը, այնպես էլ Իգոր Մանդելն ու Վոլոդյա Վարդանյանն ասել են, որ բանկի հետ ձեռք են բերելու պայմանավորվածություն, որպեսզի բանկից վերցնեն 16.000.000 դրամ գումարի չափով վարկ՝ տարածքը բանկին գրավադրելու պայմանով, 23 ամիս ժամկետով: Նրանք երեքով համոզել են իրենց, որ դա լավ տարբերակ է, ընկերությունը ստացած գումարով կարող է փակել բոլոր պարտքերը և կատարել համապատասխան ծախսեր: Վարձակալության պայմանագիրը, չի կարող ասել, թե դա բնօրինակն է եղել, թե լուսապատճենը, մեկ օրով թողել են իրենց մոտ, որպեսզի բաժնետերերը ծանոթանան դրա հետ և տան կամ չտան համաձայնություն: Նրանց գնալուց հետո, 9 բաժնետերերով ծանոթացել են պայմանագրի հետ, պատճենահանել են այն և ստացված օրինակը հաջորդ օրը տվել են Իգոր Մանդելին: Քանի որ վերջինիս հետ միասին 30 տարի աշխատել են, հավատացել, վստահել են նրան և համաձայնվել են առաջարկված պայմանների հետ:

Հաջորդ օրը, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն, իրենց են տվել ընկերության բաժնետերերի ժողովի արդեն իսկ կազմված արձանագրությունը, որում նշված է եղել, որ իրենք դեղատան տարածքը տալիս են վարձակալության: Արձանագրությունում վարձակալության գումարի չափը նշված չի եղել: Նրանք նաև տվել են արդեն իսկ կազմված լիազորագիր, որով բաժնետերերով լիազորել են Վոլոդյա Վարդանյանին՝ նշված բանկի հետ, իրենց անունից գործարք կատարելու համար: Իրենք ստորագրել են արձանագրությունը և լիազորագիրը:

Շուրջ մեկ շաբաթ անց, դեղատուն են եկել Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը, որոնք բերել են վարկային պայմանագիրը: Նրանք առաջարկել են ստորագրել պայմանագիրը՝

նշելով, որ ուշացնելու դեպքում գործարքը չի կատարվի: Պայմանագրում նշված է եղել, որ վարկի գումարի չափը կազմում է 16.000.000 դրամ: Իրենք բոլոր բաժնետերերով ստորագրել են պայմանագրի վերջին էջում նշված իրենց տվյալների դիմաց, իսկ Ա. Հակոբյանը, Ի. Մանդելը և Վ. Վարդանյանը շտապ հեռացել են: Հետագայում իրենց անունից բանկից վերցվել է 193 միլիոն դրամ գումարի չափով վարկ, որից միայն 16.000.000 դրամ գումարն է հասել իրենց, իսկ մնացած գումարը հափշտակվել է: Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին իրենց խաբել են, ներկայացրել են, որ տարածքը վարձակալությամբ բանկին տրվում է ամսեկան 700.000 դրամ գումարով և բանկից որպես վարկ վերցվելու է 16.000.000 դրամի չափով գումար՝ տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով:
/դ.ն.ա., հատոր 1, գ.թ. 132-133, հատոր 2, գ. թ. 255-258, հատոր 8, գ. թ. 215/
Տուժող Կարինե Ղազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 3, գ. թ. 93-96, հատոր 10, գ.թ. 78-79/
Տուժող Արուսյակ Ավետիսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1980թ.-ից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատանը, որը 1996թ. սեփականաշնորհվել է, 40 տոկոս բաժնեմաս ստացել է տնօրեն Իգոր Մանդելը, իսկ 60 տոկոս բաժնեմասը հավասարապես, յուրաքանչյուրին 2,6 տոկոսի չափով, բաժանվել է ընկերության մյուս աշխատողների միջև:
2007թ. մարտ կամ ապրիլ ամիսներին, երբ Աշոտ Հակոբյանը հերթական անգամ եկել է իրենց դեղատուն, հերթափոխի փոփոխման ժամանակ, Աշոտ Հակոբյանը և Իգոր Մանդելն ասել են, որ «էյչ-էս-Բի-Սի» բանկն առաջարկել է վարձակալությամբ վերցնել իրենց դեղատան տարածքի մի մասը: Այդ ժամանակ նրանք չեն նշել, թե որքան է կազմելու վարձակալության գումարի չափը և ասել են, որ առաջիկայում անհրաժեշտ է հրավիրել բաժնետերերի ժողով՝ այդ հարցը քննարկելու համար: Աշոտը և Իգորը ներկայացրել են Վոլոդյա Վարդանյանին՝ շեշտելով, որ նա ունի աուդիտորական կազմակերպություն ու զբաղվելու է վարձակալության գործերի կարգավորմամբ: Դրանից հետո Աշոտ Հակոբյանը պարբերաբար հաճախել է դեղատուն: Ինքն ու մյուս բաժնետերերը պարբերաբար հետաքրքրվել են վարձակալության հարցերով, այդ թվում նաև վարձավճարի չափով: Սկզբում Իգոր Մանդելն իրենց ասել է, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 դոլար, իսկ մեկ անգամ էլ, բաժնետերերից մի քանիսը՝ Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Կարինե Ղազարյանը և Մելանյա Նազարյանն իրեն պատմել են, որ երբ Իգոր Մանդելը նրանց ներկայությամբ ասել է այդ գումարի չափը, Աշոտը զայրացել է Իգոր Մանդելի վրա՝ ասելով, որ նա երկու թիվ չի կարողանում հիշել և 7.000 դոլարը տարբերել 700.000 դրամից: Իգորն էլ ուղղում է կատարել և հաստատել է, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ գումար:
21.05.2007թ., դեղատանը տեղի է ունեցել ընկերության բաժնետերերի ժողով, որին, բացի 10 բաժնետերերից ներկա են գտնվել Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Ժողովի քարտուղար է ընտրվել Կարինե Ղազարյանը, իսկ նախագահ՝ Իգոր Մանդելը: Վոլոդյան միանգամից ներկայացրել է մի պայմանագիր, ըստ որի՝ իրենց ընկերությունը 10 տարի ժամկետով, ամսեկան 700.000 դրամ վարձավճարով, իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրում է նշված բանկին: Այդ պայմանագիրը կնքված և ստորագրված է եղել ինչպես բանկի, այնպես էլ իրենց ընկերության կնիքով: Ինքը ցանկացել է կարդալ պայմանագրի կետերը, սակայն Վոլոդյան ասել է, որ ժամանակ չունի: Հասկացել է, որ պայմանագիրն արդեն բանկի հետ կնքվել է: Անձամբ տեսել է, որ պայմանագրում, որպես ամսեկան վարձավճարի չափ, նշված է եղել 700.000 դրամ գումար: Արտահայտվել է, որ չի հավատում, որ վարձավճարի չափն իրականում այդքան է կազմում ու նշել է, որ այն մի քանի անգամ

բարձր պետք է լինի: Ինչպես Վոլոդյան, այնպես էլ Աշոտ Հակոբյանն ու Իգոր Մանդելը բացատրել են, որ այդ վարձակալական գործարքը ձեռնտու տարբերակ է, ընկերության ֆինանսական գործերը զգալի չափով կվերականգնվեն, բանկը կկատարի կապիտալ վերանորոգում դեղատանը, իսկ 2 տարի անց վարձավճարի չափը կվերանայվի և զգալի չափով կավելանա: Ինքը պահանջել է, որ այդ պայմանագիրը պատճենահանվի և դրա օրինակը մնա իրենց մոտ: Վոլոդյան սկզբում չի համաձայնվել, սակայն ինքը նորից պնդել է իր պահանջը, որից հետո ի վերջո պայմանագիրը պատճենահանել են: Պատճենը պահել են իրենց մոտ, իսկ պայմանագիրը Վոլոդյան վերցրել է:
Մի քանի օր անց, Վոլոդյան և Աշոտը եկել են դեղատուն ու բոլոր 10 բաժնետերերին ներկայացրել են համակարգչով տպագրված լիազորագրեր: Առաջինը, որ բաժնետերերով լիազորում են Վոլոդյային իրենց անունից իրականացնել տարածքը բանկին վարձակալությամբ տալու գործողությունները, իսկ երկրորդը՝ որ իրենք Իգոր Մանդելին լիազորում են 5 տարի ժամկետով իրականացնել ընկերության տնօրենի պարտականությունները: Իրենք ստորագրել են լիազորագրերը, ինչպես նաև արդեն իսկ կազմված բաժնետերերի ժողովի արձանագրությունը, որում նշված է եղել, որ բաժնետերերով համաձայն են իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ բանկին հանձնելու հետ: Արձանագրության մեջ վարձակալության գումարի չափի վերաբերյալ նշում չի եղել: Իրենք էլ իրավաբանական գիտելիքներ չունենալով՝ չեն մտածել, որ դա կարող է ինչ-որ վատ բանի հանգեցնել:
Դրանից մի քանի օր անց, Իգոր Մանդելը դեղատուն է եկել Աշոտ Հակոբյանի և Վոլոդյայի հետ: Նրանք ասել են, որ առաջարկում են նույն բանկից որպես վարկ վերցնել գումարներ, որոնցով կփակվեն ընկերության պարտքերը: Շեշտել են, որ վարկը պետք է վերցվի դեղատան տարածքը բանկում գրավադրելու դիմաց: Ինքն առաջարկել է, որպեսզի իրենք խոսեն բանկի ղեկավարության հետ՝ բանկից մի քանի ամսվա վարձավճարը վերցնելու համար: Նրանք ասել են, որ դա հնարավոր չէ: Նման խոսակցություններ են կայացել մի քանի անգամ, որոնց ներկա է գտնվել նաև Աշոտ Հակոբյանը:
Վերջինս, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը պնդել են, որ վարկի գումարի չափը կազմելու է 16.000.000 դրամ, որով ընկերությունը կփակի ունեցած պարտքերը: Ինքը դեմ է եղել գրավի դիմաց վարկ վերցնելուն և արտահայտել է իր այդ կարծիքը: Ի վերջո նրանք կարողացել են համոզել բոլոր բաժնետերերին, այդ թվում և իրեն, որ վարկը վերցվի 23 ամիս մարման ժամկետով: Այդ ընթացքում ինքն աշխատանքի չի գնացել: Իրեն զանգահարել է Իգոր Մանդելը և ասել, որ պատրաստել են վարկային պայմանագիրը, բոլոր բաժնետերերը, բացի իրենից ստորագրել են այն ու եթե ինքը մոտակա օրերին չստորագրի այն, ապա վարկի գործարքը կձախողվի: Հաջորդ օրը գնացել է դեղատուն, որտեղ գտնվել են նաև Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Վերջինս իրեն է տվել պայմանագիրը՝ ասելով, որ այն պետք է շտապ ստորագրվի: Ինքը կարդացել է պայմանագիրը: Դրանում նշված է եղել, որ բանկի կողմից իրենց տրվող վարկի չափը կազմում է 16.000.000 դրամ գումար, դրա մարման ժամկետն է 23 ամիս: Վերջում, իրենց ընկերության բաժնետերերի տվյալների դիմաց դրված են եղել ստորագրություններ և ինքն էլ իր տվյալների դիմաց ստորագրել է: Պայմանագրում դրված է եղել իրենց ընկերության կնիքի դրոշմը, սակայն չի հիշում, թե բանկի կնիքի դրոշմը եղել է, թե ոչ: Պայմանագիրը ստորագրելուց հետո փորձել է վերցնել և պատճենահանել այն, սակայն Վոլոդյան իր ձեռքից խլել է պայմանագիրն ու դուրս եկել դեղատնից՝ ասելով, որ ժամանակ չունի:
Մի քանի օր անց, բաժնետերերից մեկը զանգահարել է իրեն և ասել, որ իրենց հաշվեհամարին 16.000.000 դրամ գումարի չափով վարկը փոխանցվել է: Այդ գումարից 6.000.000 դրամը հատկացվել է իրենց աշխատավարձերի վճարումներին, իսկ մնացած գումարներով

	փակվել են ընկերության ունեցած պարտքերը: Հետագայում, երբ արդեն հարուցվել է քրեական գործ, իրենք բաժնետերերով տեղեկացել են, որ վարձավճարի չափը ոչ թե 700.000 դրամ է կազմել, այլ այն եղել է 2.450.000 դրամ, իսկ վարկ վերցված գումարի չափը եղել է ոչ թե 16.000.000 դրամ, այլ՝ 193.000.000 դրամ: Դրանում էլ կայացել է Իգոր Մանդելի, Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի խաբեությունը: /դ.ն.ա. հատոր 1, գ. թ. 169-171, հատոր 2, գ. թ. 259-262/ Տուժող Արուսյակ Ավետիսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 92-94, 114-115/ Տուժող Անուշ Նազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1982թ. մայիսից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատանը, որը 1996թ. սեփականաշնորհվել է: Հանդիսանում է ընկերության 2,6 տոկոսի բաժնետեր: 2007թ. մայիսի սկզբին կամ հունիսին, իրենց տնօրեն Իգոր Մանդելն ընկերության բոլոր բաժնետերերին հայտնել է, որ ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալու է «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին՝ չնշելով, թե վարձավճարի չափը որքան պետք է կազմի: Մի քանի օր անց, նա իրենց ասել է, որ պետք է հրավիրվի բաժնետերերի ժողով, որպեսզի քննարկվի տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցը: Հրավիրվել է ժողով, որին ներկա են գտնվել ընկերության 10 բաժնետերերը: Ժողովին մասնակցել են նաև Աշոտ Հակոբյանն ու Վոլոդյա Վարդանյանը: Իգոր Մանդելը ներկայացրել է, որ Աշոտ Հակոբյանը նրա ընտանիքի ընկերն է, իսկ Վոլոդյան էլ Աշոտի բարեկամն է: Ժողովի նախագահ է ընտրվել Իգոր Մանդելը, իսկ քարտուղար՝ Կարինե Ղազարյանը: Սկզբում Իգոր Մանդելը հարց է բարձրացրել դեղատան տարածքի մասը բանկին վարձակալությամբ տալու շուրջ: Բաժնետերերով հարց են ուղղել վարձակալության գումարի չափի վերաբերյալ, որին Իգոր Մանդելը պատասխանել է, որ ամսեկան այն կազմելու է շուրջ 7.000 դոլար գումար: Աշոտ Հակոբյանն ուղղել է նրան՝ ասելով, որ դա այդպես չէ, վարձավճարը կազմելու է ոչ թե 7.000 դոլար, այլ ամսեկան 700.000 դրամ: Իգոր Մանդելն էլ ուղղել է իր ասածը և համաձայնվել Աշոտի կողմից հայտնած գումարի չափի հետ: Իրենք դեմ են եղել վարձավճարի այդ չափին, սակայն Աշոտ Հակոբյանը բացատրել է, որ դեղատան տարածքը ենթարկվելու է վերանորոգման, որը կատարվելու է բանկի միջոցների հաշվին և եթե չլինի համաձայնություն, ապա բանկը կվարձակալի մեկ այլ տարածք: Քանի որ ընկերությունն ունեցել է պարտքեր և անհրաժեշտ են եղել գումարներ, իրենք համաձայնվել են կատարված առաջարկի հետ: Այդ օրը մասնակիցների ժողովի արձանագրություն չի կազմվել: Հաջորդ օրը, Իգոր Մանդելի պահանջով, իրենք կրկին 10 բաժնետերերով հավաքվել են դեղատանը: Այնտեղ են եկել նաև Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Վերջինս իր հետ բերել է նախորդ օրվա ժողովի արձանագրության համակարգչով տպագրված ձևը, որտեղ նշված է եղել, որ բաժնետերերով որոշել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրել բանկին: Արձանագրության մեջ վարձավճարի գումարի չափը նշված չի եղել և բաժնետերերից ոչ մեկն էլ չի պահանջել, որ այն նշվի՝ չմտածելով, որ դրա հետ կապված հետագայում կծագեն խնդիրներ: Բաժնետերերով ստորագրել են այդ արձանագրությունը, որը Վոլոդյան վերցրել և հեռացել է: Շուրջ 10 օր անց, 2007թ. հունիսին, Վոլոդյան և Աշոտը եկել են դեղատուն: Վոլոդյային ներկայացրել են որպես բանիմաց մարդ և որոշվել է, որ նա պետք է կատարի տարածքը բանկին վարձակալությամբ տալու գործարքները: Տվել են իրենց բանավոր համաձայնությունը՝ լիազորելով նրան զբաղվել այդ գործարքի հետ կապված հարցերով: Գրավոր այդպիսի փաստաթուղթ տրվել է, թե ոչ՝ չի հիշում: Նշված ժողովից 20-ից 25 օր անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Դեղատուն են եկել նաև Աշոտը և Վոլոդյան:

Նրանցից մեկը կամ Իգոր Մանդելն իրենց առաջարկել են դեղատան տարածքը գրավադրել նույն բանկում և ստանալ 16.000.000 դրամ գումարի չափով վարկ, 23 ամիս մարման ժամկետով: Վոլոդյայի մոտ եղել է մի փաստաթուղթ, որում իրենք պետք է ստորագրեին և տային իրենց համաձայնությունը՝ բանկից վարկ վերցնելու համար: Այդ փաստաթուղթը տպագիր է եղել, սակայն դրանում նշված չի եղել վարկի գումարի չափը: Բաժնետերերով ստիպել են այդ փաստաթղթում գրել կոնկրետ գումարի չափը և հենց իրենց ներկայությամբ, Վոլոդյա Վարդանյանը գրիչով նշել է վարկի գումարի չափը՝ 16.000.000 դրամ գումար: Բացի Արուսյակից, բոլոր բաժնետերերով համաձայնվել և ստորագրել են այդ փաստաթուղթը: Քանի որ բոլորը ստորագրել են, ապա Արուսյակը նույնպես ճարահատյալ ստորագրել է այն: Վերջինս ցանկացել է այդ փաստաթուղթը պատճենահանել, սակայն Վոլոդյան փաստաթուղթը խլել է նրանից և շտապ դուրս եկել դեղատնից: Տեղյակ է, որ որոշ ժամանակ անց, իրենց ընկերության հաշվին փոխանցվել է 16.000.000 դրամ գումարի չափով վարկ: Հետագայում տեղեկացել է, որ տարածքը բանկին վարձակալությամբ տրվել է ոչ թե ամսեկան 700.000 դրամով, այլ՝ 2.450.000 դրամով, իսկ վերցված վարկի գումարի չափը կազմել է ոչ թե 16.000.000 դրամ, այլ՝ 193.000.000 դրամ: Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը խաբել են իրենց:
25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով իբրև թե որոշվել է բանկից վերցնել 193.407.000 դրամ գումարի չափով վարկ, ինքը չի ստորագրել և այդ կեղծված արձանագրությունում իր տվյալների մոտ դրված ստորագրությունն իրենը չէ: /դ.ն.ա., հատոր 3, գ. թ. 185-186/
Տուժող Անուշ Նազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 89-91, 123-124/
Տուժող Ազիզ Ստեփանյանի ցուցմունքներով այն մասին, որ 1987թ.-ից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատանը: 1996թ. դեղատունը սեփականաշնորհվել է: Տնօրեն Իգոր Մանդելը ստացել է 40 տոկոս բաժնեմասը, իսկ մնացած 60 տոկոս բաժնեմասը ստացել են կոլեկտիվի անդամները, յուրաքանչյուրը՝ 2,6 տոկոսի չափով: 2007թ. հունիսին, Իգոր Մանդելը հրավիրել է ընկերության բաժնետերերի ժողով: Քանի որ ինքը հանդիսացել է ընկերության բաժնետեր, նույնպես ներկա է եղել այդ ժողովին: Ըստ ընկերության կանոնադրության՝ հանդիսանում է ընկերության 2,6 տոկոսի բաժնետերը, սակայն շուրջ 7-8 տարի առաջ, բաժնետերերից Բավականը, որի ազգանունը չգիտի, գտնվելով ԱՄՆ-ում, սեփական բաժնեմասից, որը կազմել է 2,6 տոկոս, հրաժարվել է հօգուտ իրեն, որի համար ինքը նրա ամուսին Գագիկին, Երևանում տվել է 604.000 դրամ գումար: Նա կնոջ լիազորմամբ փաստաթուղթ է ստորագրել և տվել իրեն՝ կնոջ բաժնեմասը իրեն փոխանցելու վերաբերյալ:
Ժողովի ժամանակ Իգոր Մանդելը իրենց ներկայացրել է Աշոտ Հակոբյանին և Վոլոդյա Վարդանյանին: Ընդ որում Իգորն ասել է, որ Աշոտը նրա ընտանիքի բարեկամն է, իսկ Վոլոդյան Աշոտի բարեկամն է, որն ունի աուդիտորական գրասենյակ և ընկերության հաշվապահական գործերն այսուհետև նա է կատարելու: Ժողովի ժամանակ Աշոտը, Իգորը և Վոլոդյան առաջարկել են իրենց դեղատան մի մասը վարձակալությամբ տալ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին, որպեսզի դրանով հնարավոր լինի կարգավորել ընկերության տնտեսական գործունեությունը: Այդ ժամանակ վարձավճարի չափի մասին որևէ խոսակցություն տեղի չի ունեցել: Բաժնետերերով, որին ներկա են եղել 10 բաժնետերեր՝ ինքը, Իգոր Մանդելը, Նազիկ Թադևոսյանը, Արուսյակ Ավետիսյանը, Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Ռիմա Աղաջանովան, Մելանյա Նազարյանը, Ալվարդ Արզումանյանը և Նինա Պողոսյանը, համաձայնվել են նորմալ պայմանների դեպքում հավանություն տալ

առաջարկին: Կազմվել է ժողովի մասնակիցների արձանագրություն: Չի հիշում, թե կոնկրետ ով է այն կազմել և որտեղ, որից հետո բոլոր 10 բաժնետերերով ստորագրել են այն՝ տալով համաձայնություն՝ նշված բանկին դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու վերաբերյալ:
Շուրջ մեկ շաբաթ անց, երբ Աշոտ Հակոբյանն Իգոր Մանդելի հետ գտնվել է դեղատանը, իրենք դեղատան աշխատակիցներով հարց են ուղղել Իգոր Մանդելին, թե որքան է կազմելու տարածքի վարձակալության վճարի չափը: Իգոր Մանդելը պատասխանել է, որ տարածքը վարձակալությամբ է տրվելու 7.000 դոլար գումարով: Այդ պատասխանից հետո միջամտել է Աշոտ Հակոբյանը և խոսքն ուղղելով Իգոր Մանդելին՝ ասել. «700.000 դրամը 7.000 դոլարից չե՞ս տարբերում, եթե հայերեն խոսել չգիտես, մի խոսի»: Իրենք հասկացել են, որ վարձավճարի չափը լինելու է 700.000 դրամ գումար:
Դրանից շուրջ մեկ շաբաթ անց, Իգոր Մանդելը բաժնետերերին ներկայացրել է նշված բանկին տարածքի մի մասը վարձակալությամբ տալու վերաբերյալ պայմանագիր, որում դրված է եղել ինչ-որ կնիք, սակայն թե որ կազմակերպության՝ ուշադրություն չի դարձրել: Պայմանագրում վարձավճարի չափը նշված է եղել ամսեկան 700.000 դրամ գումար: Փաստորեն վարձակալության պայմանագիրն արդեն կնքված է եղել և իրենք Իգոր Մանդելին առարկություններ չեն ներկայացրել: Մի քանի օր անց, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը դեղատանը, հերթափոխում գտնվող աշխատակիցներին, այդ թվում նաև իրեն, ներկայացրել են նշված բանկի և իրենց ընկերության միջև կազմված պայմանագիր, ըստ որի՝ բանկը իրենց ընկերությանը տրամադրում է վարկ՝ 16.000.000 դրամ գումարի չափով, տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով, 23 ամսում մարելու պայմանով: Նրանք երկուսով բացատրել են, որ ստացված 16.000.000 դրամ գումարով կփակվեն ընկերության ունեցած պարտքերը, ձեռք կբերվեն անհրաժեշտ դեղամիջոցներ և դրանով կկարգավորվի ընկերության ֆինանսական վիճակը, իսկ 23 ամիս անց կսկսվեն տնօրինվել վարձավճարի գումարները: Այդ պայմանագիրը մի քանի օր մնացել է Իգոր Մանդելի աշխատասեղանին և այդ ընթացքում բոլոր բաժնետերերը, իրենց հերթափոխների ժամանակ, ստորագրել են դրա տակ: Աշոտ Հակոբյանը նշված գումարի չափով վարկ վերցնելու վերաբերյալ իր հետ խոսակցություններ չի վարել և դրանց ներկա չի գտնվել, բացառությամբ այն մի արտահայտության, որի մասին արդեն նշել է: Վոլոդյա Վարդանյանի անհետացումից հետո, 2008թ. ապրիլի վերջին-մայիսի սկզբին, բաժնետերերին, այդ թվում իրեն, հայտնի է դարձել, որ բանկին տարածքը վարձակալությամբ հանձնելու գումարի չափը կազմել է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ, իսկ բանկից որպես վարկ վերցվել է ոչ թե 16.000.000, այլ՝ 193.000.000 դրամ գումար: /դ.ն.ա.,, հատ որ 1, գ.թ. 164-166/
Տուժող Ազիզ Ստեփանյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10 գ.թ. 80-81, 128-129/
Տուժող Մելանյա Նազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1979թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ: Հանդիսանում է ընկերության բաժնետերը: Աշոտ Հակոբյանը, որին ճանաչում է որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկեր, դեղատուն սկսել է ավելի հաճախակի գալ այն ժամանակ, երբ խոսակցություններ են գնացել իրենց ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին հանձնելու վերաբերյալ: Քանի որ ընկերությունն ունեցել է ֆինանսական դժվարություններ, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը, 2007թ. գարնան վերջերին, երբ բոլոր 10 բաժնետերերով ներկա են եղել դեղատանը, առաջարկել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ նշված բանկին՝ նշելով, որ վարձակալության գումարն ամսեկան կազմելու է 700.000 դրամ: Դրանից առաջ, երբ Իգոր Մանդելը և Աշոտ

Հակոբյանը գտնվել են դեղատանը, Իգոր Մանդելն ասել է, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 դոլար գումար, սակայն Աշոտ Հակոբյանն ուղղել է նրան՝ նշելով, որ նա 7.000 դոլարը չի կարողանում տարբերել 700.000 դրամից ու որ վարձակալության գումարի չափը կազմելու է 700.000 դրամ գումար:
2007թ. մայիսի վերջին, կոնկրետ օրը չի հիշում, Իգոր Մանդելը հրավիրել է ընկերության բաժնետերերի ժողով: Այդ ժամանակ վերջինս և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ, ներկայացրել են նրան որպես լավ հաշվապահ՝ ասելով, որ նա կարող է գրագետ կազմակերպել տարածքը բանկին վարձակալությամբ հանձնելու գործընթացը: Վերջինս իրենց է ներկայացրել մի պայմանագիր կամ պայմանագրի օրինակ, որտեղ նշված է եղել, որ դեղատան տարածքի մի մասը, 10 տարի ժամանակով, ամսեկան 700.000 դրամ վարձավճարով տրվելու է կամ տրվել է վարձակալությամբ նշված բանկին: Չի կարող ասել, թե պայմանագիրն արդեն կնքված և ստորագրված է եղել, թե ոչ:
Բաժնետերերից Արուսյակը պահանջել է, որպեսզի պատճենահանվի պայմանագիրը, որից հետո ինքն այն տարել և պատճենահանման կետում պատճենահանել է, որն իրենք պահել են իրենց մոտ: Իգոր Մանդելը պատճառաբանելով, որ յուրաքանչյուր փաստաթուղթ չբերվի և բոլոր բաժնետերերը դրանք ստորագրելու համար յուրաքանչյուր անգամ չհավաքվեն, առաջարկել է լիազորագիր տալ Վոլոդյա Վարդանյանին՝ նշված բանկի հետ կապված գործերով ընկերության անունից որպես ներկայացուցիչ հանդես գալու համար:
Ժողովի ժամանակ շոշափվել է նաև ընկերության տարածքը գրավադնելու դիմաց բանկից վարկ վերցնելու հարցը, որպեսզի վերցված գումարով հնարավոր լինի կարգավորել ընկերության ֆինանսական վիճակը: Վարկի չափի մասին խոսակցություն այդ ժամանակ չի գնացել: 1-2 օր անց, Վոլոդյան և Աշոտ Հակոբյանը նորից եկել են դեղատուն: Վոլոդյան բերել է արդեն իսկ համակարգչով տպված ընկերության ժողովի արձանագրություն, ինչպես նաև նշված լիազորագիրը: Բաժնետերերով ծանոթացել են տպագրված երկու տեքստերին և ստորագրել այդ փաստաթղթերը՝ դրանով Վոլոդյային իրավունք տալով իրականացնել ընկերության անունից բանկի հետ գործարքը: Արձանագրության մեջ վարկի գումարի չափը նշված չի եղել:
2007թ. հունիսի կեսերին, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն և Իգոր Մանդելի հետ սկսել են ընկերության բաժնետերերին համոզել, որպեսզի դեղատան տարածքը գրավադրելով՝ բանկից վերցվի 16.000.000 դրամ գումարի չափով վարկ: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը շեշտել են, որ պետք է վերցվի 16.000.000 դրամ գումարի չափով վարկ, 23 ամսվա մարման ժամկետով, տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով: Նրանք վստահեցրել են, որ դա ձեռնտու տարբերակ է և այդպիսով կկարգավորվեն ընկերության գործերը: Բաժնետերերը, բացի Արուսյակ Ավետիսյանից, համաձայնվել են նրանց առաջարկի հետ:
Դրանից մի քանի օր անց, Վոլոդյա Վարդանյանն ու Աշոտ Հակոբյանը կրկին եկել են դեղատուն: Վոլոդյա Վարդանյանն իրենց ներկայացրել է արդեն իսկ համակարգչով տպված մի պայմանագիր, որով ընկերությունը 16.000.000 դրամ գումարի չափով վարկ է վերցնում նշված բանկից: Մինչև վերջին պահը, Արուսյակը հրաժարվել է ստորագրել պայմանագիրը, սակայն քանի որ բոլոր բաժնետերերը համաձայնվել և ստորագրել են այն, Արուսյակը նույնպես ստորագրել է: Արուսյակը պահանջել է, որպեսզի այդ փաստաթուղթն էլ պատճենահանվի, սակայն Վոլոդյան պայմանագիրը չի տվել՝ պատճառաբանելով, որ շտապում է:
Հուլիսին իրենց ընկերությունը ստացել է 16.000.000 դրամ գումարի չափով վարկ և դրանով փակել է ունեցած պարտքերը, բանկն էլ զբաղեցրել է վարձակալած տարածքը: Բաժնետերերով Իգոր Մանդելից պահանջել են տրամադրել վարկի մարման գրաֆիկը, սակայն նա այն չի տվել և պատճառաբանել է, որ այդ

փաստաթուղթը, մյուս բոլոր փաստաթղթերի հետ միասին գտնվում են Վոլոդյա Վարդանյանի մոտ և նա է կատարում հաշվապահական անհրաժեշտ գործողությունները: Երբ հարուցվել է քրեական գործ՝ իրենք տեղեկացել են, որ տարածքի վարձակալության ամսեկան վճարի չափը կազմում է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ գումար, իսկ ընկերության անունից վերցված վարկի չափը ոչ թե 16.000.000 ՀՀ դրամ է, այլ՝ շուրջ 190.000.000 դրամ: Իրենց պարզ է դարձել, որ խաբվել են Իգոր Մանդելի, Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի կողմից: /դ.ն.ա., հատոր 9, գ.թ. 57-60/
Տուժող Մելանյա Նազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 97-99, 139-140/
Տուժող Նինա Պողոսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1980թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ-ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին որպես ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ծանոթի: 2007թ. մայիսին, տեղի է ունեցել իրենց ընկերության բաժնետերերի ժողով, որին մասնակցել են նաև Աշոտ Հակոբյանը և վերջինիս բարեկամ Վոլոդյա Վարդանյանը: Այդ օրը քննարկվել է ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը վարձակալությամբ տրամադրելու հարցը: Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն ասել են, որ Վոլոդյա Վարդանյանը պետք է իրականացնի ընկերության հաշվապահական գործողություններն ու պետք է զբաղվի բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով: Ժողովի ընթացքում Իգոր Մանդելը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը բաժնետերերին ներկայացրել են, որ տարածքի վարձակալության ամսեկան վճարի չափը կազմելու է 700.000 դրամ գումար ու համոզել են իրենց, որ դա զգալի չափով կկարգավորի ընկերության ֆինանսական գործերը: Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել պայմանագիր, որքանով հիշում է, այն կնքված է եղել ինչ-որ կնիքով, որում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը կազմում է 700.000 դրամ գումար: Իրենք համաձայնվել են այդ պայմանի հետ: Հաջորդ օրը բաժնետերերով կրկին հավաքվել են և Վոլոդյա Վարդանյանն ու Աշոտ Հակոբյանը կրկին եկել են դեղատուն: Վոլոդյան տվել է տպագրված լիազորագիր, որը բաժնետերերով ստորագրել են: Դրանով լիազորել են վերջինիս, որպեսզի նա ընկերության անունից իրականացնի վարձակալության գործարքի հետ կապված հարցերը: Ստորագրել են նաև մեկ այլ լիազորագիր, որով լիազորել են Իգոր Մանդելին կատարել ընկերության տնօրենի պարտականությունները: Այդ օրը ստորագրել են նաև ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ տարածքը բանկին վարձակալությամբ տալու համար: Որոշակի ժամանակ անց, բաժնետերերով կրկին են հավաքվել: Իգոր Մանդելը, Աշոտը Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը կրկին եկել են դեղատուն: Նրանք հարց են բարձրացրել դեղատունը գրավադրելու դիմաց նշված բանկից վարկ վերցնելու վերաբերյալ՝ շեշտելով, որ պետք է վերցվի 16.000.000 դրամ գումարի չափով վարկ, 23 ամսվա մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով: Բաժնետերերին տվել են ստորագրել վարկի վերաբերյալ մի փաստաթուղթ, որն իրենք ստորագրել են: Փաստաթղթում նշված է եղել, որ վարկի գումարի չափը կազմում է 16.000.000 դրամ գումար:
2008թ., երբ հարուցված է եղել քրեական գործը, տեղեկացել է, որ իրենց դեղատան տարածքի վարձակալության ամսեկան վճարը կազմել է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 դրամ գումար, այլ՝ 193.000.000 դրամ: /դ.ն.ա., հատոր 9, գ.թ. 61-64/
Տուժող Նինա Պողոսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 105-106, 130/
Տուժող Ալվարդ Արզումանյանի ցուցմունքներով այն մասին, որ 1982թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ,

	հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ.ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին՝ որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկերոջ և ծանոթի: 2007թ. մայիսին, Իգոր Մանդելն ընկերության մյուս 9 բաժնետերերին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ կապված «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը իրենց ընկերությանը պատկանող դեղատան մի մասը վարձակալությամբ տրամադրելու հարցի հետ: Այդ ժամանակահատվածից սկսած Աշոտ Հակոբյանը պարբերաբար եկել է դեղատուն և մասնակցել բազմաթիվ խոսակցությունների ու քննարկումների: Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ՝ ասելով, որ նա իրականացնելու է ընկերության հաշվապահական գործողություններն ու զբաղվելու է բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով: 2007թ. մայիսի վերջին, կայացել է ընկերության բաժնետերերի ժողով, որի ընթացքում Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը ներկայացրել են, որ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տալու վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ գումար: Դրանից մի քանի օր առաջ, իր ներկայությամբ, երբ Իգոր Մանդելն ասել է, որ տարածքի ամսեկան վարձավճարի չափը կազմելու է 7.000 դոլար, Աշոտ Հակոբյանը շտկել է Իգոր Մանդելի ասածը՝ նշելով, որ վարձավճարի չափը կազմելու է 700.000 դրամ գումար: Ընկերության բաժնետերերի ժողովի ժամանակ Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել պայմանագիր: Չգիտի, թե այն կնքված և ստորագրված է եղել, թե ոչ, որում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը 700.000 դրամ է: Հաջորդ օրը, բաժնետերերով կրկին հավաքվել են: Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն ու Վոլոդյա Վարդանյանն իրենց է տվել տպագրված լիազորագիր, որն իրենք ստորագրել են՝ լիազորելով վերջինիս ընկերության անունից կատարել տարածքը վարձակալությամբ տալու հետ կապված գործը: Իրենք ստորագրել են նաև ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տրամադրելու համար: Մի քանի օր անց, Վոլոդյա Վարդանյանն իրենց տվել է ստորագրել մի լիազորագիր, որով բաժնետետերով լիազորել են Իգոր Մանդելին իրականացնել ընկերության տնօրենի պարտականությունները: Որոշ ժամանակ անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը կոնկրետ հարց են բարձրացրել՝ դեղատան գրավադրմամբ բանկից 16.000.000 դրամի չափով վարկ վերցնելու վերաբերյալ: Վոլոդյան բաժնետերերին տվել է ստորագրել պայմանագիր, որում նշված է եղել, որ վերցվող վարկի գումարի չափը 16.000.000 դրամ է: Աշոտը Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը պնդել են, որ այդ գումարի չափով վարկը ձեռնտու է ընկերությանը, դրանով կկարգավորվեն շատ հարցեր: Իրենք փորձել են պատճենահանել այդ փաստաթուղթը, բայց Վոլոդյան թույլ չի տվել՝ պատճառաբանելով, որ շտապում է: Հետագայում, երբ քրեական գործ է հարուցվել, ինքը տեղեկացել է քննիչից, որ դեղատան տարածքի վարձակալության ամսեկան վճարը կազմում է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 դրամ, այլ՝ 190.000.000 դրամ գումար: /դ.ն.ա., հատոր 9, գ.թ. 66-69/ Տուժող Ալվարդ Արզումանյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10 գ.թ. 95-96, 116/ Տուժող Նազիկ Թադևոսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1981թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ. սկզբներից, Աշոտ Հակոբյանը սկսել է պարբերաբար հաճախել իրենց դեղատուն, ընկերության տնօրեն Իգոր Մանդելի մոտ: Իր մոտ տպավորություն է ստեղծվել, որ նա Իգոր Մանդելի մտերիմն է:

2007թ. մայիսի վերջերին, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը Վոլոդյային ներկայացրել են որպես աուդիտորական գրասենյակի ներկայացուցիչ և Աշոտ Հակոբյանի բարեկամ: Նրանք երեքով ընկերության բաժնետերերին առաջարկել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը: Այդ օրը վարձավճարի չափի վերաբերյալ խոսակցություն տեղի չի ունեցել: Հանդիպմանը ներկա են գտնվել իրենց ընկերության բոլոր 10 բաժնետերերը, քանի որ Իգոր Մանդելն իրենց նախապես տեղյակ է պահել հավաքվելու մասին: Աշոտի և Վոլոդիայի գնալուց հետո, իրենց հարցին Իգոր Մանդելը պատասխանել է, որ տարածքի վաճակալության վարձավճարի չափը մոտավորապես կազմելու է 7.000 դոլար:
2007թ. հունիսի սկզբին, Իգոր Մանդելն ընկերության բաժնետերերին հրավիրել է ժողովի, որին ներկա են գտնվել նաև Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Ժողովը նախագահել է Իգոր Մանդելը, իսկ քարտուղարն է եղել Կարինե Ղազարյանը: Ժողովի ընթացքում Վոլոդյա Վարդանյանն ասել է, որ տարածքը վարձակալությամբ վերցնելու համար նշված բանկը պատրաստ է ամսեկան վճարել 700.000 դրամ գումար: Բաժնետերերով արտահայտել են իրենց դժգոհությունը՝ կապված վարձավճարի չափը քիչ լինելու հետ: Մինչ այդ Աշոտ Հակոբյանն ընդհատել է Իգոր Մանդելի ու մյուս բաժնետերերի միջև ծագած վիճաբանությունը և ասել, որ վերջինս նախկինում շփոթել է՝ ասելով, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 դոլար, այն 700.000 դրամ է լինելու: Քանի որ ընկերությունը գտնվել է ֆինանսական ծանր վիճակում, համաձայնվել են ամսեկան 700.000 դրամ գումարով դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ նշված բանկին: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը վստահեցրել և խոստացել են, որ վարձավճարի չափը 2 տարի անց վերանայվելու ուզգալի չափով բարձրանալու է: Այդ օրը բաժնետերերով ոչ մի փաստաթուղթ, այդ թվում նաև ժողովի արձանագրություն չեն ստորագրել: Հաջորդ օրը դեղատուն են եկել Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Նրանք ներկայացրել են պայմանագիր, որում նշված է եղել, որ իրենց ընկերությունը նշված բանկին 10 տարի ժամկետով տարածքը տալիս է վարձակալությամբ, ամսեկան 700.000 դրամ գումարով: Պայմանագիրը կնիքված է եղել, թե ոչ՝ չի հիշում: Բաժնետեր Արուսյակ Ավետիսյանը վերցրել է այդ պայմանագիրը, տարել ու պատճենահանել է այն: Բոլոր 10 բաժնետերերով իրենց տվյալների դիմաց ստորագրել են: Նրանք 3-ով վերցրել են պայմանագիրը և հեռացել: Բաժնետերերով տվել են լիազորագիր՝ Վոլոդյա Վարդանյանի կողմից վարձակալության հարցերով ընկերության անունից հանդես գալու համար: Երկու թե երեք օր անց, նորից դեղատուն են եկել Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը, առաջարկել են դեղատան տարածքի գրավադրմամբ բանկից վարկ վերցնել: Նրանք ներկայացրել են, որ վարկի մարման ժամանակահատվածը լինելու է 5 տարով, սակայն ի վերջո, բաժնետերերով համաձայնվել են վարկ վերցնել 23 ամիս մարման ժամկետով, իսկ վարկի գումարի չափ է որոշվել 16.000.000 դրամ գումար: Հաջորդ օրը, նույն 3 անձինք կրկին եկել են դեղատուն՝ իրենց հետ բերելով վարկային պայմանագիր: Չի հիշում, թե պայմանագիրը կնիքված է եղել, թե ոչ: Իրենք ծանոթացել են պայմանագրի հետ, բոլոր բաժնետերերով ստորագրել են դրա վերջում, սակայն Վոլոդյա Վարդանյանը թույլ չի տվել պատճենահանել այն:
2008թ. ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին, Իգոր Մանդելը դեղատանը բաժնետերերին ասել է, որ Վոլոդյա Վարդանյանն ընկերության հաշվեհամարից հանել է 60.000.000 դրամ գումար և փախել է: Հարցին, թե որտեղից իրենց հաշվեհամարին այդքան գումար, Իգոր Մանդելը պատասխանել է, որ չգիտի: Ավելի ուշ, երբ արդեն հարուցվել է քրեական գործ, քննիչից իմացել է, որ դեղատան տարածքը նշված բանկին հանձնվել է ոչ թե 700.000 դրամ ամսեկան

վարձավճարով, այլ՝ 2.450.000 դրամ գումարով, իսկ բանկից վարկ վերցված գումարի չափն իրականում կազմում է ոչ թե 16.000.000 դրամ, այլ՝ 193.000.000 դրամ:
/դ.ն.ա., հատոր 8, գ.թ. 88-89/
Տուժող Նազիկ Թադևոսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 86-88, 121-122/
Տուժող Ռիմա Աղաջանովայի ցուցմունքներով այն մասին, որ 1965թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ.-ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին՝ որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկերոջ: 2007թ. մայիսին, Իգոր Մանդելն ընկերության մյուս 9 բաժնետերերին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ կապված իրենց ընկերությանը պատկանող դեղատան մի մասը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ տրամադրելու հարցի հետ: 2007թ. մայիսին, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են նաև Վոլոդյա Վարդանյանի հետ՝ ասելով, որ նա իրականացնելու է ընկերության հաշվապահական գործողություններն ու զբաղվելու է բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով: 2007թ. մայիսի վերջին, կոնկրետ օրը չի հիշում, կայացել է ընկերության բաժնետերերի ժողով, որի ընթացքում Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանն իրենց ներկայացրել են, որ բանկին տրվելիք տարածքի ամսեկան վարձակալության գումարի չափը կազմելու է 700.000 դրամ ու համոզել են համաձայնվել այդ տարբերակի հետ: Ժողովի ժամանակ Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել պայմանագիր, որքանով հիշում է այն կնիքված է եղել ինչ-որ կնիքով, Պայմանագրում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը 700.000 դրամ գումար է: Իրենք համաձայնվել են այդ պայմանի հետ: Հաջորդ օրը, բաժնետերերով կրկին հավաքվել են: Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը նույնպես ներկա են գտնվել: Վերջինս տվել է տպագրված լիազորագիր, որն իրենք ստորագրել են՝ լիազորելով Վոլոդյային, որպեսզի նա ընկերության անունից կատարի դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալու հետ կապված գործը: Այդ օրը ստորագրել են նաև ընկերության բաժնետերերի ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տալու համար: Որոշ ժամանակ անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Իգոր Մանդելը, Աշոտը Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը հարց են բարձրացրել՝ դեղատունը գրավադնելով՝ բանկից 16.000.000 դրամ գումարի չափով վարկ վերցնելու վերաբերյալ: Նրանք բաժնետերերին տվել են ստորագրել վարկային պայմանագիրը, որն իրենք կատարել են: Դրանում նշված է եղել, որ վարկի գումարի չափը 16.000.000 դրամ է: Ինչպես Աշոտ Հակոբյանը, այնպես էլ Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը համոզել են իրենց, որ այդ չափով վարկ վերցնելը ձեռնտու է լինելու ընկերության համար: Վերջինս թույլ չի տվել պատճենահանել այդ փաստաթուղթը: 2008թ., երբ քրեական գործ է հարուցվել, բաժնետերերով տեղեկացել են, որ վարձակալության ամսեկան վճարը եղել է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 դրամի, այլ՝ 193.000.000 դրամի չափով: /դ.ն.ա., հատոր 9, գ.թ. 70-73/
Տուժող Ռիմա Աղաջանովան իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 103-104, 141/
Վկա Ինգա Իգորի Մանդելի ցուցմունքներով այն մասին, որ մասնագիտությամբ բժիշկ-ռադիոլոգ է, աշխատում է պրոֆեսոր Ավդալբեկյանի անվան բժիշկների կատարելագործման ազգային ինստիտուտի ճառագայթային դիագնոստիկայի ախտորոշման ռենտգեն ամբիոնում որպես ասիստենտ և Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոնի ռենտգեն բաժանմունքի վարիչ: Իգոր Մանդելը իր հայրն է, վերջինս 1971թ.-ից աշխատում է

Բագրատունյաց թիվ 14ա հասցեում գտնվող թիվ 8 դեղատանը որպես վարիչ: 1996թ.-ից դեղատունը սեփականաշնորհվել է և կազմավորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը, որի տնօրեն է նշանակվել հայրը: 2003-2004թթ.-ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին, ընտանիքներով մտերիմ են: Վոլոդյա Վարդանյանին մի քանի անգամ տեսել է Աշոտի տանը, միջոցառումների ժամանակ: Տեղեկացել է, որ դեղատան տարածքը 2007թ. հուլիսից տրվել է վարձակալությամբ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը և Վոլոդյան հորը համոզել է միանվագ վերցնել 10 տարվա վարձավճարի գումարը, որպեսզի «Ֆորեքս»-ի միջոցով այդ գումարը դրվի շրջանառության մեջ և եկամուտ ստացվի: Վարկի ընդհանուր գումարը եղել է 193.000.000 դրամ, որից 16.000.000 դրամը փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարին, իսկ մնացած 176.000.000 դրամը փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-նը: 2007թ. նոյեմբերին, Աշոտի հետ հանդիպել են Վոլոդյային, սակայն վերջինս հրաժարվել է վճարել եկամտի տոկոսները՝ պատճառաբանելով, որ այն կատարելու է 6 ամիս անց: Կասկած է առաջացել, որ Վոլոդյան կարող է խաբել և որոշել են գումարը մաս-մաս վերցնել: Իր հաշվին 3 անգամով փոխանցվել են գումարներ՝ 5.000.000, 15.000.000 և 16.000.000 դրամ գումարների չափով, իսկ Աշոտի անվամբ, երեք դեպքով, 41.000.000 դրամ գումար: Ինքը նշված գործարքի հետ ոչ մի առնչություն չի ունեցել: Այն, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն դեղատան տարածքի մի մասը 2007թ. ամռանը վարձակալությամբ տվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը և վերցրել է վարկով գումարներ, ինքը լսել է հորից ու Աշոտ Հակոբյանից: Լսել է, որ հայրը վստահել է Վոլոդյային՝ իրականացնել ընկերության ֆինանսական և հաշվապահական գործողություններին վերաբերվող հարցերը, սակայն վերջինս, որին Աշոտն իր հորը ներկայացրել է որպես լավ մասնագետ և վստահելի մարդ, խաբել է ու հափշտակել որպես վարկ վերցված գումարների մեծ մասը: Ինքը չի իմացել, թե տարածքը վարձակալությամբ կոնկրետ ինչ գումարով է տրվել բանկին: Չի իմացել նաև, թե որքան է կազմել վերցված վարկի գումարի չափը: Այդ խոսակցություններին, նաև ընկերության բաժնետերերի հետ անցկացված քննարկումներին չի մասնակցել և դրանցից ոչ մի տեղեկություններ չի ունեցել: Աշոտն ու հայրն իրեն այդ ժամանակահատվածում նշված գործերի վերաբերյալ որևէ մանրամասներ չեն ներկայացրել: Այդ մասին ինքն իմացել է ավելի ուշ, երբ 2008թ. ապրիլի վերջին, Վոլոդյայի որդիները սկսել են ահաբեկել և սպառնալ ինչպես իրեն, այնպես էլ հորն ու Աշոտին: Այդ ժամանակ էլ Աշոտն իրեն պատմել է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն դեղատան մի մասը ամսեկան 2.450.000 դրամ գումարով վարձակալությամբ տրվել է նշված բանկին, բանկից վերցվել է շուրջ 193.000.000 դրամ գումարի չափով վարկ և այդ գումարների մեծ մասը Վոլոդյան յուրացրել և անհետացել է: Երբ իր հաշվին փոխանցված վերը նշված գումարները կանխիկացրել է, չի իմացել, թե դրանք որ կազմակերպությունից են ուղարկվել իր հաշվին: Նշված բանկում իր անձնական հաշիվը բացված է եղել դեռևս 2006թ.: Աշոտն իրեն այդ 3 դեպքերում խնդրել է, որպեսզի ինքը գնա բանկ և անձնական հաշվից հանի գումարներ՝ չասելով, թե դրանք կոնկրետ որ կազմակերպությունից են ուղարկվել և ինչի համար: Ինքն էլ չի խառնվել նրա գործերին՝ մտածելով, որ նա գործունյա մարդ է և այդ գումարներն ուղարկվել են նրա բիզնեսի հետ կապված: Կանխիկացված բոլոր գումարներն ինքը տվել է Աշոտին: Միայն 2008թ. ապրիլի վերջին է Աշոտն իրեն ասել, որ իր հաշվեհամարին փոխանցված այդ գումարները եղել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն վարկի գումարները: Նա հայտնել է նաև, որ մեծ դժվարությամբ է կարողացել դրանք ստանալ Վոլոդյայից և դրանցով գնել է շինություն էրեբունի թաղամասում, որպեսզի այդ գումարները փրկի, դրանք տանը չպահի, որպեսզի Վոլոդյայից վերցնի մնացած գումարները ևս և դրանք տրամադրի «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը: Այդ ժամանակ Աշոտն ասել է նաև, որ Վոլոդյայի մոտ մնացել է 90.000.000 դրամի չափով գումար: /դ.ն.ա., հատոր 1, գ.թ. 167-168,

հատոր 3, գ. թ. 3-5, հատոր 10, գ.թ. 142/
Վկա Գագիկ Բատիկյանի ցուցմունքներով այն մասին, որ Վոլոդյա Վարդանյանն իր համագյուղացին է: Բացի այդ, նա հանդիսանում է իր քրոջ խնամին: Տարիների ընթացքում կարողացել է տնտեսել 15.000 դոլարի չափով գումար, որը պահել է «նեղ օրվա», աղջկա նշանադրության ու հարսանիքի ծախսերը հոգալու նպատակով: 2007թ. կեսերին, իրենց գյուղում հանդիպել է Վոլոդյա Վարդանյանին, որն առաջարկել է շրջանառության մեջ դնել գումար և ստանալ եկամուտ՝ բացատրելով, որ գումարը շրջանառության մեջ է դրվելու բանկի միջոցով: Ինքը Վոլոդյա Վարդանյանին է տվել 15.000 դոլար գումար, որը 2007թ. վերջին, վերջինս ամբողջությամբ վերադարձրել է իրեն: Ինքը Վոլոդյա Վարդանյանից ոչ մի շահույթ այդ գումարի հետ կապված չի ստացել, քանի որ վերջինս բացատրել է, որ գումարն ինքը շուտ է պահանջել: Վոլոդյա Վարդանյանի առաջարկությամբ ինքը «Պրոմեթեյ» բանկում բացել է անձնական հաշվեհամար, որին էլ Վոլոդյա Վարդանյանը փոխանցել է իր կողմից տրամադրված գումարները: Իրեն հայտնի չէ, թե այդ գումարները վերջինիս կողմից ում կամ ինչ միջոցների հաշվին են վերադարձվել իրեն ու թե ինչ հանցանքներ է կատարել նա: Նաև չգիտի, թե որն է եղել նրա անհետանալու պատճառը: /դ.ն.ա., հատոր 4 գ. թ. 100-102/
Վկա Ալմաստ Արևշատյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ Աշոտ Հակոբյանն իր ամուսինն է: Մոտավորապես 2005թ.-ից ճանաչում է Իգոր Մանդելին և մտերիմ հարաբերությունների մեջ են գտնվում նրա ընտանիքի անդամների հետ: Ամուսնու միջոցով Իգորը ծանոթացել է Վոլոդյա Վարդանյանի հետ, որը հանդիսանում է իր մորաքրոջ որդին: Նա զբաղվել է հաշվապահությամբ: Գիտի, որ 2007թ. ամռանն Իգորը դեղատունը հանձնել է վարձակալությամբ և վերցրել վարկ, որից 176.000.000 դրամ գումարը փոխանցել է Վոլոդյայի հաշվեհամարին: Վոլոդյան հաճախակի է այցելել իրենց տուն և միշտ խոսել է ինչ-որ «Ֆորեքս»-ի մասին՝ նշելով, որ դա շահութաբեր, եկամտաբեր գործ է և եթե գումարներ լինեն, կարելի է դրանով մեծ եկամուտներ վաստակել: Վոլոդյային հաջողվել է համոզել Աշոտին, որ Իգորի ստացած 176.000.000 դրամ գումարը փոխանցվի «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարին՝ «Ֆորեքս»-ի միջոցով շրջանառության մեջ դնելու համար: Իրենց տանը խոսակցության ժամանակ Վոլոդյան ասել է, որ այդ գումարից շրջանառության մեջ է դրել 38.000.000 և 17.000.000 դրամ գումար, իսկ հետագայում ասել է, որ միայն 110.000 ԱՄՆ դոլարն է կարողացել դնել շրջանառության մեջ՝ ամսեկան 4 տոկոս եկամտով: Վոլոդյան խախտել է ամուսնու հետ ձեռք բերված պայմանավորվածությունը, 3 ամսում չի վճարել տոկոսները և խոստացել է դա կատարել 6 ամիս անց: Աշոտը համաձայնվել է, սակայն 04.02.2008թ., Վոլոդյան և նրա որդին գիշերով եկել են իրենց տան բակ, դուրս են կանչել Աշոտին ու ասել են, որ նրանց աշխատակից Խաչիկին գողացել են, այդ իսկ պատճառով չեն կարող տալ տոկոսները:

15.02.2008թ., ինքն իր փեսայի հետ գնացել է Վոլոդյայի տուն՝ պարզաբանումներ ստանալու համար, վերջինս խնդրել է տալ ևս երեք ամիս ժամանակ, որպեսզի նա կարողանա վճարել գումարները: Այդ ժամանակ Վոլոդյան ասել է, որ Խաչիկին ոչ թե գողացել են, այլ Խաչիկը վախից թաքնվել է, քանի որ չի կարողացել կազմակերպել գումարի շրջանառությունը: Ինքն ամուսնու փոխարեն համաձայնություն է տվել սպասել մինչև մայիսի 6-ը, իսկ Վոլոդյան, գողացած 7.000.000 դրամի համար արդարացել է՝ նշելով, որ այն վերցրել է քավորին օգնելու նպատակով: Այս մասին ինքն ամուսնուն ոչինչ չի ասել՝ մտածելով, որ Վոլոդյան հետագայում այդ գումարն աննկատ կվերադարձնի բանկ, սակայն պարզվել է, որ ամուսինը վերջինիս արարքների մասին իրենից շուտ է իրազեկված եղել: 26.04.2008թ. կեսօրին, իրենց տուն է զանգահարել Վոլոդյայի որդի Արմանը և սպառնացել սպանել իր ընտանիքի բոլոր անդամներին, եթե հորը չվերադարձնեն: Իսկ ապրիլի 27-ին Վոլոդյայի որդիները իր

որդուն տարել են ինչ-որ տեղ, որտեղ Արամ Վարդանյանը հարվածել ու հայհոյել է որդուն:
Առաջին ատյանի դատարանում վկա Ալմաստ Արևշատյանը հրաժարվել է իր ամուսնու վերաբերյալ ցուցմունքներ տալուց: /դ.ն.ա., հատոր 2, գ. թ. 148-150/
Վկա Արման Վարդանյանի ցուցմունքներով այն մասին, որ հայրը՝ Վոլոդյա Վարդանյանը, հանդիսացել է «Իրավագարանտ» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ների տնօրենը: Տեղյակ չէ, թե «Եվրոֆինանս» ՍՊԸ-նն ինչ գործառույթներ է իրականացրել, իսկ «Իրավագարանտ» ՍՊԸ-նը զբաղվել է հաշվապահական գործունեությամբ: Պատանի հասակից ճանաչում է Աշոտ Հակոբյանին, որը հանդիսանում է հոր մորաքրոջ աղջկա ամուսինը: Իգոր Մանդելին ճանաչում է շուրջ մեկ տարի, նրան այդ ընթացքում մի քանի անգամ տեսել է իրենց գրասենյակում, որը տեղակայված է Երևանի Բաղրամյան թիվ 3ա հասցեում: Իգոր Մանդելը գրասենյակ է եկել Աշոտի և իր հոր հետ: Գիտի, որ Իգորն ունի «Շենգավիթ» անունով ՍՊԸ-ն որի գործունեությամբ զբաղվել է հայրը: Աշոտ Հակոբյանը ունի «Խաչվառ» անվանումով ՍՊԸ-ն, որի հաշվապահությամբ նույնպես զբաղվել է հայրը: Ինքը տեղյակ է, որ Իգորն ունեցել է տարածք և այն տվել է բանկին վարձով, որի դիմաց ստացված գումարի որոշ մասը փոխանցել է «Իրավագարանտ» ՍՊԸ-ն հաշվին, սակայն թե կոնկրետ ինչ գումար և ինչ նպատակով է փոխանցվել, ինքը տեղյակ չէ: Գիտի, որ հետագայում ընկերության հաշվեհամարին գումար չի մնացել:
24.04.2008թ. հայրը տանից դուրս է եկել, որից հետո այլևս տուն չի վերադարձել: Հոր անհետացումից հետո «Իրավագարանտ» ՍՊԸ-ն տնօրեն է դարձել եղբայրը՝ Թորգոմ Վարդանյանը, իսկ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն տնօրեն՝ իր մյուս եղբայր Արամ Վարդանյանը: Տեղյակ լինելով, որ հայրն Աշոտ Հակոբյանի հետ ունեցել է գումարային խնդիրներ՝ 27.04.2008թ., ինքն իր հարսանիքի քավոր Վարդանի հետ գնացել է Աշոտ Հակոբյանի տուն՝ նրանից ճշտելու հոր գտնվելու վայրը: Աշոտը տանը չի եղել, հանդիպել են նրա որդի Արմանին և երեքով քայլել են բակում: Այդ ընթացքում Արմանից հետաքրքրվել է իր հոր գտնվելու վայրի մասին: Քանի որ իրենց բարեկամ Արմեն Ումրշատյանից մինչ այդ լսել է, որ Աշոտը հայտարարել է, որ սպանելու է իր հորը ու տեղյակ լինելով, որ Աշոտն իր հորից ինչ-որ գումարներ է վերցրել ու չի վերադարձրել, սկսել է կասկածել, որ հոր անհետանալու հետ Աշոտը կարող է կապ ունենալ: Արման Հակոբյանի հետ զրույցի ընթացքում իրենց միջև վիճաբանություն և քաշքշուկ չի եղել, հայհոյանքներ չեն հնչել: Այդ զրույցին ներկա են եղել միայն իրենք երեքով:
26.04.2008թ., ինքն ու Վարդանը գնացել են Իգոր Մանդելի տան բակ և խնդրել են, որպեսզի Իգորը դուրս գա տնից: Ինքը նրանից հետաքրքրվել է իր հոր գտնվելու վայրի մասին, սակայն Իգոր Մանդելը պատասխանել է, որ դրա վերաբերյալ տեղեկություններ չունի: Այդ խոսակցության ընթացքում, որին ներկա են եղել նորից երեքով, ոչ մի վիճաբանություն, քաշքշուկ տեղի չի ունեցել և հայհոյանքներ չեն հնչել: Հետո իրենք դիմել են ոստիկանություն՝ հաղորդում տալով հոր անհետացման վերաբերյալ: Այդ ընթացքում շարունակել են հոր որոնումները, սակայն նրան չեն գտել:
Հետագայում Արման Վարդանյանը ցուցմունք է տվել, որ տեղյակ է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից «Եվրոֆինանս» ՍՊԸ-նն է փոխանցվել 176.000.000 դրամ գումար, սակայն այդ գումարը հոր տնօրինած ընկերությանն է փոխանցվել ոչ թե մեկ տարի ժամանակով փոխառությամբ՝ ամսեկան 4 տոկոս տոկոսադրույքի վճարման պայմանով, այլ գումարը փոխառությամբ, անտոկոս, 10 տարի ժամկետով փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-նը: Հոր անհետանալուց հետո, ինքը գտել է այդ պայմանագիրը՝ կնքված նշված երկու ՍՊԸ-ների միջև: /դ.ն.ա., հատոր 1, գ.թ. 96-99, հատոր 3, գ.թ. 51-52, 206-207, հատոր 8, գ.թ. 189-190, հատոր 9, գ.թ. 5, 19-20/
Վկա Արման Վարդանյանն Աշոտ Հակոբյանի հետ 05.08.2009թ.

առերես հարցաքննության ժամանակ նշել է, որ ականատես է եղել, թե ինչպես Կարապետ Սաղոյանը, իր հորը պատկանող գրասենյակում, առձեռն Աշոտ Հակոբյանին է տվել դոլարների թղթադրամներ՝ նշելով, որ դրա չափը 70.000 դոլար է: Ինքը պատահական է մտել իր հոր գրասենյակ և տեսել դա, սակայն չի հիշում, թե դա կոնկրետ երբ է տեղի ունեցել: Չի կարող ասել նաև, թե այդ գումարն Աշոտ Հակոբյանը հետո դուրս հանել է հոր աշխատասենյակից, թե ոչ: /հատոր 4, գ.թ. 127-131/
Վկա Կարապետ Սաղոյանի ցուցմունքներով այն մասին, որ 22.12.2006թ.-ից հանդիսանում է իր ընկեր Սիմոն էլբակյանի կողմից հիմնադրված «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն տնօրենը: 2007թ. հոկտեմբերի սկզբին, իր ընկեր էդիկ Սահակյանն ասելով, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-նը Դիլիջան քաղաքում ունի չօգտագործված կոյուղու ջրագծի 1.000մմ տրամագծով խողովակներ, առաջարկել է մասնակցել խողովակների ապամոնտաժման և հետագայում վաճառքի գործընթացին: Ինքը համաձայնվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-մբ իրականացնել ապամոնտաժման և վաճառքի գործողությունները: Իրենք դիմել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-նը՝ առաջարկելով մասնակցել նշված գործընթացին: 26.10.2007թ. կնքել են պայմանագիր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն հետ՝ Դիլիջան քաղաքում գտնվող խողովակաշարի 5.700 գծամետր խողովակները ապամոնտաժելու և պահեստավորելու մասին: Նախքան պայմանագիր կնքելը, իրենց անհրաժեշտ է եղել գտնել խողովակների գնորդի, որը նախապատրաստական աշխատանքների կատարման համար պատրաստ կլիներ վճարել կանխավճար: Այդպիսի առաջարկով դիմել են իր ծանոթ Աշոտին, որը պատրաստակամություն է հայտնել խողովակների գնորդ գտնել: Աշոտի հետ գնացել են Երևանի Բաղրամյան փողոցի սկզբնամասում գտնվող գրասենյակ, որը պատկանել է Վոլոդյա Վարդանյանին: Այնտեղ ծանոթացել են ինչպես վերջինիս, այնպես էլ Աշոտ Հակոբյանի հետ ու դիմել նշված առաջարկով: Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը ցանկություն են հայտնել տեղում տեսնել խողովակները, որից հետո գալ համաձայնության: Չի հիշում, թե ով է նրանց տարել և Դիլիջանում ցույց է տվել խողովակները, որից հետո նորից հանդիպել են նշված գրասենյակում: Հանդիպմանը ներկա են գտնվել ինքը, էդիկը, ընկեր Աշոտը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը: Քննարկել են խողովակների ձեռքբերման հետ կապված հարցերը և որոշել են կազմել պայմանագիր: Հաջորդ օրն ինքը, էդիկը, ընկեր Աշոտը և Վոլոդյան ծանոթացել են պայմանագրին ու համոզվել, որ դրանում նշված են այն պայմանները, որոնք արդեն քննարկել են: Որպես խողովակներն իրացնող և «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն ներկայացուցիչ, պայմանագիրը կնքել է և ստորագրել է ինքը, իսկ որպես խողովակների ձեռք բերող, «Խաչվառ» ՍՊԸ-ն անունից պայմանագիրը կնքել է Վոլոդյա Վարդանյանը: Հաջորդ օրը վերջինս «Կոնվերս» բանկում գտնվող հաշվեհամարից փոխանցել է 35.000.000 դրամ՝ իր ընկերության հաշվեհամարին: Գումարն ինքը կանխիկացրել է և ամբողջությամբ հանձնել էդիկին: Ապամոնտաժման աշխատանքները տևել են 5 օր, որից հետո դադարեցվել են, որի մասին տեղյակ են պահել Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին: Այդ ժամանակ նրանք երկուսով առաջարկել են տրված 35.000.000 դրամը ետ վերադարձնել: Հենց հաջորդ օրը, ինքը, էդիկը, Ժորա Գևորգյանը գնացել են Երևանի Բաղրամյան թիվ 3 հասցեի գրասենյակ և էդիկը Վոլոդյային ու Աշոտ Հակոբյանին կանխիկ վերադարձրել են ստացված գումարից 70.000 դոլար գումարը: Գումարն ամբողջությամբ չի վերադարձվել, քանի որ դրա մի մասը ծախսվել է որոշակի չափով խողովակների ապամոնտաժման վրա: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ խողովակների ապամոնտաժման թույլտվությունը ստանալուց հետո էդիկը նորից գումարը հետ կվերցնի՝ աշխատանքները շարունակելու համար, սակայն թույլտվությունը չի ստացվել և գործարքը չի կատարվել: Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո, նրա որդիները, մասնավորապես Թորգոմը, հանդիպելով իրեն՝

առաջարկել են իրեն տալ ևս 20.000 դոլար գումար և փաստաթղթեր ձևակերպել, որ խողովակների համար տրամադրված գումարներն ամբողջությամբ վերադարձվել են, սակայն ինքը չի համաձայնվել: /դ.ն.ա., հատոր 2, գ.թ. 155-157, հատոր 3, գ. թ. 276-278, հատոր 8, գ. թ. 160-163, հատոր 9, գ.թ. 124-126/

Վկա Կարապետ Սաղոյանը խողովակների դիմաց ստացված գումարների մի մասը Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին հետ վերադարձնելու մասին իր ցուցմունքը պնդել է նաև վերջինիս հետ առերես հարցաքննության ժամանակ: /հատոր 3, գ. թ. 281-285/

Վկա էդուարդ Սահակյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ Ժորա Գևորգյանի միջոցով ծանոթացել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն տնօրեն Կարապետ Սաղոյանի հետ: Իր ապրուստը հոգացել է խողովակների ապամոնտաժում կատարելու գործընթացը կազմակերպելու միջոցով: 2007թ. հուլիս-օգոստոս ամիսներին, տեղեկանալով, որ Դիլիջանի ոռոգման ցանցի կոլեկտորի խողովակները ենթակա են ապամոնտաժման, պայմանավորվածություն է ձեռք բերել Կարապետ Սաղոյանի հետ՝ խողովակների ապամոնտաժման և վաճառքի հարցերն իրականացնել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն միջոցով: Աշոտ Պետրոսյանի միջոցով ծանոթացել է Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ, որոնք համաձայնվել են գնել ապամոնտաժված խողովակների մեծ խմբաքանակ՝ պատրաստակամություն հայտնելով վճարել կանխավճար: Նրանք նախապես գնացել են Դիլիջան ու անձամբ տեսել են ջրագիծը: «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն և «Խաչվառ» ՍՊԸ-ն միջև կնքվել է խողովակների առուվաճառքի պայմանագիր, ըստ որի՝ «Ռոլֆերմեր» ՍՊԸ-նը «Խաչվառ» ՍՊԸ-նը պետք է իրացներ խողովակների մեծ խմբաքանակ: Դրանից հետո, «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվից «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն հաշվին է փոխանցվել 35.000.000 դրամ գումար, որը Կարապետ Սաղոյանը կանխիկացրել և ամբողջությամբ տվել է իրեն: Խողովակների ապամոնտաժման թույլտվությունը ստանալուց հետո, ինքը տեխնիկական միջոցներ է տեղափոխել Դիլիջան և սկսել է ապամոնտաժման աշխատանքները: Մի քանի օր այդ աշխատանքները կատարելուց հետո, ոստիկանության աշխատակիցները չեն թույլատրել շարունակել աշխատանքները, որից հետո ինքը, իր մոտ մնացած 70.000 դոլար գումարը Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում տվել է վերջինիս և Աշոտ Հակոբյանին: Մյուս գումարը, շուրջ 11-12 միլիոն դրամը ծախսվել է խողովակների մի մասի ապամոնտաժման հետ կապված: Գումարի վերադարձմանը ներկա են գտնվել նաև Ժորա Գևորգյանը և Աշոտ Պետրոսյանը: 70.000 դոլար գումարը բոլոր ներկաների մոտ հաշվելուց ու վերահաշվելուց հետո, Աշոտ Հակոբյանն այն տվել է Վոլոդյա Վարդանյանին, որը վերցնելով ամբողջ գումարը՝ տեղավորել է գրասենյակում գտնվող չհրկիզվող պահարանում: Այնուհետև իրեն չի հաջողվել ստանալ թույլտվություն՝ խողովակների հետագա ապամոնտաժումը և վաճառքն իրականացնելու համար և գործարքը չի իրականացվել: /հատոր 9, գ.թ. 118-121/

Վկաներ Ժորա Գևորգյանի և Աշոտ Պետրոսյանի նույնաբովանդակ ցուցմունքներով այն մասին, որ 2007թ., դեպքերի բերումով իրենք մասնակցել են էդիկ Սահակյանի կողմից վաճառվող խողովակների իրացման հետ կապված մի շարք բանակցություններին և խոսակցություններին, որոնք վերաբերվել են Կարապետ Սաղոյանի տնօրինած «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն միջոցով, էդիկ Սահակյանի անմիջական մասնակցությամբ, «Խաչվառ» ՍՊԸ-նը խողովակներ վաճառելու հարցերին: Խողովակները ձեռք բերող անձանցից բանակցություններին մասնակցել են Վոլոդյա Վարդանյանը, Աշոտ Հակոբյանը, Կարապետ Սաղոյանը և իրենք: Այդ գործընթացից տեղյակ են, որ էդիկը նպատակադրվել է Դիլիջանում գտնվող ջրմուղ-կոյուղու կոլեկտորից ապամոնտաժել խողովակներ և դրանք վաճառել Վոլոդյայենց: Այդ առումով Վոլոդյայենք գումարներ են փոխանցել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-նը, որի վերաբերյալ կնքվել են պայմանագրեր: «Ռոլֆերմեր» ՍՊԸ-նը փոխանցվել են գումարներ,

սակայն խողովակների որոշակի քանակության ապամոնտաժումը կատարելուց հետո աշխատանքները դադարեցվել են, որից հետո իրենք, Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում ականատես են եղել, որ Կարո Սաղոյանի և Աշոտ Հակոբյանի ներկայությամբ, էդիկը Վոլոդյային է հանձնել 70.000 դոլար գումար: Աշոտ Հակոբյանը պահանջել է հետ վերադարձնել մյուս գումարները, սակայն էդիկը նշել է, որ խողովակների ապամոնտաժման հետ կապված կատարվել են ծախսեր: Աշոտ Հակոբյանը հորդորել է, որ մոտակա ժամանակներում մնացած գումարը չվերադարձնելու դեպքում էդիկը կարող է լուրջ խնդիրների առաջ կանգնել: Գումարը վերադարձնելու հետ կապված որևէ փաստաթուղթ չի ձևակերպվել:
/դ.ն.ա., հատոր 8, գ. թ. 166-169, 207-210/
Վկա Աշոտ Պետրոսյանը խողովակների դիմաց ստացված գումարների մի մասը Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին հետ վերադարձնելու մասին իր ցուցմունքը պնդել է նաև վերջինիս հետ առերես հարցաքննության ժամանակ/ /հատոր 9, գ. թ. 8-14/
Վկա Արմեն Ումրշատյանի ցուցմունքներով այն մասին, որ Վոլոդյա Վարդանյանը հանդիսանում է իր քրոջ որդին: Նրա հետ գտնվում է ջերմ բարեկամական հարաբերությունների մեջ: Նույնատիպ հարաբերությունների մեջ է գտնվում իր մյուս հորաքրոջ փեսա Աշոտ Հակոբյանի հետ: Ինչպես Աշոտը, այնպես էլ Վոլոդյան գտնվել են լավ հարաբերությունների մեջ և համատեղ իրականացրել են տնտեսական գործունեություն: Ինքը չի խառնվել նրանց ֆինանսական հարցերին, սակայն գիտի, որ Աշոտը մեծ գումարներ, շուրջ 160.000.000 դրամ փոխառությամբ տվել է Վոլոդյային և այդ գումարները պատկանել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն փայատիրոջը: 2007թ. աշնանը, Վարդանյանի ու Հակոբյանի հարաբերությունները ֆինանսական խնդիրների հետ կապված սկսել են լարվել: Ինքը փորձել է հարթել դրանք: 2008թ. իրեն հաջողվել է հարթել վեճը և Վոլոդյան խոստացել է խողովակների հետ կապված մեծ գործարք կատարելով՝ ամբողջությամբ հատուցել գումարները: 25.04.2008թ., Վոլոդյայի որդիներ Արմանը, Արամը և Թորգոմը իրեն տեղեկացրել են, որ նախորդ օրը Վոլոդյան անհետացել է: Քանի որ Վոլոդյան միայն խնդիր է ունեցել Աշոտի հետ, ինքը նրանց ներկայությամբ զանգահարել է Աշոտին ու հետաքրքրվել Վոլոդյայի գտնվելու վայրի վերաբերյալ: Աշոտն իրեն հավաստիացրել է, որ այդ մասին որևէ տեղեկություն չունի: Իրենք սկսել են որոնումներ իրականացնել, որոնք եղել են անարդյունք: /դ.ն.ա., հատոր 1, գ.թ. 111-113/
Վկա Աննա Գրիգորյանի ցուցմունքներով այն մասին, որ 2003թ. անցել է հաշվապահական դասընթացներ Երևանի Բաղրամյան թիվ 3ա հասցեում գտնվող գրասենյակում, Վոլոդյա Վարդանյանի մոտ, որից հետո սկսել է աշխատել «Իրավագարանտ» ՍՊԸ-ում՝ որպես հաշվապահ: Այդ ընկերությունում աշխատել է մինչև 2007 թվականի օգոստոսի 01-ը, որից հետո աշխատել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես հաշվապահ: Իգոր Մանդելին ճանաչում է 2007թ. ամռանից, երբ նա սկսել է հաճախել «Իրավագարանտ» ՍՊԸ-ն գրասենյակ: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես հաշվապահ սկսել է աշխատել Վոլոդյա Վարդանյանի միջնորդությամբ: Վերջինս և Իգոր Մանդելը կատարել են բոլոր թղթաբանությունը՝ մուտք-ելք-փոխանցումներ, իսկ ինքը նայելով թղթերին և քաղվածքներին՝ կազմել է հաշվետվությունները: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն վարձակալական պայմանագրի մասին տեղեկացված է եղել բանավոր, սակայն ոչ մի առնչություն չի ունեցել պայմանագրի կնքման և գործարքի հետագա զարգացման հետ: Այդ առումով կատարել է միայն հարկային դաշտի հետ կապված անհրաժեշտ հաշվապահական ձևակերպումներ: Այդ գործարքով զբաղվել է Վոլոդյա Վարդանյանը և չգիտի, թե վերջինս երբ է սկսել զբաղվել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն ֆինանսական գործունեության հետ կապված հարցերով: Վերջին անգամ նրա հետ զրուցել է 23.04.2008թ. : Այդ ժամանակ Վոլոդյան իրեն տեղեկացրել է, որ 25.04.2008թ. իրենց գրասենյակ է գալու Իգոր Մանդելը, որպեսզի կնքի վճարման հանձնարարականներ և խնդրել է, որպեսզի ինքը լինի գրասենյակում և այդ հանձնարարականները

տրամադրի Իգոր Մանդելին: Նշված օրն Իգոր Մանդելն առավոտյան եկել և կնքել է Վոլոդյայի կողմից թողնված հանձնարարականները, սակայն այդ օրը Վոլոդյան չի եկել գրասենյակ, իսկ Իգոր Մանդելն էլ, նրան երկար սպասելուց հետո, թողել ու գնացել է: Հաջորդ օրն ինքը Վոլոդյա Վարդանյանի որդիներից տեղեկացել է, որ նա անհետացել է: /դ.ն.ա., հատոր 2, գ.թ. 6-7/

Դատահաշվապահական փորձաքննության 29.10.2009թ. թիվ 10040909/31010909 եզրակացությամբ, որի համաձայն «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն 193407000 դրամ վարկը տրամադրվել է վարկային պայմանագրով նախատեսված՝ սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով, սակայն բանկի կողմից չի հսկվել վարկային միջոցների նպատակային ծախսը, իսկ «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն տնօրենի կողմից նշված 193407000 դրամ վարկային միջոցները օգտագործվել են սույն եզրակացության հետազոտական մասում նշված և վարկի նպատակայնության հետ կապ չունեցող այլ տարբեր նպատակներով:

«Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն և «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն կողմից վարձակալության պայմանագրով՝ «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն կողմից վարձակալությամբ տարածքի տրամադրման վերաբերյալ, բխում է «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն կանոնադրության և ՍՊԸ-նհիմնադիրների շահերից, քանի որ այն կատարվել է շահույթ ստանալու նպատակով ու «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն հիմնադիր-մասնակիցների ընդհանուր ժողովի հիման վրա: Իսկ ՍՊԸ-ի տնօրենի կողմից մյուս հիմնադիրներին, ըստ նախաքննության ձեռք բերված տվյալների ստացվող եկամտի չափը պակաս ցույց տալու նպատակով ներկայացվել է կեղծ վարձակալության պայմանագիր, որտեղ վարձավճարի չափը 2450000 դրամի փոխարեն ցույց է տրվել 700000 դրամ:

«էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193407000 դրամ վարկը, վերջինիս կողմից չի օգտագործվել վարկային պայմանագրով նախատեսված՝ սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով, այլ վարկառուի կողմից օգտագործվել են հետևյալ նպատակներով.

Նպատակային վարկի գումարներից 176.000.000 դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գտնվող «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին:

01.08.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկի գումարներից 16.000.000 դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Արարատ Բանկ» ԲԲԸ-ում գտնվող «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվին:

06.08.2007թ. թիվ 7576, 04.09.2007թ. թիվ 7, 08.11.2007թ. թիվ 16, 21.11.2007թ. թիվ 6 և 06.12.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 69.500.000 դրամ գումարներ են փոխանցվել նրա թիվ 1660000506240100 անձնական հաշվին:

09.08.2007թ. թիվ 9, 01.10.2007թ. թիվ 10 և 23.01.2008թ. թիվ 15 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 37.385.000 դրամ գումարներ են փոխանցվել Ինգա Մանդելի թիվ 1660000487500100 անձնական հաշվին:

01.10.2007թ. թիվ 11, 24.12.2007թ. թիվ 14 և 23.01.2008թ. թիվ 16

վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 34.425.000 դրամ գումարներ են փոխանցվել Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին:
01.10.2007թ. թիվ 09 և 12.10.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 505.000 դրամ գումարներ են փոխանցվել Գագիկ Բատիկյանի թիվ 00503500100 անձնական հաշվին:
30.10.2007թ. թիվ 13 և 31.10.2007թ. թիվ վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից 33.000.000 դրամը Վոլոդյա Վարդանյանի կողմից փոխանցվել է Աշոտ Հակոբյանի տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվին, որից հետո էլ խողովակներ ձեռք բերելու պատրվակով «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվից 35.000.000 դրամը փոխանցվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն հաշվին:
23.01.2008թ. թիվ 01 վճարման հանձնարարագրով Վոլոդյա Վարդանյանի թիվ 00506240100 անձնական հաշվից Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին է փոխանցվել 7.860.000 դրամ:
26.09.2007թ. թիվ 35 և 25.10.2007թ. թիվ 1276 արժույթի վաճառքի անդորրագրերով, 08.11.2007թ. թիվ 15 վճարման հանձնարարագրով, 25.10.2007թ. թիվ 1271 դրամարկղի մուտքի կտրոնով, ինչպես նաև 30.10.2007 թ. թիվ 7, 26.11.2007 թ. թիվ 327, 10.12.2007թ. թիվ 25, 19.12.2007թ. թիվ 623, 19.12.2007թ. թիվ 415 և 23.01.2007թ. թիվ 8003 դրամարկղի մուտքի օրդերներով Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից 5.616.500 դրամի, դոլարի փոխարժեքով ընդհանուր գումարով 17.000 դոլարը փոխանցել է իր իսկ թիվ 00506240101 տարադրամային հաշվին, դրան մուտքագրելով նաև 40.000 դոլար, որից հետո 24.000 դոլարը փոխանցել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղ՝ Անժելա Ավագյանի հաշվին, 5.000.000 դրամը փոխանցել է Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, իսկ այնուհետև 37.000 դոլարն ետ է ստացել իր այդ հաշվից:
06.08.2007թ. թիվ 7578, 06.08.2007թ. թիվ 25, 04.09.2007թ. թիվ 8, 04.09.2007թ. թիվ 13, 25.09.2007թ. թիվ 6, 26.09.2007թ. թիվ 37, 01.10.2007թ. թիվ 12, 08.10.2007թ. թիվ 9, 08.10.2007թ. թիվ 16, 03.12.2007թ. թիվ 392 և 06.12.2007թ. թիվ 13 դրամարկղի ելքի կտրոններով Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից կանխիկ ստացել է ընդհանուր 58.782.500 դրամ: /հատոր 9, գ.թ. 74-96/
Դատաձեռագրաբանական փորձաքննության 07.05.2009թ. թիվ 11830901 եզրակացությամբ, որի համաձայն «Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի ձախ անկյունում «Քարտուղար» բառի տակ «ստորագրություն» տողագծի վրա տեղավորված «Мандель Игорь» ձեռագիր գրառումը կատարվել է Իգոր Մանդելի կողմից:
Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի ձախ անկյունում «Քարտուղար» բառի դիմաց տողագծի վրա տեղավորված ստորագրությունը կատարվել է Իգոր Մանդելի կողմից:
Պարզել, Անուշ Նազարյանի, թե մեկ այլ անձի կողմից է կատարվել փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի աջ անկյունում «Նախագահ» բառի տակ

	տողագծի վրա տեղավորված «Նազարյան Անուշ» ձեռագիր գրառումը, հնարավոր չէ՝ հետազոտելի ձեռագիր գրառման ինֆորմատիվ գրաֆիկական նյութի սակավության պատճառով: Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի աջ անկյունում «Նախագահ» բառի դիմաց տողագծի վրա տեղավորված ստորագրության և Անուշ Նազարյանի ստորագրության նմուշների միջև համեմատական հետազոտություն չի անցկացվել՝ հետազոտելի ստորագրության տառ չկազմող տառադարձության պատճառով»: /հատոր 3 գ.թ. 291-295/ Դատաապրանքագիտական փորձաքննության 11.02.2010թ. թիվ 41160907 եզրակացությամբ, որի համաձայն «Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող և հետազոտման առարկա հանդիսացող գրասենյակային շինության և հողատարածքի ընդհանուր շուկայական արժեքը, փորձաքննությամբ գնահատման առաջադրված՝ 22.11.2007թ. դրությամբ և տեղազննության կատարման պահին առկա ապրանքային վիճակով, գնահատվում է 112.650.000 դրամ: /հատոր 9, գ.թ. 127-135/ Իրեղեն ապացույցներով՝ Իգոր Մանդելի ստորագրությամբ և ընկերության մասնակից Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ, 25.07.2007թ. ամսաթվով, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությամբ, որի համաձայն ընկերության մասնակիցներն իբրև թե անցկացնելով ընդհանուր ժողով՝ որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող, Բագրատունյաց թիվ 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող, 508,1 քմ մակերեսով դեղատունը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով՝ ստանալ 193.407.000 դրամ գումարի չափով վարկ: /հատոր 3, գ.թ. 162, հատոր 10, գ.թ. 206/ 19.06.2007թ. ամսաթվով, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տարածքը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ կեղծված տվյալներով՝ ամսական վարձավճարի չափը 700.000 դրամ նշված, պայմանագրի պատճենով: /հատոր 1, գ.թ. 202-206, հատոր 10, գ.թ. 206/ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված գումարներով Աշոտ Հակոբյանի կողմից ձեռք բերված՝ ք. Երևան, Այվազովսկու թիվ 46/1 հասցեում գտնվող անշարժ գույքով: /հատոր 9, գ.թ. 140/ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ներկայացուցչի և Վոլոդյա Վարդանյանի միջև 19.06.2007թ. կնքված պայմանագրով, որի համաձայն «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը պատկանող, ք. Երևան, Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 դրամ վարձավճարով, վարձակալությամբ հանձնվել է նշված բանկին: /հատոր 8, գ.թ. 11-20, հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անունից, Իգոր Մանդելի կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ 25.07.2007թ. և 26.07.2007թ. կնքված բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը գրավադրելով իրեն պատկանող, ք. Երևան, Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող տարածքը, 10 տարի մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից ստացել է 193.407.000 դրամի չափով վարկ: /հատոր 4, գ.թ. 201-218, հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 31.07.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով, որի համաձայն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկի գումարներից 176.000.000 դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ, նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գտնվող «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/

	01.08.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով, որի համաձայն «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկի գումարներից 16.000.000 դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ, նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Արարատ Բանկ» ԲԲԸ-ում գտնվող «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 06.08.2007թ. թիվ 7576, 04.09.2007թ. թիվ 7, 08.11.2007թ. թիվ 16, 21.11.2007թ. թիվ 6 և 06.12.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 69.500.000 դրամ գումարներ են փոխանցվել նրա թիվ 1660000506240100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 09.08.2007թ. թիվ 9, 01.10.2007թ. թիվ 10 և 23.01.2008թ. թիվ 15 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 37.385.000 դրամ գումարներ են փոխանցվել Ինգա Մանդելի թիվ 1660000487500100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 01.10.2007թ. թիվ 11, 24.12.2007թ. թիվ 14 և 23.01.2008թ. թիվ 16 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից, նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 34.425.000 դրամ գումարներ են փոխանցվել Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10 գ.թ. 207-211/ 01.10.2007թ. թիվ 09 և 12.10.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից, նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 505.000 դրամ գումարներ են փոխանցվել վերջինիս բարեկամ Գագիկ Բատիկյանի թիվ 00503500100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 30.10.2007թ. թիվ 13 և 31.10.2007թ. թիվ վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից 33.000.000 դրամը Վոլոդյա Վարդանյանի կողմից փոխանցվել է Աշոտ Հակոբյանի տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվին, որից հետո էլ խողովակներ ձեռք բերելու պատրվակով «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվից 35.000.000 դրամ գումարը փոխանցվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 23.01.2008թ. թիվ 01 վճարման հանձնարարագրով, որի համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանի թիվ 00506240100 անձնական հաշվից Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին է փոխանցվել 7.860.000 դրամ գումար: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 26.09.2007թ. թիվ 35 և 25.10.2007թ. թիվ 1276 արժույթի վաճառքի անդորրագրերով, 08.11.2007թ. թիվ 15 վճարման հանձնարարագրով, 25.10.2007թ. թիվ 1271 դրամարկղի մուտքի կտրոնով, ինչպես նաև 30.10.2007թ. թիվ 7, 26.11.2007թ. թիվ 327, 10.12.2007թ. թիվ 25, 19.12.2007թ. թիվ 623, 19.12.2007թ. թիվ 415 և 23.01.2007թ. թիվ 8003 դրամարկղի մուտքի օրդերներով, որոնց համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից 5.616.500 դրամի, ԱՄՆ դոլարի փոխարժեքով 17.000 դոլար ընդհանուր գումարը փոխանցել է իր իսկ թիվ

00506240101 տարադրամային հաշվին՝ դրան մուտքագրելով նաև 40.000 դոլար գումար, որից հետո 24.000 դոլար գումարը փոխանցել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղ՝ իր բարեկամ Անժելա Ավագյանի հաշվին, 5.000.000 դրամ գումարը փոխանցել է բարեկամ Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, իսկ 37.000 դոլարն այնուհետև հետ է ստացել իր այդ հաշվից: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/
06.08.2007թ. թիվ 7578, 06.08.2007թ. թիվ 25, 04.09.2007թ. թիվ 8, 04.09.2007թ. թիվ 13, 25.09.2007թ. թիվ 6, 26.09.2007թ. թիվ 37, 01.10.2007թ. թիվ 12, 08.10.2007թ. թիվ 9, 08.10.2007թ. թիվ 16, 03.12.2007թ. թիվ 392 և 06.12.2007թ. թիվ 13 դրամարկղի ելքի կտրոններով, որոնց համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից կանխիկ ստացել է 58.782.500 դրամ ընդհանուր գումար: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/
Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Աշոտ Հակոբյանն իրեն մեղավոր չի ճանաչել, նախաքննության ընթացքում հրաժարվել է առաջադրված մեղադրանքի շուրջ ցուցմունքներ տալուց և պնդել է իր նախկին ցուցմունքներն այն մասին, որ հանդիսանում է «Խաչվառ» ՍՊԸ-ն տնօրենը, որի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենցի 1: Վոլոդյա Վարդանյանը հանդիսանում է կնոջ մորաքրոջ որդին, որին ճանաչում է մանկությունից և որի հետ ունեցել են լավ հարաբերություններ: Իր ՍՊԸ-ն բացման օրվանից Վոլոդյան աշխատել է որպես հաշվապահության գծով փոխտնօրեն: Նա հանդիսանում է նաև «Եվրոֆինանս», «Իրավագարանտ» և «Ռուսաֆիլ» ՍՊԸ-ների տնօրենը: Որքանով տեղյակ է, Վոլոդյան 23.04.2008թ.-ից մինչև մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, «Իրավագարանտ» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ներն անվանափոխել է իր որդիներ Արման, Արամ և Թորգոմ Վարդանյանների անուններով: Վոլոդյան, նշված ընկերությունների միջոցով իրականացրել է իրավական-խորհրդատվական, հաշվապահական հաշվառման, հաշվապահական դասընթացների կազմակերպման, աուդիտի գործառույթներ: Իգոր Մանդելին և նրա ընտանիքի անդամներին ճանաչում է 2005թ.-ից և նրանց հետ գտնվում է մտերիմ հարաբերությունների մեջ: Իգորը և Վոլոդյան ծանոթացել են իր միջոցով: Իգորը հանդիսանում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տնօրենը: Իգորին պատկանող, Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատան մի մասը վերջինս 2007թ. ամառվանից 10 տարի ժամկետով վարձով տվել է «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը: Այդ մասին տեղյակ է եղել Վոլոդյան: Հաշվի առնելով, որ Վոլոդյան հաշվապահության մասնագետ է եղել՝ իր խնդրանքով նա մասնակցել է նշված գործարքը կնքելուն: Վերջինիս ինքը Իգորին ներկայացրել է որպես վստահելի անձի: Իգորը Վոլոդյային է տվել լիազորագիր՝ վերը նշված պայմանագիրը կնքելու համար, սակայն պայմանագիրը կնքել է Իգորը՝ Վոլոդյայի ներկայությամբ և օգնությամբ: Նախքան պայմանագրի կնքելը, նախնական բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել բանկի ներկայացուցիչների հետ, որ վերջիններս Իգորին ամսեկան վճարեն 7.000 դոլարին համարժեք դրամ, սակայն Վոլոդյան իրեն և Իգորին համոզել է, որ ավելի լավ կլինի գումարը վերցվի միանգամից 10 տարվա համար, որից Վոլոդյան պարտավորվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-մբ, «Ֆորեքս»-ի միջոցով 100.000 դոլարը շրջանառության մեջ դնելով՝ ստանալ եկամուտներ և դրանցից ամիսը 4%-ը տրամադրել կազմակերպությանը: Քանի որ Իգորն ունեցել է պարտքեր և Վոլոդյայի առաջարկած տարբերակը շահավետ է եղել, Իգորը համաձայնվել է և Վոլոդյայի հետ կնքել է պայմանագիր: Վարձակալության 10 տարվա գումարը կազմել է 193.000.000 դրամ, որը բանկի կողմից փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարին: Դրանից 16.000.000 դրամով Իգորը մարել է պարտքերը, իսկ մնացած 176.000.000 դրամից 38.000.000 դրամը 06.08.2007թ. փոխանցվել է «Ֆորեքս» կազմակերպությանը: Ընդ որում Վոլոդյան այնքան վստահություն է իրենց ներշնչել և իրենց

«խելքը կերել», որ 02.08.2007թ. իրենք 176.000.000 դրամը փոխանցել են «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարին: 2-րդ փոխանցումը «Ֆորեքսին», 17.000.000 դրամի չափով, կատարվել է 04.09.2007թ.: Այսպիսով, 176.000.000 դրամից 52.000.000 դրամը, ըստ իր և Իգորի հաշվարկի, Վոլոդյան հաշվեհամարից հանել է և օգտագործել, իսկ մնացած գումարները գտնվել են իր և Իգորի հսկողության տակ: Հաշվեհամարին պետք է մնացած լիներ 6.985.000 դրամ գումար, 780.390 դրամի փոխարեն: Երբ ինքը 2008թ. հունվարին հանդիպել է Վոլոդյային և պահանջել է ներկայացնել գումարի մնացորդի վերաբերյալ փաստաթուղթ, նա ներկայացրել է բանկային փաստաթուղթ, որի համաձայն՝ հաշվեհամարին եղել է 6.985.000 դրամ գումար, սակայն երբ ստուգելու նպատակով բանկից վերցրել է հաշվեհամարի մնացորդի փաստաթուղթը, պարզել է, որ Վոլոդյան իրեն խաբել է, իրականում հաշվեհամարին եղել է 780.390 դրամ գումար: Նախքան այդ, 06.11.2007թ.-ին, հանդիպել է Վոլոդյային, որպեսզի ըստ պայմանավորվածության՝ գումարը տալուց 3 ամիս անց, Վոլոդյան տա 12.000 դոլար, սակայն նա, խախտելով պայմանավորվածությունը՝ պնդել է, որ գումարը տալու է 6 ամիս հետո:
2007թ. նոյեմբերի վերջին, «Ֆորեքս»-ի գործունեության վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար ինքը, ընկերը՝ Աշոտ Պետրոսյանը և վերջինիս ծանոթ Արթուրը գնացել են Վոլոդյա Վարդանյանի գրասենյակ, որտեղ հանդիպել են վերջինիս, նրա աշխատող Խաչիկին և Վոլոդյայի որդի Արմանին: Միասին քննարկել են նշված հարցն ու պարզել, որ 110.000 դոլար գումարը շրջանառության մեջ դնելուց 6 ամսվա ժամանակահատվածում ստացվել է 10.000 դոլար եկամուտ: Զգալով, որ խաբվել է՝ Վոլոդյային ասել է, որ փետրվարի 6-ին լրանալու է 6 ամիսը, և հնարավոր է, որ ամբողջ գումարը վերցնի, իսկ Վոլոդյան համաձայնվել է:
04.02.2008թ., երեկոյան, իրենց բակ է եկել Վոլոդյան, որդու՝ Արմանի հետ: Դրսում իրենց միջև տեղի է ունեցել խոսակցություն, որի ընթացքում Վոլոդյան ասել է, որ աշխատող Խաչիկին, որը զբաղվել է «Ֆորեքս»-ով գումարները շրջանառության մեջ դնելով, գողացել են գումարի համար: Ինքը պնդել է, որ դա իր հետ կապ չունի և պայմանավորված օրը նրանից վերցնելու է ամբողջ գումարը:
06.02.2008թ. հանդիպելով՝ Վոլոդյան ասել է, որ Խաչիկից դեռ լուր չունի, պետք է գտնի նրան և միասին լուծեն գումարի վերադարձման հարցը: Փետրվարի 14-ին, իր փեսա Սամվելը և կինը գնացել են Վոլոդյայի տուն՝ գումարի հետ կապված հարցի շուրջ պարզաբանումներ ստանալու համար: Խոսակցությունը վարել են իր կինը, փեսան, Վոլոդյան ու վերջինիս կինը՝ Ծովինը: Վոլոդյան իր կնոջն ասել է, որ պետք չէ անհանգստանալ և պարտավորվել է մինչև մայիսի 6-ը գումարի որոշ մասը վերադարձնել: Գումարը չվերադարձնելը և այն ուշացնելը Վոլոդյան պատճառաբանել է նաև նրանով, որ գումարներն ուղարկել է Հունաստան՝ ինչ-որ Վարդանի:
2008թ. ապրիլի վերջին իրեն է զանգահարել Վոլոդյայի բարեկամ Արմեն Ումրշատյանն ու տեղեկացրել, որ Վոլոդյան արդեն մի քանի օր է տուն չի գալիս: Նույնը հաստատել է նաև Վոլոդյայի որդի Արմանը, որը հեռախոսազրույցի ընթացքում իրեն մեղադրել է հոր անհետացման հարցում: Ապրիլի 26-ին, իրեն է զանգահարել Իգորը և ասել, որ Վոլոդյայի որդի Արմանը ընկերներով գնացել ու նրան տանից դուրս հանելով՝ վիրավորել է ամենալկտի խոսքերով, պահանջել է ասել հոր տեղը և սպառնացել է հաշվեհարդար տեսնել: Ինքը մինչ այդ Իգորին չի ասել Վոլոդյայի կատարած խարդախությունների մասին, որպեսզի նա չանհանգստանա, քանի որ գիտակցել է, որ գործարքի պատճառը ինքն է հանդիսացել և մտածել է ամեն գնով գումարը տեղը դնել, անկախ Վոլոդյայի կողմից այն վերադարձնելուց: Ապրիլի 27-ի երեկոյան, Վոլոդյայի մյուս որդին, իր որդուն խաբելով, ինչ-որ անձանց հետ տարել է Թոխմախի գերեզմանների մոտ, որտեղ հարվածել են որդուն՝ իրեն մեղադրելով

Վոլոդյայի անհետացման մեջ:
«Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված գումարներից Վոլոդյան 30.10.2007թ. 33.000.000 դրամ գումար է փոխանցել իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվին, որի փոխտնօրեն է հանդիսացել Վոլոդյան, այնուհետև վերջինս «Խաչվառ» ՍՊԸ-ից 35.000.000 դրամ գումար է փոխանցել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-նը՝ խողովակների ձեռքբերման շուրջ կնքված պայմանագրի համաձայն: Խողովակների ձեռքբերման հետ կապված բանակցություններին, որը վարվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն տնօրեն Կարապետ Սաղոյանի ու նրա աշխատակից էդիկի միջև, մասնակցել է նաև ինքը, իր ընկեր Աշոտ Պետրոսյանը և վերջինիս ծանոթ Ժորան: Իր ընկեր Աշոտ Պետրոսյանի միջոցով, Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում, Կարապետ Սաղոյանն ու էդիկն առաջարկել են ձեռք բերել 1.020 մմ տրամագծով, շուրջ 5.000 գծամետր խողովակներ, որոնց 1 գծամետրի վաճառքի գինը կազմել է 22.000 դրամ գումար: Մի քանի օր անց ինքը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Պետրոսյանը գնացել են Դիլիջան և համոզվել խողովակների առկայության մեջ: Մի քանի օր հետո, Վոլոդյան զանգահարել է իրեն և հայտնել, որ արդեն գտել է խողովակների գնորդ, որից հետո «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն տնօրեն Կարապետ Սաղոյանի հետ կնքել են պայմանագիր և Կարապետ Սաղոյանի տնօրինած ընկերությանն է փոխանցվել 35.000.000 դրամ գումար՝ որպես կանխավճար: Հետագայում պարզվել է, որ խողովակների ապամոնտաժման ժամանակ բողոքներ են եղել և աշխատանքները դադարեցվել են, հետագա ապամոնտաժման թույլտվությունը ձգձգվել է:
2008թ. ապրիլի վերջին, Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո, խնդրել է Աշոտ Պետրոսյանին և Կարապետ Սաղոյանին հանդիպել՝ պայմանագրի շուրջ պարզաբանումներ կատարելու համար և այդ ժամանակ է տեղեկացել, որ պայմանագիրը կնքվել է ոչ թե «Եվրոֆինանս» և «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ների միջև, այլ «Ռոլֆերմեր» և իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ների միջև: Այդ պայմանագիրն ինքը չի կնքել ու չի էլ իմացել, որ Վոլոդյան է այն կնքել: Չի բացառում, որ պայմանագրում լինի իր ստորագրությունը, քանի որ շատ են եղել դեպքեր, որ Վոլոդյա Վարդանյանն իրեն ստորագրել է տվել դատարկ թղթերի տակ: Չի եղել դեպք, որ «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն կամ որևէ անձի, այդ թվում նաև էդիկի կողմից իրենց հետ վերադարձված լինի կամ կանխիկ, կամ էլ փոխանցումով խողովակների համար տրամադրված գումարների որևէ մասը:
Նախաքննության ընթացքում, Աշոտ Հակոբյանն Աշոտ Պետրոսյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նշել է, որ տեղյակ է, որ էդիկ Սահակյանի կողմից գումարի որոշ մասը վերադարձվել է Վոլոդյա Վարդանյանին, սակայն ինքը գումարը վերադարձնելիս ներկա չի գտնվել, քանի որ հանդիպման կեսից հեռացել է, սակայն երբ դրանից անցել է մոտավորապես 15 օր, իրեն է զանգահարել Վոլոդյա Վարդանյանը և հայտնել, որ նրանց կողմից բերված գումարը եկել են հետ տանելու: Ինքն էլ պատասխանել է, որ կամքը նրանն է և պատասխանատվությունն էլ նրա վրա է: Առաջարկել է ոչ թե տալ այդ գումարը, այլ ստանալ նաև մնացած մասը: Ինքը չի կարող նշել, թե փաստացի որքան գումար է վերադարձվել Վոլոդյային և ինչպես է նրա կողմից տնօրինվել, քանի որ գումարներով զբաղվել է Վոլոդյա Վարդանյանը:
Այնուհետև, մյուս ցուցմունքներում Աշոտ Հակոբյանը նշել է, որ 176.000.000 դրամ գումարը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին 26.07.2007թ. կնքված պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագիրը կնքելու ժամանակ, ներկա են եղել ինքը, Իգոր Մանդելը, ընկերը, Վոլոդյա Վարդանյանը և վերջինիս ընկերը: Համաձայն փոխառության այդ պայմանագրի, «Եվրոֆինանս» ՍՊԸ-նը պարտավորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը ամսեկան վճարել փոխանցված գումարի 4 տոկոսի չափով գումար: Փաստորեն պայմանագիրը չի կատարվել և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը դիմել է քաղաքացիական դատարան՝ պահանջելով գումարները: Ինչ վերաբերվում է իր և Ինգա Մանդելի հաշվեհամարներին

«Եվրոֆինանս» ՍՊԸ-ից փոխանցված և կանխիկացված գումարներին, ապա դրանցով, շուրջ 78.000.000 դրամով, որն ինքը փրկել է Վոլոդյայից, գնվել են Երևանի Այվազովսկու թիվ 46/1 հասցեում գտնվող տարածքն ու շինությունները, որպեսզի դրանց և Վոլոդյայից ստանալիք գումարների հաշվին հետագայում «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը կատարվի փոխհատուցում:
Ինքը որևէ մեկի հետ համաձայնության չի եկել, գումարներ չի հափշտակել, եկամուտներ չի օրինականացրել, փաստաթղթեր չի կեղծել, այլ իր գործողություններն ուղղված են եղել Վոլոդյա Վարդանյանի և նրա խմբի կողմից կատարված բազմաթիվ գործողությունների բացահայտմանը, իսկ այնուհետև նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից և իրենից գողացված գումարների հետ վերադարձմանը: Ըստ իրեն՝ բացակայում է փողերի լվացման գործողությունը, որովհետև գույքի անօրինական շրջանառության արդյունքում չէ, որ ինքը ձեռք է բերել գումար, այլ դրանք եղել են «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն կողմից փոխառությամբ տրված գումարները: Ինչ վերաբերվում է իր կողմից փաստաթղթերի կեղծմանը, ապա քրեական գործում որևէ ապացույց այդ մասին առկա չէ: /դ.ն.ա., հատոր 1, գ. թ. 65-70, 152-153, 172-173, հատոր 2, գ.թ. 158-159, 236-237, հատոր 3, գ. թ. 1-2, 48-50, 269-271, 279-280, 281-285, հատոր 8, գ. թ. 197-199, հատոր 9, գ. թ. 11-14, 15-16, 248-249, 258, 265-266, 269, հատոր 10, գ.թ. 18, 168/
Առաջադրված մեղադրանքում Իգոր Մանդելը իրեն մեղավոր չի ճանաչել, նախաքննության ընթացքում հրաժարվել է մեղադրանքի շուրջ ցուցմունքներ տալուց, առաջին ատյանի դատարանում նույնպես հրաժարվել է ցուցմունքներ տալուց, սակայն դատավարության մասնակիցների հարցերին պատասխանելով՝ նշել է, որ տեղի ունեցածի մասին ընկերության բաժնետերերը տեղյակ են եղել և նրանք են խնդրել, որ իր բաժնեմասը ևս գրավ դրվի, որպեսզի կարողանան վարկ վերցնել և ստանալ տարիների ընթացքում կուտակված ու չվճարված աշխատավարձերը: Իրականում Վոլոդյա Վարդանյանն է իրեն խաբել և տարել է 176 միլիոն դրամ գումարը: Բոլոր բաժնետերերն ի սկզբանե տեղյակ են եղել, որ վարձակալության գումարի չափը 2.450.000 դրամ է: Վոլոդյա Վարդանյանը հրավիրվել է իրականացնելու ընկերության հաշվապահական գործերը, քանի որ այդպես են ցանկացել դեղատան աշխատողները, սակայն նա չի վարձատրվել: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը դեղատան տարածքը վարձակալությամբ տալու բանակցություններին մասնակցել են ինքը և Վարդանյանը: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից իրենց տրվել է 193 միլիոն դրամ գումարի չափով վարկ, որից 16 միլիոնն են ստացել, իսկ մնացածը Վարդանյանի հետ անհետացել է: Ինքն այլևս վերջինիս չի տեսել, որպեսզի նրանից պահանջի գումարը, այլ զանգահարել է Աշոտին, որպեսզի վերջինս ապահովի գումարի փոխանցումը: Այդ գումարը «Ֆորեքս» ծրագրի միջոցով շրջանառության մեջ դնելու և դրանից եկամուտներ ստանալու մասին խոսակցություն Վարդանյանը կոլեկտիվի ժողովի ժամանակ վարել է, սակայն չի հիշում, թե կոնկրետ ինչ է ասել: Որպես տուժող ներգրավված իր աշխատակիցներից որևէ մեկի նկատմամբ թշնամություն չունի, սակայն նրանց կողմից նմանատիպ ցուցմունքներ տալը բացատրում է նրանով, որ նրանք հայտնել են, որ իրենց ցուցմունքները հետ կվերցնեն, եթե ինքը հրաժարվի իր բաժնեմասից: Որևէ այլ ձևով իր դեմ տուժողների կողմից ցուցմունքներ տալը չի կարող բացատրել: Վարդանյանին Հակոբյանն է ներկայացրել որպես վստահելի հաշվապահ, իսկ թե ինչով էր ինքը վարձահատույց լինելու նրան՝ անվճար աշխատանքի դիմաց, չի կարող ասել: Իր և իր դուստր Ինգա Մանդելի միջև փոխհարաբերությունները լավ են եղել, սակայն ինքը ուշ է իմացել, որ հափշտակված գումարները փոխանցվել են իր դստեր հաշվեհամարին և այնտեղից կանխիկացվել են: Վ. Վարդանյանի անհետացման ժամանակ նույնպես այդ մասին ինքը չի իմացել: Իր ունեցած հիվանդությունների պատճառով այժմ դեպքի

մանրամասները չի հիշում:
/դ.ն.ա., հատոր 10, գ.թ. 155/
Պաշտպանության կողմի միջնորդությամբ առաջին ատյանի դատարանում որպես վկա հարցաքննված ներքոհիշյալ անձինք հայտնել են հետևյալը.
Վկա Տիգրան Սահակյանը ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսանում է «Իրավագարանտ» ՍՊԸ-ն հիմնադիրը: 2000թ.-ից ճանաչում է Վոլոդյա Վարդանյանին: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասին երբևէ չի լսել, տեղյակ չէ նաև, որ վերջինս «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ պայմանագրեր է կնքել: Տեղեկություն չունի նաև այն մասին, որ «Շենգավիթ-Ա» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների միջև պայմանագիր է կնքվել և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարից գումար է փոխանցվել «Իրավագարանտ» ՍՊԸ-ն հաշվեհամարին, քանի որ ընթացիկ գործողությունները կատարվել են Վարդանյանի կողմից, որոնց մասին վերջինս իրեն տեղյակ չի պահել: «Իրավագարանտ» ՍՊԸ-ն հետ կնքված մյուս պայմանագրերից ևս տեղյակ չէ: Վարդանյանի անհետացման մասին տեղեկացել է նրա որդիներից և անձամբ որևէ միջոց չի ձեռնարկել նրան հայտնաբերելու ուղղությամբ: Իր կողմից է Թորգոմ Վարդանյանը նշանակվել «Իրավագարանտ» ՍՊԸ-ն տնօրեն, սակայն նրա գործունեությունն ինքը չի վերահսկել:/դ.ն.ա./
Վկա Գագիկ Մարգարյանն առաջին ատյանի դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսանում է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն տնօրենը, որը գործունեություն է ծավալել արտարժույթային շուկայում: Կազմավորման օրվանից ընկերության բաժնետերերը եղել են ինքը, Վոլոդյա Վարդանյանը, Եղիշեն և Խաչիկը: Կազմակերպությունը գրանցվել է 2006թ.-ին, իսկ 2008թ. նրա գործունեությունը դադարեցվել է: Տեղյակ է, որ Վոլոդյա Վարդանյանը 2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հետ կնքել է փոխառության պայմանագիր: 2008թ., Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո տեղեկացել է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարից շուրջ 176 միլիոն դրամի չափով գումար է փոխանցվել «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին, իսկ թե Վոլոդյա Վարդանյանն ինչ հաշվեհամարներին է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարից գումարներ փոխանցել՝ տեղյակ չէ: Վարդանյանի բաժնեմասն անցել է նրա որդիներին, որի մասին կազմվել է արձանագրություն: Որևէ խոսակցություն չի լսել այն մասին, որ Վարդանյանը և Հակոբյանը ցանկացել են յուրացնել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից փոխանցված գումարները:
/դ.ն.ա. /
Վկա Արթուր Դանիելյանն առաջին ատյանի դատարանում ցուցմունք է տվել այն մասին, ճանաչում է Աշոտ Հակոբյանին, Վոլոդյա Վարդանյանին ու նրա որդիներին որպես համագյուղացիների, իսկ 2008թ.-ից Վոլոդյա Վարդանյանի հետ գտնվում է խնամիական հարաբերությունների մեջ: Վերջինիս ՍՊԸ-ների հետ առնչվել է այն ժամանակ, երբ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն տնօրեն Արամ Վարդանյանը գտնվել է արտերկրում և այդ ընկերության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես ստանձնել է ինքը: Որպես տնօրենի պաշտոնակատար ինքը չի ծանոթացել մյուս բաժնետերերի և նրանց կատարած գործունեության հետ: Ընկերության որոշ գործարքների հետ ծանոթ է, մասնավորապես թիվ 17 պայմանագրի և ցեսիայի պայմանագրի հետ: Որևէ տեղեկություն չունի «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն միջև կնքված պայմանագրերից: Իր՝ որպես տնօրենի պաշտոնակատար աշխատելու ժամանակահատվածում ընկերությունը որևէ ֆինանսական գործարք չի կնքել: Տեղյակ է, որ Վոլոդյա Վարդանյանը անհետացել է 2008թ. ապրիլին, սակայն նրա անհետացման մասին որևէ տեղեկություն չունի: Ինքն Աշոտ Հակոբյանին երբևէ սպառնալիքներ չի տվել: Նկատել է, որ Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը գտնվել են ջերմ հարաբերությունների մեջ: Պարզապես մեկ անգամ, ինքը և Թորգոմ Վարդանյանը ականատես են եղել, որ Վոլոդյա Վարդանյանն ու

Աշոտ Հակոբյանը բուռն քննարկումների մեջ են և Աշոտ Հակոբյանն ինչ-որ հաշվետվություն է պահանջել Վոլոդյա Վարդանյանից, իսկ վերջինս նախատել է Աշոտ Հակոբյանին՝ ինչ-որ անձանց սպառնալու համար: /դ.ն.ա./
Վկա Թորգոմ Վարդանյանն առաջին ատյանի դատարանում ցուցմունք է տվել այն մասին, հանդիսանում է Վոլոդյա Վարդանյանի որդին: Իր հայրն անհետացել է 24.04.2008թ.: «Իրավագարանտ» ՍՊԸ-ն տնօրենը եղել է հայրը՝ Վոլոդյա Վարդանյանը, իսկ բաժնետերերը՝ Վոլոդյա Վարդանյանը և Տիգրան Սահակյանը: Երբ ստանձնել է տնօրենի պարտականությունները՝ ծանոթացել է «Իրավագարանտ» ՍՊԸ-ն գործունեության հետ, սակայն տեղյակ չէ, թե Տիգրան Սահակյանն ընկերության գործառույթներին անմիջական մասնակցություն ունեցել է, թե ոչ: Տեղյակ չէ, թե կոնկրետ որքան գումար է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարից փոխանցվել «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարին, որը հավանաբար պետք է վերադարձվեր է 9-10 տարի հետո: Տեղյակ չէ, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ վարձակալության պայմանագիր է կնքել, ինչպես նաև չգիտի, որ այդ հարցերով զբաղվելու համար իր հայրը լիազորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի բաժնետերերի կողմից: Տեղյակ չէ նաև, թե իր հայրն ինչ պայմանագրեր է կնքել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն, «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ: Ինքն Աշոտ Հակոբյանին ուղարկված նամակով պահանջել է վաղաժամկետ վերադարձնել փոխատվության միջոցները և այժմ էլ պնդում է, որ Աշոտ Հակոբյանը «Իրավագարանտ» ՍՊԸ-ին պարտք է 42.435.000 դրամ գումար: Այդ մասին առկա է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշում: Ինքը երբևէ Իգոր Մանդելի բնակարան չի գնացել և նրան չի սպառնացել:
/դ.ն.ա./
Վերլուծելով ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանի, Իգոր Մանդելի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, համադրելով դրանք քրեական գործի դատական քննությամբ ձեռք բերված ու հետազոտված ապացույցների հետ, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրենց համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, առաջին ատյանի դատարանն իրավացիորեն գտել է, որ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի ցուցմունքները՝ խարդախություն չկատարելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտները չօրինականացնելու և փաստաթղթեր չկեղծելու մասին, ամբաստանյալ Իգոր Մանդելի ցուցմունքները՝ խարդախություն չկատարելու ու փաստաթղթեր չկեղծելու մասին, իրականությանը չեն համապատասխանում, քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու նպատակ են հետապնդում ու հերքվում են վերոհիշյալ ապացույցներով:
Քննարկելով պաշտպանության կողմի միջնորդությունը՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի 25.07.2007թ. արձանագրությունը և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տարածքը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը ամսեկան 700.000 դրամ գումարով 19.06.2007թ. կնքված վարձակալության պայմանագիրը լուսապատճեններ հանդիսանալու պատճառով ապացույցների ցանկից հանելու և անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին, Դատարանը պատճառաբանված կերպով գտել է անհիմն և մերժման ենթակա հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104 հոդվածի համաձայն, «1. Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի

մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: (…)»:
Նույն օրենսգրքի 115 հոդվածի համաձայն, 1. Իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել:(…)»:
Նույն օրենսգրքի 122 հոդվածի համաձայն, 1. Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները:
2. Սույն օրենսգրքի 115 հոդվածի առաջին մասում նշված հատկանիշներ պարունակող փաստաթղթերը կարող են ծառայել նաև որպես իրեղեն ապացույցներ: (…)»:
«Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի 25.07.2007թ. արձանագրությունը և. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տարածքը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը ամսեկան 700.000 դրամ գումարով 19.06.2007թ. կնքված վարձակալության պայմանագիրը որպես իրեղեն ապացույցներ են ճանաչվել վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, քրեադատավարական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ, դրանց բովանդակությունը վերաբերում է քրեական գործով ապացուցման ենթակա առարկային, դրանք թույլատրելի են և վերաբերելի: Այդ ապացույցները հետազոտվել են առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, որի պատճառով պաշտպանության կողմի վերոհիշյալ միջնորդությունը ենթակա է մերժման:
Վերլուծելով ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանին և Իգոր Մանդելին առաջադրված մեղադրանքները, նրանց ցուցմունքները և գործով ձեռք բերված ապացույցները՝ Դատարանն իրավացիորեն գտել է, որ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:
Դատարանն իրավացիորեն պացուցված է համարել նաև ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, նախապես հայտնի հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով գույքի փոխարկումն ու փոխանցումը, որը նպատակ է ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը, այդ արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:
Ապացուցված է նաև ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր կեղծելը, այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:
Ամբաստանյալ Իգոր Մանդելի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Ապացուցված է նաև ամբաստանյալ Իգոր

Մանդելի կողմից, նրա մեղավորությամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր կեղծելը, այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:
Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանն իր կատարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության համար ենթակա է պատժի ազատազրկման ձևով, ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասով նախատեսված, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից», քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանի 12.07.2011թ. որոշմամբ այդ դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորվում տուժողի (օրինական տիրապետողի) գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 5-րդ մասի և 31 հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:
Քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար նշանակված պատիժն ամբաստանյալ Իգոր Մանդելի կողմից կրելու հարցը՝ դատարանն իրավացիորեն գտել է, որ այդ հոդվածով, սույն դատավճռով նրա նկատմամբ ենթակա է կիրառման ՀՀ Ազգային ժողովի «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Աժ 2011թ. մայիսի 26-ի որոշումը:
Քննարկելով այն հարցը, թե արդյոք ամբաստանյալ Իգոր Մանդելը պետք է կրի իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը՝
Դատարանը գտել է հետևյալը.
ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի համաձայն, եթե դատարանը կալանքի, ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:
ՀՀ Վճռաբեկ դատարանն իր՝ 12.06.2007թ. թիվ ՎԲ-124/07 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառման կապակցությամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վկայակոչված հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում և դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել: ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու»: ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ 01.02.2008թ. թիվ ՎԲ-01/08 որոշմամբ նշել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի

նպատակների համատեքստում, այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը:
Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքները, որ Իգոր Մանդելն իր կողմից կատարված հանցագործությունների հետևանքով վնաս է հասցրել այն ընկերությանը, որի կեսից ավելի բաժնեմասի սեփականատերն է, որևէ գումար կամ հատուցում իր արարքների արդյունքում չի ստացել, վատառողջ է՝ 3-րդ խմբի հաշմանդամ է, տառապում է մի շարք հիվանդություններով, նախկինում դատված չի եղել, յոթանասուն տարեկան է, հաշվի առնելով նաև վերջինիս պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ Դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ նրա կողմից կատարված հանցագործության հանրորեն վտանգավորության աստիճանը նվազել է և հնարավոր է հանգել հետևության, որ Իգոր Մանդելի ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ նշանակվող ազատազրկման ձևով պատիժը կրելու, ուստի մեղադրողի միջնորդությունն այն մասին, որ նպատակահարմար չէ ազատազրկման ձևով պատիժը Իգոր Մանդելի կողմից կրելը և ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ, ազատազրկման ձևով պատիժը պետք է նրա նկատմամբ պայմանականորեն չկիրառվի՝ Դատարանն իրավացիորեն գտել է հիմնավոր:
Այս առումով տուժողների վերաքննիչ բողոքի պատճառաբանություններն այն մասին, որ Դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10, 48, 61 և 70 հոդվածների պահանջները՝ ամբաստանյալ Իգոր Մանդելի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով, ՀՀ վերաքննիչ դատարանը գտնում է անհիմն, քանի որ դրանք չեն համապատասխանում քրեական գործով ձեռք բերված ապացույցներին:
Քննարկելով տուժողներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի քաղաքացիական հայցերը՝ ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանից և Իգոր Մանդելից համապարտությամբ, հօգուտ իրենցից յուրաքանչյուրի 4.563.780 դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում բռնագանձելու մասին, դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ քաղաքացիական հայցերը պետք է թողնել առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 1-ին մասի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60 հոդվածի 1-ին մասի համաձայն, «Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով արգելված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս:»:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74 հոդվածի 1-ին մասի համաձայն, «Քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154 հոդվածի 1-ին մասի համաձայն, «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:»:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, «Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով:»:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158 հոդվածի 2-րդ մասի համաձայն, քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:»:
Սույն քրեական գործով տուժողներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի կողմից ներկայացված վերոհիշյալ հայցադիմումներով քաղաքացիական հայցվորները խնդրել են ամբաստանյալներից համապարտությամբ, հօգուտ իրենցից յուրաքանչյուրի բռնագանձել 4.563.780 դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում, մինչդեռ քրեական գործի առաջին ատյանի դատարանում կատարված դատական քննությամբ հաստատվել է, որ կնքված պայմանագրերի հիման վրա, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 դրամ ընդհանուր գումարից 176.000.000 դրամը Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը բանկային փոխանցումներով փոխանցել են մի շարք իրավաբանական և ֆիզիկական անձանց հաշվեհամարներին: Վերջիններս նույնպես ենթակա են ներգրավման վարույթին՝ քաղաքացիական հայցերը քննելիս:
Դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ վերոհիշյալ հիմնավորումներով և ողջամիտ ժամկետում քրեական գործի քննությունն ապահովելու նպատակով, ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանից և Իգոր Մանդելից հօգուտ քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի գումար բռնագանձելու վերաբերյալ քաղաքացիական հայցերը պետք է թողնել առանց քննության, ինչն արգելք չի հանդիսանում հայցերը հետագայում քաղաքացիական դատավարության կարգով հարուցելու համար:
Այս առումով տուժողների վերաքննիչ բողոքի պատճառաբանություններն այն մասին, որ Դատարանը խախտելով տուժողների և քաղաքացիական հայցվորների նյութական իրավունքը՝ անհիմն պատճառաբանություններով շրջանցել է հանցագործության հետևանքով իրենց պատճառված գույքային վնասը վերականգնելու հարցի լուծումը, դրանով իսկ խաթարելով արդարադատության բուն էությունը և սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, Վերաքննիչ դատարանը նույնպես համարում է անհիմն:
Վերոգրյալ հոդվածների բովանդակային վերլուծությունից և սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ամբաստանյալ Իգոր Մանդելիի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով

սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բավարար չափով ստուգման ու բազմակողմանի գնահատման է ենթարկել վերաքննիչ բողոքում մատնանշված բոլոր հանգամանքները, նրա կողմից կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այն, որ վերջինիս կողմից կատարված հանցագործությունների հետևանքով վնաս է հասցվել այն ընկերությանը, որի կեսից ավելի բաժնեմասի սեփականատերն է, որևէ գումար կամ հատուցում իր արարքների արդյունքում չի ստացել, նախկինում դատված չի եղել, 70 տարեկան, վատառողջ՝ 3-րդ խմբի հաշմանդամ է, տառապում է ՍԻՀ, աթերոսկլերոտիկ և հետինֆարկտային կարդիոսկլերոզ, լարվածության սթենոկարդիա, ՖԿ 2-րդ-3-րդ աստիճանի միտրալ փականի անբավարարություն (հերոհիմատիկ բնույթի) շողացող առիթմիա, խրոնիկական երկկողմանի պիէլոնեֆրիտ, երիկամների բազմաթիվ կիստաներ երկու կողմից, արտերիալ հիպերտենզիա 3-րդ աստիճանի՝ հաճախակի հիպերտոնիկ կրիզներով, ՇԱ 2-րդ աստիճանի աթերոսկլերոտիկ, հիպերտոնիկ հետինսուլտային էնցեֆալոպատիա 2-րդ աստիճանի, աջակողմյան պիրամիդային անբավարարությամբ, շագանակագեղձի ադենոմա, ողնաշարի կրծքային հատվածի դեֆորմացնող օստեոխոնդրոզ հիվանդություններով, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չարձանագրելով և հետազոտելով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ՝ իրավացիորեն վերջինիս նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10 հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից՝ համապատասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրա ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածով նախատեսված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին:

Ինչ վերաբերում է Դատարանի դատավճռով ամբաստանյալ Իգոր Մանդելի գույք վրա դրված կալանքը վերացնելուն, ապա Վերաքննիչ դատարանը չի անդրադառնում այդ հարցին, քանի որ տուժողներն իրենց վերաքննիչ բողոքի եզրափակիչ մասում նման պահանջ չեն դրել:

Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի, ուստի գտնում է, որ Դատարանի դատավճիռն օրինական է ու հիմնավորված և այն բեկանելու, իսկ բերված վերաքննիչ բողոքները բավարարելու օբյեկտիվ հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393, 394, հոդվածներով՝ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի, նրա պաշտպան Հենրիկ Մաղաքյանի, տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Ազիզ Ստեփանյանի, Մելանյա Նազարյանի, Նինա Պողոսյանի, Ալվարդ Արզումանյանի, Նազիկ Թադևոսյանի, Ռիմա Աղաջանովայի վերաքննիչ բողոքները մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. դեկտեմբերի 29-ի դատավճիռն՝ ըստ մեղադրանքի Աշոտ Ալեքսանի

	Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով ու Իգոր Արոնի Մանդելի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով: Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանին՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում: ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ Իսկականի հետ ճիշտ է՝ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	19-04-2012

Դատական ակտ:	Գործ ԵԿԴ/0319/01/10 Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012թ. ապրիլի 19-ին Երևան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Գ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ Հ. ՏԵՐ-ԱԴԱՄՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Լ. ՓՈԼԱԴՅԱՆԻ Մասնակցությամբ՝ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐ՝ Գ. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ Հ. ՄԱՂԱՔՅԱՆԻ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ Ի. ՄԱՆԴԵԼԻ ՏՈՒԺՈՂՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑՎՈՐՆԵՐ՝ Կ. ՂԱԶԱՐՅԱՆԻ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա. ՆԱԶԱՐՅԱՆԻ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ Մ. ՆԱԶԱՐՅԱՆԻ Ն. ՊՈՂՈՍՅԱՆԻ Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ Ն. ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ Ռ. ԱՂԱՋԱՆՈՎԱՅԻ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ Դռնբաց դատական նիստում քննելով ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով ու Իգոր Արոնի Մանդելի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ Դատարան/ 2011թ. դեկտեմբերի 29-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի, նրա պաշտպան

Հենրիկ Մաղաքյանի, տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Ազիզ Ստեփանյանի, Մելանյա Նազարյանի, Նինա Պողոսյանի, Ալվարդ Արզումանյանի, Նազիկ Թադևոսյանի, Ռիմա Աղաջանովայի վերաբերյալ քննիչ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.
22.05.2008թ. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 14114408 քրեական գործը:
02.06.2008թ. որոշմամբ Վոլոդյա Վարդանյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:
14.08.2009թ. թիվ 14114408 քրեական գործի նյութերով, ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է նոր քրեական գործ, ընդունվել է քննիչի վարույթ և քրեական գործին շնորհվել 14125709 համարը:
24.08.2009թ. որոշմամբ թիվ 14114409 քրեական գործը միացվել է թիվ 14125709 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է թիվ 14125709 համարի տակ:
12.04.2010թ. որոշմամբ Աշոտ Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով:
12.04.2010թ. որոշմամբ Աշոտ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, որի ժամկետը երկարացվել է մինչև 10.12.2010թ.:
21.04.2010թ. թիվ 14125709 քրեական գործն ուղարկվել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու համար և 23.04.2010թ. ընդունվել է ՀԿԳ ավագ քննիչի վարույթ:
21.10.2010թ. որոշմամբ Իգոր Մանդելը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով:
21.10.2010թ. որոշմամբ Իգոր Մանդելի և Ինգա Մանդելի կողմից, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված 176.000.000 դրամ գումարն օրինականացնելու և Ինգա Մանդելի կողմից, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցներին պատկանող, առանձնապես խոշոր չափերի գույքը՝ 176.000.000 դրամ գումարը, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, խաբեությամբ հափշտակելու վերաբերյալ վարույթի մասը կարճվել է՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:
25.10.2010թ. որոշմամբ Աշոտ Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով՝ նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել վերջինիս առաջադրված մեղադրանքի նկարագրական մասում կատարել փոփոխություններ:
03.11.2010թ. որոշմամբ թիվ 14125709 քրեական գործից անջատվել է Վոլոդյա Վարդանյանի կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված 176.000.000 դրամ գումարն Աշոտ Հակոբյանի հետ հանցավոր համաձայնությամբ օրինականացնելու, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն

	մասնակիցներին պատկանող, առանձնապես խոշոր չափերի գույքը՝ 176.000.000 դրամ գումարն Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ նախնական համաձայնությամբ, խաբեությամբ հափշտակելու ու նրանց հետ նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող փաստաթուղթ՝ 25.07.2007թ. ամսաթվով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ժողովի արձանագրությունը կեղծելու, Արման և Արամ Վարդանյանների կողմից Արման Հակոբյանին ծեծի ենթարկելու և վիրավորանք հասցնելու, Իգոր Մանդելին ու Աշոտ Հակոբյանին սպանության սպառնալիքներ հասցնելու դեպքերի վերաբերյալ մասը և նախաքննությունը շարունակվել է նույն համարի տակ: 22.11.2010թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Դատարանի 29.12.2011թ. դատավճռով ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 8 տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի չորրորդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից», 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 6 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 325 հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 2 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածով սահմանված պատիժների մասնակի գումարման սկզբունքի կիրառմամբ, ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 11 տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի չորրորդ մասով նախատեսված, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»՝ պատժի սկիզբը հաշվելով 10.04.2010թ.-ից: Խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Ամբաստանյալ Իգոր Մանդելը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 325 հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 1 տարի ժամկետով: «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011թ. որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ, ամբաստանյալ Իգոր Մանդելը ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման համար նշանակված պատիժը կրելուց: «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011թ. որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառմամբ, Իգոր Մանդելի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը՝ 5 տարի ժամկետով ազատազրկումը, կրճատվել է մեկ քառորդով և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 3 տարի 9 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ, ամբաստանյալ Իգոր Մանդելի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված նշանակված պատիժը՝ 3 տարի

9 ամիս ժամկետով ազատազրկումը, պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 5 տարի ժամկետով՝ պարտավորեցնելով վերջինիս չփոխել մշտական բնակության վայրը՝ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնելով ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա:
Խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Քաղաքացիական հայցվորներ Կ. Ղազարյանի, Ա. Ավետիսյանի, Ա. Նազարյանի, Ա. Ստեփանյանի, Մ. Նազարյանի, Ն. Պողոսյանի, Ա. Արզումանյանի, Ն. Թադևոսյանի և Ռ. Աղաջանովայի քաղաքացիական հայցերը թողնվել են առանց քննության:
Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի գույքի վրա նախաքննական մարմնի 26.03.2008թ. և 10.11.2009թ. որոշումներով դրված կալանքը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի կատարումը, իսկ ամբաստանյալ Իգոր Մանդելի գույքի վրա 26.03.2008թ. որոշմամբ դրված կալանքը վճռվել է վերացնել:
Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, 01.11.2010թ. որոշմամբ իրեղեն ապացույցներ ճանաչված փաստաթղթերը վճռվել է պահել քրեական գործի հետ միասին:
Դատարանի 29.12.2011թ. դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը, նրա պաշտպան Հենրիկ Մաղաքյանը, տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանը, Արուսյակ Ավետիսյանը, Անուշ Նազարյանը, Ազիզ Ստեփանյանը, Մելանյա Նազարյանը, Նինա Պողոսյանը, Ալվարդ Արզումանյանը, Նազիկ Թադևոսյանն ու Ռիմա Աղաջանովան:

2.Գործի փաստական հանգամանքները
Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանին նախաքննական մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել այն բանի համար. <<որ նա՝ 2007թ. մայիս ամսին, համաձայնության է եկել ծանոթի՝ թվով 20 անձանց կողմից հիմնադրված «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հիմանդիրներից մեկի, ընկերության բաժնեմասի 50,4 տոկոսի մասնակցի և տնօրենի՝ Իգոր Մանդելի հետ՝ հափշտակելու «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ը պատկանող գումարները, որոնք պետք է գոյանային «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն Շենգավիթի մասնաճյուղին Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու միջոցներից: Հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, Իգոր Մանդելի հետ որոշել են այդ գործին մասնակից դարձնել տնտեսագիտության բնագավառում համապատասխան գիտելիքներ ունեցող, «Եվրոֆինանս» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների հիմնադիր-տնօրեն Վոլոդյա Վարդանյանին, որի հետ այդ առումով եկել են հանցավոր համաձայնության ու նպատակադրվել ընկերության բաժնետերերին ներկայացնել, որ բանկին տրվելիք տարածքի վարձակալության ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ՝ իրական 2.450.000 դրամի փոխարեն: Կազմակերպվող հանցագործության կատարումը դյուրին դարձնելու, ստացված գումարներին միանգամից տիրանալու համար, վերջինս խորհուրդ է տվել բանկից միանվագ ստանալ տարածքի վարձակալության 10 տարվա վճարը: Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին բանկի ներկայացուցիչների հետ չկարողանալով այդ առումով գալ համաձայնության՝ որոշել են բանկից վերցնել որոշված վարձավճարի չափի մարման 10 տարվա հաշվարկով վարկ: 2007թ. մայիսի վերջին, Վոլոդյա Վարդանյանի հետ մասնակից է դարձել Իգոր Մանդելի կողմից հրավիրված «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն բաժնետերերի ընդհանուր ժողովին և Վոլոդյա Վարդանյանի ու Իգոր Մանդելի հետ միասին բաժնետերերին խաբեությամբ ներկայացրել է, որ բանկին տրվելիք տարածքի վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ: Իգոր Մանդելի հետ նաև ներկայացրել է,

որ Վոլոդյա Վարդանյանն ունի տնտեսագիտական պատշաճ գիտելիքներ և առաջարկել է բանկի հետ կատարվելիք գործարքի իրականացման համար ընկերության անունից, որպես լիազոր անձ, հանդես գա նա: Իգոր Մանդելն ընկերության բաժնետերերի հետ ստորագրությամբ վավերացրել է ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով որոշվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ հանձնելու հարցը: Իգոր Մանդելը բաժնետերերի հետ միասին Վոլոդյա Վարդանյանին է տվել լիազորագիր՝ գործարքի իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթավորման գործողությունները նրա կողմից կատարելու համար: 21.05.2007թ. ամսաթվով նշված արձանագրության և 11.06.2007թ. ամսաթվով նշված լիազորագրի հիման վրա, Վոլոդյա Վարդանյանի անունից «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ներկայացուցչի հետ 19.06.2007թ. կնքվել է պայմանագիր՝ նշված տարածքը բանկին 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 դրամ վճարի չափով վարձակալությամբ հանձնելու մասին, սակայն Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ընկերության բաժնետերերին է ներկայացրել վարձակալության կեղծված տվյալով պայմանագիր, որտեղ տարածքի համար նախատեսված ամսեկան վարձավճարի չափը նշված է եղել 700.000 դրամ: Ընկերության ունեցած տարբեր պարտքերը մարելու, այդ թվում նաև բաժնետեր-աշխատակիցների աշխատավարձերը վճարելու, հարկային պարտավորությունների վճարումներ կատարելու պատրվակով, Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին համոզել է մյուս բաժնետերերին՝ ընկերության սեփականություն հանդիսացող, վերոհիշյալ հասցեում տեղակայված ողջ տարածքը գրավադրելով, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից վերցնել վարկ՝ ներկայացնելով, որ դրա չափն իբր կազմելու է 16.000.000 դրամ՝ 23 ամսում այն մարելու պայմանով: Սակայն Վոլոդյա Վարդանյանի և Իգոր Մանդելի հետ կազմել է վերջինիս ստորագրությամբ և ընկերության մասնակից՝ Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ 25.07.2007թ. ամսաթվով ընկերության մասնակիցների ժողովի արձանագրություն՝ իրավունք վերապահող պաշտոնական կեղծ փաստաթուղթ, թե ընկերության մասնակիցներն իբր անցկացնելով ընդհանուր ժողով, որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Բագրատունյաց 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող 508,1 քմ մակերեսով դեղատունը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով, ստանալ 193.407.000 դրամի վարկ: Հիշյալ կեղծված փաստաթուղթն օգտագործելով՝ Իգոր Մանդելը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անունից «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ 25.07.2007թ. և 26.07.2007թ. կնքել է բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրեր՝ իբր սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով բանկի կողմից ընկերությանը 10 տարի մարման ժամկետով, 9 տոկոս տոկոսադրույքով, դեղատան տարածքը գրավադրելով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, 193.407.000 դրամ գումարի նպատակային վարկ տրամադրելու մասին: Այդպիսով, խախտելով «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, այդ թվում նաև 48-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն կանոնադրությամբ հաստատված մի շարք դրույթները, առանց «Շենգավիթ-Ա» ՍՊԸ ընդհանուր ժողովի որոշման՝ Վոլոդյա Վարդանյանի հետ մասնակից է դարձել Իգոր Մանդելի միջոցով ընկերության անունից կատարելու անհիմն խոշոր գործարք: Կնքված պայմանագրերի հիման վրա, «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկը 30.07.2007թ. փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան»

ՓԲԸ-ում բացված ընթացիկ հաշվին, որից հետո Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ավարտին է հասցրել իրենց հանցավոր ծրագիրը՝ «Շենգավիթ-Ա» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ների միջև կազմված՝ փոխառությամբ գումարներ տրամադրելու մասին անհիմն պայմանագրով քողարկելով հանցագործության կատարումը, ստացված վարկի գումարներից 176.000.000 դրամը 31.07.2007թ. փոխանցել են Վոլոդյա Վարդանյանի տնօրինած «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն անվամբ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գործող հաշվեհամարին՝ այդպիսով խաբեությամբ հափշտակելով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին արդեն իսկ պատկանող առանձնապես խոշոր չափ հանդիսացող այդ գումարը, իսկ 16.020.700 դրամը հաջորդ օրը՝ 01.08.2007թ. փոխանցել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն «Արարատ բանկ» ԲԲԸ-ում գործող հաշվեհամարին: Նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հափշտակված գումարների իրական բնույթը և պատկանելիությունը՝ համաձայնության է եկել Վոլոդյա Վարդանյանի հետ՝ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարին առկա այդ հափշտակված գումարները կոնվերտացնելու և այլ հաշվեհամարներին փոխանցելու գործում, որից հետո, 06.08.2007թ.-ից մինչև 23.01.2008թ.-ն ընկած ժամանակահատվածում, Վոլոդյա Վարդանյանը հափշտակված գումարներից 69.500.000 դրամը 5 դեպքով, փոխառության գումարների անվան տակ, փոխանցել է վերջինիս անվամբ բացված անձնական հաշվին, 37.385.000 դրամը 3 դեպքով, փոխառության գումարների անվան տակ, փոխանցել է Իգոր Մանդելի դստեր՝ Ինգա Մանդելի անձնական հաշվին, 505.000 դրամը 2 դեպքով, փոխառության գումարների անվան տակ փոխանցել է բարեկամի՝ Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, 34.425.000 դրամը, նորից փոխառության գումարների անվան տակ, 2 դեպքով փոխանցել է իր անձնական հաշվին, իսկ 33.000.000 դրամը՝ իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվին: Այնուհետև, «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվեհամարին առկա հիշյալ գումարը, ևս 3.000.000 դրամի հետ Վոլոդյա Վարդանյանի մասնակցությամբ փոխանցել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն հաշվին՝ խողովակների ձեռք բերման պատրվակով: Նշված ժամանակահատվածում, Վոլոդյա Վարդանյանը հափշտակված և անձնական հաշվին փոխանցված գումարների մի մասը փոխարկել է տարադրամով՝ դրանք տեղաշարժելով տարադրամային հաշվին, գումարներից մի մասը բանկային փոխանցումով ուղարկել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղում բնակվող բարեկամուհու՝ Անժելա Ավագյանի հաշվին, իսկ մյուս մասն էլ կանխիկ ստացել է հաշվեհամարներից: Այդ ընթացքում, ստացել է Վոլոդյա Վարդանյանի անձնական հաշվից իր հաշվեհամարին փոխանցված 7.860.000 դրամը, կանխիկացրել է իր հաշվեհամարում առկա ամբողջ 42.285.000 դրամը և Ինգա Մանդելի անձնական հաշվեհամարին փոխանցված գումարներից 37.074.000 դրամը և 22.11.2007թ. կնքված առուվաճառքի պայմանագրով, այդ ամբողջ գումարով ձեռք է բերել և որպես անձնական սեփականություն գրանցել Երևանի Այվազովսկու փողոցի 46/1 հասցեով գտնվող անշարժ գույքը՝ գործարքի շուրջ կնքված պայմանագրում նշելով, որ այն ձեռք է բերվել ընդամենը 48.000.000 դրամով:»:

Ամբաստանյալ Իգոր Մանդելին նախաքննական մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել այն բանի համար. <<որ նա, հանդիսանալով թվով 20 անձանց կողմից հիմնադրված «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հիմանդիրներից մեկը, ընկերության բաժնեմասի 50,4 տոկոսի մասնակիցը և տնօրենը, 2007թ. մայիս ամսին, համաձայնության է եկել ծանոթի՝ Աշոտ Հակոբյանի հետ՝ հափշտակելու «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին պատկանող գումարները, որոնք պետք է գոյանային «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն Շենգավիթի մասնաճյուղին Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու միջոցներից: Հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, Աշոտ Հակոբյանի հետ որոշել են այդ գործին մասնակից դարձնել տնտեսագիտության

	բնագավառում համապատասխան գիտելիքներ ունեցող, «Եվրոֆինանս» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների հիմնադիր-տնօրեն Վոլոդյա Վարդանյանին, որի հետ այդ առումով եկել են հանցավոր համաձայնության ու նպատակադրվել ընկերության բաժնետերերին ներկայացնել, որ բանկին տրվելիք տարածքի վարձակալության ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ՝ իրական 2.450.000 դրամի փոխարեն: Կազմակերպվող հանցագործության կատարումը դյուրին դարձնելու, ստացված գումարներին միանգամից տիրանալու համար, վերջինս խորհուրդ է տվել բանկից միանվագ ստանալ տարածքի վարձակալության 10 տարվա վճարը: Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին բանկի ներկայացուցիչների հետ չկարողանալով այդ առումով գալ համաձայնության՝ որոշել են բանկից վերցնել որոշված վարձավճարի չափի մարման 10 տարվա հաշվարկով վարկ: 2007թ. մայիսի վերջին, հրավիրելով ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով՝ դրան մասնակից է դարձրել Աշոտ Հակոբյանին և Վոլոդյա Վարդանյանին ու նրանց հետ միասին բաժնետերերին խաբեությամբ ներկայացրել է, որ բանկին տրվելիք տարածքի վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ: Աշոտ Հակոբյանի հետ նաև ներկայացրել է, որ Վոլոդյա Վարդանյանն ունի տնտեսագիտական պատշաճ գիտելիքներ և առաջարկել է բանկի հետ կատարվելիք գործարքի իրականացման համար ընկերության անունից, որպես լիազոր անձ, հանդես գա նա: Ընկերության բաժնետերերի հետ ստորագրությամբ վավերացնելով ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով որոշվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը պատկանող, Երևանի Բագրատունյաց 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը վարձակալությամբ հանձնելու հարցը, բաժնետերերի հետ միասին Վոլոդյա Վարդանյանին է տվել լիազորագիր՝ գործարքի իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթավորման գործողությունները նրա կողմից կատարելու համար: 21.05.2007թ. ամսաթվով նշված արձանագրության և 11.06.2007թ. ամսաթվով նշված լիազորագրի հիման վրա, Վոլոդյա Վարդանյանի անունից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ներկայացուցչի հետ 19.06.2007թ. կնքվել է պայմանագիր՝ նշված տարածքը բանկին 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 դրամ վճարի չափով վարձակալությամբ հանձնելու մասին, սակայն Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի հետ միասին ընկերության բաժնետերերին է ներկայացրել վարձակալության կեղծված տվյալով պայմանագիր, որտեղ տարածքի համար նախատեսված ամսեկան վարձավճարի չափը նշված է եղել 700.000 դրամ: Ընկերության ունեցած տարբեր պարտքերը մարելու, այդ թվում նաև բաժնետեր-աշխատակիցների աշխատավարձերը վճարելու, հարկային պարտավորությունների վճարումներ կատարելու պատրվակով, Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին համոզել է մյուս բաժնետերերին՝ ընկերության սեփականություն հանդիսացող, վերոհիշյալ հասցեում տեղակայված ողջ տարածքը գրավադրելով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից վերցնել վարկ՝ ներկայացնելով, որ դրա չափն իբր կազմելու է 16.000.000 դրամ՝ 23 ամսում այն մարելու պայմանով: Սակայն Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի հետ կազմել է իր ստորագրությամբ ու ընկերության մասնակից Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ 25.07.2007թ. ամսաթվով ընկերության մասնակիցների ժողովի արձանագրություն՝ իրավունք վերապահող պաշտոնական կեղծ փաստաթուղթ, թե ընկերության մասնակիցներն իբր անցկացնելով ընդհանուր ժողով՝ որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող, Բագրատունյաց 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող 508,1 քմ մակերեսով դեղատունը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով, ստանալ 193.407.000 դրամի վարկ: Հիշյալ կեղծված փաստաթուղթն օգտագործելով, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անունից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»

ՓԲԸ-ն հետ 25.07.2007թ. և 26.07.2007թ. կնքել է բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրեր՝ իբր սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով բանկի կողմից ընկերությանը 10 տարի մարման ժամկետով, 9 տոկոս տոկոսադրույքով, դեղատան տարածքը գրավադրելով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, 193.407.000 դրամ գումարի նպատակային վարկ տրամադրելու մասին: Այդպիսով, խախտելով «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, այդ թվում նաև 48-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն կանոնադրությամբ հաստատված մի շարք դրույթները, առանց «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն ընդհանուր ժողովի որոշման, ընկերության անունից կատարել է անհիմն խոշոր գործարք: Կնքված պայմանագրերի հիման վրա, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկը 30.07.2007թ. փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված ընթացիկ հաշվին, որից հետո Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին ավարտին է հասցրել իրենց հանցավոր ծրագիրը՝ «Շենգավիթ-Ա» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ների միջև կազմված՝ փոխառությամբ գումարներ տրամադրելու մասին անհիմն պայմանագրով քողարկելով հանցագործության կատարումը, ստացված վարկի գումարներից 176.000.000 դրամը 31.07.2007թ. փոխանցել են Վոլոդյա Վարդանյանի տնօրինած «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն անվամբ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գործող հաշվեհամարին՝ այդպիսով խաբեությամբ հափշտակելով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ին արդեն իսկ պատկանող առանձնապես խոշոր չափ հանդիսացող այդ գումարը, իսկ 16.020.700 դրամը հաջորդ օրը՝ 01.08.2007թ., փոխանցել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն «Արարատ բանկ» ԲԲԸ-ում գործող հաշվեհամարին:»:

2/. Վերաքննիչ բողոքների հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով:

1. Տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանը, Արուսյակ Ավետիսյանը, Անուշ Նազարյանը, Ազիզ Ստեփանյանը, Մելանյա Նազարյանը, Նինա Պողոսյանը, Ալվարդ Արզումանյանը, Նազիկ Թադևոսյանն ու Ռիմա Աղաջանովան իրենց վերաքննիչ բողոքում նշել են, որ 29.12.2011թ. դատավճռի դեմ բողոք են բերում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով և խնդրում են այն բեկանել ու փոփոխել հետևյալ պատճառաբանությամբ՝

Դատարանը խախտելով տուժողների և քաղաքացիական հայցվորների նյութական իրավունքը՝ անհիմն պատճառաբանություններով շրջանցել է նրանց հանցագործության հետևանքով պատճառված գույքային վնասը վերականգնելու հարցի լուծումը, դրանով իսկ խաթարելով արդարադատության բուն էությունը և սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 58 հոդվածի 1-ին մասի, 60 հոդվածի 1-ին մասի, 74 հոդվածի պահանջների համաձայն, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի (Ալեքսանդր Գասպարյանի վերաբերյալ քրեական գործով կայացրած 26.10.2007թ. թիվ ՎԲ–180/07 որոշման 4-րդ մասում նշվում է, որ «Քրեական դատավարությունում քաղ. հայցի քննության հիմքում ընկած միասնական իրավաբանական փաստը՝հանցագործությունը, որի կատարման համար անձը ենթարկվում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիաիրավական պատասխանատվության այն դեպքերում, երբ առկա է հանցագործությամբ պատճառված գույքային վնաս: Դատարանը, ապացուցված համարելով

մեղադրյալի մեղքը կատարված հանցագործության մեջ, ինչպես նաև պատճառական կապը հանցավոր արարքի և հասցված վնասի միջև, քաղ. հայցի հարցը լուծում է՝ գնահատելով պատշաճ կերպով ներկայացրած հայցադիմումի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքը»:
Ըստ բողոքաբերների, տվյալ քրեական գործով Դատարանն ամբաստանյալներին մեղավոր ճանաչելով իրենց մեղսագրվող բոլոր արարքներում, որոնց հետևանքով տուժողներին պատճառվել է գույքային վնաս՝ այդուհանդերձ առանց քննության է թողել քաղ. հայցը, այն պարագայում, երբ հանցագործության հետևանքով տուժողներին պատճառված վնասի չափը հստակ պարզված էր դատահաշվապահական փորձաքննության եզրակացությամբ և տուժողները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158 հոդվածի 3-րդ մասի պահանջների պահպանմամբ՝ սահմանված կարգով պատճառված վնասն ամբաստանյալներից համապարտության կարգով բռնագանձելու իրավաչափ պահանջ էին ներկայացրել:
Դատարանը, որպես ապացույց հետազոտելով դատահաշվապահական փորձաքննության 29.10.2009թ. թիվ 10040909/31010909 եզրակացությունը, այդուհանդերձ այն գնահատել է ոչ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ՝ չանդրադառնալով դրա հետևություն բաժնի թիվ 5-րդ հարցի քննարկմանն ու լուծմանը՝ դրանով իսկ թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտում:
Ինչ վերաբերում է Դատարանի կողմից մատնանշած այն հանգամանքին, որ այդ հափշտակված գումարները փոխանցվել են այլ անձանց հաշվեհամարներին, որոնք նույնպես ենթակա են ներգրավման վարույթին, որևէ իրավական նշանակություն չի կարող ունենալ տվյալ գործի շրջանակում քաղ. հայցը լուծելիս, քանի որ տվյալ դեպքում քաղ. հայց չի կարող հարուցվել և այլ անձինք չեն կարող քաղ. պատասխանող ներգրավվել ու գույքային պատասխանատվություն կրել ամբաստանյալների գործողությունների համար (Տես նաև, ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.09.2008թ. թիվ ՎԲ-43/08 որոշում):
Հանցավոր ճանապարհով ստացված գույքը՝ 176.000.000 դրամը, հափշտակվել է սեփականատիրոջից, հետևաբար, հափշտակված 176.000.000 դրամի մասերը կազմող գումարները ստացած կամ ձեռք բերող անձանցից ևս այդ գումարները ենթակա են բռնագանձման հօգուտ սեփականատիրոջ, և այդ երրորդ անձինք, որոնց փոխանցվել է հանցավոր ճանապարհով ստացված գումարի մի մասը, չեն օգտվում բարեխիղճ ձեռք բերողի իրավունքներից, ուստի և չեն կարող ներգրավվել ըստ ՀՀ քրեական օրենսգրքի, պարտադիր բռնագրավման ենթակա հանցավոր ճանապարհով ստացված, հափշտակված գույքի հանձնման կապակցությամբ իրականացվող քաղաքացիական որևէ դատավարության:Ավելին, դատարանը վերացրել է նույնիսկ ամբաստանյալ Իգոր Մանդելի գույքի վրա 26.03.2008թ որոշմամբ դրված կալանքը՝ ստեղծելով բոլոր նախադրյալները՝ օրենքով սահմանված կարգով հանցագործությունից պատճառված տուժողների վնասի փաստացի չվերականգնման համար:
Դատավճռով սահմանվել է ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավում, սակայն չի նշել, թե հօգուտ ում պետք է բռնագրավի կամ այն առաջնային կարգով ում շահերի բավարարմանն է ուղղվելու:
ՀՀ Սահմանադրական դատարանը 12.07.2011թ. ՍԴՈ-983 որոշմամբ եզրահանգել է՝ որ «Հաշվի առնելով, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը, այդ գույքի բռնագրավման պարագայում, բռնագրավման հասկացության ընկալումը ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 1-ին մասի իմաստով, այն է՝ որպես բռնագրավվող գույքի անհատույց անցում ի սեփականություն պետության

անթույլատրելի է, քանի որ նման ընկալման դեպքում բռնագրավման միջոցառումն անմիջականորեն ուղղվում է տուժողի սեփականության իրավունքի դեմ՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով նրա սեփականության իրավունքը:
Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ գույքն անհատույց պետության սեփականությանը հանձնելն արգելափակում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի հաշվին տուժողների գույքային շահերի բավարարման և խախտված սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը» (տես որոշման 9-րդ կետ):
Դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10, 48, 61 և 70 հոդվածների պահանջները՝ ամբաստանյալ Իգոր Մանդելի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով՝ հետևալ պատճառաբանությամբ, մասնավորապես՝ վերջինս առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, գործուն չի զղջացել, նախաքննության ընթացքում, ինչպես նաև դատարանում հրաժարվել է ցուցմունքներ տալուց, որևէ կերպ չի աջակցել իրավապահ մարմիններին՝ հանցագործության բացահայտելու գործում, որևէ ձևով չի փորձել հատուցել տուժողներին հանցագործության արդյունքում պատճառված վնասները,
ՀՀ Վճռաբեկ դատարանը (Ալեքսան Սարգսյանի վերաբերյալ քրեական գործով) կայացրած 02.06.2009թ. թիվ ՀՅՔՈԴ 3/0109/01/08 որոշման 31-րդ կետում նշում է, որ «ՀՀ Վճռաբեկ դատարանը սեփականաթյան դեմ ուղղված հանցագործությունների շարքում, հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման համար էական՝ նշանակություն է համարում պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնած լինելու հանգամանքը»:
Բողոքաբերները գտնում են Իգոր Մանդելի 70 տարեկան լինելը, նախկինում դատվածություն չունենալն ամենևին էլ չի նվազեցնում անձի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Ինչ վերաբերում է նրա 3-րդ կարգի հաշմանդամության և մի շարք հիվանդություններով տառապելու փաստը հաստատող փաստաթղթերին, ապա այդ հանգամանքը բավական կասկածելի է, քանի որ նման հիվանդություններով տառապող անձն ուղղակի ի վիճակի չէր լինի ոչ միայն ներկայանալ դատական նիստերին, այլև շարունակել աշխատել, որպես ընկերության տնօրեն և հաշվապահ՝ հաճախելով աշխատանքի:
Ելնելով ՀՀ Սահմանադրության 3, 18, 19, 20 և 31 հոդվածների պահանջներից, ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման պարզաբանումներից, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված քրեական օրենսգրքի խնդիրների ապահովման անհրաժեշտությունից՝ բողոքաբերները գտնում են, որ ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածը, թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ սկզբունքային հանդիսացող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394 հոդվածի 2-ին մասի երկրորդ կետով և 398 հոդվածով՝ բողոքաբերները խնդրում են՝
1. Վերացնել դատավճռի վճռեց մասի 1-ին կետում սահմանված բացառությանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասով նախատեսված «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթի կիրառման մասով:
2. Մասնակիորեն բեկանել 29.12.2011թ. դատավճիռը հետևյալ մասերով. ա/քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու մասով՝ կայացնելով տուժողներին պատճառված գույքային վնասի վերականգնման վեբաբերյալ դատական ակտ: բ/ ամբաստանյալ

Իգոր Մանդելի նկատմամբ սահմանված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով՝ կիրառելով նշանակված պատիժը:
2. Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ Դատարանի դատավճիռն անհիմն է, չի բխում գործի փաստական հանգամանքներից և այն ամբողջությամբ պետք է բեկանվի հետևյալ պատճառաբանությամբ՝
Ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում ինքն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունքներ է տվել, որ ոչ միայն որևէ գումար հափշտակելու համար որևէ մեկի հետ նախապես համաձայնության չի եկել, այլև ակտիվ գործողություններով միջոցներ է ձեռնարկել <<Շենգավիթ Ա>> ՍՊԸ-ն գումարներն այլ անձանց հափշտակությունից փրկելու և ընկերությանը վերադարձնելու ուղղությամբ:
Բողոքաբերը գտնում է, որ եթե դատավճռում նշվածը ճիշտ է և ժողովի արձանագրությունը կեղծված է, ապա <<Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան>> ՓԲԸ-ից ստացված վարկը անօրինական է և այդ գործարքն ըստ օրենքի անվավեր է: Այդ դեպքում որպես տուժող պետք է հանդես գային ոչ թե ընկերության մասնակիցները, այլ բանկը, տվյալ դեպքում գործի քննությունը պետք է այլ ընթացք ստանար և արարքին այլ որակում կտրվեր:
Ըստ բողոքաբերի ոչ օբյեկտիվ և միակողմանի քննությամբ որևէ ապացույց ձեռք չի բերվել այդ արարքներին իր մասնակցության վերաբերյալ: Սակայն գործում առկա են անվիճելի փաստեր, որոնք վկայում են, որ ոչ միայն ընկերության մասնակիցների ժողովի արձանագրությունը համապատասխանում է իրականությանը, այլև վերջիններս շահագրգռված են եղել այդ վարկը ստանալու հարցում, ինչի ապացույցն է այն փաստը, որ ընկերության մասնակիցները քաղաքացիական հայցեր են ներկայացրել ոչ թե ընկերության օգտին, այլ հօգուտ իրենց բռնագանձելու պահանջով:
Բողոքաբերը նշում է, որ եթե ինքը մտադրություն ունենար որևէ մեկի հետ համաձայնությամբ կամ միայնակ գումարներ հափշտակելու, ապա չէր համաձայնվի փոխառության պայմանագրերով այդ գումարները վերցնել, քանի որ գիտակցել է, որ այդ գումարները ցանկացած պահի կարող են հետ պահանջել, ինչն իրականում տեղի է ունեցել: Եթե ինքը մտադրություն ունենար գումարներ հափշտակել, ապա կթաքցներ դրանք, այլ ոչ թե կդներ իցույց բոլորի:
Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածին, ապա ըստ բողոքաբերի այն աբսուրդ է, քանի որ ինքն որևէ գումարի հափշտակությանը, դրանց պատկանելիությունը խեղաթյուրելու և թաքցնելու գործողություններին չի մասնակցել, այլ բացահայտել է:
Բողոքաբերը գտնում է, որ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18, 21, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17, 18, 25, 104, 105, 107, 115, 122, 124, 126, 127, 358, 360 հոդվածների, <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի բազմաթիվ որոշումների պահանջները՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Դատարանի դատավճիռը, իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով կայացնել արդարացման վճիռ, գործի վարույթը կարճել կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:
3. Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի պաշտպան Հ. Մաղաքյանն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ եթե Աշոտ Հակոբյանին առաջադրված մեղադրանքները հիմնավորված են և իրականում Անուշ Նազարյանի ստորագրությունը կեղծված է, ապա այդ դեպքում, արդյոք քրեական հետապնդում իրականացնող մարմինները կատարել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 3-րդ մասի պահանջները և ձեռնարկել են սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի

	հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել են ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող հանգամանքները: Ըստ բողոքաբերի, ելնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154 հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 հոդվածի, 306 հոդվածի 2-րդ մասի, 313 հոդվածի 1-ին մասի պահանջներից, եթե ընդունենք, որ 193.407.000 դրամ վարկ ստանալու համար հիմք հանդիսացած 25.07.2007թ. ընկերության մասնակիցների ժողովի արձանագրությունը կեղծվել է, ապա այդ պայմանագիրը վերը նշված հոդվածների ուժով անօրինական է, շահագրգիռ անձանց հայցով այն կարող է ճանաչվել անվավեր, հետևապես այն ընկերության մասնակիցների համար որևէ իրավական հետևանք ունենալ չի կարող: Ավելին, եթե ինչ-որ մեկն արձանագրությունը կեղծելով, հետևաբար նաև անօրինական վարկային պայմանագիր կնքելով, բանկից գումար է ստացել և հափշտակել, ապա այդ գումարների համար, բնականաբար ընկերությունը, ի դեմս բաժնետերերի, որևէ պատասխանատվություն կրել, ինչպես նաև այդ գումարների նկատմամբ պահանջներ ներկայացնել չեր կարող, այլ որպես տուժող պետք է հանդես գար միայն բանկը: Բողոքաբերը նշել է, որ ընկերության մասնակիցները հիմնական քարկոծման թիրախը դարձրել են Աշոտ Հակոբյանին, երբ գործում որևէ ապացույց չկա նրա կողմից փաստաթուղթ կեղծելու և պայմանագրերի կնքմանը մասնակցելու վերաբերյալ, այն դեպքում, երբ վերջինս ոչ միայն հնարավորություն է ստեղծել հափշտակված գումարները վերադարձնելու համար, այլև իր կողմից կատարած կտրուկ քայլերով խոչընդոտել է այլ անձանց կողմից ավելի ծանր հանցագործություններ կատարելուն: Ըստ բողոքաբերի, դատարանի այն պատճառաբանությունը, որ իբր «...նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հափշտակված գումարների իրական բնույթն ու պատկանելիությունը, Աշոտ Հակոբյանը համաձայնության է եկել Վոլոդյա Վարդանյանի հետ «Եվրոֆինանս» ԱՊԸ-ն հաշվեհամարին առկա այդ հափշտակված գումարները կոնվերտացնելու և այլ հաշվեհամարներին փոխանցելու գործում...» ոչ միայն անհիմն է, քանի որ 25.07.2007թ. ընկերության մասնակիցների ժողովի արձանագրության կեղծ լինելու հանգամանքը ապացուցված չլինելու պայմաններում, չի կարելի խոսել «հափշտակված գումարների» պատկանելիությունը և իրական բնույթը խեղաթյուրելու նպատակով կոնվերտացնելու մասին, դատարանի հետևությունները հիմնված են լոկ ենթադրությունների և չփարատված կասկածների վրա: Աշոտ Հակոբյանի ջանքերով է, որ մինչ օրս իր կողմից, իր անվամբ գնված անշարժ գույքը չի օտարվել, չի բռնագրավվել, հնարավոր է դարձել այն վերադարձնել օրինական տիրոջը: Բողոքաբերը գտնում է, որ Աշոտ Հակոբյանի կողմից իր անվամբ, փոխառության պայմանագրերով ստացված գումարներով կարող էր անշարժ գույք գնվել միայն երկու պարագայում, առաջինը, երբ նա այդ գումարների հանցավոր ծագման վերաբերյալ կասկած չի ունեցել և դրա հնարավոր կորստի համար մտավախություն չի ունեցել, և երկրորդ՝ երբ նա իմացել է այդ գումարների հանցավոր ծագման մասին, սակայն այն հափշտակելու նպատակ չունենալու համար չի թաքցրել, այլ վերադարձնելու նպատակ է ունեցել, բոլորին ի ցույց է դրել: Ըստ բողոքաբերի դատավճիռն կայացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 29 հոդվածի 2-րդ մասի, 44 հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17, 18, 35 հոդվածի 1-ի մասի, 104, 105, 107, 115, 122, 124, 126, 127, 358 հոդվածների, ՀՀ Սահմանադրության 18, 21 հոդվածների, ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին կետի, 2.02.2010թ. Մակար Հովհաննիսյանի վերաբերյալ քրեական գործով, 04.05.2010թ. Մակիչ Առաքելյանի վերաբերյալ քրեական գործով, Ֆրունզիկ Գալստյանի

ներկայացուցիչ Լ. Սիմոնյանի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 16.11.2009թ. որոշման դեմ բերված քրեական գործով 26.03.2010թ. թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման մեջ ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումների, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների /տես Սալովն ընդդեմ Ուկրաինայի 06.09.2005թ. որոշումը, գանգատ թիվ 65518/07, Բոլդեան ընդդեմ Ռումինիայի 15.02.2007թ. որոշումը, գանգատ թիվ 19997/02, Գրադինարն ընդդեմ Մոլդովայի 08.04.2008 թ. որոշումր, գանգատ թիվ 7170/02, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվեցիափ 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:
Բողոքաբերը գտնում է, որ Դատարանի դատավճիռը, հետևությունները և որոշումները պատճառաբանված չեն, քանի որ դրանք կրում են զուտ հռետորական բնույթ: Դատարանը չի պարզաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս: Իրեղեն ապացույցներն ըստ բողոքաբերի անորակ լուսապատճեններ են, որոնք նույնիսկ պիտանի չեն եղել փորձաքննության ժամանակ հետազոտության համար, դրանք ոչ միայն որևէ հանգամանք չեն հիմնավորում, այլ էլ ավելի են խորացնում ենթադրություններն ու չփարատված կասկածները, որ դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122 հոդվածի պահանջներին չեն համապատասխանում և վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշմամբ այլ փաստաթուղթ չեն ճանաչվել:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-381 հոդվածներով՝ բողոքաբերը խնդրել է Աշոտ Հակոբյանի մասով բեկանել Դատարանի 29.12.2011թ. դատավճիռը և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով կայացնել արդարացման դատավճիռ, գործի վարույթը կարճել կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, գործը քննել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47 գլխի կանոններով:
3.Վերաքննիչ բողոքի դեմ բերված պատասխանները.
1. Ի պատասխան տուժողների բողոքի՝ ամբաստանյալ Իգոր Մանդելի պաշտպան Հ. Բաղդասարյանը նշել է, որ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.
Ըստ Հ. Բաղդասարյանի Դատարանը տուժողների ու քաղաքացիական հայցվորների նյութական իրավունքը չի խախտել մի պարզ պատճառով, որ նյութական իրավունքի նորմերը կիրառվում են մեղադրյալի կամ կասկածյալի նկատմամբ, քանի որ քրեական օրենքի այս կամ այն նորմը դատարանը կարող է կիրառել ամբաստանյալների նկատմամբ և ոչ թե տուժողների, առավել ևս, որ գործը հարուցվել է ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183 հոդվածի սահմանված կարգով, ոչ տուժողի բողոքի հիման վրա: 29.10.2009թ. թիվ 10040909/31010909 դատահաշվապահական փորձաքննության արձանագրությունը ընդհամենը ապացույցներից մեկն է և ոչ թե անվերապահորեն ընդունված ճշմարտություն: Պաշտպանության կողմն այն ընդունել է այնքանով, որքանով այնտեղ արձանագրված է գումարի տեղաշարժը: Իրենք դեռևս դատաքննության ժամանակ հայտարարել են, որ փորձաքննության եզրակացությունը չի համապատասխանում «Սահմանափակ պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի դրույթներին: Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց ներկայացնողը քաղաքացիական դատավարության նորմերին համապատասխան, պետք է ապացուցի իր հայցի հիմնավորությունը: Տվյալ դեպքում, փորձագետի եզրակացությամբ ներկայացված գումարը չի կարող քաղ. հայցի առարկա լինել, քանի որ կազմակերպության գումարներն ուղղակի մասնակիցների սեփականությունը չեն:

«Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն կանոնադրության 1.5. կետի համաձայն, ընկերության մասնակիցների և ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են կանոնադրությամբ, որի մեջ չկա մի նորմ, որը պարտավորեցնի տնօրենին կամ կազմակերպությանը փոխառու միջոցները հանձնել մասնակիցների տնօրինությանը, 4.2. կետը մասնակցին հնարավորություն է տալիս ստանալ շահույթի մասը, բայց ոչ վարկային գումարի մասը:
Հ. Բաղդասարյանը գտնում է, որ բողոքաբերները կարծես թե չեն ընդունում, որ ընկերության բաժնեմասի կեսից ավելիի սեփականատերը Իգոր Մանդելն է և եթե գույքով փոխհատուցելու հարց լինի, նախ նա ինքն իրեն պետք է փոխհատուցի: Բացի այդ հստակ է, որ վերջինս անգամ մի լումա չի ստացել այդ հափշտակված գումարներից, եթե չասենք, որ ամեն ինչ արել է դրանք ետ բերելու ուղղությամբ: Քրեական գործով էլ հենց «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն է առաջնահերթ տուժող և բռնագրավվող գույքը կամ բռնագանձվող գումարն էլ պետք է ուղղվի ընկերության շահերը բավարարելուն: Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրական դատարանի 12.07.2011թ, ՍԴՈ-983 որոշման դրույթներին, ապա դրա վերաբերյալ պարզաբանում է տվել դատավճիռ կայացրած դատարանը: Դատարանը քաղաքացիական հայցվորներին, օրենքով նախատեսված կարգով պարզաբանել է իրենց քաղհայցի իրավունքը և նրանք կարող են դիմել քաղաքացիական դատարան: Վերոգրյալի հիման վրա Հենրիկ Բաղդասարյանը գտնում է, որ Կարինե Ղազարյանի և մյուսների բերած բողոքն անհիմն է, այն պետք է մերժել, քանի որ դատավճռով տուժողների իրավունքները և շահերը չեն ոտնահարվել:
2. Ի պատասխան տուժողների բողոքի՝ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի պաշտպան Հ. Մաղաքյանը նշել է, որ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.
Եթե վարկը ստացվել է ընկերությանն մասնակիցների կամքով և ընկերությանն է վերապահված այդ գումարների պահանջը, ապա Աշոտ Հակոբյանին առաջադրված մեղադրանքը ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածով է անհիմն, այլև դրա հիման վրա կառուցված մյուս մեղադրանքները: Այս դեպքում էլ ոչ թե ընկերության մասնակիցները պետք է հանդես գային որպես տուժող, այլև ընկերությունը:
Մեղադրողը Վերաքննիչ դատարանում հայտնեց, որ Իգոր Մանդելին մեղադրանք է առաջադրվել ոչ թե ստացված գումարների չափով, այլ 49, 6 տոկոսի չափով, քանի որ նա չէր կարող հափշտակել իրեն պատկանող 50,4 տոկոս բաժնեմասը: Մեղադրողի պատճառաբանությունն ակնհայտորեն չի համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, քանի որ Իգոր Մանդելի մեղադրանքի ծավալի մեջ մտնում է ամբողջ 176 միլիոն դրամ գումարը:
Մեղադրողը բազմիցս պատճառաբանել է, որ եթե Աշոտ Հակոբյանը ցանկանար կամովին իր կողմից ձեռք բերած անշարժ գույքը ետ վերադարձներ, ապա դա կդիտվեր որպես հանցագործությունից կամովին հրաժարում: Այնինչ վերջինս բազմիցս նշել է, որ մինչ իր նկատմամբ որևէ մեղադրանք ներկայացնելն ինքը բանավոր և գրավոր դիմել է վարույթն իրականացնող մարմնին և վարչական շրջանի դատախազին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել իր անվամբ գրված Այվազովսկի փողոցի 46/1 հասցեում գնված անշարժ գույքը Վոլոդյա Վարդանյանի և մյուսների ոտնձգությունից պաշտպանելու ու ընկերությանը վերադարձնելու համար:
Քրեական գործի 9-րդ հատորի 140 էջում առկա է Աշոտ Հակոբյանի կողմից Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Գ. Միքայելյանին 19.02.2010թ. ուղղված դիմումը, որով ևս, նա ոչ միայն հայտնում է Վոլոդյա Վարդանյանի ու նրա որդիների կողմից ընկերության անունով ստացված գումարների նկատմամբ կատարված ոտնձգությունների, այդ ոտնձգություններից ապահովագրելու համար անշարժ գույքի վրա արգելանք դնելու անհրաժեշտության մասին, այլև նշում է իր կողմից նախկինում

կատարած այն միջնորդությունների և գործողությունների մասին, որոնք անուշադրության են մատնվել:
Ավելին, Աշոտ Հակոբյանի դիմումները և հայտարարությունները վարկային գումարների հափշտակության փորձ կատարելու համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մինչ օրս անհետևանք թողնելու պատճառով, ներկայումս հերթական անգամ Վոլոդյա Վարդանյանի որդիները նոր հայց են հարուցել Աշոտ Հակոբյանի դեմ՝ պահանջելով այն գումարները /32մլն դրամ/, որոնք վերջինս դատական կարգով կարողացել է ետ պահանջել մեկ այլ անձից:
Եթե նույնիսկ մինչ այդ Աշոտ Հակոբյանի գործողություններում հանցակազմ է պարունակել, ապա այս դիմումը բավական է, որպեսզի այն դիտվի որպես հանցագործություններից կամովին հրաժարում:
Վերոգրյալի հիման վրա պաշտպան Հ. Մաղաքյանը խնդրում է իր վերաքննիչ բողոքը բավարարել, իսկ տուժողների բողոքն ամբողջությամբ մերժել:
3. Ի պատասխան տուժողների բողոքի՝ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը նշել է, որ բողոքը ոչ միայն անհիմն է, այլև դրանում վկայակոչված հանգամանքները հերթական անգամ հիմնավորում են իր և իր պաշտպանի բողոքներում նշված փաստերը:
Ինքը բազմիցս նշել է, որ ոչ թե ինքն է Վոլոդյա Վարդանյանի հետ նախապես համաձայնության եկել ու գումարներ հափշտակել, այլև ընկերության մասնակիցներն են ցանկացել որքան հնարավոր է շատ գումարներ ստանալ և լիազորել են վերջինիս իրենց շահերը ներկայացնել:
Տուժողներն իրենց վերաքննիչ բողոքում չեն թաքցնում իրենց շահադիտական մտադրությունները և հանդես են գալիս ոչ թե ընկերության, այլ իրենց անձնական շահերի տեսանկյունից: Ավելին, որպես տուժող պետք է հանդես գար բանկը, այլ ոչ թե ընկերության մասնակիցները: Վերջիններիս վարքագիծը չի տարբերվում Վոլոդյա Վարդանյանի ու նրա որդիների վարքագծից այն դեպքում, երբ ինքը ջանք ու եռանդ չի խնայել այդ գումարների տեղը հայտնաբերելու, այլ անձանց հափշտակություններից փրկելու և ընկերությանը վերադարձնելու համար:
Վերոգրյալի հիման վրա ամբաստանյալ Աշոտ Հակոբյանը խնդրում է ամբողջությամբ մերժել տուժողների վերաքննիչ բողոքը:
4/.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.
Վերաքննիչ բողոքներում նշված հիմքերի ու հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, լսելով վերաքննիչ բողոքների հիմնավորումներն, ամբաստանյալների բացատրությունները, բողոքների պատասխանները, ստուգելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, ապացույցների ձեռքբերման աղբյուրները, քրեական գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց ստուգելով թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտավ, որ վերաքննիչ բողոքները պետք է մերժել, Դատարանի 29.12.2011թ. դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Աշոտ Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով ու Իգոր Մանդելի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով, թողնելով օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացուցումը գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածի համաձայն՝ գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ:
Քրեադատավարական ապացուցման տարրեր հանդիսացող ապացույցների ստուգման, գնահատման, ապացուցման ենթակա հանգամանքների վերաբերյալ՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերը նշված հիմնարար իրավադրույթների պահանջների համատեքստում, քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի պատճառաբանություններն անհիմն են, վերջինս նպատակ է հետապնդում խուսափել քրեական պատասխանատվությունից, նրա կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքները կատարելը և նրա մեղքը հաստատված, իսկ պատճառաբանությունները հերքված են քրեական գործով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված և ընդհանուր իրավասության դատարանում հետազոտված հետևյալ ապացույցներով.
Տուժող Կարինե Ղազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1981թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 1996թ.-ին, դեղատունը սեփականաշնորհվել է ընկերության 24 աշխատակիցների կողմից: 40 տոկոս բաժնեմասն անցել է ընկերության տնօրեն Իգոր Մանդելին, իսկ 60 տոկոսը՝ մյուս աշխատակիցներին, յուրաքանչյուրին 2,6 տոկոս: Հետագայում, տնօրենի 40 տոկոս բաժնեմասը դարձել է 50,4 տոկոս: Ավելի ուշ, ՍՊԸ-ում, բացի տնօրեն Իգոր Մանդելից, որպես աշխատողներ մնացել են 9 անձինք: 2007թ. ամռանը, Իգոր Մանդելն իրեն, ինչպես նաև ընկերության մյուս աշխատակիցներին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ ներկայացնելով որպես բանիմաց և գործարար մարդու, ասել է, որ նա, ինչպես նաև վերջինիս բարեկամ Վոլոդյա Վարդանյանը կարող են իրենց ընկերությունը դուրս բերել տնտեսական ծանր վիճակից: Միտքն այն է եղել, որ իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրվի «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան»

ՓԲԸ-նը: Խոսակցության ժամանակ նրանք երկուսով ասել են, որ Վոլոդյա Վարդանյանը, որի հետ իրենց հետո կծանոթացնեն, զբաղվելու է այդ հարցերով: Այդ ժամանակ որևէ գումարի չափի մասին խոսք չի գնացել: Նրանք ասել են, որ կճշտեն վարձակալության գումարի չափը և կհայտնեն իրենց: Որոշվել է, որ մեկ շաբաթվա ընթացքում ընկերության բաժնետերերը հավաքվեն և ժողով անցկացնեն, որի ընթացքում Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց կծանոթացնեն Վոլոդյա Վարդանյանի հետ ու այդ ընթացքում էլ կմանրամասնեն վարձակալության պայմանագրի հետ կապված հարցերը: Պայմանավորված օրը, Իգոր Մանդելի հետ միասին դեղատանը հավաքվել են նաև մյուս 9 բաժնետերերը՝ ինքը, Նազիկ Թադևոսյանը, Արուսյակ Ավետիսյանը, Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Ռիմա Աղաջանովան, Մելանյա Նազարյանը, Ալվարդ Արզումանյանը և Նինա Պողոսյանը: Աշոտ Հակոբյանը և Իգոր Մանդելն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ: Վոլոդյայի մոտ եղել է վարձակալության պայմանագիր ու նա կարդացել է պայմանագրի դրույթները: Դրանում նշված է եղել, որ իրենց ընկերությունը նշված բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրում է ամսեկան 700.000 դրամ գումարով, 10 տարի ժամկետով: Երբ հարցրել են, թե արդյոք քիչ չէ նշած վարձավճարի չափը, ինչպես Իգոր Մանդելը, այնպես էլ Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանն իրենց հավաստիացրել են, որ գումարի չափը նորմալ է, քանի որ բանկի կողմից կատարվելու են տարածքի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, իսկ երկու տարի անց վերանայվելու է վարձավճարի չափն ու այն զգալի չափով աճելու է: Աշոտ Հակոբյանը նույնպես իրենց բոլորին համոզել է, որ վարձավճարի չափը կազմելու է 700.000 դրամ գումար: Նույն օրը, ինչպես Աշոտ Հակոբյանը, այնպես էլ Իգոր Մանդելն ու Վոլոդյա Վարդանյանն ասել են, որ բանկի հետ ձեռք են բերելու պայմանավորվածություն, որպեսզի բանկից վերցնեն 16.000.000 դրամ գումարի չափով վարկ՝ տարածքը բանկին գրավադրելու պայմանով, 23 ամիս ժամկետով: Նրանք երեքով համոզել են իրենց, որ դա լավ տարբերակ է, ընկերությունը ստացած գումարով կարող է փակել բոլոր պարտքերը և կատարել համապատասխան ծախսեր: Վարձակալության պայմանագիրը, չի կարող ասել, թե դա բնօրինակն է եղել, թե լուսապատճենը, մեկ օրով թողել են իրենց մոտ, որպեսզի բաժնետերերը ծանոթանան դրա հետ և տան կամ չտան համաձայնություն: Նրանց գնալուց հետո, 9 բաժնետերերով ծանոթացել են պայմանագրի հետ, պատճենահանել են այն և ստացված օրինակը հաջորդ օրը տվել են Իգոր Մանդելին: Քանի որ վերջինիս հետ միասին 30 տարի աշխատել են, հավատացել, վստահել են նրան և համաձայնվել են առաջարկված պայմանների հետ:

Հաջորդ օրը, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն, իրենց են տվել ընկերության բաժնետերերի ժողովի արդեն իսկ կազմված արձանագրությունը, որում նշված է եղել, որ իրենք դեղատան տարածքը տալիս են վարձակալության: Արձանագրությունում վարձակալության գումարի չափը նշված չի եղել: Նրանք նաև տվել են արդեն իսկ կազմված լիազորագիր, որով բաժնետերերով լիազորել են Վոլոդյա Վարդանյանին՝ նշված բանկի հետ, իրենց անունից գործարք կատարելու համար: Իրենք ստորագրել են արձանագրությունը և լիազորագիրը:

Շուրջ մեկ շաբաթ անց, դեղատուն են եկել Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը, որոնք բերել են վարկային պայմանագիրը: Նրանք առաջարկել են ստորագրել պայմանագիրը՝ նշելով, որ ուշացնելու դեպքում գործարքը չի կատարվի: Պայմանագրում նշված է եղել, որ վարկի գումարի չափը կազմում է 16.000.000 դրամ: Իրենք բոլոր բաժնետերերով ստորագրել են պայմանագրի վերջին էջում նշված իրենց տվյալների դիմաց, իսկ Ա. Հակոբյանը, Ի. Մանդելը և Վ. Վարդանյանը շտապ հեռացել են: Հետագայում իրենց անունից բանկից վերցվել է 193 միլիոն դրամ գումարի չափով վարկ, որից միայն 16.000.000 դրամ գումարն է

հասել իրենց, իսկ մնացած գումարը հափշտակվել է: Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելի և Վոլոդյա Վարդանյանի հետ միասին իրենց խաբել են, ներկայացրել են, որ տարածքը վարձակալությամբ բանկին տրվում է ամսեկան 700.000 դրամ գումարով և բանկից որպես վարկ վերցվելու է 16.000.000 դրամի չափով գումար՝ տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով:
/դ.ն.ա., հատոր 1, գ.թ. 132-133, հատոր 2, գ. թ. 255-258, հատոր 8, գ. թ. 215/
Տուժող Կարինե Ղազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 3, գ. թ. 93-96, հատոր 10, գ.թ. 78-79/
Տուժող Արուսյակ Ավետիսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1980թ.-ից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատանը, որը 1996թ. սեփականաշնորհվել է, 40 տոկոս բաժնեմաս ստացել է տնօրեն Իգոր Մանդելը, իսկ 60 տոկոս բաժնեմասը հավասարապես, յուրաքանչյուրին 2,6 տոկոսի չափով, բաժանվել է ընկերության մյուս աշխատողների միջև:
2007թ. մարտ կամ ապրիլ ամիսներին, երբ Աշոտ Հակոբյանը հերթական անգամ եկել է իրենց դեղատուն, հերթափոխի փոփոխման ժամանակ, Աշոտ Հակոբյանը և Իգոր Մանդելն ասել են, որ «էյչ-էս-Բի-Սի» բանկն առաջարկել է վարձակալությամբ վերցնել իրենց դեղատան տարածքի մի մասը: Այդ ժամանակ նրանք չեն նշել, թե որքան է կազմելու վարձակալության գումարի չափը և ասել են, որ առաջիկայում անհրաժեշտ է հրավիրել բաժնետերերի ժողով՝ այդ հարցը քննարկելու համար: Աշոտը և Իգորը ներկայացրել են Վոլոդյա Վարդանյանին՝ շեշտելով, որ նա ունի աուդիտորական կազմակերպություն ու զբաղվելու է վարձակալության գործերի կարգավորմամբ: Դրանից հետո Աշոտ Հակոբյանը պարբերաբար հաճախել է դեղատուն: Ինքն ու մյուս բաժնետերերը պարբերաբար հետաքրքրվել են վարձակալության հարցերով, այդ թվում նաև վարձավճարի չափով: Սկզբում Իգոր Մանդելն իրենց ասել է, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 դոլար, իսկ մեկ անգամ էլ, բաժնետերերից մի քանիսը՝ Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Կարինե Ղազարյանը և Մելանյա Նազարյանն իրեն պատմել են, որ երբ Իգոր Մանդելը նրանց ներկայությամբ ասել է այդ գումարի չափը, Աշոտը զայրացել է Իգոր Մանդելի վրա՝ ասելով, որ նա երկու թիվ չի կարողանում հիշել և 7.000 դոլարը տարբերել 700.000 դրամից: Իգորն էլ ուղղում է կատարել և հաստատել է, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ գումար:
21.05.2007թ., դեղատանը տեղի է ունեցել ընկերության բաժնետերերի ժողով, որին, բացի 10 բաժնետերերից ներկա են գտնվել Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Ժողովի քարտուղար է ընտրվել Կարինե Ղազարյանը, իսկ նախագահ՝ Իգոր Մանդելը: Վոլոդյան միանգամից ներկայացրել է մի պայմանագիր, ըստ որի՝ իրենց ընկերությունը 10 տարի ժամկետով, ամսեկան 700.000 դրամ վարձավճարով, իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրում է նշված բանկին: Այդ պայմանագիրը կնքված և ստորագրված է եղել ինչպես բանկի, այնպես էլ իրենց ընկերության կնիքով: Ինքը ցանկացել է կարդալ պայմանագրի կետերը, սակայն Վոլոդյան ասել է, որ ժամանակ չունի: Հասկացել է, որ պայմանագիրն արդեն բանկի հետ կնքվել է: Անձամբ տեսել է, որ պայմանագրում, որպես ամսեկան վարձավճարի չափ, նշված է եղել 700.000 դրամ գումար: Արտահայտվել է, որ չի հավատում, որ վարձավճարի չափն իրականում այդքան է կազմում ու նշել է, որ այն մի քանի անգամ բարձր պետք է լինի: Ինչպես Վոլոդյան, այնպես էլ Աշոտ Հակոբյանն ու Իգոր Մանդելը բացատրել են, որ այդ վարձակալական գործարքը ձեռնտու տարբերակ է, ընկերության ֆինանսական գործերը զգալի չափով կվերականգնվեն, բանկը կկատարի կապիտալ վերանորոգում դեղատանը, իսկ 2 տարի անց վարձավճարի չափը կվերանայվի և զգալի չափով կավելանա: Ինքը պահանջել է, որ այդ պայմանագիրը պատճենահանվի և դրա օրինակը մնա իրենց մոտ:

Վոլոդյան սկզբում չի համաձայնվել, սակայն ինքը նորից պնդել է իր պահանջը, որից հետո ի վերջո պայմանագիրը պատճենահանել են: Պատճենը պահել են իրենց մոտ, իսկ պայմանագիրը Վոլոդյան վերցրել է:
Մի քանի օր անց, Վոլոդյան և Աշոտը եկել են դեղատուն ու բոլոր 10 բաժնետերերին ներկայացրել են համակարգչով տպագրված լիազորագրեր: Առաջինը, որ բաժնետերերով լիազորում են Վոլոդյային իրենց անունից իրականացնել տարածքը բանկին վարձակալությամբ տալու գործողությունները, իսկ երկրորդը՝ որ իրենք Իգոր Մանդելին լիազորում են 5 տարի ժամկետով իրականացնել ընկերության տնօրենի պարտականությունները: Իրենք ստորագրել են լիազորագրերը, ինչպես նաև արդեն իսկ կազմված բաժնետերերի ժողովի արձանագրությունը, որում նշված է եղել, որ բաժնետերերով համաձայն են իրենց դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ բանկին հանձնելու հետ: Արձանագրության մեջ վարձակալության գումարի չափի վերաբերյալ նշում չի եղել: Իրենք էլ իրավաբանական գիտելիքներ չունենալով՝ չեն մտածել, որ դա կարող է ինչ-որ վատ բանի հանգեցնել:
Դրանից մի քանի օր անց, Իգոր Մանդելը դեղատուն է եկել Աշոտ Հակոբյանի և Վոլոդյայի հետ: Նրանք ասել են, որ առաջարկում են նույն բանկից որպես վարկ վերցնել գումարներ, որոնցով կփակվեն ընկերության պարտքերը: Շեշտել են, որ վարկը պետք է վերցվի դեղատան տարածքը բանկում գրավադրելու դիմաց: Ինքն առաջարկել է, որպեսզի իրենք խոսեն բանկի ղեկավարության հետ՝ բանկից մի քանի ամսվա վարձավճարը վերցնելու համար: Նրանք ասել են, որ դա հնարավոր չէ: Նման խոսակցություններ են կայացել մի քանի անգամ, որոնց ներկա է գտնվել նաև Աշոտ Հակոբյանը:
Վերջինս, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը պնդել են, որ վարկի գումարի չափը կազմելու է 16.000.000 դրամ, որով ընկերությունը կփակի ունեցած պարտքերը: Ինքը դեմ է եղել գրավի դիմաց վարկ վերցնելուն և արտահայտել է իր այդ կարծիքը: Ի վերջո նրանք կարողացել են համոզել բոլոր բաժնետերերին, այդ թվում և իրեն, որ վարկը վերցվի 23 ամիս մարման ժամկետով: Այդ ընթացքում ինքն աշխատանքի չի գնացել: Իրեն զանգահարել է Իգոր Մանդելը և ասել, որ պատրաստել են վարկային պայմանագիրը, բոլոր բաժնետերերը, բացի իրենից ստորագրել են այն ու եթե ինքը մոտակա օրերին չստորագրի այն, ապա վարկի գործարքը կձախողվի: Հաջորդ օրը գնացել է դեղատուն, որտեղ գտնվել են նաև Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Վերջինս իրեն է տվել պայմանագիրը՝ ասելով, որ այն պետք է շտապ ստորագրվի: Ինքը կարդացել է պայմանագիրը: Դրանում նշված է եղել, որ բանկի կողմից իրենց տրվող վարկի չափը կազմում է 16.000.000 դրամ գումար, դրա մարման ժամկետն է 23 ամիս: Վերջում, իրենց ընկերության բաժնետերերի տվյալների դիմաց դրված են եղել ստորագրություններ և ինքն էլ իր տվյալների դիմաց ստորագրել է: Պայմանագրում դրված է եղել իրենց ընկերության կնիքի դրոշմը, սակայն չի հիշում, թե բանկի կնիքի դրոշմը եղել է, թե ոչ: Պայմանագիրը ստորագրելուց հետո փորձել է վերցնել և պատճենահանել այն, սակայն Վոլոդյան իր ձեռքից խլել է պայմանագիրն ու դուրս եկել դեղատնից՝ ասելով, որ ժամանակ չունի:
Մի քանի օր անց, բաժնետերերից մեկը զանգահարել է իրեն և ասել, որ իրենց հաշվեհամարին 16.000.000 դրամ գումարի չափով վարկը փոխանցվել է: Այդ գումարից 6.000.000 դրամը հատկացվել է իրենց աշխատավարձերի վճարումներին, իսկ մնացած գումարներով փակվել են ընկերության ունեցած պարտքերը: Հետագայում, երբ արդեն հարուցվել է քրեական գործ, իրենք բաժնետերերով տեղեկացել են, որ վարձավճարի չափը ոչ թե 700.000 դրամ է կազմել, այլ այն եղել է 2.450.000 դրամ, իսկ վարկ վերցված գումարի չափը եղել է ոչ թե 16.000.000 դրամ, այլ՝ 193.000.000 դրամ:
Դրանում էլ կայացել է Իգոր Մանդելի, Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի խաբեությունը: /դ.ն.ա. հատոր 1, գ. թ. 169-171, հատոր

2, գ. թ. 259-262/
Տուժող Արուսյակ Ավետիսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 92-94, 114-115/
Տուժող Անուշ Նազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1982թ. մայիսից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատանը, որը 1996թ. սեփականաշնորհվել է: Հանդիսանում է ընկերության 2,6 տոկոսի բաժնետեր: 2007թ. մայիսի սկզբին կամ հունիսին, իրենց տնօրեն Իգոր Մանդելն ընկերության բոլոր բաժնետերերին հայտնել է, որ ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալու է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը՝ չնշելով, թե վարձավճարի չափը որքան պետք է կազմի: Մի քանի օր անց, նա իրենց ասել է, որ պետք է հրավիրվի բաժնետերերի ժողով, որպեսզի քննարկվի տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցը: Հրավիրվել է ժողով, որին ներկա են գտնվել ընկերության 10 բաժնետերերը: Ժողովին մասնակցել են նաև Աշոտ Հակոբյանն ու Վոլոդյա Վարդանյանը: Իգոր Մանդելը ներկայացրել է, որ Աշոտ Հակոբյանը նրա ընտանիքի ընկերն է, իսկ Վոլոդյան էլ Աշոտի բարեկամն է: Ժողովի նախագահ է ընտրվել Իգոր Մանդելը, իսկ քարտուղար՝ Կարինե Ղազարյանը: Սկզբում Իգոր Մանդելը հարց է բարձրացրել դեղատան տարածքի մասը բանկին վարձակալությամբ տալու շուրջ: Բաժնետերերով հարց են ուղղել վարձակալության գումարի չափի վերաբերյալ, որին Իգոր Մանդելը պատասխանել է, որ ամսեկան այն կազմելու է շուրջ 7.000 դոլար գումար: Աշոտ Հակոբյանն ուղղել է նրան՝ ասելով, որ դա այդպես չէ, վարձավճարը կազմելու է ոչ թե 7.000 դոլար, այլ ամսեկան 700.000 դրամ: Իգոր Մանդելն էլ ուղղել է իր ասածը և համաձայնվել Աշոտի կողմից հայտնած գումարի չափի հետ: Իրենք դեմ են եղել վարձավճարի այդ չափին, սակայն Աշոտ Հակոբյանը բացատրել է, որ դեղատան տարածքը ենթարկվելու է վերանորոգման, որը կատարվելու է բանկի միջոցների հաշվին և եթե չլինի համաձայնություն, ապա բանկը կվարձակալի մեկ այլ տարածք: Քանի որ ընկերությունն ունեցել է պարտքեր և անհրաժեշտ են եղել գումարներ, իրենք համաձայնվել են կատարված առաջարկի հետ: Այդ օրը մասնակիցների ժողովի արձանագրություն չի կազմվել:
Հաջորդ օրը, Իգոր Մանդելի պահանջով, իրենք կրկին 10 բաժնետերերով հավաքվել են դեղատանը: Այնտեղ են եկել նաև Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Վերջինս իր հետ բերել է նախորդ օրվա ժողովի արձանագրության համակարգչով տպագրված ձևը, որտեղ նշված է եղել, որ բաժնետերերով որոշել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տրամադրել բանկին: Արձանագրության մեջ վարձավճարի գումարի չափը նշված չի եղել և բաժնետերերից ոչ մեկն էլ չի պահանջել, որ այն նշվի՝ չմտածելով, որ դրա հետ կապված հետագայում կծագեն խնդիրներ: Բաժնետերերով ստորագրել են այդ արձանագրությունը, որը Վոլոդյան վերցրել և հեռացել է:
Շուրջ 10 օր անց, 2007թ. հունիսին, Վոլոդյան և Աշոտը եկել են դեղատուն: Վոլոդյային ներկայացրել են որպես բանիմաց մարդ և որոշվել է, որ նա պետք է կատարի տարածքը բանկին վարձակալությամբ տալու գործարքները: Տվել են իրենց բանավոր համաձայնությունը՝ լիազորելով նրան զբաղվել այդ գործարքի հետ կապված հարցերով: Գրավոր այդպիսի փաստաթուղթ տրվել է, թե ոչ՝ չի հիշում: Նշված ժողովից 20-ից 25 օր անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Դեղատուն են եկել նաև Աշոտը և Վոլոդյան: Նրանցից մեկը կամ Իգոր Մանդելն իրենց առաջարկել են դեղատան տարածքը գրավադրել նույն բանկում և ստանալ 16.000.000 դրամ գումարի չափով վարկ, 23 ամիս մարման ժամկետով: Վոլոդյայի մոտ եղել է մի փաստաթուղթ, որում իրենք պետք է ստորագրեին և տային իրենց համաձայնությունը՝ բանկից վարկ վերցնելու համար: Այդ փաստաթուղթը տպագիր է եղել, սակայն դրանում նշված չի եղել վարկի գումարի չափը: Բաժնետերերով ստիպել են այդ

փաստաթղթում գրել կոնկրետ գումարի չափը և հենց իրենց ներկայությամբ, Վոլոդյա Վարդանյանը գրիչով նշել է վարկի գումարի չափը՝ 16.000.000 դրամ գումար: Բացի Արուսյակից, բոլոր բաժնետերերով համաձայնվել և ստորագրել են այդ փաստաթուղթը: Քանի որ բոլորը ստորագրել են, ապա Արուսյակը նույնպես ճարահատյալ ստորագրել է այն: Վերջինս ցանկացել է այդ փաստաթուղթը պատճենահանել, սակայն Վոլոդյան փաստաթուղթը խլել է նրանից և շտապ դուրս եկել դեղատնից: Տեղյակ է, որ որոշ ժամանակ անց, իրենց ընկերության հաշվին փոխանցվել է 16.000.000 դրամ գումարի չափով վարկ: Հետագայում տեղեկացել է, որ տարածքը բանկին վարձակալությամբ տրվել է ոչ թե ամսեկան 700.000 դրամով, այլ՝ 2.450.000 դրամով, իսկ վերցված վարկի գումարի չափը կազմել է ոչ թե 16.000.000 դրամ, այլ՝ 193.000.000 դրամ: Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը խաբել են իրենց:
25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունը, որով իբրև թե որոշվել է բանկից վերցնել 193.407.000 դրամ գումարի չափով վարկ, ինքը չի ստորագրել և այդ կեղծված արձանագրությունում իր տվյալների մոտ դրված ստորագրությունն իրենը չէ: /դ.ն.ա., հատոր 3, գ. թ. 185-186/
Տուժող Անուշ Նազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 89-91, 123-124/
Տուժող Ազիզ Ստեփանյանի ցուցմունքներով այն մասին, որ 1987թ.-ից աշխատում է Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատանը: 1996թ. դեղատունը սեփականաշնորհվել է: Տնօրեն Իգոր Մանդելը ստացել է 40 տոկոս բաժնեմասը, իսկ մնացած 60 տոկոս բաժնեմասը ստացել են կոլեկտիվի անդամները, յուրաքանչյուրը՝ 2,6 տոկոսի չափով: 2007թ. հունիսին, Իգոր Մանդելը հրավիրել է ընկերության բաժնետերերի ժողով: Քանի որ ինքը հանդիսացել է ընկերության բաժնետեր, նույնպես ներկա է եղել այդ ժողովին: Ըստ ընկերության կանոնադրության՝ հանդիսանում է ընկերության 2,6 տոկոսի բաժնետերը, սակայն շուրջ 7-8 տարի առաջ, բաժնետերերից Բավականը, որի ազգանունը չգիտի, գտնվելով ԱՄՆ-ում, սեփական բաժնեմասից, որը կազմել է 2,6 տոկոս, հրաժարվել է հօգուտ իրեն, որի համար ինքը նրա ամուսին Գագիկին, Երևանում տվել է 604.000 դրամ գումար: Նա կնոջ լիազորմամբ փաստաթուղթ է ստորագրել և տվել իրեն՝ կնոջ բաժնեմասը իրեն փոխանցելու վերաբերյալ:
Ժողովի ժամանակ Իգոր Մանդելը իրենց ներկայացրել է Աշոտ Հակոբյանին և Վոլոդյա Վարդանյանին: Ընդ որում Իգորն ասել է, որ Աշոտը նրա ընտանիքի բարեկամն է, իսկ Վոլոդյան Աշոտի բարեկամն է, որն ունի աուդիտորական գրասենյակ և ընկերության հաշվապահական գործերն այսուհետև նա է կատարելու: Ժողովի ժամանակ Աշոտը, Իգորը և Վոլոդյան առաջարկել են իրենց դեղատան մի մասը վարձակալությամբ տալ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին, որպեսզի դրանով հնարավոր լինի կարգավորել ընկերության տնտեսական գործունեությունը: Այդ ժամանակ վարձավճարի չափի մասին որևէ խոսակցություն տեղի չի ունեցել: Բաժնետերերով, որին ներկա են եղել 10 բաժնետերեր՝ ինքը, Իգոր Մանդելը, Նազիկ Թադևոսյանը, Արուսյակ Ավետիսյանը, Ազիզ Ստեփանյանը, Անուշ Նազարյանը, Ռիմա Աղաջանովան, Մելանյա Նազարյանը, Ալվարդ Արզումանյանը և Նինա Պողոսյանը, համաձայնվել են նորմալ պայմանների դեպքում հավանություն տալ առաջարկին: Կազմվել է ժողովի մասնակիցների արձանագրություն: Չի հիշում, թե կոնկրետ ով է այն կազմել և որտեղ, որից հետո բոլոր 10 բաժնետերերով ստորագրել են այն՝ տալով համաձայնություն՝ նշված բանկին դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ հանձնելու վերաբերյալ:
Շուրջ մեկ շաբաթ անց, երբ Աշոտ Հակոբյանն Իգոր Մանդելի հետ գտնվել է դեղատանը, իրենք դեղատան աշխատակիցներով հարց

են ուղղել Իգոր Մանդելին, թե որքան է կազմելու տարածքի վարձակալության վճարի չափը: Իգոր Մանդելը պատասխանել է, որ տարածքը վարձակալությամբ է տրվելու 7.000 դոլար գումարով: Այդ պատասխանից հետո միջամտել է Աշոտ Հակոբյանը և խոսքն ուղղելով Իգոր Մանդելին՝ ասել. «700.000 դրամը 7.000 դոլարից չե՞ս տարբերում, եթե հայերեն խոսել չգիտես, մի խոսի»: Իրենք հասկացել են, որ վարձավճարի չափը լինելու է 700.000 դրամ գումար:
Դրանից շուրջ մեկ շաբաթ անց, Իգոր Մանդելը բաժնետերերին ներկայացրել է նշված բանկին տարածքի մի մասը վարձակալությամբ տալու վերաբերյալ պայմանագիր, որում դրված է եղել ինչ-որ կնիք, սակայն թե որ կազմակերպության՝ ուշադրություն չի դարձրել: Պայմանագրում վարձավճարի չափը նշված է եղել ամսեկան 700.000 դրամ գումար: Փաստորեն վարձակալության պայմանագիրն արդեն կնքված է եղել և իրենք Իգոր Մանդելին առարկություններ չեն ներկայացրել: Մի քանի օր անց, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը դեղատանը, հերթափոխում գտնվող աշխատակիցներին, այդ թվում նաև իրեն, ներկայացրել են նշված բանկի և իրենց ընկերության միջև կազմված պայմանագիր, ըստ որի՝ բանկը իրենց ընկերությանը տրամադրում է վարկ՝ 16.000.000 դրամ գումարի չափով, տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով, 23 ամսում մարելու պայմանով: Նրանք երկուսով բացատրել են, որ ստացված 16.000.000 դրամ գումարով կփակվեն ընկերության ունեցած պարտքերը, ձեռք կբերվեն անհրաժեշտ դեղամիջոցներ և դրանով կկարգավորվի ընկերության ֆինանսական վիճակը, իսկ 23 ամիս անց կսկսվեն տնօրինվել վարձավճարի գումարները: Այդ պայմանագիրը մի քանի օր մնացել է Իգոր Մանդելի աշխատասեղանին և այդ ընթացքում բոլոր բաժնետերերը, իրենց հերթափոխների ժամանակ, ստորագրել են դրա տակ: Աշոտ Հակոբյանը նշված գումարի չափով վարկ վերցնելու վերաբերյալ իր հետ խոսակցություններ չի վարել և դրանց ներկա չի գտնվել, բացառությամբ այն մի արտահայտության, որի մասին արդեն նշել է:
Վոլոդյա Վարդանյանի անհետացումից հետո, 2008թ. ապրիլի վերջին-մայիսի սկզբին, բաժնետերերին, այդ թվում իրեն, հայտնի է դարձել, որ բանկին տարածքը վարձակալությամբ հանձնելու գումարի չափը կազմել է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ, իսկ բանկից որպես վարկ վերցվել է ոչ թե 16.000.000, այլ՝ 193.000.000 դրամ գումար: /դ.ն.ա.,, հատ որ 1, գ.թ. 164-166/
Տուժող Ազիզ Ստեփանյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10 գ.թ. 80-81, 128-129/
Տուժող Մելանյա Նազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 1979թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ: Հանդիսանում է ընկերության բաժնետերը: Աշոտ Հակոբյանը, որին ճանաչում է որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկեր, դեղատուն սկսել է ավելի հաճախակի գալ այն ժամանակ, երբ խոսակցություններ են գնացել իրենց ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը հանձնելու վերաբերյալ: Քանի որ ընկերությունն ունեցել է ֆինանսական դժվարություններ, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը, 2007թ. գարնան վերջերին, երբ բոլոր 10 բաժնետերերով ներկա են եղել դեղատանը, առաջարկել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ նշված բանկին՝ նշելով, որ վարձակալության գումարն ամսեկան կազմելու է 700.000 դրամ: Դրանից առաջ, երբ Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը գտնվել են դեղատանը, Իգոր Մանդելն ասել է, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 դոլար գումար, սակայն Աշոտ Հակոբյանն ուղղել է նրան՝ նշելով, որ նա 7.000 դոլարը չի կարողանում տարբերել 700.000 դրամից ու որ վարձակալության գումարի չափը կազմելու է 700.000 դրամ գումար:
2007թ. մայիսի վերջին, կոնկրետ օրը չի հիշում, Իգոր Մանդելը հրավիրել է ընկերության բաժնետերերի ժողով: Այդ ժամանակ

վերջինս և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ, ներկայացրել են նրան որպես լավ հաշվապահ՝ ասելով, որ նա կարող է գրագետ կազմակերպել տարածքը բանկին վարձակալությամբ հանձնելու գործընթացը: Վերջինս իրենց է ներկայացրել մի պայմանագիր կամ պայմանագրի օրինակ, որտեղ նշված է եղել, որ դեղատան տարածքի մի մասը, 10 տարի ժամանակով, ամսեկան 700.000 դրամ վարձավճարով տրվելու է կամ տրվել է վարձակալությամբ նշված բանկին: Չի կարող ասել, թե պայմանագիրն արդեն կնքված և ստորագրված է եղել, թե ոչ:
Բաժնետերերից Արուսյակը պահանջել է, որպեսզի պատճենահանվի պայմանագիրը, որից հետո ինքն այն տարել և պատճենահանման կետում պատճենահանել է, որն իրենք պահել են իրենց մոտ: Իգոր Մանդելը պատճառաբանելով, որ յուրաքանչյուր փաստաթուղթ չբերվի և բոլոր բաժնետերերը դրանք ստորագրելու համար յուրաքանչյուր անգամ չհավաքվեն, առաջարկել է լիազորագիր տալ Վոլոդյա Վարդանյանին՝ նշված բանկի հետ կապված գործերով ընկերության անունից որպես ներկայացուցիչ հանդես գալու համար:
Ժողովի ժամանակ շոշափվել է նաև ընկերության տարածքը գրավադնելու դիմաց բանկից վարկ վերցնելու հարցը, որպեսզի վերցված գումարով հնարավոր լինի կարգավորել ընկերության ֆինանսական վիճակը: Վարկի չափի մասին խոսակցություն այդ ժամանակ չի գնացել: 1-2 օր անց, Վոլոդյան և Աշոտ Հակոբյանը նորից եկել են դեղատուն: Վոլոդյան բերել է արդեն իսկ համակարգչով տպված ընկերության ժողովի արձանագրություն, ինչպես նաև նշված լիազորագիրը: Բաժնետերերով ծանոթացել են տպագրված երկու տեքստերին և ստորագրել այդ փաստաթղթերը՝ դրանով Վոլոդյային իրավունք տալով իրականացնել ընկերության անունից բանկի հետ գործարքը: Արձանագրության մեջ վարկի գումարի չափը նշված չի եղել:
2007թ. հունիսի կեսերին, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն և Իգոր Մանդելի հետ սկսել են ընկերության բաժնետերերին համոզել, որպեսզի դեղատան տարածքը գրավադրելով՝ բանկից վերցվի 16.000.000 դրամ գումարի չափով վարկ: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը շեշտել են, որ պետք է վերցվի 16.000.000 դրամ գումարի չափով վարկ, 23 ամսվա մարման ժամկետով, տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով: Նրանք վստահեցրել են, որ դա ձեռնտու տարբերակ է և այդպիսով կկարգավորվեն ընկերության գործերը: Բաժնետերերը, բացի Արուսյակ Ավետիսյանից, համաձայնվել են նրանց առաջարկի հետ:
Դրանից մի քանի օր անց, Վոլոդյա Վարդանյանն ու Աշոտ Հակոբյանը կրկին եկել են դեղատուն: Վոլոդյա Վարդանյանն իրենց ներկայացրել է արդեն իսկ համակարգչով տպված մի պայմանագիր, որով ընկերությունը 16.000.000 դրամ գումարի չափով վարկ է վերցնում նշված բանկից: Մինչև վերջին պահը, Արուսյակը հրաժարվել է ստորագրել պայմանագիրը, սակայն քանի որ բոլոր բաժնետերերը համաձայնվել և ստորագրել են այն, Արուսյակը նույնպես ստորագրել է: Արուսյակը պահանջել է, որպեսզի այդ փաստաթուղթն էլ պատճենահանվի, սակայն Վոլոդյան պայմանագիրը չի տվել՝ պատճառաբանելով, որ շտապում է:
Հուլիսին իրենց ընկերությունը ստացել է 16.000.000 դրամ գումարի չափով վարկ և դրանով փակել է ունեցած պարտքերը, բանկն էլ զբաղեցրել է վարձակալած տարածքը: Բաժնետերերով Իգոր Մանդելից պահանջել են տրամադրել վարկի մարման գրաֆիկը, սակայն նա այն չի տվել և պատճառաբանել է, որ այդ փաստաթուղթը, մյուս բոլոր փաստաթղթերի հետ միասին գտնվում են Վոլոդյա Վարդանյանի մոտ և նա է կատարում հաշվապահական անհրաժեշտ գործողությունները: Երբ հարուցվել է քրեական գործ՝ իրենք տեղեկացել են, որ տարածքի վարձակալության ամսեկան վճարի չափը կազմում է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ գումար, իսկ ընկերության անունից վերցված վարկի չափը ոչ թե 16.000.000 ՀՀ դրամ է, այլ՝ շուրջ 190.000.000 դրամ: Իրենց պարզ է

դարձել, որ խաբվել են Իգոր Մանդելի, Վոլոդյա Վարդանյանի և Աշոտ Հակոբյանի կողմից: /դ.ն.ա., հատոր 9, գ.թ. 57-60/
Տուժող Մելանյա Նազարյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 97-99, 139-140/
Տուժող Նինա Պողոսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1980թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ-ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին որպես ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ծանոթի: 2007թ. մայիսին, տեղի է ունեցել իրենց ընկերության բաժնետերերի ժողով, որին մասնակցել են նաև Աշոտ Հակոբյանը և վերջինիս բարեկամ Վոլոդյա Վարդանյանը: Այդ օրը քննարկվել է ընկերությանը պատկանող դեղատան տարածքի մի մասը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին վարձակալությամբ տրամադրելու հարցը: Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն ասել են, որ Վոլոդյա Վարդանյանը պետք է իրականացնի ընկերության հաշվապահական գործողություններն ու պետք է զբաղվի բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով: Ժողովի ընթացքում Իգոր Մանդելը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը բաժնետերերին ներկայացրել են, որ տարածքի վարձակալության ամսեկան վճարի չափը կազմելու է 700.000 դրամ գումար ու համոզել են իրենց, որ դա զգալի չափով կկարգավորի ընկերության ֆինանսական գործերը: Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել պայմանագիր, որքանով հիշում է, այն կնքված է եղել ինչ-որ կնիքով, որում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը կազմում է 700.000 դրամ գումար: Իրենք համաձայնվել են այդ պայմանի հետ: Հաջորդ օրը բաժնետերերով կրկին հավաքվել են և Վոլոդյա Վարդանյանն ու Աշոտ Հակոբյանը կրկին եկել են դեղատուն: Վոլոդյան տվել է տպագրված լիազորագիր, որը բաժնետերերով ստորագրել են: Դրանով լիազորել են վերջինիս, որպեսզի նա ընկերության անունից իրականացնի վարձակալության գործարքի հետ կապված հարցերը: Ստորագրել են նաև մեկ այլ լիազորագիր, որով լիազորել են Իգոր Մանդելին կատարել ընկերության տնօրենի պարտականությունները: Այդ օրը ստորագրել են նաև ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ տարածքը բանկին վարձակալությամբ տալու համար: Որոշակի ժամանակ անց, բաժնետերերով կրկին են հավաքվել: Իգոր Մանդելը, Աշոտը Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը կրկին եկել են դեղատուն: Նրանք հարց են բարձրացրել դեղատունը գրավադրելու դիմաց նշված բանկից վարկ վերցնելու վերաբերյալ՝ շեշտելով, որ պետք է վերցվի 16.000.000 դրամ գումարի չափով վարկ, 23 ամսվա մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով: Բաժնետերերին տվել են ստորագրել վարկի վերաբերյալ մի փաստաթուղթ, որն իրենք ստորագրել են: Փաստաթղթում նշված է եղել, որ վարկի գումարի չափը կազմում է 16.000.000 դրամ գումար:
2008թ., երբ հարուցված է եղել քրեական գործը, տեղեկացել է, որ իրենց դեղատան տարածքի վարձակալության ամսեկան վճարը կազմել է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 դրամ գումար, այլ՝ 193.000.000 դրամ: /դ.ն.ա., հատոր 9, գ.թ. 61-64/
Տուժող Նինա Պողոսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 105-106, 130/
Տուժող Ալվարդ Արզումանյանի ցուցմունքներով այն մասին, որ 1982թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ.ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին՝ որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկերոջ և ծանոթի: 2007թ. մայիսին, Իգոր Մանդելն ընկերության մյուս 9 բաժնետերերին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ կապված «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին իրենց ընկերությանը պատկանող դեղատան մի մասը վարձակալությամբ տրամադրելու հարցի հետ: Այդ

ժամանակահատվածից սկսած Աշոտ Հակոբյանը պարբերաբար եկել է դեղատուն և մասնակցել բազմաթիվ խոսակցությունների ու քննարկումների: Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են Վոլոդյա Վարդանյանի հետ՝ ասելով, որ նա իրականացնելու է ընկերության հաշվապահական գործողություններն ու զբաղվելու է բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով:
2007թ. մայիսի վերջին, կայացել է ընկերության բաժնետերերի ժողով, որի ընթացքում Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը ներկայացրել են, որ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տալու վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 700.000 դրամ գումար: Դրանից մի քանի օր առաջ, իր ներկայությամբ, երբ Իգոր Մանդելն ասել է, որ տարածքի ամսեկան վարձավճարի չափը կազմելու է 7.000 դոլար, Աշոտ Հակոբյանը շտկել է Իգոր Մանդելի ասածը՝ նշելով, որ վարձավճարի չափը կազմելու է 700.000 դրամ գումար: Ընկերության բաժնետերերի ժողովի ժամանակ Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել պայմանագիր: Չգիտի, թե այն կնքված և ստորագրված է եղել, թե ոչ, որում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը 700.000 դրամ է: Հաջորդ օրը, բաժնետերերով կրկին հավաքվել են: Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը եկել են դեղատուն ու Վոլոդյա Վարդանյանն իրենց է տվել տպագրված լիազորագիր, որն իրենք ստորագրել են՝ լիազորելով վերջինիս ընկերության անունից կատարել տարածքը վարձակալությամբ տալու հետ կապված գործը: Իրենք ստորագրել են նաև ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տրամադրելու համար: Մի քանի օր անց, Վոլոդյա Վարդանյանն իրենց տվել է ստորագրել մի լիազորագիր, որով բաժնետետերով լիազորել են Իգոր Մանդելին իրականացնել ընկերության տնօրենի պարտականությունները:
Որոշ ժամանակ անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը կոնկրետ հարց են բարձրացրել՝ դեղատան գրավադրմամբ բանկից 16.000.000 դրամի չափով վարկ վերցնելու վերաբերյալ: Վոլոդյան բաժնետերերին տվել է ստորագրել պայմանագիր, որում նշված է եղել, որ վերցվող վարկի գումարի չափը 16.000.000 դրամ է: Աշոտը Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը պնդել են, որ այդ գումարի չափով վարկը ձեռնտու է ընկերությանը, դրանով կկարգավորվեն շատ հարցեր: Իրենք փորձել են պատճենահանել այդ փաստաթուղթը, բայց Վոլոդյան թույլ չի տվել՝ պատճառաբանելով, որ շտապում է: Հետագայում, երբ քրեական գործ է հարուցվել, ինքը տեղեկացել է քննիչից, որ դեղատան տարածքի վարձակալության ամսեկան վճարը կազմում է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 դրամ, այլ՝ 190.000.000 դրամ գումար:
/դ.ն.ա., հատոր 9, գ.թ. 66-69/
Տուժող Ալվարդ Արզումանյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10 գ.թ. 95-96, 116/
Տուժող Նազիկ Թադևոսյանի ցուցմունքներով այն մասին, որ 1981թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ. սկզբներից, Աշոտ Հակոբյանը սկսել է պարբերաբար հաճախել իրենց դեղատուն, ընկերության տնօրեն Իգոր Մանդելի մոտ: Իր մոտ տպավորություն է ստեղծվել, որ նա Իգոր Մանդելի մտերիմն է: 2007թ. մայիսի վերջերին, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանը Վոլոդյային ներկայացրել են որպես աուդիտորական գրասենյակի ներկայացուցիչ և Աշոտ Հակոբյանի բարեկամ: Նրանք երեքով ընկերության բաժնետերերին առաջարկել են դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին: Այդ օրը վարձավճարի չափի վերաբերյալ խոսակցություն տեղի չի ունեցել: Հանդիպմանը ներկա են գտնվել իրենց

ընկերության բոլոր 10 բաժնետերերը, քանի որ Իգոր Մանդելն իրենց նախապես տեղյակ է պահել հավաքվելու մասին: Աշոտի և Վոլոդիայի գնալուց հետո, իրենց հարցին Իգոր Մանդելը պատասխանել է, որ տարածքի վաճառքի վարձավճարի չափը մոտավորապես կազմելու է 7.000 դոլար:
2007թ. հունիսի սկզբին, Իգոր Մանդելն ընկերության բաժնետերերին հրավիրել է ժողովի, որին ներկա են գտնվել նաև Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Ժողովը նախագահել է Իգոր Մանդելը, իսկ քարտուղարն է եղել Կարինե Ղազարյանը: Ժողովի ընթացքում Վոլոդյա Վարդանյանն ասել է, որ տարածքը վարձակալությամբ վերցնելու համար նշված բանկը պատրաստ է ամսեկան վճարել 700.000 դրամ գումար: Բաժնետերերով արտահայտել են իրենց դժգոհությունը՝ կապված վարձավճարի չափը քիչ լինելու հետ: Մինչ այդ Աշոտ Հակոբյանն ընդհատել է Իգոր Մանդելի ու մյուս բաժնետերերի միջև ծագած վիճաբանությունը և ասել, որ վերջինս նախկինում շփոթել է՝ ասելով, որ վարձավճարի ամսեկան չափը կազմելու է 7.000 դոլար, այն 700.000 դրամ է լինելու: Քանի որ ընկերությունը գտնվել է ֆինանսական ծանր վիճակում, համաձայնվել են ամսեկան 700.000 դրամ գումարով դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալ նշված բանկին: Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը վստահեցրել և խոստացել են, որ վարձավճարի չափը 2 տարի անց վերանայվելու ուզգալի չափով բարձրանալու է: Այդ օրը բաժնետերերով ոչ մի փաստաթուղթ, այդ թվում նաև ժողովի արձանագրություն չեն ստորագրել: Հաջորդ օրը դեղատուն են եկել Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը: Նրանք ներկայացրել են պայմանագիր, որում նշված է եղել, որ իրենց ընկերությունը նշված բանկին 10 տարի ժամկետով տարածքը տալիս է վարձակալությամբ, ամսեկան 700.000 դրամ գումարով: Պայմանագիրը կնիքված է եղել, թե ոչ՝ չի հիշում: Բաժնետեր Արուսյակ Ավետիսյանը վերցրել է այդ պայմանագիրը, տարել ու պատճենահանել է այն: Բոլոր 10 բաժնետերերով իրենց տվյալների դիմաց ստորագրել են: Նրանք 3-ով վերցրել են պայմանագիրը և հեռացել: Բաժնետերերով տվել են լիազորագիր՝ Վոլոդյա Վարդանյանի կողմից վարձակալության հարցերով ընկերության անունից հանդես գալու համար: Երկու թե երեք օր անց, նորից դեղատուն են եկել Իգոր Մանդելը, Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը, առաջարկել են դեղատան տարածքի գրավադրմամբ բանկից վարկ վերցնել: Նրանք ներկայացրել են, որ վարկի մարման ժամանակահատվածը լինելու է 5 տարով, սակայն ի վերջո, բաժնետերերով համաձայնվել են վարկ վերցնել 23 ամիս մարման ժամկետով, իսկ վարկի գումարի չափ է որոշվել 16.000.000 դրամ գումար: Հաջորդ օրը, նույն 3 անձինք կրկին եկել են դեղատուն՝ իրենց հետ բերելով վարկային պայմանագիր: Չի հիշում, թե պայմանագիրը կնիքված է եղել, թե ոչ: Իրենք ծանոթացել են պայմանագրի հետ, բոլոր բաժնետերերով ստորագրել են դրա վերջում, սակայն Վոլոդյա Վարդանյանը թույլ չի տվել պատճենահանել այն:
2008թ. ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին, Իգոր Մանդելը դեղատանը բաժնետերերին ասել է, որ Վոլոդյա Վարդանյանն ընկերության հաշվեհամարից հանել է 60.000.000 դրամ գումար և փախել է: Հարցին, թե որտեղից իրենց հաշվեհամարին այդքան գումար, Իգոր Մանդելը պատասխանել է, որ չգիտի: Ավելի ուշ, երբ արդեն հարուցվել է քրեական գործ, քննիչից իմացել է, որ դեղատան տարածքը նշված բանկին հանձնվել է ոչ թե 700.000 դրամ ամսեկան վարձավճարով, այլ՝ 2.450.000 դրամ գումարով, իսկ բանկից վարկ վերցված գումարի չափն իրականում կազմում է ոչ թե 16.000.000 դրամ, այլ՝ 193.000.000 դրամ:
/դ.ն.ա., հատոր 8, գ.թ. 88-89/
Տուժող Նազիկ Թադևոսյանն իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 86-88, 121-122/

Տուժող Ռիմա Աղաջանովայի ցուցմունքներով այն մասին, որ 1965թ.-ից աշխատում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես դեղագործ, հանդիսանում է ընկերության բաժնետերերից մեկը: 2007թ.-ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին՝ որպես իրենց ընկերության տնօրեն Իգոր Մանդելի ընկերոջ: 2007թ. մայիսին, Իգոր Մանդելն ընկերության մյուս 9 բաժնետերերին ծանոթացրել է Աշոտ Հակոբյանի հետ՝ կապված իրենց ընկերությանը պատկանող դեղատան մի մասը «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը վարձակալությամբ տրամադրելու հարցի հետ: 2007թ. մայիսին, Իգոր Մանդելը և Աշոտ Հակոբյանն իրենց ծանոթացրել են նաև Վոլոդյա Վարդանյանի հետ՝ ասելով, որ նա իրականացնելու է ընկերության հաշվապահական գործողություններն ու զբաղվելու է բանկին տարածքը վարձակալությամբ տրամադրելու հարցերով: 2007թ. մայիսի վերջին, կոնկրետ օրը չի հիշում, կայացել է ընկերության բաժնետերերի ժողով, որի ընթացքում Աշոտ Հակոբյանը, Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանն իրենց ներկայացրել են, որ բանկին տրվելիք տարածքի ամսեկան վարձակալության գումարի չափը կազմելու է 700.000 դրամ ու համոզել են համաձայնվել այդ տարբերակի հետ: Ժողովի ժամանակ Վոլոդյա Վարդանյանը ցույց է տվել պայմանագիր, որքանով հիշում է այն կնիքված է եղել ինչ-որ կնիքով, Պայմանագրում նշված է եղել, որ վարձավճարի ամսեկան չափը 700.000 դրամ գումար է: Իրենք համաձայնվել են այդ պայմանի հետ: Հաջորդ օրը, բաժնետերերով կրկին հավաքվել են: Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը նույնպես ներկա են գտնվել: Վերջինս տվել է տպագրված լիազորագիր, որն իրենք ստորագրել են՝ լիազորելով Վոլոդյային, որպեսզի նա ընկերության անունից կատարի դեղատան տարածքի մի մասը վարձակալությամբ տալու հետ կապված գործը: Այդ օրը ստորագրել են նաև ընկերության բաժնետերերի ժողովի արձանագրություն, որով տվել են համաձայնություն՝ դեղատան տարածքի մի մասը բանկին վարձակալությամբ տալու համար: Որոշ ժամանակ անց, բաժնետերերով կրկին հավաքվել են: Իգոր Մանդելը, Աշոտը Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը հարց են բարձրացրել՝ դեղատունը գրավադնելով՝ բանկից 16.000.000 դրամ գումարի չափով վարկ վերցնելու վերաբերյալ: Նրանք բաժնետերերին տվել են ստորագրել վարկային պայմանագիրը, որն իրենք կատարել են: Դրանում նշված է եղել, որ վարկի գումարի չափը 16.000.000 դրամ է: Ինչպես Աշոտ Հակոբյանը, այնպես էլ Իգոր Մանդելը և Վոլոդյա Վարդանյանը համոզել են իրենց, որ այդ չափով վարկ վերցնելը ձեռնտու է լինելու ընկերության համար: Վերջինս թույլ չի տվել պատճենահանել այդ փաստաթուղթը: 2008թ., երբ քրեական գործ է հարուցվել, բաժնետերերով տեղեկացել են, որ վարձակալության ամսեկան վճարը եղել է ոչ թե 700.000 դրամ, այլ՝ 2.450.000 դրամ, իսկ վարկ է վերցվել ոչ թե 16.000.000 դրամի, այլ՝ 193.000.000 դրամի չափով: /դ.ն.ա., հատոր 9, գ.թ. 70-73/
Տուժող Ռիմա Աղաջանովան իր ցուցմունքը պնդել է նաև Աշոտ Հակոբյանի և Իգոր Մանդելի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: /հատոր 10, գ.թ. 103-104, 141/
Վկա Ինգա Իգորի Մանդելի ցուցմունքներով այն մասին, որ մասնագիտությամբ բժիշկ-ռադիոլոգ է, աշխատում է պրոֆեսոր Ավդալբեկյանի անվան բժիշկների կատարելագործման ազգային ինստիտուտի ճառագայթային դիագնոստիկայի ախտորոշման ռենտգեն ամբիոնում որպես ասիստենտ և Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոնի ռենտգեն բաժանմունքի վարիչ: Իգոր Մանդելը իր հայրն է, վերջինս 1971թ.-ից աշխատում է Բագրատունյաց թիվ 14ա հասցեում գտնվող թիվ 8 դեղատանը որպես վարիչ: 1996թ.-ից դեղատունը սեփականաշնորհվել է և կազմավորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը, որի տնօրեն է նշանակվել հայրը: 2003-2004թթ.-ից ճանաչում է Աշոտ Հակոբյանին, ընտանիքներով մտերիմ են: Վոլոդյա Վարդանյանին մի քանի անգամ տեսել է Աշոտի տանը, միջոցառումների ժամանակ: Տեղեկացել է, որ դեղատան տարածքը 2007թ. հուլիսից տրվել է

վարձակալությամբ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը և Վոլոդյան հորը համոզել է միանվագ վերցնել 10 տարվա վարձավճարի գումարը, որպեսզի «Ֆորեքս»-ի միջոցով այդ գումարը դրվի շրջանառության մեջ և եկամուտ ստացվի: Վարկի ընդհանուր գումարը եղել է 193.000.000 դրամ, որից 16.000.000 դրամը փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարին, իսկ մնացած 176.000.000 դրամը փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-նը:
2007թ. նոյեմբերին, Աշոտի հետ հանդիպել են Վոլոդյային, սակայն վերջինս հրաժարվել է վճարել եկամտի տոկոսները՝ պատճառաբանելով, որ այն կատարելու է 6 ամիս անց: Կասկած է առաջացել, որ Վոլոդյան կարող է խաբել և որոշել են գումարը մաս-մաս վերցնել: Իր հաշվին 3 անգամով փոխանցվել են գումարներ՝ 5.000.000, 15.000.000 և 16.000.000 դրամ գումարների չափով, իսկ Աշոտի անվամբ, երեք դեպքով, 41.000.000 դրամ գումար: Ինքը նշված գործարքի հետ ոչ մի առնչություն չի ունեցել: Այն, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն դեղատան տարածքի մի մասը 2007թ. ամռանը վարձակալությամբ տվել է «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը և վերցրել է վարկով գումարներ, ինքը լսել է հորից ու Աշոտ Հակոբյանից: Լսել է, որ հայրը վստահել է Վոլոդյային՝ իրականացնել ընկերության ֆինանսական և հաշվապահական գործողություններին վերաբերվող հարցերը, սակայն վերջինս, որին Աշոտն իր հորը ներկայացրել է որպես լավ մասնագետ և վստահելի մարդ, խաբել է ու հափշտակել որպես վարկ վերցված գումարների մեծ մասը: Ինքը չի իմացել, թե տարածքը վարձակալությամբ կոնկրետ ինչ գումարով է տրվել բանկին: Չի իմացել նաև, թե որքան է կազմել վերցված վարկի գումարի չափը: Այդ խոսակցություններին, նաև ընկերության բաժնետերերի հետ անցկացված քննարկումներին չի մասնակցել և դրանցից ոչ մի տեղեկություններ չի ունեցել: Աշոտն ու հայրն իրեն այդ ժամանակահատվածում նշված գործերի վերաբերյալ որևէ մանրամասներ չեն ներկայացրել: Այդ մասին ինքն իմացել է ավելի ուշ, երբ 2008թ. ապրիլի վերջին, Վոլոդյայի որդիները սկսել են ահաբեկել և սպառնալ ինչպես իրեն, այնպես էլ հորն ու Աշոտին: Այդ ժամանակ էլ Աշոտն իրեն պատմել է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն դեղատան մի մասը ամսեկան 2.450.000 դրամ գումարով վարձակալությամբ տրվել է նշված բանկին, բանկից վերցվել է շուրջ 193.000.000 դրամ գումարի չափով վարկ և այդ գումարների մեծ մասը Վոլոդյան յուրացրել և անհետացել է: Երբ իր հաշվին փոխանցված վերը նշված գումարները կանխիկացրել է, չի իմացել, թե դրանք որ կազմակերպությունից են ուղարկվել իր հաշվին: Նշված բանկում իր անձնական հաշիվը բացված է եղել դեռևս 2006թ.: Աշոտն իրեն այդ 3 դեպքերում խնդրել է, որպեսզի ինքը գնա բանկ և անձնական հաշվից հանի գումարներ՝ չասելով, թե դրանք կոնկրետ որ կազմակերպությունից են ուղարկվել և ինչի համար: Ինքն էլ չի խառնվել նրա գործերին՝ մտածելով, որ նա գործունյա մարդ է և այդ գումարներն ուղարկվել են նրա բիզնեսի հետ կապված: Կանխիկացված բոլոր գումարներն ինքը տվել է Աշոտին: Միայն 2008թ. ապրիլի վերջին է Աշոտն իրեն ասել, որ իր հաշվեհամարին փոխանցված այդ գումարները եղել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն վարկի գումարները: Նա հայտնել է նաև, որ մեծ դժվարությամբ է կարողացել դրանք ստանալ Վոլոդյայից և դրանցով գնել է շինություն էրեբունի թաղամասում, որպեսզի այդ գումարները փրկի, դրանք տանը չպահի, որպեսզի Վոլոդյայից վերցնի մնացած գումարները ևս և դրանք տրամադրի «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը: Այդ ժամանակ Աշոտն ասել է նաև, որ Վոլոդյայի մոտ մնացել է 90.000.000 դրամի չափով գումար: /դ.ն.ա., հատոր 1, գ.թ. 167-168, հատոր 3, գ. թ. 3-5, հատոր 10, գ.թ. 142/
Վկա Գագիկ Բատիկյանի ցուցմունքներով այն մասին, որ Վոլոդյա Վարդանյանն իր համագյուղացին է: Բացի այդ, նա հանդիսանում է իր քրոջ խնամին: Տարիների ընթացքում կարողացել է տնտեսել 15.000 դոլարի չափով գումար, որը պահել է «նեղ օրվա», աղջկա նշանադրության ու հարսանիքի ծախսերը հոգալու նպատակով: 2007թ. կեսերին, իրենց գյուղում հանդիպել է Վոլոդյա Վարդանյանին,

որն առաջարկել է շրջանառության մեջ դնել գումար և ստանալ եկամուտ՝ բացատրելով, որ գումարը շրջանառության մեջ է դրվելու բանկի միջոցով: Ինքը Վոլոդյա Վարդանյանին է տվել 15.000 դոլար գումար, որը 2007թ. վերջին, վերջինս ամբողջությամբ վերադարձրել է իրեն: Ինքը Վոլոդյա Վարդանյանից ոչ մի շահույթ այդ գումարի հետ կապված չի ստացել, քանի որ վերջինս բացատրել է, որ գումարն ինքը շուտ է պահանջել: Վոլոդյա Վարդանյանի առաջարկությամբ ինքը «Պրոմեթեյ» բանկում բացել է անձնական հաշվեհամար, որին էլ Վոլոդյա Վարդանյանը փոխանցել է իր կողմից տրամադրված գումարները: Իրեն հայտնի չէ, թե այդ գումարները վերջինիս կողմից ում կամ ինչ միջոցների հաշվին են վերադարձվել իրեն ու թե ինչ հանցանքներ է կատարել նա: Նաև չգիտի, թե որն է եղել նրա անհետանալու պատճառը: /դ.ն.ա., հատոր 4 գ. թ. 100-102/
Վկա Ալմաստ Արևշատյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ Աշոտ Հակոբյանն իր ամուսինն է: Մոտավորապես 2005թ.-ից ճանաչում է Իգոր Մանդելին և մտերիմ հարաբերությունների մեջ են գտնվում նրա ընտանիքի անդամների հետ: Ամուսնու միջոցով Իգորը ծանոթացել է Վոլոդյա Վարդանյանի հետ, որը հանդիսանում է իր մորաքրոջ որդին: Նա զբաղվել է հաշվապահությամբ: Գիտի, որ 2007թ. ամռանն Իգորը դեղատունը հանձնել է վարձակալությամբ և վերցրել վարկ, որից 176.000.000 դրամ գումարը փոխանցել է Վոլոդյայի հաշվեհամարին: Վոլոդյան հաճախակի է այցելել իրենց տուն և միշտ խոսել է ինչ-որ «Ֆորեքս»-ի մասին՝ նշելով, որ դա շահութաբեր, եկամտաբեր գործ է և եթե գումարներ լինեն, կարելի է դրանով մեծ եկամուտներ վաստակել: Վոլոդյային հաջողվել է համոզել Աշոտին, որ Իգորի ստացած 176.000.000 դրամ գումարը փոխանցվի «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարին՝ «Ֆորեքս»-ի միջոցով շրջանառության մեջ դնելու համար: Իրենց տանը խոսակցության ժամանակ Վոլոդյան ասել է, որ այդ գումարից շրջանառության մեջ է դրել 38.000.000 և 17.000.000 դրամ գումար, իսկ հետագայում ասել է, որ միայն 110.000 ԱՄՆ դոլարն է կարողացել դնել շրջանառության մեջ՝ ամսեկան 4 տոկոս եկամտով: Վոլոդյան խախտել է ամուսնու հետ ձեռք բերված պայմանավորվածությունը, 3 ամսում չի վճարել տոկոսները և խոստացել է դա կատարել 6 ամիս անց: Աշոտը համաձայնվել է, սակայն 04.02.2008թ., Վոլոդյան և նրա որդին գիշերով եկել են իրենց տան բակ, դուրս են կանչել Աշոտին ու ասել են, որ նրանց աշխատակից Խաչիկին գողացել են, այդ իսկ պատճառով չեն կարող տալ տոկոսները:

15.02.2008թ., ինքն իր փեսայի հետ գնացել է Վոլոդյայի տուն՝ պարզաբանումներ ստանալու համար, վերջինս խնդրել է տալ ևս երեք ամիս ժամանակ, որպեսզի նա կարողանա վճարել գումարները: Այդ ժամանակ Վոլոդյան ասել է, որ Խաչիկին ոչ թե գողացել են, այլ Խաչիկը վախից թաքնվել է, քանի որ չի կարողացել կազմակերպել գումարի շրջանառությունը: Ինքն ամուսնու փոխարեն համաձայնություն է տվել սպասել մինչև մայիսի 6-ը, իսկ Վոլոդյան, գողացած 7.000.000 դրամի համար արդարացել է՝ նշելով, որ այն վերցրել է քավորին օգնելու նպատակով: Այս մասին ինքն ամուսնուն ոչինչ չի ասել՝ մտածելով, որ Վոլոդյան հետագայում այդ գումարն աննկատ կվերադարձնի բանկ, սակայն պարզվել է, որ ամուսինը վերջինիս արարքների մասին իրենից շուտ է իրազեկված եղել: 26.04.2008թ. կեսօրին, իրենց տուն է զանգահարել Վոլոդյայի որդի Արմանը և սպառնացել սպանել իր ընտանիքի բոլոր անդամներին, եթե հորը չվերադարձնեն: Իսկ ապրիլի 27-ին Վոլոդյայի որդիները իր որդուն տարել են ինչ-որ տեղ, որտեղ Արամ Վարդանյանը հարվածել ու հայհոյել է որդուն:
Առաջին ատյանի դատարանում վկա Ալմաստ Արևշատյանը հրաժարվել է իր ամուսնու վերաբերյալ ցուցմունքներ տալուց: /դ.ն.ա., հատոր 2, գ. թ. 148-150/
Վկա Արման Վարդանյանի ցուցմունքներով այն մասին, որ հայրը՝ Վոլոդյա Վարդանյանը, հանդիսացել է «Իրավագարանտ» և

«Եվրոֆինանս» ՍՊԸ-ների տնօրենը: Տեղյակ չէ, թե «Եվրոֆինանս» ՍՊԸ-նն ինչ գործառույթներ է իրականացրել, իսկ «Իրավագարանտ» ՍՊԸ-նը զբաղվել է հաշվապահական գործունեությամբ: Պատանի հասակից ճանաչում է Աշոտ Հակոբյանին, որը հանդիսանում է հոր մորաքրոջ աղջկա ամուսինը: Իգոր Մանդելին ճանաչում է շուրջ մեկ տարի, նրան այդ ընթացքում մի քանի անգամ տեսել է իրենց գրասենյակում, որը տեղակայված է Երևանի Բաղրամյան թիվ 3ա հասցեում: Իգոր Մանդելը գրասենյակ է եկել Աշոտի և իր հոր հետ: Գիտի, որ Իգորն ունի «Շենգավիթ» անունով ՍՊԸ-ն որի գործունեությամբ զբաղվել է հայրը: Աշոտ Հակոբյանը ունի «Խաչվառ» անվանումով ՍՊԸ-ն, որի հաշվապահությամբ նույնպես զբաղվել է հայրը: Ինքը տեղյակ է, որ Իգորն ունեցել է տարածք և այն տվել է բանկին վարձով, որի դիմաց ստացված գումարի որոշ մասը փոխանցել է «Իրավագարանտ» ՍՊԸ-ն հաշվին, սակայն թե կոնկրետ ինչ գումար և ինչ նպատակով է փոխանցվել, ինքը տեղյակ չէ: Գիտի, որ հետագայում ընկերության հաշվեհամարին գումար չի մնացել:
24.04.2008թ. հայրը տանից դուրս է եկել, որից հետո այլևս տուն չի վերադարձել: Հոր անհետացումից հետո «Իրավագարանտ» ՍՊԸ-ն տնօրեն է դարձել եղբայրը՝ Թորգոմ Վարդանյանը, իսկ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն տնօրեն՝ իր մյուս եղբայր Արամ Վարդանյանը: Տեղյակ լինելով, որ հայրն Աշոտ Հակոբյանի հետ ունեցել է գումարային խնդիրներ՝ 27.04.2008թ., ինքն իր հարսանիքի քավոր Վարդանի հետ գնացել է Աշոտ Հակոբյանի տուն՝ նրանից ճշտելու հոր գտնվելու վայրը: Աշոտը տանը չի եղել, հանդիպել են նրա որդի Արմանին և երեքով քայլել են բակում: Այդ ընթացքում Արմանից հետաքրքրվել է իր հոր գտնվելու վայրի մասին: Քանի որ իրենց բարեկամ Արմեն Ումրշատյանից մինչ այդ լսել է, որ Աշոտը հայտարարել է, որ սպանելու է իր հորը ու տեղյակ լինելով, որ Աշոտն իր հորից ինչ-որ գումարներ է վերցրել ու չի վերադարձրել, սկսել է կասկածել, որ հոր անհետանալու հետ Աշոտը կարող է կապ ունենալ: Արման Հակոբյանի հետ զրույցի ընթացքում իրենց միջև վիճաբանություն և քաշքշուկ չի եղել, հայհոյանքներ չեն հնչել: Այդ զրույցին ներկա են եղել միայն իրենք երեքով:
26.04.2008թ., ինքն ու Վարդանը գնացել են Իգոր Մանդելի տան բակ և խնդրել են, որպեսզի Իգորը դուրս գա տնից: Ինքը նրանից հետաքրքրվել է իր հոր գտնվելու վայրի մասին, սակայն Իգոր Մանդելը պատասխանել է, որ դրա վերաբերյալ տեղեկություններ չունի: Այդ խոսակցության ընթացքում, որին ներկա են եղել նորից երեքով, ոչ մի վիճաբանություն, քաշքշուկ տեղի չի ունեցել և հայհոյանքներ չեն հնչել: Հետո իրենք դիմել են ոստիկանություն՝ հաղորդում տալով հոր անհետացման վերաբերյալ: Այդ ընթացքում շարունակել են հոր որոնումները, սակայն նրան չեն գտել:
Հետագայում Արման Վարդանյանը ցուցմունք է տվել, որ տեղյակ է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից «Եվրոֆինանս» ՍՊԸ-նն է փոխանցվել 176.000.000 դրամ գումար, սակայն այդ գումարը հոր տնօրինած ընկերությանն է փոխանցվել ոչ թե մեկ տարի ժամանակով փոխառությամբ՝ ամսեկան 4 տոկոս տոկոսադրույքի վճարման պայմանով, այլ գումարը փոխառությամբ, անտոկոս, 10 տարի ժամկետով փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-նը: Հոր անհետանալուց հետո, ինքը գտել է այդ պայմանագիրը՝ կնքված նշված երկու ՍՊԸ-ների միջև: /դ.ն.ա., հատոր 1, գ.թ. 96-99, հատոր 3, գ.թ. 51-52, 206-207, հատոր 8, գ.թ. 189-190, հատոր 9, գ.թ. 5, 19-20/
Վկա Արման Վարդանյանն Աշոտ Հակոբյանի հետ 05.08.2009թ. առերես հարցաքննության ժամանակ նշել է, որ ականատես է եղել, թե ինչպես Կարապետ Սաղոյանը, իր հորը պատկանող գրասենյակում, առձեռն Աշոտ Հակոբյանին է տվել դոլարների թղթադրամներ՝ նշելով, որ դրա չափը 70.000 դոլար է: Ինքը պատահական է մտել իր հոր գրասենյակ և տեսել դա, սակայն չի հիշում, թե դա կոնկրետ երբ է տեղի ունեցել: Չի կարող ասել նաև, թե այդ գումարն Աշոտ Հակոբյանը հետո դուրս հանել է հոր

աշխատասենյակից, թե ոչ: /հատոր 4, գ.թ. 127-131/
Վկա Կարապետ Սաղոյանի ցուցմունքներով այն մասին, որ 22.12.2006թ.-ից հանդիսանում է իր ընկեր Սիմոն էլբակյանի կողմից հիմնադրված «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն տնօրենը: 2007թ. հոկտեմբերի սկզբին, իր ընկեր էդիկ Սահակյանն ասելով, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-նը Դիլիջան քաղաքում ունի չօգտագործված կոյուղու ջրագծի 1.000մմ տրամագծով խողովակներ, առաջարկել է մասնակցել խողովակների ապամոնտաժման և հետագայում վաճառքի գործընթացին: Ինքը համաձայնվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-մբ իրականացնել ապամոնտաժման և վաճառքի գործողությունները: Իրենք դիմել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-նը՝ առաջարկելով մասնակցել նշված գործընթացին: 26.10.2007թ. կնքել են պայմանագիր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն հետ՝ Դիլիջան քաղաքում գտնվող խողովակաշարի 5.700 գծամետր խողովակները ապամոնտաժելու և պահեստավորելու մասին: Նախքան պայմանագիր կնքելը, իրենց անհրաժեշտ է եղել գտնել խողովակների գնորդի, որը նախապատրաստական աշխատանքների կատարման համար պատրաստ կլիներ վճարել կանխավճար: Այդպիսի առաջարկով դիմել են իր ծանոթ Աշոտին, որը պատրաստակամություն է հայտնել խողովակների գնորդ գտնել: Աշոտի հետ գնացել են Երևանի Բաղրամյան փողոցի սկզբնամասում գտնվող գրասենյակ, որը պատկանել է Վոլոդյա Վարդանյանին: Այնտեղ ծանոթացել են ինչպես վերջինիս, այնպես էլ Աշոտ Հակոբյանի հետ ու դիմել նշված առաջարկով: Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը ցանկություն են հայտնել տեղում տեսնել խողովակները, որից հետո գալ համաձայնության: Չի հիշում, թե ով է նրանց տարել և Դիլիջանում ցույց է տվել խողովակները, որից հետո նորից հանդիպել են նշված գրասենյակում: Հանդիպմանը ներկա են գտնվել ինքը, էդիկը, ընկեր Աշոտը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը: Քննարկել են խողովակների ձեռքբերման հետ կապված հարցերը և որոշել են կազմել պայմանագիր: Հաջորդ օրն ինքը, էդիկը, ընկեր Աշոտը և Վոլոդյան ծանոթացել են պայմանագրին ու համոզվել, որ դրանում նշված են այն պայմանները, որոնք արդեն քննարկել են: Որպես խողովակներն իրացնող և «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն ներկայացուցիչ, պայմանագիրը կնքել է և ստորագրել է ինքը, իսկ որպես խողովակների ձեռք բերող, «Խաչվառ» ՍՊԸ-ն անունից պայմանագիրը կնքել է Վոլոդյա Վարդանյանը: Հաջորդ օրը վերջինս «Կոնվերս» բանկում գտնվող հաշվեհամարից փոխանցել է 35.000.000 դրամ՝ իր ընկերության հաշվեհամարին: Գումարն ինքը կանխիկացրել է և ամբողջությամբ հանձնել էդիկին: Ապամոնտաժման աշխատանքները տևել են 5 օր, որից հետո դադարեցվել են, որի մասին տեղյակ են պահել Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին: Այդ ժամանակ նրանք երկուսով առաջարկել են տրված 35.000.000 դրամը ետ վերադարձնել: Հենց հաջորդ օրը, ինքը, էդիկը, Ժորա Գևորգյանը գնացել են Երևանի Բաղրամյան թիվ 3 հասցեի գրասենյակ և էդիկը Վոլոդյային ու Աշոտ Հակոբյանին կանխիկ վերադարձրել են ստացված գումարից 70.000 դոլար գումարը: Գումարն ամբողջությամբ չի վերադարձվել, քանի որ դրա մի մասը ծախսվել է որոշակի չափով խողովակների ապամոնտաժման վրա: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ խողովակների ապամոնտաժման թույլտվությունը ստանալուց հետո էդիկը նորից գումարը հետ կվերցնի՝ աշխատանքները շարունակելու համար, սակայն թույլտվությունը չի ստացվել և գործարքը չի կատարվել: Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո, նրա որդիները, մասնավորապես Թորգոմը, հանդիպելով իրեն՝ առաջարկել են իրեն տալ ևս 20.000 դոլար գումար և փաստաթղթեր ձևակերպել, որ խողովակների համար տրամադրված գումարներն ամբողջությամբ վերադարձվել են, սակայն ինքը չի համաձայնվել: /դ.ն.ա., հատոր 2, գ.թ. 155-157, հատոր 3, գ. թ. 276-278, հատոր 8, գ. թ. 160-163, հատոր 9, գ.թ. 124-126/
Վկա Կարապետ Սաղոյանը խողովակների դիմաց ստացված գումարների մի մասը Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին

հետ վերադարձնելու մասին իր ցուցմունքը պնդել է նաև վերջինիս հետ առերես հարցաքննության ժամանակ: /հատոր 3, գ. թ. 281-285/
Վկա էդուարդ Սահակյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ Ժորա Գևորգյանի միջոցով ծանոթացել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն տնօրեն Կարապետ Սաղոյանի հետ: Իր ապրուստը հոգացել է խողովակների ապամոնտաժում կատարելու գործընթացը կազմակերպելու միջոցով: 2007թ. հուլիս-օգոստոս ամիսներին, տեղեկանալով, որ Դիլիջանի ոռոգման ցանցի կոլեկտորի խողովակները ենթակա են ապամոնտաժման, պայմանավորվածություն է ձեռք բերել Կարապետ Սաղոյանի հետ՝ խողովակների ապամոնտաժման և վաճառքի հարցերն իրականացնել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն միջոցով: Աշոտ Պետրոսյանի միջոցով ծանոթացել է Աշոտ Հակոբյանի և Վոլոդյա Վարդանյանի հետ, որոնք համաձայնվել են գնել ապամոնտաժված խողովակների մեծ խմբաքանակ՝ պատրաստակամություն հայտնելով վճարել կանխավճար: Նրանք նախապես գնացել են Դիլիջան ու անձամբ տեսել են ջրագիծը: «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն և «Խաչվառ» ՍՊԸ-ն միջև կնքվել է խողովակների առուվաճառքի պայմանագիր, ըստ որի՝ «Ռոլֆերմեր» ՍՊԸ-նը «Խաչվառ» ՍՊԸ-նը պետք է իրացներ խողովակների մեծ խմբաքանակ: Դրանից հետո, «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվից «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն հաշվին է փոխանցվել 35.000.000 դրամ գումար, որը Կարապետ Սաղոյանը կանխիկացրել և ամբողջությամբ տվել է իրեն: Խողովակների ապամոնտաժման թույլտվությունը ստանալուց հետո, ինքը տեխնիկական միջոցներ է տեղափոխել Դիլիջան և սկսել է ապամոնտաժման աշխատանքները: Մի քանի օր այդ աշխատանքները կատարելուց հետո, ոստիկանության աշխատակիցները չեն թույլատրել շարունակել աշխատանքները, որից հետո ինքը, իր մոտ մնացած 70.000 դոլար գումարը Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում տվել է վերջինիս և Աշոտ Հակոբյանին: Մյուս գումարը, շուրջ 11-12 միլիոն դրամը ծախսվել է խողովակների մի մասի ապամոնտաժման հետ կապված: Գումարի վերադարձմանը ներկա են գտնվել նաև Ժորա Գևորգյանը և Աշոտ Պետրոսյանը: 70.000 դոլար գումարը բոլոր ներկաների մոտ հաշվելուց ու վերահաշվելուց հետո, Աշոտ Հակոբյանն այն տվել է Վոլոդյա Վարդանյանին, որը վերցնելով ամբողջ գումարը՝ տեղավորել է գրասենյակում գտնվող չհրկիզվող պահարանում: Այնուհետև իրեն չի հաջողվել ստանալ թույլտվություն՝ խողովակների հետագա ապամոնտաժումը և վաճառքն իրականացնելու համար և գործարքը չի իրականացվել: /հատոր 9, գ.թ. 118-121/
Վկաներ Ժորա Գևորգյանի և Աշոտ Պետրոսյանի նույնաբովանդակ ցուցմունքներով այն մասին, որ 2007թ., դեպքերի բերումով իրենք մասնակցել են էդիկ Սահակյանի կողմից վաճառվող խողովակների իրացման հետ կապված մի շարք բանակցություններին և խոսակցություններին, որոնք վերաբերվել են Կարապետ Սաղոյանի տնօրինած «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն միջոցով, էդիկ Սահակյանի անմիջական մասնակցությամբ, «Խաչվառ» ՍՊԸ-նը խողովակներ վաճառելու հարցերին: Խողովակները ձեռք բերող անձանցից բանակցություններին մասնակցել են Վոլոդյա Վարդանյանը, Աշոտ Հակոբյանը, Կարապետ Սաղոյանը և իրենք: Այդ գործընթացից տեղյակ են, որ էդիկը նպատակադրվել է Դիլիջանում գտնվող ջրմուղ-կոյուղու կոլեկտորից ապամոնտաժել խողովակներ և դրանք վաճառել Վոլոդյայենց: Այդ առումով Վոլոդյայենք գումարներ են փոխանցել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-նը, որի վերաբերյալ կնքվել են պայմանագրեր: «Ռոլֆերմեր» ՍՊԸ-նը փոխանցվել են գումարներ, սակայն խողովակների որոշակի քանակության ապամոնտաժումը կատարելուց հետո աշխատանքները դադարեցվել են, որից հետո իրենք, Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում ականատես են եղել, որ Կարո Սաղոյանի և Աշոտ Հակոբյանի ներկայությամբ, էդիկը Վոլոդյային է հանձնել 70.000 դոլար գումար: Աշոտ Հակոբյանը պահանջել է հետ վերադարձնել մյուս գումարները, սակայն էդիկը նշել է, որ խողովակների ապամոնտաժման հետ կապված

կատարվել են ծախսեր: Աշոտ Հակոբյանը հորդորել է, որ մոտակա ժամանակներում մնացած գումարը չվերադարձնելու դեպքում էդիկը կարող է լուրջ խնդիրների առաջ կանգնել: Գումարը վերադարձնելու հետ կապված որևէ փաստաթուղթ չի ձևակերպվել:
/դ.ն.ա., հատոր 8, գ. թ. 166-169, 207-210/
Վկա Աշոտ Պետրոսյանը խողովակների դիմաց ստացված գումարների մի մասը Վոլոդյա Վարդանյանին և Աշոտ Հակոբյանին հետ վերադարձնելու մասին իր ցուցմունքը պնդել է նաև վերջինիս հետ առերես հարցաքննության ժամանակ/ /հատոր 9, գ. թ. 8-14/
Վկա Արմեն Ումրշատյանի ցուցմունքներով այն մասին, որ Վոլոդյա Վարդանյանը հանդիսանում է իր քրոջ որդին: Նրա հետ գտնվում է ջերմ բարեկամական հարաբերությունների մեջ: Նույնատիպ հարաբերությունների մեջ է գտնվում իր մյուս հորաքրոջ փեսա Աշոտ Հակոբյանի հետ: Ինչպես Աշոտը, այնպես էլ Վոլոդյան գտնվել են լավ հարաբերությունների մեջ և համատեղ իրականացրել են տնտեսական գործունեություն: Ինքը չի խառնվել նրանց ֆինանսական հարցերին, սակայն գիտի, որ Աշոտը մեծ գումարներ, շուրջ 160.000.000 դրամ փոխառությամբ տվել է Վոլոդյային և այդ գումարները պատկանել են «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն փայատիրոջը: 2007թ. աշնանը, Վարդանյանի ու Հակոբյանի հարաբերությունները ֆինանսական խնդիրների հետ կապված սկսել են լարվել: Ինքը փորձել է հարթել դրանք: 2008թ. իրեն հաջողվել է հարթել վեճը և Վոլոդյան խոստացել է խողովակների հետ կապված մեծ գործարք կատարելով՝ ամբողջությամբ հատուցել գումարները: 25.04.2008թ., Վոլոդյայի որդիներ Արմանը, Արամը և Թորգոմը իրեն տեղեկացրել են, որ նախորդ օրը Վոլոդյան անհետացել է: Քանի որ Վոլոդյան միայն խնդիր է ունեցել Աշոտի հետ, ինքը նրանց ներկայությամբ զանգահարել է Աշոտին ու հետաքրքրվել Վոլոդյայի գտնվելու վայրի վերաբերյալ: Աշոտն իրեն հավաստիացրել է, որ այդ մասին որևէ տեղեկություն չունի: Իրենք սկսել են որոնումներ իրականացնել, որոնք եղել են անարդյունք: /դ.ն.ա., հատոր 1, գ.թ. 111-113/
Վկա Աննա Գրիգորյանի ցուցմունքներով այն մասին, որ 2003թ. անցել է հաշվապահական դասընթացներ Երևանի Բաղրամյան թիվ 3ա հասցեում գտնվող գրասենյակում, Վոլոդյա Վարդանյանի մոտ, որից հետո սկսել է աշխատել «Իրավագարանտ» ՍՊԸ-ում՝ որպես հաշվապահ: Այդ ընկերությունում աշխատել է մինչև 2007 թվականի օգոստոսի 01-ը, որից հետո աշխատել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես հաշվապահ: Իգոր Մանդելին ճանաչում է 2007թ. ամռանից, երբ նա սկսել է հաճախել «Իրավագարանտ» ՍՊԸ-ն գրասենյակ: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում որպես հաշվապահ սկսել է աշխատել Վոլոդյա Վարդանյանի միջնորդությամբ: Վերջինս և Իգոր Մանդելը կատարել են բոլոր թղթաբանությունը՝ մուտք-ելք-փոխանցումներ, իսկ ինքը նայելով թղթերին և քաղվածքներին՝ կազմել է հաշվետվությունները: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն վարձակալական պայմանագրի մասին տեղեկացված է եղել բանավոր, սակայն ոչ մի առնչություն չի ունեցել պայմանագրի կնքման և գործարքի հետագա զարգացման հետ: Այդ առումով կատարել է միայն հարկային դաշտի հետ կապված անհրաժեշտ հաշվապահական ձևակերպումներ: Այդ գործարքով զբաղվել է Վոլոդյա Վարդանյանը և չգիտի, թե վերջինս երբ է սկսել զբաղվել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն ֆինանսական գործունեության հետ կապված հարցերով: Վերջին անգամ նրա հետ զրուցել է 23.04.2008թ. : Այդ ժամանակ Վոլոդյան իրեն տեղեկացրել է, որ 25.04.2008թ. իրենց գրասենյակ է գալու Իգոր Մանդելը, որպեսզի կնքի վճարման հանձնարարականներ և խնդրել է, որպեսզի ինքը լինի գրասենյակում և այդ հանձնարարականները տրամադրի Իգոր Մանդելին: Նշված օրն Իգոր Մանդելն առավոտյան եկել և կնքել է Վոլոդյայի կողմից թողնված հանձնարարականները, սակայն այդ օրը Վոլոդյան չի եկել գրասենյակ, իսկ Իգոր Մանդելն էլ, նրան երկար սպասելուց հետո, թողել ու գնացել է: Հաջորդ օրն ինքը Վոլոդյա Վարդանյանի որդիներից տեղեկացել է, որ նա անհետացել է: /դ.ն.ա., հատոր 2, գ.թ. 6-7/

Դատահաշվապահական փորձաքննության 29.10.2009թ. թիվ 10040909/31010909 եզրակացությամբ, որի համաձայն «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն 193407000 դրամ վարկը տրամադրվել է վարկային պայմանագրով նախատեսված՝ սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով, սակայն բանկի կողմից չի հսկվել վարկային միջոցների նպատակային ծախսը, իսկ «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն տնօրենի կողմից նշված 193407000 դրամ վարկային միջոցները օգտագործվել են սույն եզրակացության հետազոտական մասում նշված և վարկի նպատակայնության հետ կապ չունեցող այլ տարբեր նպատակներով:
«Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն և «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն կողմից վարձակալության պայմանագրով՝ «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն կողմից վարձակալությամբ տարածքի տրամադրման վերաբերյալ, բխում է «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն կանոնադրության և ՍՊԸ-նհիմնադիրների շահերից, քանի որ այն կատարվել է շահույթ ստանալու նպատակով ու «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ն հիմնադիր-մասնակիցների ընդհանուր ժողովի հիման վրա:
Իսկ ՍՊԸ-ի տնօրենի կողմից մյուս հիմնադիրներին, ըստ նախաքննության ձեռք բերված տվյալների ստացվող եկամտի չափը պակաս ցույց տալու նպատակով ներկայացվել է կեղծ վարձակալության պայմանագիր, որտեղ վարձավճարի չափը 2450000 դրամի փոխարեն ցույց է տրվել 700000 դրամ:
«էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193407000 դրամ վարկը, վերջինիս կողմից չի օգտագործվել վարկային պայմանագրով նախատեսված՝ սեյսմիկ բարձիկների արտադրության համար կապիտալ ներդրումային աշխատանքներ ծավալելու նպատակով, այլ վարկառուի կողմից օգտագործվել են հետևյալ նպատակներով.
Նպատակային վարկի գումարներից 176.000.000 դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գտնվող «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին:
01.08.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով «էյջ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկի գումարներից 16.000.000 դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Արարատ Բանկ» ԲԲԸ-ում գտնվող «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվին:
06.08.2007թ. թիվ 7576, 04.09.2007թ. թիվ 7, 08.11.2007թ. թիվ 16, 21.11.2007թ. թիվ 6 և 06.12.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 69.500.000 դրամ գումարներ են փոխանցվել նրա թիվ 1660000506240100 անձնական հաշվին:
09.08.2007թ. թիվ 9, 01.10.2007թ. թիվ 10 և 23.01.2008թ. թիվ 15 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 37.385.000 դրամ գումարներ են փոխանցվել Ինգա Մանդելի թիվ 1660000487500100 անձնական հաշվին:
01.10.2007թ. թիվ 11, 24.12.2007թ. թիվ 14 և 23.01.2008թ. թիվ 16 վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 34.425.000 դրամ գումարներ են փոխանցվել Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին:
01.10.2007թ. թիվ 09 և 12.10.2007թ. թիվ 12 վճարման

հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 505.000 դրամ գումարներ են փոխանցվել Գագիկ Բատիկյանի թիվ 00503500100 անձնական հաշվին:
30.10.2007թ. թիվ 13 և 31.10.2007թ. թիվ վճարման հանձնարարագրերով «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից 33.000.000 դրամը Վոլոդյա Վարդանյանի կողմից փոխանցվել է Աշոտ Հակոբյանի տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվին, որից հետո էլ խողովակներ ձեռք բերելու պատրվակով «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվից 35.000.000 դրամը փոխանցվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն հաշվին:
23.01.2008թ. թիվ 01 վճարման հանձնարարագրով Վոլոդյա Վարդանյանի թիվ 00506240100 անձնական հաշվից Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին է փոխանցվել 7.860.000 դրամ:
26.09.2007թ. թիվ 35 և 25.10.2007թ. թիվ 1276 արժույթի վաճառքի անդորրագրերով, 08.11.2007թ. թիվ 15 վճարման հանձնարարագրով, 25.10.2007թ. թիվ 1271 դրամարկղի մուտքի կտրոնով, ինչպես նաև 30.10.2007 թ. թիվ 7, 26.11.2007 թ. թիվ 327, 10.12.2007թ. թիվ 25, 19.12.2007թ. թիվ 623, 19.12.2007թ. թիվ 415 և 23.01.2007թ. թիվ 8003 դրամարկղի մուտքի օրդերներով Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից 5.616.500 դրամի, դոլարի փոխարժեքով ընդհանուր գումարով 17.000 դոլարը փոխանցել է իր իսկ թիվ 00506240101 տարադրամային հաշվին, դրան մուտքագրելով նաև 40.000 դոլար, որից հետո 24.000 դոլարը փոխանցել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղ՝ Անժելա Ավագյանի հաշվին, 5.000.000 դրամը փոխանցել է Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, իսկ այնուհետև 37.000 դոլարն ետ է ստացել իր այդ հաշվից:
06.08.2007թ. թիվ 7578, 06.08.2007թ. թիվ 25, 04.09.2007թ. թիվ 8, 04.09.2007թ. թիվ 13, 25.09.2007թ. թիվ 6, 26.09.2007թ. թիվ 37, 01.10.2007թ. թիվ 12, 08.10.2007թ. թիվ 9, 08.10.2007թ. թիվ 16, 03.12.2007թ. թիվ 392 և 06.12.2007թ. թիվ 13 դրամարկղի ելքի կտրոններով Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից կանխիկ ստացել է ընդհանուր 58.782.500 դրամ:
/հատոր 9, գ.թ. 74-96/
Դատաձեռագրաբանական փորձաքննության 07.05.2009թ. թիվ 11830901 եզրակացությամբ, որի համաձայն «Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի ձախ անկյունում «Քարտուղար» բառի տակ «ստորագրություն» տողագծի վրա տեղավորված «Мандель Игорь» ձեռագիր գրառումը կատարվել է Իգոր Մանդելի կողմից:
Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի ձախ անկյունում «Քարտուղար» բառի դիմաց տողագծի վրա տեղավորված ստորագրությունը կատարվել է Իգոր Մանդելի կողմից:
Պարզել, Անուշ Նազարյանի, թե մեկ այլ անձի կողմից է կատարվել փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի աջ անկյունում «Նախագահ» բառի տակ տողագծի վրա տեղավորված «Նազարյան Անուշ» ձեռագիր գրառումը, հնարավոր չէ՝ հետազոտելի ձեռագիր գրառման ինֆորմատիվ գրաֆիկական նյութի սակավության պատճառով:
Փորձաքննությանը տրամադրված՝ 25.07.2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրության քսերոպատճենի ներքևի աջ անկյունում «Նախագահ» բառի դիմաց տողագծի վրա տեղավորված ստորագրության և Անուշ Նազարյանի

	ստորագրության նմուշների միջև համեմատական հետազոտություն չի անցկացվել՝ հետազոտելի ստորագրության տառ չկազմող տառադարձության պատճառով»: /հատոր 3 գ.թ. 291-295/ Դատաապրանքագիտական փորձաքննության 11.02.2010թ. թիվ 41160907 եզրակացությամբ, որի համաձայն «Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող և հետազոտման առարկա հանդիսացող գրասենյակային շինության և հողատարածքի ընդհանուր շուկայական արժեքը, փորձաքննությամբ գնահատման առաջադրված՝ 22.11.2007թ. դրությամբ և տեղազննության կատարման պահին առկա ապրանքային վիճակով, գնահատվում է 112.650.000 դրամ: /հատոր 9, գ.թ. 127-135/ Իրեղեն ապացույցներով՝ Իգոր Մանդելի ստորագրությամբ և ընկերության մասնակից Անուշ Նազարյանի կեղծված ստորագրությամբ, 25.07.2007թ. ամսաթվով, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությամբ, որի համաձայն ընկերության մասնակիցներն իբրև թե անցկացնելով ընդհանուր ժողով՝ որոշել են սեփականության իրավունքով իրենց պատկանող, Բագրատունյաց թիվ 14 շենքի թիվ 110 հասցեով գտնվող, 508,1 քմ մակերեսով դեղատունը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ–ում գրավադրելով՝ ստանալ 193.407.000 դրամ գումարի չափով վարկ: /հատոր 3, գ.թ. 162, հատոր 10, գ.թ. 206/ 19.06.2007թ. ամսաթվով, «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տարածքը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ կեղծված տվյալներով՝ ամսական վարձավճարի չափը 700.000 դրամ նշված, պայմանագրի պատճենով: /հատոր 1, գ.թ. 202-206, հատոր 10, գ.թ. 206/ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից հափշտակված գումարներով Աշոտ Հակոբյանի կողմից ձեռք բերված՝ ք. Երևան, Այվազովսկու թիվ 46/1 հասցեում գտնվող անշարժ գույքով: /հատոր 9, գ.թ. 140/ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ներկայացուցչի և Վոլոդյա Վարդանյանի միջև 19.06.2007թ. կնքված պայմանագրով, որի համաձայն «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը պատկանող, ք. Երևան, Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատան տարածքի մի մասը՝ 343,25 քառակուսի մետր մակերեսով, 10 տարի ժամկետով, ամիսը 2.450.000 դրամ վարձավճարով, վարձակալությամբ հանձնվել է նշված բանկին: /հատոր 8, գ.թ. 11-20, հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անունից, Իգոր Մանդելի կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ 25.07.2007թ. և 26.07.2007թ. կնքված բանկային ծառայության (վարկային) և անշարժ գույքի գրավի (հիփոթեկի) մասին պայմանագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը գրավադրելով իրեն պատկանող, ք. Երևան, Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող տարածքը, 10 տարի մարման ժակետով, 9 տոկոս տոկոսադրույքով, ամսեկան 2.449.998 դրամ վճարումներ կատարելով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից ստացել է 193.407.000 դրամի չափով վարկ: /հատոր 4, գ.թ. 201-218, հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 31.07.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով, որի համաձայն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկի գումարներից 176.000.000 դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ, նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում գտնվող «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 01.08.2007թ. թիվ 2 վճարման հանձնարարագրով, որի համաձայն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը տրամադրված 193.407.000 դրամ նպատակային վարկի գումարներից 16.000.000 դրամը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն անվամբ, նշված բանկում բացված ընթացիկ հաշվից փոխանցվել է «Արարատ Բանկ» ԲԲԸ-ում գտնվող «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/

	06.08.2007թ. թիվ 7576, 04.09.2007թ. թիվ 7, 08.11.2007թ. թիվ 16, 21.11.2007թ. թիվ 6 և 06.12.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 69.500.000 դրամ գումարներ են փոխանցվել նրա թիվ 1660000506240100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 09.08.2007թ. թիվ 9, 01.10.2007թ. թիվ 10 և 23.01.2008թ. թիվ 15 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 37.385.000 դրամ գումարներ են փոխանցվել Ինգա Մանդելի թիվ 1660000487500100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 01.10.2007թ. թիվ 11, 24.12.2007թ. թիվ 14 և 23.01.2008թ. թիվ 16 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից, նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 34.425.000 դրամ գումարներ են փոխանցվել Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10 գ.թ. 207-211/ 01.10.2007թ. թիվ 09 և 12.10.2007թ. թիվ 12 վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից, նշված օրերին փոխառության գումարների անվան տակ Վոլոդյա Վարդանյանի կողմից 505.000 դրամ գումարներ են փոխանցվել վերջինիս բարեկամ Գագիկ Բատիկյանի թիվ 00503500100 անձնական հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 30.10.2007թ. թիվ 13 և 31.10.2007թ. թիվ վճարման հանձնարարագրերով, որոնց համաձայն՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվից «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված 176.000.000 դրամ գումարից 33.000.000 դրամը Վոլոդյա Վարդանյանի կողմից փոխանցվել է Աշոտ Հակոբյանի տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվին, որից հետո էլ խողովակներ ձեռք բերելու պատրվակով «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվից 35.000.000 դրամ գումարը փոխանցվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն հաշվին: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 23.01.2008թ. թիվ 01 վճարման հանձնարարագրով, որի համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանի թիվ 00506240100 անձնական հաշվից Աշոտ Հակոբյանի թիվ 00646250100 անձնական հաշվին է փոխանցվել 7.860.000 դրամ գումար: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/ 26.09.2007թ. թիվ 35 և 25.10.2007թ. թիվ 1276 արժույթի վաճառքի անդորրագրերով, 08.11.2007թ. թիվ 15 վճարման հանձնարարագրով, 25.10.2007թ. թիվ 1271 դրամարկղի մուտքի կտրոնով, ինչպես նաև 30.10.2007թ. թիվ 7, 26.11.2007թ. թիվ 327, 10.12.2007թ. թիվ 25, 19.12.2007թ. թիվ 623, 19.12.2007թ. թիվ 415 և 23.01.2007թ. թիվ 8003 դրամարկղի մուտքի օրդերներով, որոնց համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից 5.616.500 դրամի, ԱՄՆ դոլարի փոխարժեքով 17.000 դոլար ընդհանուր գումարը փոխանցել է իր իսկ թիվ 00506240101 տարադրամային հաշվին՝ դրան մուտքագրելով նաև 40.000 դոլար գումար, որից հետո 24.000 դոլար գումարը փոխանցել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Կոնստանտինովկա գյուղ՝ իր բարեկամ Անժելա Ավագյանի հաշվին, 5.000.000 դրամ գումարը փոխանցել է բարեկամ Գագիկ Բատիկյանի անձնական հաշվին, իսկ 37.000 դոլարն այնուհետև հետ է ստացել իր այդ հաշվից: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/

06.08.2007թ. թիվ 7578, 06.08.2007թ. թիվ 25, 04.09.2007թ. թիվ 8, 04.09.2007թ. թիվ 13, 25.09.2007թ. թիվ 6, 26.09.2007թ. թիվ 37, 01.10.2007թ. թիվ 12, 08.10.2007թ. թիվ 9, 08.10.2007թ. թիվ 16, 03.12.2007թ. թիվ 392 և 06.12.2007թ. թիվ 13 դրամարկղի ելքի կտրոններով, որոնց համաձայն՝ Վոլոդյա Վարդանյանն իր թիվ 1660000506240100 անձնական հաշվից կանխիկ ստացել է 58.782.500 դրամ ընդհանուր գումար: /հատոր 9, գ.թ. 74-96, հատոր 10, գ.թ. 207-211/

Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Աշոտ Հակոբյանն իրեն մեղավոր չի ճանաչել, նախաքննության ընթացքում հրաժարվել է առաջադրված մեղադրանքի շուրջ ցուցմունքներ տալուց և պնդել է իր նախկին ցուցմունքներն այն մասին, որ հանդիսանում է «Խաչվառ» ՍՊԸ-ն տնօրենը, որի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենցի 1: Վոլոդյա Վարդանյանը հանդիսանում է կնոջ մորաքրոջ որդին, որին ճանաչում է մանկությունից և որի հետ ունեցել են լավ հարաբերություններ: Իր ՍՊԸ-ն բացման օրվանից Վոլոդյան աշխատել է որպես հաշվապահության գծով փոխտնօրեն: Նա հանդիսանում է նաև «Եվրոֆինանս», «Իրավագարանտ» և «Ռուսաֆիլ» ՍՊԸ-ների տնօրենը: Որքանով տեղյակ է, Վոլոդյան 23.04.2008թ.-ից մինչև մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, «Իրավագարանտ» և «Եվրոֆինանս» ՍՊԸ-ներն անվանափոխել է իր որդիներ Արման, Արամ և Թորգոմ Վարդանյանների անուններով: Վոլոդյան, նշված ընկերությունների միջոցով իրականացրել է իրավական-խորհրդատվական, հաշվապահական հաշվառման, հաշվապահական դասընթացների կազմակերպման, աուդիտի գործառույթներ: Իգոր Մանդելին և նրա ընտանիքի անդամներին ճանաչում է 2005թ.-ից և նրանց հետ գտնվում է մտերիմ հարաբերությունների մեջ: Իգորը և Վոլոդյան ծանոթացել են իր միջոցով: Իգորը հանդիսանում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տնօրենը: Իգորին պատկանող, Երևանի Բագրատունյաց թիվ 14 հասցեում գտնվող դեղատան մի մասը վերջինս 2007թ. ամառվանից 10 տարի ժամկետով վարձով տվել է «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը: Այդ մասին տեղյակ է եղել Վոլոդյան: Հաշվի առնելով, որ Վոլոդյան հաշվապահության մասնագետ է եղել՝ իր խնդրանքով նա մասնակցել է նշված գործարքը կնքելուն: Վերջինիս ինքը Իգորին ներկայացրել է որպես վստահելի անձի: Իգորը Վոլոդյային է տվել լիազորագիր՝ վերը նշված պայմանագիրը կնքելու համար, սակայն պայմանագիրը կնքել է Իգորը՝ Վոլոդյայի ներկայությամբ և օգնությամբ: Նախքան պայմանագրի կնքելը, նախնական բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել բանկի ներկայացուցիչների հետ, որ վերջիններս Իգորին ամսեկան վճարեն 7.000 դոլարին համարժեք դրամ, սակայն Վոլոդյան իրեն և Իգորին համոզել է, որ ավելի լավ կլինի գումարը վերցվի միանգամից 10 տարվա համար, որից Վոլոդյան պարտավորվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-մբ, «Ֆորեքս»-ի միջոցով 100.000 դոլարը շրջանառության մեջ դնելով՝ ստանալ եկամուտներ և դրանցից ամիսը 4%-ը տրամադրել կազմակերպությանը: Քանի որ Իգորն ունեցել է պարտքեր և Վոլոդյայի առաջարկած տարբերակը շահավետ է եղել, Իգորը համաձայնվել է և Վոլոդյայի հետ կնքել է պայմանագիր: Վարձակալության 10 տարվա գումարը կազմել է 193.000.000 դրամ, որը բանկի կողմից փոխանցվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարին: Դրանից 16.000.000 դրամով Իգորը մարել է պարտքերը, իսկ մնացած 176.000.000 դրամից 38.000.000 դրամը 06.08.2007թ. փոխանցվել է «Ֆորեքս» կազմակերպությանը: Ընդ որում Վոլոդյան այնքան վստահություն է իրենց ներշնչել և իրենց «խելքը կերել», որ 02.08.2007թ. իրենք 176.000.000 դրամը փոխանցել են «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարին: 2-րդ փոխանցումը «Ֆորեքսին», 17.000.000 դրամի չափով, կատարվել է 04.09.2007թ.: Այսպիսով, 176.000.000 դրամից 52.000.000 դրամը, ըստ իր և Իգորի հաշվարկի, Վոլոդյան հաշվեհամարից հանել է և օգտագործել, իսկ մնացած գումարները գտնվել են իր և Իգորի հսկողության տակ: Հաշվեհամարին պետք է մնացած լիներ

6.985.000 դրամ գումար, 780.390 դրամի փոխարեն: Երբ ինքը 2008թ. հունվարին հանդիպել է Վոլոդյային և պահանջել է ներկայացնել գումարի մնացորդի վերաբերյալ փաստաթուղթ, նա ներկայացրել է բանկային փաստաթուղթ, որի համաձայն՝ հաշվեհամարին եղել է 6.985.000 դրամ գումար, սակայն երբ ստուգելու նպատակով բանկից վերցրել է հաշվեհամարի մնացորդի փաստաթուղթը, պարզել է, որ Վոլոդյան իրեն խաբել է, իրականում հաշվեհամարին եղել է 780.390 դրամ գումար: Նախքան այդ, 06.11.2007թ.-ին, հանդիպել է Վոլոդյային, որպեսզի ըստ պայմանավորվածության՝ գումարը տալուց 3 ամիս անց, Վոլոդյան տա 12.000 դոլար, սակայն նա, խախտելով պայմանավորվածությունը՝ պնդել է, որ գումարը տալու է 6 ամիս հետո:
2007թ. նոյեմբերի վերջին, «Ֆորեքս»-ի գործունեության վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար ինքը, ընկերը՝ Աշոտ Պետրոսյանը և վերջինիս ծանոթ Արթուրը գնացել են Վոլոդյա Վարդանյանի գրասենյակ, որտեղ հանդիպել են վերջինիս, նրա աշխատող Խաչիկին և Վոլոդյայի որդի Արմանին: Միասին քննարկել են նշված հարցն ու պարզել, որ 110.000 դոլար գումարը շրջանառության մեջ դնելուց 6 ամսվա ժամանակահատվածում ստացվել է 10.000 դոլար եկամուտ: Զգալով, որ խաբվել է՝ Վոլոդյային ասել է, որ փետրվարի 6-ին լրանալու է 6 ամիսը, և հնարավոր է, որ ամբողջ գումարը վերցնի, իսկ Վոլոդյան համաձայնվել է:
04.02.2008թ., երեկոյան, իրենց բակ է եկել Վոլոդյան, որդու՝ Արմանի հետ: Դրսում իրենց միջև տեղի է ունեցել խոսակցություն, որի ընթացքում Վոլոդյան ասել է, որ աշխատող Խաչիկին, որը զբաղվել է «Ֆորեքս»-ով գումարները շրջանառության մեջ դնելով, գողացել են գումարի համար: Ինքը պնդել է, որ դա իր հետ կապ չունի և պայմանավորված օրը նրանից վերցնելու է ամբողջ գումարը:
06.02.2008թ. հանդիպելով՝ Վոլոդյան ասել է, որ Խաչիկից դեռ լուր չունի, պետք է գտնի նրան և միասին լուծեն գումարի վերադարձման հարցը: Փետրվարի 14-ին, իր փեսա Սամվելը և կինը գնացել են Վոլոդյայի տուն՝ գումարի հետ կապված հարցի շուրջ պարզաբանումներ ստանալու համար: Խոսակցությունը վարել են իր կինը, փեսան, Վոլոդյան ու վերջինիս կինը՝ Ծովինը: Վոլոդյան իր կնոջն ասել է, որ պետք չէ անհանգստանալ և պարտավորվել է մինչև մայիսի 6-ը գումարի որոշ մասը վերադարձնել: Գումարը չվերադարձնելը և այն ուշացնելը Վոլոդյան պատճառաբանել է նաև նրանով, որ գումարներն ուղարկել է Հունաստան՝ ինչ-որ Վարդանի:
2008թ. ապրիլի վերջին իրեն է զանգահարել Վոլոդյայի բարեկամ Արմեն Ումրշատյանն ու տեղեկացրել, որ Վոլոդյան արդեն մի քանի օր է տուն չի գալիս: Նույնը հաստատել է նաև Վոլոդյայի որդի Արմանը, որը հեռախոսազրույցի ընթացքում իրեն մեղադրել է հոր անհետացման հարցում: Ապրիլի 26-ին, իրեն է զանգահարել Իգորը և ասել, որ Վոլոդյայի որդի Արմանը ընկերներով գնացել ու նրան տանից դուրս հանելով՝ վիրավորել է ամենալկտի խոսքերով, պահանջել է ասել հոր տեղը և սպառնացել է հաշվեհարդար տեսնել: Ինքը մինչ այդ Իգորին չի ասել Վոլոդյայի կատարած խարդախությունների մասին, որպեսզի նա չանհանգստանա, քանի որ գիտակցել է, որ գործարքի պատճառը ինքն է հանդիսացել և մտածել է ամեն գնով գումարը տեղը դնել, անկախ Վոլոդյայի կողմից այն վերադարձնելուց: Ապրիլի 27-ի երեկոյան, Վոլոդյայի մյուս որդին, իր որդուն խաբելով, ինչ-որ անձանց հետ տարել է Թոխմախի գերեզմանների մոտ, որտեղ հարվածել են որդուն՝ իրեն մեղադրելով Վոլոդյայի անհետացման մեջ:
«Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին փոխանցված գումարներից Վոլոդյան 30.10.2007թ. 33.000.000 դրամ գումար է փոխանցել իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ն հաշվին, որի փոխտնօրեն է հանդիսացել Վոլոդյան, այնուհետև վերջինս «Խաչվառ» ՍՊԸ-ից 35.000.000 դրամ գումար է փոխանցել «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ին՝ խողովակների ձեռքբերման շուրջ կնքված պայմանագրի համաձայն:

Խողովակների ձեռքբերման հետ կապված բանակցություններին, որը վարվել է «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն տնօրեն Կարապետ Սաղոյանի ու նրա աշխատակից էդիկի միջև, մասնակցել է նաև ինքը, իր ընկեր Աշոտ Պետրոսյանը և վերջինիս ծանոթ Ժորան: Իր ընկեր Աշոտ Պետրոսյանի միջոցով, Վոլոդյա Վարդանյանի գրասենյակում, Կարապետ Սաղոյանն ու էդիկն առաջարկել են ձեռք բերել 1.020 մմ տրամագծով, շուրջ 5.000 գծամետր խողովակներ, որոնց 1 գծամետրի վաճառքի գինը կազմել է 22.000 դրամ գումար: Մի քանի օր անց ինքը, Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Պետրոսյանը գնացել են Դիլիջան և համոզվել խողովակների առկայության մեջ: Մի քանի օր հետո, Վոլոդյան զանգահարել է իրեն և հայտնել, որ արդեն գտել է խողովակների գնորդ, որից հետո «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն տնօրեն Կարապետ Սաղոյանի հետ կնքել են պայմանագիր և Կարապետ Սաղոյանի տնօրինած ընկերությանն է փոխանցվել 35.000.000 դրամ գումար՝ որպես կանխավճար: Հետագայում պարզվել է, որ խողովակների ապամոնտաժման ժամանակ բողոքներ են եղել և աշխատանքները դադարեցվել են, հետագա ապամոնտաժման թույլտվությունը ձգձգվել է:
2008թ. ապրիլի վերջին, Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո, խնդրել է Աշոտ Պետրոսյանին և Կարապետ Սաղոյանին հանդիպել՝ պայմանագրի շուրջ պարզաբանումներ կատարելու համար և այդ ժամանակ է տեղեկացել, որ պայմանագիրը կնքվել է ոչ թե «Եվրոֆինանս» և «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ների միջև, այլ «Ռոլֆերմեր» և իր տնօրինած «Խաչվառ» ՍՊԸ-ների միջև: Այդ պայմանագիրն ինքը չի կնքել ու չի էլ իմացել, որ Վոլոդյան է այն կնքել: Չի բացառում, որ պայմանագրում լինի իր ստորագրությունը, քանի որ շատ են եղել դեպքեր, որ Վոլոդյա Վարդանյանն իրեն ստորագրել է տվել դատարկ թղթերի տակ: Չի եղել դեպք, որ «Ռոլֆերմեր» ՍՊԸ-ն կամ որևէ անձի, այդ թվում նաև էդիկի կողմից իրենց հետ վերադարձված լինի կամ կանխիկ, կամ էլ փոխանցումով խողովակների համար տրամադրված գումարների որևէ մասը:
Նախաքննության ընթացքում, Աշոտ Հակոբյանն Աշոտ Պետրոսյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նշել է, որ տեղյակ է, որ էդիկ Սահակյանի կողմից գումարի որոշ մասը վերադարձվել է Վոլոդյա Վարդանյանին, սակայն ինքը գումարը վերադարձնելիս ներկա չի գտնվել, քանի որ հանդիպման կեսից հեռացել է, սակայն երբ դրանից անցել է մոտավորապես 15 օր, իրեն է զանգահարել Վոլոդյա Վարդանյանը և հայտնել, որ նրանց կողմից բերված գումարը եկել են հետ տանելու: Ինքն էլ պատասխանել է, որ կամքը նրանն է և պատասխանատվությունն էլ նրա վրա է: Առաջարկել է ոչ թե տալ այդ գումարը, այլ ստանալ նաև մնացած մասը: Ինքը չի կարող նշել, թե փաստացի որքան գումար է վերադարձվել Վոլոդյային և ինչպես է նրա կողմից տնօրինվել, քանի որ գումարներով զբաղվել է Վոլոդյա Վարդանյանը:
Այնուհետև, մյուս ցուցմունքներում Աշոտ Հակոբյանը նշել է, որ 176.000.000 դրամ գումարը «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից փոխանցվել է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին 26.07.2007թ. կնքված պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագիրը կնքելու ժամանակ, ներկա են եղել ինքը, Իգոր Մանդելը, ընկերը, Վոլոդյա Վարդանյանը և վերջինիս ընկերը: Համաձայն փոխառության այդ պայմանագրի, «Եվրոֆինանս» ՍՊԸ-նը պարտավորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը ամսեկան վճարել փոխանցված գումարի 4 տոկոսի չափով գումար: Փաստորեն պայմանագիրը չի կատարվել և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը դիմել է քաղաքացիական դատարան՝ պահանջելով գումարները: Ինչ վերաբերվում է իր և Ինգա Մանդելի հաշվեհամարներին «Եվրոֆինանս» ՍՊԸ-ից փոխանցված և կանխիկացված գումարներին, ապա դրանցով, շուրջ 78.000.000 դրամով, որն ինքը փրկել է Վոլոդյայից, գնվել են Երևանի Այվազովսկու թիվ 46/1 հասցեում գտնվող տարածքն ու շինությունները, որպեսզի դրանց և Վոլոդյայից ստանալիք գումարների հաշվին հետագայում «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը կատարվի փոխհատուցում:
Ինքը որևէ մեկի հետ համաձայնության չի եկել, գումարներ չի

հափշտակել, եկամուտներ չի օրինականացրել, փաստաթղթեր չի կեղծել, այլ իր գործողություններն ուղղված են եղել Վոլոդյա Վարդանյանի և նրա խմբի կողմից կատարված բազմաթիվ գործողությունների բացահայտմանը, իսկ այնուհետև նաև «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից և իրենից գողացված գումարների հետ վերադարձմանը: Ըստ իրեն՝ բացակայում է փողերի լվացման գործողությունը, որովհետև գույքի անօրինական շրջանառության արդյունքում չէ, որ ինքը ձեռք է բերել գումար, այլ դրանք եղել են «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն կողմից փոխառությամբ տրված գումարները: Ինչ վերաբերվում է իր կողմից փաստաթղթերի կեղծմանը, ապա քրեական գործում որևէ ապացույց այդ մասին առկա չէ: /դ.ն.ա., հատոր 1, գ. թ. 65-70, 152-153, 172-173, հատոր 2, գ.թ. 158-159, 236-237, հատոր 3, գ. թ. 1-2, 48-50, 269-271, 279-280, 281-285, հատոր 8, գ. թ. 197-199, հատոր 9, գ. թ. 11-14, 15-16, 248-249, 258, 265-266, 269, հատոր 10, գ.թ. 18, 168/

Առաջադրված մեղադրանքում Իգոր Մանդելը իրեն մեղավոր չի ճանաչել, նախաքննության ընթացքում հրաժարվել է մեղադրանքի շուրջ ցուցմունքներ տալուց, առաջին ատյանի դատարանում նույնպես հրաժարվել է ցուցմունքներ տալուց, սակայն դատավարության մասնակիցների հարցերին պատասխանելով՝ նշել է, որ տեղի ունեցածի մասին ընկերության բաժնետերերը տեղյակ են եղել և նրանք են խնդրել, որ իր բաժնեմասը ևս գրավ դրվի, որպեսզի կարողանան վարկ վերցնել և ստանալ տարիների ընթացքում կուտակված ու չվճարված աշխատավարձերը: Իրականում Վոլոդյա Վարդանյանն է իրեն խաբել և տարել է 176 միլիոն դրամ գումարը: Բոլոր բաժնետերերն ի սկզբանե տեղյակ են եղել, որ վարձակալության գումարի չափը 2.450.000 դրամ է: Վոլոդյա Վարդանյանը հրավիրվել է իրականացնելու ընկերության հաշվապահական գործերը, քանի որ այդպես են ցանկացել դեղատան աշխատողները, սակայն նա չի վարձատրվել: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն դեղատան տարածքը վարձակալությամբ տալու բանակցություններին մասնակցել են ինքը և Վարդանյանը: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից իրենց տրվել է 193 միլիոն դրամ գումարի չափով վարկ, որից 16 միլիոնն են ստացել, իսկ մնացածը Վարդանյանի հետ անհետացել է: Ինքն այլևս վերջինիս չի տեսել, որպեսզի նրանից պահանջի գումարը, այլ զանգահարել է Աշոտին, որպեսզի վերջինս ապահովի գումարի փոխանցումը: Այդ գումարը «Ֆորեքս» ծրագրի միջոցով շրջանառության մեջ դնելու և դրանից եկամուտներ ստանալու մասին խոսակցություն Վարդանյանը կոլեկտիվի ժողովի ժամանակ վարել է, սակայն չի հիշում, թե կոնկրետ ինչ է ասել: Որպես տուժող ներգրավված իր աշխատակիցներից որևէ մեկի նկատմամբ թշնամություն չունի, սակայն նրանց կողմից նմանատիպ ցուցմունքներ տալը բացատրում է նրանով, որ նրանք հայտնել են, որ իրենց ցուցմունքները հետ կվերցնեն, եթե ինքը հրաժարվի իր բաժնեմասից: Որևէ այլ ձևով իր դեմ տուժողների կողմից ցուցմունքներ տալը չի կարող բացատրել: Վարդանյանին Հակոբյանն է ներկայացրել որպես վստահելի հաշվապահ, իսկ թե ինչով էր ինքը վարձահատույց լինելու նրան՝ անվճար աշխատանքի դիմաց, չի կարող ասել: Իր և իր դուստր Ինգա Մանդելի միջև փոխհարաբերությունները լավ են եղել, սակայն ինքը ուշ է իմացել, որ հափշտակված գումարները փոխանցվել են իր դստեր հաշվեհամարին և այնտեղից կանխիկացվել են: Վ. Վարդանյանի անհետացման ժամանակ նույնպես այդ մասին ինքը չի իմացել: Իր ունեցած հիվանդությունների պատճառով այժմ դեպքի մանրամասները չի հիշում:
/դ.ն.ա., հատոր 10, գ.թ. 155/

Պաշտպանության կողմի միջնորդությամբ առաջին ատյանի դատարանում որպես վկա հարցաքննված ներքոհիշյալ անձինք հայտնել են հետևյալը.

Վկա Տիգրան Սահակյանը ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսանում է «Իրավագարանտ» ՍՊԸ-ն հիմնադիրը: 2000թ.-ից

ճանաչում է Վոլոդյա Վարդանյանին: «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասին երբևէ չի լսել, տեղյակ չէ նաև, որ վերջինս «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ պայմանագրեր է կնքել: Տեղեկություն չունի նաև այն մասին, որ «Շենգավիթ-Ա» և «Իրավագարանտ» ՍՊԸ-ների միջև պայմանագիր է կնքվել և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարից գումար է փոխանցվել «Իրավագարանտ» ՍՊԸ-ն հաշվեհամարին, քանի որ ընթացիկ գործողությունները կատարվել են Վարդանյանի կողմից, որոնց մասին վերջինս իրեն տեղյակ չի պահել: «Իրավագարանտ» ՍՊԸ-ն հետ կնքված մյուս պայմանագրերից ևս տեղյակ չէ: Վարդանյանի անհետացման մասին տեղեկացել է նրա որդիներից և անձամբ որևէ միջոց չի ձեռնարկել նրան հայտնաբերելու ուղղությամբ: Իր կողմից է Թորգոմ Վարդանյանը նշանակվել «Իրավագարանտ» ՍՊԸ-ն տնօրեն, սակայն նրա գործունեությունն ինքը չի վերահսկել:/դ.ն.ա./

Վկա Գագիկ Մարգարյանն առաջին ատյանի դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսանում է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն տնօրենը, որը գործունեություն է ծավալել արտարժույթային շուկայում: Կազմավորման օրվանից ընկերության բաժնետերերը եղել են ինքը, Վոլոդյա Վարդանյանը, Եղիշեն և Խաչիկը: Կազմակերպությունը գրանցվել է 2006թ.-ին, իսկ 2008թ. նրա գործունեությունը դադարեցվել է: Տեղյակ է, որ Վոլոդյա Վարդանյանը 2007թ. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հետ կնքել է փոխառության պայմանագիր: 2008թ., Վոլոդյա Վարդանյանի անհետանալուց հետո տեղեկացել է, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարից շուրջ 176 միլիոն դրամի չափով գումար է փոխանցվել «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվին, իսկ թե Վոլոդյա Վարդանյանն ինչ հաշվեհամարներին է «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարից գումարներ փոխանցել՝ տեղյակ չէ: Վարդանյանի բաժնեմասն անցել է նրա որդիներին, որի մասին կազմվել է արձանագրություն: Որևէ խոսակցություն չի լսել այն մասին, որ Վարդանյանը և Հակոբյանը ցանկացել են յուրացնել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ից փոխանցված գումարները:
/դ.ն.ա. /

Վկա Արթուր Դանիելյանն առաջին ատյանի դատարանում ցուցմունք է տվել այն մասին, ճանաչում է Աշոտ Հակոբյանին, Վոլոդյա Վարդանյանին ու նրա որդիներին որպես համագյուղացիների, իսկ 2008թ.-ից Վոլոդյա Վարդանյանի հետ գտնվում է խնամիական հարաբերությունների մեջ: Վերջինիս ՍՊԸ-ների հետ առնչվել է այն ժամանակ, երբ «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն տնօրեն Արամ Վարդանյանը գտնվել է արտերկրում և այդ ընկերության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես ստանձնել է ինքը: Որպես տնօրենի պաշտոնակատար ինքը չի ծանոթացել մյուս բաժնետերերի և նրանց կատարած գործունեության հետ: Ընկերության որոշ գործարքների հետ ծանոթ է, մասնավորապես թիվ 17 պայմանագրի և ցեսիայի պայմանագրի հետ: Որևէ տեղեկություն չունի «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն միջև կնքված պայմանագրերից: Իր՝ որպես տնօրենի պաշտոնակատար աշխատելու ժամանակահատվածում ընկերությունը որևէ ֆինանսական գործարք չի կնքել: Տեղյակ է, որ Վոլոդյա Վարդանյանը անհետացել է 2008թ. ապրիլին, սակայն նրա անհետացման մասին որևէ տեղեկություն չունի: Ինքն Աշոտ Հակոբյանին երբևէ սպառնալիքներ չի տվել: Նկատել է, որ Վոլոդյա Վարդանյանը և Աշոտ Հակոբյանը գտնվել են ջերմ հարաբերությունների մեջ: Պարզապես մեկ անգամ, ինքը և Թորգոմ Վարդանյանը ականատես են եղել, որ Վոլոդյա Վարդանյանն ու Աշոտ Հակոբյանը բուռն քննարկումների մեջ են և Աշոտ Հակոբյանն ինչ-որ հաշվետվություն է պահանջել Վոլոդյա Վարդանյանից, իսկ վերջինս նախատել է Աշոտ Հակոբյանին՝ ինչ-որ անձանց սպառնալու համար: /դ.ն.ա./

Վկա Թորգոմ Վարդանյանն առաջին ատյանի դատարանում ցուցմունք է տվել այն մասին, հանդիսանում է Վոլոդյա Վարդանյանի որդին: Իր հայրն անհետացել է 24.04.2008թ.: «Իրավագարանտ»

ՍՊԸ-ն տնօրենը եղել է հայրը՝ Վոլոդյա Վարդանյանը, իսկ բաժնետերերը՝ Վոլոդյա Վարդանյանը և Տիգրան Սահակյանը: Երբ ստանձնել է տնօրենի պարտականությունները՝ ծանոթացել է «Իրավագարանտ» ՍՊԸ-ն գործունեության հետ, սակայն տեղյակ չէ, թե Տիգրան Սահակյանն ընկերության գործառույթներին անմիջական մասնակցություն ունեցել է, թե ոչ: Տեղյակ չէ, թե կոնկրետ որքան գումար է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն հաշվեհամարից փոխանցվել «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն հաշվեհամարին, որը հավանաբար պետք է վերադարձվեր է 9-10 տարի հետո: Տեղյակ չէ, որ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-նը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ վարձակալության պայմանագիր է կնքել, ինչպես նաև չգիտի, որ այդ հարցերով զբաղվելու համար իր հայրը լիազորվել է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի բաժնետերերի կողմից: Տեղյակ չէ նաև, թե իր հայրն ինչ պայմանագրեր է կնքել «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն, «Եվրոֆինանս» ՍՊԸ-ն և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հետ: Ինքն Աշոտ Հակոբյանին ուղարկված նամակով պահանջել է վաղաժամկետ վերադարձնել փոխատվության միջոցները և այժմ էլ պնդում է, որ Աշոտ Հակոբյանը «Իրավագարանտ» ՍՊԸ-ին պարտք է 42.435.000 դրամ գումար: Այդ մասին առկա է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշում: Ինքը երբևէ Իգոր Մանդելի բնակարան չի գնացել և նրան չի սպառնացել:
/դ.ն.ա./
Վերլուծելով ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանի, Իգոր Մանդելի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, համադրելով դրանք քրեական գործի դատական քննությամբ ձեռք բերված ու հետազոտված ապացույցների հետ, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրենց համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, առաջին ատյանի դատարանն իրավացիորեն գտել է, որ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի ցուցմունքները՝ խարդախություն չկատարելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտները չօրինականացնելու և փաստաթղթեր չկեղծելու մասին, ամբաստանյալ Իգոր Մանդելի ցուցմունքները՝ խարդախություն չկատարելու ու փաստաթղթեր չկեղծելու մասին, իրականությանը չեն համապատասխանում, քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու նպատակ են հետապնդում ու հերքվում են վերոհիշյալ ապացույցներով:
Քննարկելով պաշտպանության կողմի միջնորդությունը՝ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի 25.07.2007թ. արձանագրությունը և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տարածքը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը ամսեկան 700.000 դրամ գումարով 19.06.2007թ. կնքված վարձակալության պայմանագիրը լուսապատճեններ հանդիսանալու պատճառով ապացույցների ցանկից հանելու և անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին, Դատարանը պատճառաբանված կերպով գտել է անհիմն և մերժման ենթակա հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104 հոդվածի համաձայն, «1. Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: (…)»: Նույն օրենսգրքի 115 հոդվածի համաձայն, 1. Իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և

մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել:(…)»:
Նույն օրենսգրքի 122 հոդվածի համաձայն, 1. Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները:
2. Սույն օրենսգրքի 115 հոդվածի առաջին մասում նշված հատկանիշներ պարունակող փաստաթղթերը կարող են ծառայել նաև որպես իրեղեն ապացույցներ: (…)»:
«Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն մասնակիցների ընդհանուր ժողովի 25.07.2007թ. արձանագրությունը և. «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տարածքը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-նը ամսեկան 700.000 դրամ գումարով 19.06.2007թ. կնքված վարձակալության պայմանագիրը որպես իրեղեն ապացույցներ են ճանաչվել վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, քրեադատավարական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ, դրանց բովանդակությունը վերաբերում է քրեական գործով ապացուցման ենթակա առարկային, դրանք թույլատրելի են և վերաբերելի: Այդ ապացույցները հետազոտվել են առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, որի պատճառով պաշտպանության կողմի վերոհիշյալ միջնորդությունը ենթակա է մերժման:
Վերլուծելով ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանին և Իգոր Մանդելին առաջադրված մեղադրանքները, նրանց ցուցմունքները և գործով ձեռք բերված ապացույցները՝ Դատարանն իրավացիորեն գտել է, որ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:
Դատարանն իրավացիորեն պացուցված է համարել նաև ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, նախապես հայտնի հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով գույքի փոխարկումն ու փոխանցումը, որը նպատակ է ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը, այդ արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:
Ապացուցված է նաև ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր կեղծելը, այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:
Ամբաստանյալ Իգոր Մանդելի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Ապացուցված է նաև ամբաստանյալ Իգոր Մանդելի կողմից, նրա մեղավորությամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր կեղծելը, այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:
Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանն իր կատարած՝ ՀՀ քրեական

օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության համար ենթակա է պատժի ազատազրկման ձևով, ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասով նախատեսված, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից», քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանի 12.07.2011թ. որոշմամբ այդ դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորվում տուժողի (օրինական տիրապետողի) գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 5-րդ մասի և 31 հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:
Քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար նշանակված պատիժն ամբաստանյալ Իգոր Մանդելի կողմից կրելու հարցը՝ դատարանն իրավացիորեն գտել է, որ այդ հոդվածով, սույն դատավճռով նրա նկատմամբ ենթակա է կիրառման ՀՀ Ազգային ժողովի «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011թ. մայիսի 26-ի որոշումը:
Քննարկելով այն հարցը, թե արդյոք ամբաստանյալ Իգոր Մանդելը պետք է կրի իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը՝
Դատարանը գտել է հետևյալը.
ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի համաձայն, եթե դատարանը կալանքի, ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:
ՀՀ Վճռաբեկ դատարանն իր՝ 12.06.2007թ. թիվ ՎԲ-124/07 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառման կապակցությամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վկայակոչված հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում և դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել: ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու»: ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ 01.02.2008թ. թիվ ՎԲ-01/08 որոշմամբ նշել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը:
Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքները, որ Իգոր

Մանդելն իր կողմից կատարված հանցագործությունների հետևանքով վնաս է հասցրել այն ընկերությանը, որի կեսից ավելի բաժնեմասի սեփականատերն է, որևէ գումար կամ հատուցում իր արարքների արդյունքում չի ստացել, վատառողջ է՝ 3-րդ խմբի հաշմանդամ է, տառապում է մի շարք հիվանդություններով, նախկինում դատված չի եղել, յոթանասուն տարեկան է, հաշվի առնելով նաև վերջինիս պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ Դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ նրա կողմից կատարված հանցագործության հանրորեն վտանգավորության աստիճանը նվազել է և հնարավոր է հանգել հետևության, որ Իգոր Մանդելի ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ նշանակվող ազատազրկման ձևով պատիժը կրելու, ուստի մեղադրողի միջնորդությունն այն մասին, որ նպատակահարմար չէ ազատազրկման ձևով պատիժը Իգոր Մանդելի կողմից կրելը և ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ, ազատազրկման ձևով պատիժը պետք է նրա նկատմամբ պայմանականորեն չկիրառվի՝ Դատարանն իրավացիորեն գտել է հիմնավոր:
Այս առումով տուժողների վերաքննիչ բողոքի պատճառաբանություններն այն մասին, որ Դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10, 48, 61 և 70 հոդվածների պահանջները՝ ամբաստանյալ Իգոր Մանդելի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով, ՀՀ վերաքննիչ դատարանը գտնում է անհիմն, քանի որ դրանք չեն համապատասխանում քրեական գործով ձեռք բերված ապացույցներին:
Քննարկելով տուժողներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի քաղաքացիական հայցերը՝ ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանից և Իգոր Մանդելից համապարտությամբ, հօգուտ իրենցից յուրաքանչյուրի 4.563.780 դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում բռնագանձելու մասին, դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ քաղաքացիական հայցերը պետք է թողնել առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 1-ին մասի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60 հոդվածի 1-ին մասի համաձայն, «Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով արգելված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս:»:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74 հոդվածի 1-ին մասի համաձայն, «Քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար:»:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154 հոդվածի 1-ին մասի համաձայն, «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:»:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, «Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության

	օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով:»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158 հոդվածի 2-րդ մասի համաձայն, քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:»: Սույն քրեական գործով տուժողներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի կողմից ներկայացված վերոհիշյալ հայցադիմումներով քաղաքացիական հայցվորները խնդրել են ամբաստանյալներից համապարտությամբ, հօգուտ իրենցից յուրաքանչյուրի բռնագանձել 4.563.780 դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում, մինչդեռ քրեական գործի առաջին ատյանի դատարանում կատարված դատական քննությամբ հաստատվել է, որ կնքված պայմանագրերի հիման վրա, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն կողմից «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ն տրամադրված 193.407.000 դրամ ընդհանուր գումարից 176.000.000 դրամը Աշոտ Հակոբյանը և Վոլոդյա Վարդանյանը բանկային փոխանցումներով փոխանցել են մի շարք իրավաբանական և ֆիզիկական անձանց հաշվեհամարներին: Վերջիններս նույնպես ենթակա են ներգրավման վարույթին՝ քաղաքացիական հայցերը քննելիս: Դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ վերոհիշյալ հիմնավորումներով և ողջամիտ ժամկետում քրեական գործի քննությունն ապահովելու նպատակով, ամբաստանյալներ Աշոտ Հակոբյանից և Իգոր Մանդելից հօգուտ քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Մելանյա Նազարյանի, Նազիկ Թադևոսյանի, Ազիզ Ստեփանյանի, Ալվարդ Արզումանյանի, Ռիմա Աղաջանովայի և Նինա Պողոսյանի գումար բռնագանձելու վերաբերյալ քաղաքացիական հայցերը պետք է թողնել առանց քննության, ինչն արգելք չի հանդիսանում հայցերը հետագայում քաղաքացիական դատավարության կարգով հարուցելու համար: Այս առումով տուժողների վերաքննիչ բողոքի պատճառաբանություններն այն մասին, որ Դատարանը խախտելով տուժողների և քաղաքացիական հայցվորների նյութական իրավունքը՝ անհիմն պատճառաբանություններով շրջանցել է հանցագործության հետևանքով իրենց պատճառված գույքային վնասը վերականգնելու հարցի լուծումը, դրանով իսկ խաթարելով արդարադատության բուն էությունը և սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, Վերաքննիչ դատարանը նույնպես համարում է անհիմն: Վերոգրյալ հոդվածների բովանդակային վերլուծությունից և սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ամբաստանյալ Իգոր Մանդելիի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բավարար չափով ստուգման ու բազմակողմանի գնահատման է ենթարկել վերաքննիչ բողոքում մատնանշված բոլոր հանգամանքները, նրա կողմից կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այն, որ վերջինիս կողմից կատարված հանցագործությունների հետևանքով վնաս է հասցվել այն

ընկերությանը, որի կեսից ավելի բաժնեմասի սեփականատերն է, որևէ գումար կամ հատուցում իր արարքների արդյունքում չի ստացել, նախկինում դատված չի եղել, 70 տարեկան, վատառողջ՝ 3-րդ խմբի հաշմանդամ է, տառապում է ՍԻՀ, աթերոսկլերոտիկ և հետինֆարկտային կարդիոսկլերոզ, լարվածության սթենոկարդիա, ՖԿ 2-րդ-3-րդ աստիճանի միտրալ փականի անբավարարություն (հերոհիմատիկ բնույթի) շողացող առիթմիա, խրոնիկական երկկողմանի պիէլոնեֆրիտ, երիկամների բազմաթիվ կիստաներ երկու կողմից, արտերիալ հիպերտենզիա 3-րդ աստիճանի՝ հաճախակի հիպերտոնիկ կրիզներով, ՇԱ 2-րդ աստիճանի աթերոսկլերոտիկ, հիպերտոնիկ հետինսուլտային էնցեֆալոպատիա 2-րդ աստիճանի, աջակողմյան պիրամիդային անբավարարությամբ, շագանակագեղձի ադենոմա, ողնաշարի կրծքային հատվածի դեֆորմացնող օստեոխոնդրոզ հիվանդություններով, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չարձանագրելով և հետազոտելով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ՝ իրավացիորեն վերջինիս նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10 հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից՝ համապատասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրա ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածով նախատեսված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին:
Ինչ վերաբերում է Դատարանի դատավճռով ամբաստանյալ Իգոր Մանդելի գույք վրա դրված կալանքը վերացնելուն, ապա Վերաքննիչ դատարանը չի անդրադառնում այդ հարցին, քանի որ տուժողներն իրենց վերաքննիչ բողոքի եզրափակիչ մասում նման պահանջ չեն դրել:
Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի, ուստի գտնում է, որ Դատարանի դատավճիռն օրինական է ու հիմնավորված և այն բեկանելու, իսկ բերված վերաքննիչ բողոքները բավարարելու օբյեկտիվ հիմքեր առկա չեն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393, 394, հոդվածներով՝ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի, նրա պաշտպան Հենրիկ Մաղաքյանի, տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Ազիզ Ստեփանյանի, Մելանյա Նազարյանի, Նինա Պողոսյանի, Ալվարդ Արզումանյանի, Նազիկ Թադևոսյանի, Ռիմա Աղաջանովայի վերաքննիչ բողոքները մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. դեկտեմբերի 29-ի դատավճիռն՝ ըստ մեղադրանքի Աշոտ Ալեքսանի Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով ու Իգոր Արոնի Մանդելի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով:
Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանին՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

	ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ Իսկականի հետ ճիշտ է՝ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՂԱՉԱՐՅԱՆ

Ամսաթիվ:	22-05-2012
էջերի քանակը:	14 հատորից՝1-ին՝ 269 թերթ, 2-րդ՝ 262 թերթ, 3-րդ ՝ 298 թերթ, 4-րդ ՝ 250 թերթ, 5-րդ՝ 269 թերթ, 6-րդ ՝ 262 թերթ, 7-րդ՝ 298 թերթ, 8-րդ՝ 256 թերթ, 9-րդ `288 թերթ, 10-րդ ՝ 294 թերթ, 11-րդ՝ 38
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	

Գործն ուղարկվել է:	22-05-2012
էջերի քանակը:	269, 262, 298, 250, 269, 262, 298, 256, 288, 294, 384 , 242, 165, 136 թերթից:
Գործին կից նյութերը:	
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	Ե-7008/12
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	31-05-2012

Դատական Գործ N: ԵԿԴ/0319/01/10

Ամսաթիվ:	18-05-2012
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալի պաշտպան
Բողոք բերող անձինք:	Տուժող
Բողոք բերող անձինք	
Անուն	Հենրիկ
Ազգանուն	Մաղաքյան
Հասցե	պաշտպան՝ Կոտայքի մարզ, գ.Բջնի
Այլ	ամբաստանյալ՝ Աշոտ Ալեքսանի Հակոբյան
Բողոք բերող անձինք	
Անուն	Կարինե
Ազգանուն	Ղազարյան
Հասցե	ք.Երևան, Ծխախոտագործների 99
Այլ	տուժողներ՝ Կարինե Ղազարյան, Արուսյակ Ավետիսյան, Անուշ Նազարյան, Ազիզ Ստեփանյան, Մելանյա Նազարյան ,Նինա Պողոսյան, Ալվարդ Արզումանյան, Նազիկ Թադևոսյան , Ռիմա Աղաջանովա ամբաստանյալներ՝ Աշոտ Ալեքսանի Հակոբյան, Իգոր Արոնի Մանդելա
Հավատարմագրված փաստաբան	
Անուն	

Ազգանուն	
Հասցե	
Դատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Չափահաս:	Այո
Պատասխանի ստացման ամսաթիվը:	25-05-2012
Պատասխանի բովանդակությունը:	տուժողների վճռաբեկ բողոքն ամբողջությամբ մերժել, իսկ պաշտպանի վճռաբեկ բողոքն ամբողջությամբ բավարարել: /ամբաստանյալ Աշոտ Ալեքսանի Հակոբյան/

Գործի առաքման ամսաթիվը:	22-05-2012
Գրության համարը:	Ե-7008
Գործի ստացման ամսաթիվը:	31-05-2012
Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/:	14 հատոր
Դատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Գործի համարը:	ԵԿԴ/0319/01/10
Գործը ստացվել է:	Քրեական և զինվորական վերաք.
Գործը ստացվել է:	
Գործը ստացվել է:	
Պատասխանատվության ենթարկվածների թիվը:	2

Ամսաթիվ:	31-05-2012
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Դավիթ Զաքարի Ավետիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Հովհաննես Հաբեթնակի Ղուկասյան
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	07-06-2012
Որոշման բովանդակությունը:	ԵԿԴ/0319/01/10 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 հունիսի 2012 թվական ք.Երևան
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քննարկելով Աշոտ Ալեքսանի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և Իգոր Արոնի Մանդելի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 19-ի որոշման դեմ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի պաշտպանի, տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Ազիզ Ստեփանյանի, Մելանյա Նազարյանի, Նինա Պողոսյանի, Ալվարդ Արզումանյանի, Նազիկ Թադևոսյանի, Ռիմա Աղաջանովայի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռով Աշոտ Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով:
ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նա դատապարտվել է ազատազրկման 8 (ութ) տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագարավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Ա.Հակոբյանը դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Հակոբյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 11 (տասնմեկ) տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագարավմամբ, բացառությամբ այդ մասում նշված հետևյալ դրույթի կիրառման, այն է՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»:
Նույն դատավճռով դատապարտվել է նաև Իգոր Մանդելին: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Ի.Մանդելին դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով Ի.Մանդելի նկատմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության

անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, և նա ազատվել է նշանակված պատիժը կրելուց:
Ի.Մանդելի նկատմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետը և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված 5 (հինգ) տարի ժամկետով ազատազրկումը կրճատվել է 1/4-ով: Ի.Մանդելին վերջնական դատապարտվել է ազատազրկման 3 (երեք) տարի 9 (ինը) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը՝ 3 (երեք) տարի 9 (ինը) ամիս ժամկետով ազատազրկումը, պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 5 (հինգ) տարի ժամկետով:
Վերոնշյալ դատավճռով քաղաքացիական հայցվորների քաղաքացիական հայցերը թողնվել են առանց քննության:
Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի և նրա պաշտպանի, տուժողների և քաղաքացիական հայցվորների վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2012 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճիռը:
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպանը, տուժողները և քաղաքացիական հայցվորները:
1. Ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպանը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, ամբողջությամբ բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճիռը, այն օրինական ուժի մեջ է թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 19-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:
Բողոք բերած անձը փաստարկել է, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում՝ 2010 թվականի մայիսի 4-ին ընդունված թիվ ՎԲ-02/10 և 2010 թվականի մարտի 26-ին ընդունված թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշումներին, վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:
Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին և պետք է վերադարձվի հետևյալ պատճառաբանությամբ:
Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ սույն գործով վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:
Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:
Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ վերանայվող

	դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում՝ 2010 թվականի մայիսի 4-ին ընդունված թիվ ՎԲ-02/10 և 2010 թվականի մարտի 26-ին ընդունված թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշումներին: Ուստի, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը ևս հիմնավորված չէ: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Ուստի, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը նույնպես հիմնավորված չէ: 2. Տուժողները և քաղաքացիական հայցվորները խնդրել են վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, մասնակիորեն բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճիռը, այն օրինական ուժի մեջ է թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 19-ի որոշումը, մասնավորապես՝ ա) վերացնել «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթի կիրառման մասով առաջին ատյանի դատարանի վճռեց մասի 1-ին կետում արված բացառությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշումը կիրառելի դարձնելու նպատակով՝ միաժամանակ կոնկրետ նշելով, թե հանցավոր ճանապարհով ստացված գույքը հօգուտ ում է բռնագրավվելու և (կամ) բ) վերացնել քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու մասով ստորադաս դատարանի ակտերը՝ կայացնելով տուժողների և քաղաքացիական հայցվորներին՝ հանցագործության հետևանքով պատճառված գույքային վնասի վերականգնման վերաբերյալ դատական ակտ, կամ գ) վերացնել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթի կիրառման մասով առաջին ատյանի դատարանի վճռեց մասի 1-ին կետում արված բացառությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշումը կիրառելի դարձնելու նպատակով՝ միաժամանակ կոնկրետ նշելով, թե հանցավոր ճանապարհով ստացված գույքը հօգուտ ում է բռնագրավվելու, իսկ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու մասով գործն ուղարկել առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարան՝ նոր քննության կամ դ) քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու մասով նախատեսված՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթի կիրառման մասով առաջին ատյանի դատարանի դատավճռի վճռեց մասի 1-ին կետում արված բացառության մասերով գործն ուղարկել առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարան՝ նոր քննության՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշումը կիրառելի դարձնելու նպատակով: Բողոք բերած անձինք փաստարկել են, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի

	վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում՝ 2007 թվականի հոկտեմբերի 26-ին ընդունված թիվ ՎԲ-180/07 որոշմանը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում՝ 2007 թվականի հոկտեմբերի 26-ին ընդունված թիվ ՎԲ-180/07 որոշմանը: Ուստի, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Ուստի, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը նույնպես հիմնավորված չէ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքները ենթակա են վերադարձման: Հաշվի առնելով վերոշարադրյալ հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Աշոտ Ալեքսանի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և Իգոր Արոնի Մանդելի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 19-ի որոշման դեմ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի պաշտպանի, տուժողներ և քաղաքացիական հայցվորներ Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Ազիզ Ստեփանյանի, Մելանյա Նազարյանի, Նինա Պողոսյանի, Ալվարդ Արզումանյանի, Նազիկ Թադևոսյանի, Ռիմա Աղաջանովայի վճռաբեկ բողոքները վերադարձնել: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ Դատավորներ՝ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
Ամսաթիվ:	25-06-2012
Այլ նշումներ:	
Գործի առաքման ամսաթիվ:	27-06-2012

Դատարան:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Այլ նշումներ:	14 հատոր՝ 269, 262, 298, 250, 269, 262, 298, 256, 288, 294, 384, 242, 165, 220 թերթ

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 11 Հուլիս 2012